



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ՎԱՐՍԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀՈԿՀԱՆՆԵՍ ՕՁՆԵՑՈՒ
ԵՐԿԵՐԻ ԼԵԶՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2012

Հրատարակվում է Խ.Արուսյանի անվ. ՀՊՄՀ հայոց լեզվի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի որոշմամբ:

Գիտական խմբագիր՝ Բ.Գ.Դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյան

Ներսիսյան Վ.Ա.

Ն 633 Հովհաննես Օձնեցու երկերի լեզուն, մենագրություն / Վ. Ներսիսյան. ՀՊՄՀ, գիտ. խմբ. Վ. Գ. Համբարձումյան.– Եր.: ԵՊՀ հրատ., 2012, 148 էջ:

Գիրքը հեղինակի թեկնածուական ատենախոսության վերամշակված տարբերակն է: Հետազոտության մեջ համակողմանիորեն ուսումնասիրված և ներկայացված է Հովհաննես Օձնեցու երկերի լեզուն՝ լեզվական գրեթե բոլոր մակարդակներով (բառագիտական, ձևաբանական, շարահյուսական): Մանրամասնորեն շարադրված են նորակազմ բառերի բառակազմական առանձնահատկությունները, տրված են դրանց սերող հիմքերը, ածանցների գործառական հաճախականությունը և այլն: Առանձնացված են Օձնեցու երկերին բնորոշ քերականական մի շարք յուրահատկություններ:

Գիրքը կարող է օգտակար լինել հայոց լեզվի պատմության հարցերով հետաքրքրվողների համար, ծառայել իբրև «Հայոց լեզվի պատմություն» բուհական դասընթացի օժանդակ ձեռնարկ:

ՀՏԴ 809.198»1(075.8)
ԳՄԴ 81.2Հ ց73

ISBN 978-5-8084-1674-1

© ԵՊՀ հրատ. 2012
© Ներսիսյան Վ., 2012

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հովհաննես Օձնեցին ապրել և ստեղծագործել է 7-8-րդ դարերում, այսինքն՝ մի ժամանակաշրջանում, երբ գրաբարը շարունակում էր կրել հունաբան դպրոցի ազդեցությունը, որի հետևանքով լեզուն ենթարկվում էր մի շարք էական փոփոխությունների: Օձնեցին ևս, մասամբ ազդվելով հունաբան դպրոցի ավանդներից, ունեցել է անուրանալի ներդրում հայերենի լեզվաշինության ասպարեզում:

Օգտագործելով եղած պատմական և լեզվաբանական հետազոտությունները՝ սույն աշխատանքում փորձ է արվել հնարավորինս սեղմ և ընդգրկուն կերպով ներկայացնել Օձնեցու երկերի լեզուն՝ շեշտը դնելով հատկապես նորակազմությունների բառակազմական օրինաչափությունների վերհանման, դրանց սերող հիմքերի բացահայտման վրա, մյուս կողմից՝ ուշադրություն է դարձվել քերականական զանազան իրողությունների պարզաբանմանը:

Հեղինակը շնորհակալություն է հայտնում Բ.Գ.Դ., պրոֆ. Վ.Գ. Համբարձումյանին՝ աշխատանքը ղեկավարելու և խմբագրական աշխատանք կատարելու համար, Բ.Գ.Դ., պրոֆ. Լ.Մ. Խաչատրյանին՝ աշխատանքը կարդալու և մի շարք արժեքավոր խորհուրդներ տալու համար, ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտին, որտեղ կատարվել է սույն աշխատանքը, ինչպես նաև Խ. Արուսյանի անվ. ՀՊՄՀ հայոց լեզվի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնին, ամբիոնի վարիչ Բ.Գ.Թ., դոցենտ Ա.Վ. Գալստյանին՝ գիրքը տպագրության երաշխավորելու համար:

Որքա՞ն խորին կրթողական
տպավորություն է գործում
օրինակը, վառ օրինակը...

ՐԱՆՆԻ

*Նվիրում եմ ՈւՍՈՒՑԶԻՄ՝
ՀՐԱՆՏ ՀԱԿՈՐՅԱՆԻ
վառ ու լուսավոր ՀԻՇԱՏԱԿԻՆ*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Օծնեցին միջնադարյան Հայաստանի հասարակական-քաղաքական, կրոնական և մշակութային ակնառու գործիչներից է, հայ առաքելական եկեղեցու արժանահիշատակ հովվապետներից մեկը: Նա այն երջանիկ մարդկանցից է եղել, որին ժողովուրդը սիրել և գնահատել է դեռևս իր կենդանության օրոք: Բավական է նշել միայն այն փաստը, որ նա հետագայում դասվել է եկեղեցու սրբերի շարքը:

Հովհաննես Օծնեցու գրական և հասարակական գործունեության մասին պատկերացում կազմելու նպատակով անհրաժեշտ է վեր հանել պատմական այն ժամանակաշրջանի նկարագիրը, որում նա ապրել և ստեղծագործել է: Մանավանդ եթե նկատի ունենանք այն մեծ ավանդն ու ներդրումը, որ նա ունեցել է հայոց եկեղեցու և հայ մշակույթի զարգացման գործում:

Հայտնի է, որ 7-րդ դարի կեսերին Մերձավոր Արևելքում սկիզբ առնող արաբա-բյուզանդական հակամարտությունն իր արձագանքն էր գտնում նաև Հայաստանի հասարակական կյանքում: Հայ նախարարներն ու հոգևորականները բաժանվել էին քաղաքական տարբեր կողմնորոշումներ ունեցող երկու բանակների: Առաջին բանակը գլխավորում էր Թեոդորոս Ոչտունին, որը փորձում էր դաշնակցել արաբների հետ և երկիրը զերծ պահել ավերածություններից, իսկ մյուսը, որ փորձում էր շահել Բյուզանդական կայսրության համակրանքը, գլխավորում էին Ներսես Գ. Տայեցի կաթողիկոսը և Մուշեղ Մամիկոնյանը¹: Հայաստանի ներքաղաքական կյանքում նույնպես զգալի փոփոխություններ էին տեղի ունենում, և եթե 5-6-րդ դդ. իշխանության գալու նպատակով միմյանց հետ հակամարտությունների մեջ էին Մամիկոնյանները և Սյունյաց իշխանները, ապա 6-րդ դ. վերջերից և 7-րդ դ. սկզբներից ասպարեզ էին գալիս Բագրատունիները:

7-րդ դ. կեսերից տարածաշրջանում հաստատվում է արաբների տիրապետությունը: Արաբները դաժան հարկային քաղաքականություն են սկսում հայ ժողովրդի նկատմամբ, որը 8-րդ դ. սկզբում ստա-

¹ Տե՛ս Մ. Պապյան, Հովհան Իմաստասեր Օծնեցի, Երևան, 1998, էջ 23:

նում է համընդհանուր բնույթ²: 701 թ. Ղվինի գրավումից հետո Հայաստանն ամբողջապես ընդգրկվում է խալիֆայության կազմում: Հայաստանը ղեկավարում էր իշխանը, որի գործունեությունն ազատ չէր և ամբողջովին ընթանում էր արաբ ամիրապետի հսկողությամբ:

Ահա այս քաղաքական իրավիճակում (717-728 թթ.) հայոց եկեղեցին ղեկավարում էր Հովհաննես Օձնեցին. այդ տարիներին հայոց իշխանը Սմբատ Բյուրատյան Բագրատունին էր:

Ծանր հարկերը և մշտապես սպառնացող բռնությունները հոգս էին ցնդեցրել ժողովրդի վստահությունն ու հանդուրժողականությունը արաբների նկատմամբ, և միտում էր զգացվում կողմնորոշվելու դեպի քրիստոնեական Բյուզանդիան: Հենց այս հակամարտությունների և հակասությունների հաղթահարման գործում էլ վեր է խոյանում Հովհաննես Իմաստասեր Օձնեցու վեհ կերպարը: Նա կարողանում է հակադրել քրիստոնեությունը մահմեդականությանը, այնուհետև՝ հայ եկեղեցու միաբնակությունն ու բյուզանդական եկեղեցու երկաբնակությունը: Նա սկսում է պայքարել մի կողմից՝ քաղկեդոնականության, մյուս կողմից՝ Հայաստանում սկզբնավորված բազմաթիվ աղանդների ու աղանդավորական շարժումների դեմ, որի արդյունքում էլ ծնվում են նրա ճառերը:

Առաջին պատմիչը, որ գրել է Հովհաննես Օձնեցու ապրած ժամանակաշրջանի մասին, Ղևոնդն է, թեև նա Օձնեցու մասին որևէ տեղեկություն չի հաղորդել³: Ենթադրվում է, որ նա բյուզանդամետ հայացքներ ուներ, և գուցե դա է պատճառը, որ նա իր երկում չի անդրադարձել Օձնեցու գործունեությանը: Բացի այդ, պետք է նկատի ունենալ նաև այն, որ Ղևոնդի «Պատմության» սկիզբը վնասված է⁴:

Հովհ. Օձնեցու կյանքի և գործունեության մասին պատառիկներ կարելի է գտնել Մովսես Կաղանկատվացու (VII դ.) երկում⁵, իսկ Հովհաննես Դրասխանակերտցին բավականին ընդարձակ տեղեկություններ է հաղորդում նրա մասին (X դ.)⁶: Տեղեկություններ կան նաև Ստե-

փանոս Տարոնեցի Ասողիկի (XI դ.)⁷, Կիրակոս Գանձակեցու (XIII դ.)⁸ և ուրիշ պատմիչների երկերում, որոնց համապատասխան աշխատությունների ընձեռած նյութերի մանրակրկիտ ուսումնասիրությամբ զբաղվել է Մ. Պապյանը՝ գրելով «Հովհան Իմաստասեր Օձնեցի» արժեքավոր աշխատությունը⁹: Հեղինակն իր գրքում փորձել է ի մի բերել մեծ փիլիսոփայի կյանքին ու գործունեությանը նվիրված հայ և օտար բոլոր աղբյուրների տվյալները՝ փոքրիշատե լուսաբանելու համար Հովհաննես Օձնեցի գործչի իրական և ամբողջական կերպարը:

Հովհաննես Օձնեցին ծնվել է Գուգարաց աշխարհի Տաշիրք (Լոռի) գավառի գեղատեսիլ Օծուն գյուղում¹⁰: Ծննդյան թվականը ստույգ հայտնի չէ: Ենթադրվում է, որ նա ծնված պետք է լինի 650-670 թթ. միջև¹¹: Ըստ պատմիչների հաղորդած տեղեկությունների՝ ստացել է հիմնավոր և փայլուն կրթություն՝ աշակերտելով ժամանակի հայտնի վարդապետ Թեոդորոս Քոթենավորին: Իր ուսուցչի մասին հիացմունքով է խոսում ինքը՝ Օձնեցին՝ «Ատենաբանութիւն» ճառում. «Մանուկ էի մտավարժ և ոգւոյ բարւոյ դիպեցայ: Քանզի և վարժապետ վեհագոյն ունէի յաստուծոյ պարգևեալ ինձ»¹²: Կաթողիկոսական գործունեությունը տևել է 717-728 թթ.: 719 թ. գումարել է Ղվինի, իսկ 726 թ.՝ Մանազկերտի եկեղեցական ժողովները: 728 թ. մահացել է մեծ մտածողն ու փիլիսոփան: Օձնեցու վարքը տեղ է գտել «Այսմաւորք»¹³ ժողովածուի մեջ: Հայ մատենագիրներից շատերը բավականին գունդ ու հիացմունքով են խոսում Օձնեցու մասին: Կիրակոս Գանձակեցին նրա մասին գրում է. «Էր այդ իմաստասէր եւ սուրբ, եւ վայելուչ հասակաւ մարմնոյն, եւ հոգւովն եւս առաւել զեղեցիկ»¹⁴: Իսկ Ստեփանոս Օրբելյանը գրում է, որ «բազմեղջանիկ ու գովելի Հովհան Օձնեցու

⁷ Ստեփանոսի Տարոնեցույ Ասողկան Պատմութիւն Հայոց, Ա.-Պ., 1885:

⁸ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:

⁹ Մ. Պապյան, Հովհան Իմաստասեր Օձնեցի, Երևան, 1998:

¹⁰ Տե՛ս Ե. Սահակյան, Հովհան Օձնեցի (ծննդյան 1300-ամյակի առթիվ), Ավավերդի, 1993, էջ 4:

¹¹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 29:

¹² Յովհաննու Իմաստասիրի Մատենագրութիւնք, Վենետիկ, 1933, էջ 2:

¹³ Տե՛ս Գիրք որ կոչի Այսմաւորք, Կ. Պոլիս, 1730:

¹⁴ Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 51:

² Տե՛ս նշվ. աշխ., էջ 25:

³ Տե՛ս Ղևոնդեայ վարդապետի Պատմութիւն Հայոց, Ա.-Պ., 1887:

⁴ Տե՛ս Ղևոնդ, Պատմություն, թարգմ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982, էջ 11:

⁵ Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, աշխ.

Վ. Առաքելյանի, Երևան, 1983:

⁶ Յովհաննէս Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:

ծեռքով Հայաստանը նորոգվեց ու մաքրվեց քաղկեդոնական աղանդից»¹⁵:

Լինելով քրիստոնեական հավատքի ջատագովն ու ժողովրդի արժանավոր հոգևոր առաջնորդը՝ Օծնեցին ծավալել է եկեղեցական և հասարակական-քաղաքական լայն գործունեություն՝ պայքարելով եկեղեցու միասնականությունը խաթարող ուժերի դեմ:

Գրել է «Ատենաբանութիւն», «Կանոնք», «Ընդդէմ երեսութեանաց», «Ընդդէմ պաւղիկեանց», «Յաղագս կարգաց եկեղեցւոյ», «Յաղագս կարգաց եկեղեցւոյ Քրիստոսի», «Վասն մեծի աւուր միաշաբաթին», «Սակս գիշերային ժամու», «Հիմնարկէք եկեղեցւոյ», «Օրինութիւն նորաշէն եկեղեցւոյ», «Ճառ յեկեղեցի», «Սակս ժողովոց որ եղեն ի Հայք», «Նախահաւաքումն պատմութեան այսմ բանից՝ Յովհաննու Վերծանաւորի» և այլ ճառեր:

Ինչպես երևում է հիշյալ վերնագրերից, նշված աշխատությունները նվիրված են հայոց եկեղեցուն, նրա ամրապնդմանը և կանոնակարգին: Իսկ «Ընդդէմ պաւղիկեանց» և «Ընդդէմ երեսութեանաց» ճառերն անողոք կերպով քննադատում և մերժում են եկեղեցու դեմ կատարված ոտնձգություններն ու ավելի արժևորում հայ եկեղեցին և նրա ավանդույթները:

Հայտնի է, որ 7-րդ դարում հայ եկեղեցին բաժանված էր զանազան աղանդների՝ երեսութեանություն, պատկերամարտություն և այլն: Երեսութեանները գտնում էին, որ Քրիստոսի չարչարանքներն ու կրած տառապանքները միայն երեսութեան են եղել, իսկ պատկերամարտները նրանք էին, որոնք չէին երկրպագում եկեղեցական պատկերներն ու նրանց պաշտամունքը համարում էին կռապաշտություն: Պավլիկյանները մերժում էին հայ եկեղեցին՝ մեղադրելով նրան հեթանոսների պես կուռքերը պաշտամունքի առարկա դարձնելու համար:

«Ատենաբանութիւն» ճառն Օծնեցին ընթերցել է 719 թ. գումարած Դվինի եկեղեցական ժողովում: Այն կարևորում է ժողովի գումարման անհրաժեշտությունը: Դվինի ժողովում սահմանվում են 32 կանոններ, որոնք հիմնականում ուղղված են քաղկեդոնական սովորույթների դեմ: Ըստ որոշ ուսումնասիրությունների՝ Օծնեցին զբաղվել է ոչ միայն ճառեր գրելով, այլև կատարել է խմբագրական աշխատանքներ: Նրան է

¹⁵ Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա.Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 139:

վերագրվում «Գիրք թղթոց» ժողովածուի¹⁶ նյութերի հավաքումն ու խմբագրումը, որտեղ ընդգրկված է նաև իր երկերից մեկը՝ «Սակս ժողովոց որ եղեն ի Հայք»¹⁷ վերնագրով:

Ինչպես իրավամբ գրում է Ե. Սահակյանը, «Օծնեցին, իրոք, այն առաջատար ու հզորագույն ուժն էր, որին վիճակված էր 8-րդ դարի սկզբին լուծելու հայ ժողովրդի լինելիության ու վաղվա պետականության հեռապատկերը»¹⁸: Մի բան, որ իրենից առաջ փորձել, բայց չէր կարողացել անել Սահակ Չորափորեցի կաթողիկոսը¹⁹:

Անշուշտ, Օծնեցին ունեցել է նաև ժամանակակից հակառակորդներ, որոնց գլխավորում էր Ստեփանոս Սյունեցին: Հետագայում որոշ ուսումնասիրողներ Օծնեցուն քննադատել են արաբամետ քաղաքականություն վարելու համար և նրան անվանել աղանդավոր: Մ. Չամչյանը նաև փորձում է ապացուցել, որ 726 թ. Մանազկերտի եկեղեցական ժողովը ոչ թե Օծնեցին է հրավիրել, այլ այն գումարվել է Ներսես Շինող կաթողիկոսի օրոք (641-661թթ.)²⁰: Չամչյանը, ինչպես նաև Մկրտիչ Ավետյանը և ուրիշ շատ ուսումնասիրողներ Օծնեցուն համարել են երկաբնակ մատենագիր և գործիչ՝ հիմք ընդունելով «Ընդդէմ երեսութեանաց» ճառը, որն ուղղված է ծայրահեղ միաբնակների դեմ²¹: Ավելին, Ա. Աննինսկին կասկածի է ենթարկում Օծնեցու իմաստասեր լինելը և նրա գործունեության մասին հեզմանքով է խոսում²²:

Ինչևէ, Հովհաննես Օծնեցին փիլիսոփայական հզոր գաղափարների տեր գործիչ էր, որ հետևում էր իդեալիստ մտածողների գաղափարախոսությանը, որը հատուկ էր միջնադարյան Հայաստանին առհասարակ: Պատահական չէ Օծնեցու Իմաստասեր անվանումը: Հայտնի է, որ դեռևս 6-րդ դարից սկսած՝ «քերթողները և իմաստասերներն են եղել այդ ժամանակուց հեղինակաւոր գիտնականները: Վեցերորդ

¹⁶ Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901:

¹⁷ Նույն տեղում, «Սակս ժողովոց որ եղեն ի Հայք», էջ 220-233 (այսուհետև՝ ՍԺ):

¹⁸ Ե. Սահակյան, նշվ. աշխ., էջ 3:

¹⁹ Տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, Պէյրուս, 1959, էջ 844:

²⁰ Տե՛ս Մ. Չամչեանց, Հայոց պատմութիւն, Ծանօթութիւնք Գ գրոց, հ. Բ, Վենետիկ, 1785 (վերահր. 1984), էջ 573:

²¹ Տե՛ս Մ. Պապյան, նշվ. աշխ., էջ 12-16:

²² Տե՛ս Ա. Աննինսկի, История армянской церкви, Кишинев, 1900, էջ 116:

դարի կրօնական վէճերի ժամանակ սրանք են, գլխաւորապէս, հիմնաւորել ու պատճառաբանել վիճելի հարցերը եւ հանդէս եկել եկեղեցական ժողովներում հակառակորդների դէմ»²³:

Օձնեցու փիլիսոփայության բնորոշ կողմը հակապավլիկյանական ուղղվածությունն էր: Պավլիկյաններն առաջ էին քաշում մաքուր իդեալի հարցը՝ հակադրելով այն քրիստոնեական նյութապաշտությանը: «Օձնեցու փիլիսոփայությունը հանգում է այն մեծ ճշմարտությանը, որ դիվանագիտությունը ժողովրդի այսօրն ու վաղն է, որ մարդը ամբողջ տիեզերքն է, և տիեզերքը ոչ միայն արտացոլվում է մարդու մեջ, այլև բացատրվում է նրանով»²⁴: Օձնեցու անձը և փիլիսոփայական հայացքները բնութագրող շատ կարևոր հանգամանք է այն, որ նա ցանկանում էր վերափոխել մարդուն, որպեսզի վերափոխվեր կյանքը, մինչդեռ պավլիկյանները ձգտում էին վերափոխել կյանքը, որպեսզի վերափոխվեր մարդը²⁵:

6-7-րդ դդ. Հայաստանի քաղաքական ու տնտեսական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները, անշուշտ, իրենց ազդեցությունն ունեցել են հայ մշակույթի, գրականության զարգացման վրա, սակայն հայ ժողովրդի աննկուն ոգին թույլ չի տվել դրանց ոչնչացումը: Այդ ընթացքում ոչ միայն շարունակում են գոյություն ունենալ և զարգանալ հայ գրականությունը, ճարտարապետությունն ու արվեստները, այլև գրվում են պատմական, փիլիսոփայական նոր երկեր, կատարվում են թարգմանություններ: Դրանցից են Սեբեոսի «Պատմությունը», Դավիթ Անհաղթի փիլիսոփայական գործերը, Դիոնիսիոս Թրակացու «Քերականության» թարգմանությունը, Անանիա Շիրակացու թվաբանական, աշխարհագիտական աշխատությունները և այլն:

Երկրի սոցիալ-տնտեսական կյանքում կատարված փոփոխությունները, անշուշտ, ազդում են նաև գրական լեզվի զարգացման ընթացքի վրա: Ինչպես նկատում է Ս. Ղազարյանը, «այդ պատճառով էլ բորբոքվում է պայթարը մի կողմից՝ նրա արդեն հայտնի օրինաչափությունները պաշտպանողների և, մյուս կողմից՝ ժամանակի պահանջները չբավարարող հին ձևերը նոր արտահայտություններով փոխարինելու

²³ 3. Մանանդեան, Յունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928, էջ 4:

²⁴ Ե. Սահակյան, նշվ. աշխ., էջ 30:

²⁵ Տե՛ս նշվ. աշխ., էջ 31:

կողմնակիցների միջև»²⁶: Հ. Մանանդյանը գրում է, որ «քրիստոնեության հելլենացման պատճառով անկարելի էր հասկանալ կրօնադաճանաբանական խնդիրների ու վէճերի իմաստն ու նրբութիւնները առանց ժամանակակից հելլեն գիտութեան ու իմաստասիրութեան վարժ ծանօթութեան»²⁷:

Ի հայտ են գալիս լեզվական մի շարք իրողություններ, որոնք իրենց արտահայտությունն են ստանում փիլիսոփաների, քերականագետների գործերում, և արդեն 5-րդ դարի երկրորդ կեսերից ձևավորվում է հունաբան հայերենը, որին ինչ-ինչ կապերով աղերսվում է նաև Հովհաննես Օձնեցու երկերի լեզուն:

Խոսելով Հովհաննես Օձնեցու և նրա երկերի մասին՝ չենք կարող չանդրադառնալ այն փաստին, որ մեծանուն մտածողի հասարակական և առավել ևս ստեղծագործական նվաճումներին հայ ընթերցողն ինչպես հարկն է հասու չի եղել (կամ մասամբ է հասու եղել) մինչ օրս: Դա, ինչ խոսք, մեծապես պայմանավորված է նրա երկերի լեզվով և լեզվառձական առանձնահատկություններով, որոնք դժվարացնում են այդ երկերի բովանդակության ընկալումն այսօրվա ընթերցողի համար: Այդ առումով անգնահատելի ձեռքերում է Օձնեցու երկերի՝ Վ. Համբարձումյանի կատարած աշխարհաբար թարգմանությունը²⁸, որը հնարավորություն է տալիս ոչ միայն ընթերցելու և ըմբռնելու Օձնեցու ողջ գրական և հասարակական գործունեության արգասիքները, այլև բանասիրական խոր գիտելիքներ է հաղորդում Օձնեցու երկերի ոճի, նրա գործածած բառազանձի և քերականական մի շարք առանձնահատկությունների մասին: Մասնավորապես աշխատությանը կցած ծանոթագրություններում Վ. Համբարձումյանը մեկ առ մեկ մեկնաբանում և վերլուծում է բառային միավորներն ու քերականական կառույցները՝ դրանց մեջ առանձնացնելով տերմինները, բառերի նոր իմաստային կիրառությունները և այլն:

²⁶ Ս. Ղ. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 2006, էջ 170:

²⁷ 3. Մանանդեան, նշվ. աշխ., էջ 5:

²⁸ Հովհաննես Օձնեցի, Երկեր, զրաբարից փոխադրումը, առաջաբանը և ծանոթագրությունները Վազգեն Համբարձումյանի, Երևան, 1999 (այսուհետև՝ ՀՕԵ):

Ուսումնասիրելով Օծնեցու երկերի բնագրերը, ինչպես նաև օգտագործելով «Նոր հայկազյան բառարանի»²⁹ տվյալները, աշխարհաբար թարգմանության մեջ ամփոփված հարուստ նյութը՝ սույն աշխատանքում փորձել ենք ներկայացնել Հովհաննես Օծնեցու երկերի լեզվական առանձնահատկությունները՝ շեշտը դնելով հատկապես նորակազմությունների բառակազմական, իմաստաբանական և խոսքիմասային առանձնահատկությունների վրա: Ցույց ենք տվել նորակազմ բառերի քերականական-գործառական արժեքները՝ բնագրային համապատասխան օրինակներով:

Խոսելով նորակազմ բառերի առանձնահատկությունների մասին՝ կարևոր ենք համարում նշել հետևյալը: Հովհաննես Օծնեցին ապրել է 7-8-րդ դդ., այսինքն՝ մի ժամանակաշրջանում, երբ իր զարգացումն էր ապրում դեռևս 5-րդ դարի երկրորդ կեսից հայ իրականության մեջ սկզբնավորված հունաբան հայերենը: Հունաբան դպրոցն արդեն իսկ հսկայական ներդրում էր ունեցել հայ քերականական մտքի զարգացման բնագավառում (մասնավորապես բառագիտական և քերականական բազմաթիվ նորանուծություններով): Լինելով ժամանակի կրթված և լայն մտահորիզոն ունեցող իմաստասեր՝ Հովհաննես Օծնեցին չէր կարող անմասն մնալ հունաբան դպրոցի ավանդույթներից և նրա բառակերտման աշխատանքներից: Եվ ահա Օծնեցին կերտել է բազմաթիվ բառեր՝ հետևելով նաև այդ դպրոցին: Հունաբան հայերենի ազդեցությունը հատկապես զգալի է նախածանցների գործածության մեջ: Այս առումով պետք է նշել, որ որպես նախածանցներ շատ գործածական են *առ* նախդիրը, *ներ*, *փոխ*, *վեր*, *շար*, *յար*, *բաց* և այլ ձևույթներ:

Հովհաննես Օծնեցու երկերի բառապաշարի նորակազմություններն ընդհանուր առմամբ կարելի է բաժանել հետևյալ խոսքիմասային խմբերի՝ գոյական, ածական, բայ, մակբայ, որոնք սույն աշխատանքում ներկայացված են առանձին բաժիններով:

Պետք է նշել, որ Հովհաննես Օծնեցու կերտած բառերը կազմվել են հայերենի բառակազմությանը բնորոշ գրեթե բոլոր կաղապարներով: Օգտագործելով «Նոր հայկազյան բառարանի», ինչպես նաև Օծնեցու երկերի աշխարհաբար թարգմանությանը կցված ծանոթագրությունների տվյալները՝ նորակազմությունների իմաստային յուրաքանչյուր

²⁹ *Չ. Աւետիքեան, Խ. Միրսէլեան, Սկ. Աւգերեան*, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1 - 2, Վենետիկ, 1836-1837թթ.(այսուհետև՝ ՆՀԲ):

խումբ քննելիս առանձնացրել ենք միայն Օծնեցու գործածությունները հետագա հեղինակների վկայություններից:

Աշխատանքի առաջին գլխում ներկայացվում են նորակազմ բառերն ըստ խոսքիմասային պատկանելության, որտեղ խոսքիմասային յուրաքանչյուր խումբ քննելիս առանձնացրել ենք դրանց կառուցվածքային տեսակները, փորձել ենք տալ բառերի բառակազմական վերլուծությունը՝ պարզելու համար, թե բառակազմական ինչ հիմքերից են դրանք սերում և թե շարահյուսական ինչ հարաբերություններով են կապակցված: Այդ կարգի վերլուծությունների արդյունքներն ավելի հավաստի ներկայացնելու նպատակով կազմվել են համապատասխան աղյուսակներ, որոնք բերված են յուրաքանչյուր բաժնի վերջում:

Երկրորդ գլխում որպես Օծնեցու հեղինակային նորակազմություններ են ներկայացված այնպիսի բառեր, որոնց դիմաց ՆՀԲ-ն առաջինը վկայակոչել է հետագա հեղինակների, ապա՝ Օծնեցուն, կամ՝ միայն հետագա հեղինակների: Օրինակ՝ *տաժանաւոր* «տառապալի, տաժանելի» բառի դիմաց ՆՀԲ-ն (2, 837) հիշատակում է միայն Գրիգոր Նարեկացուն, մինչդեռ այն գործածված է նաև Օծնեցու «Ատենաբանութիւն» երկում (էջ 14)³⁰:

Գործածված բառերի մի մասն էլ ՆՀԲ-ի կողմից ընդհանրապես չի ներկայացվում: Այդ բառերի թիվը հասնում է 95-ի: Դրանցից են, օրինակ, «Նախահաւաքումն պատմութեան այսմ բանից՝ Յովհաննու Վերծանաւղի» երկում³¹ գործածված հետևյալ բառերը՝ *աներկաւորելի* (114), *առաքելասահման* (116), *առուղեկանաբար* (118), *արտեմոնադիր* (105), *երկնածին* (122), *նորադար* (122), *դժնախորամանգութիւն* (128) և այլն:

Աշխատանքի երրորդ գլխում ներկայացված են ուսումնասիրվող երկերում գործածված տերմիններն ու բառերի նոր իմաստային կիրառությունները:

Ակնհայտ է, որ Օծնեցու երկերն ունեն կրոնակեղեցական և խոհափիլիսոփայական ուղղվածություն: Եվ բնական է, որ այդ երկերում առ-

³⁰ *Յովհան Օծնեցի*, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 1-33 (այսուհետև՝ Ատ.):

³¹ *Ալեքսան Յակոբեան*, Յովհան Օծնեցու նորայայտ տօնացոյցային երկը՝ «Նախահաւաքումն պատմութեան այսմ բանից՝ Յովհաննու Վերծանաւղի», «Հանդէս անօրեայ», թիվ 1 - 12, Երևան - Վիեննա, 2006, էջ 92-130 (այսուհետև՝ ՆՊ):

կա են իմաստասիրական, կրոնական բնույթի բազմաթիվ բառեր ու արտահայտություններ: Դրանցից շատերը գործածվել են ոչ միայն իրենց սովորական, այլև բոլորովին նոր իմաստներով: Օրինակ՝ *նահապետական* բառի դիմաց ՆՀԲ-ն (2, 402) տալիս է երկու իմաստ՝ «նահապետին բնորոշ՝ հատուկ» և «հայրապետական»: Առաջինի դեպքում վկայակոչվում է Գրիգոր Նարեկացին, իսկ երկրորդի դեպքում՝ Օծնեցին: Շատ բառեր, Օծնեցու երկերում ստանալով նոր բովանդակություն, վերածվել են տերմինների: Որոշ տերմիններ գործածական են եղել նաև նախկինում:

Տերմինները բաժանված են երկու խմբի՝ կրոնակեղեցական (*անձն, գրքադայ, դեմ, երեսութական, կաթողիկէ, հերծուածող* և այլն) և իմաստասիրական (*անայլայլություն, անպարիմանայի, բաղկանալ, բնութիւն, երկայտումբ, ի մէնջ, տնօրինութիւն* և այլն): Սակայն իմաստային այդ բաժանումը պայմանական է, քանի որ դրանց միջև երբեմն հստակ սահմաններ չկան:

Քերականական բնույթի առանձնահատկությունները ներկայացված են չորրորդ գլխում: Անդրադառնալով այդ առանձնահատկություններին՝ պետք է նշել, որ դրանք հիմնականում արտացոլում են դասական գրաբարի համապատասխան իրողությունները և առանձնապես շեղումներ հանդես չեն բերում: Այնուամենայնիվ, կան որոշ յուրահատուկ դրսևորումներ, որոնք գլխավորապես հունաբան դպրոցի ազդեցության հետևանք են:

Այդ շեղումները հիմնականում կապված են հոլովական *-ում* (ներգոյականի), *-ից* (բացառականի) վերջավորությունների, հոլովական զուգածնությունների, ինչպես նաև անցյալ դերբայի կազմում *-ուած* վերջավորության հանդես գալու հետ: Խոնարհման համակարգում նկատելի է *-իւր* վերջավորության ակտիվ գործածություն սահմանական եղանակի կրավորածև անկատարի եզակի III դեմքում (*եղանիւր, ասիւր* և այլն), որն ավելի շատ բնորոշ է հետագա դարերին: Կան նախդիրների որոշ զուգորդումներ, որոնք սովորական չեն դասական գրաբարի համար, ինչպես ծայնավորից առաջ *ի* նախդրի կրկնությունը (*ի յականջս, ի յանդունդս* և այլն), *զ, առ, ի* նախդիրների միաժամանակյա գործածությունը (*զառ ի փայտէն, զառ ի Մովսեստ* և այլն):

Շարահյուսության մեջ առանձնահատուկ դրսևորումներ են նկատվում հիմնականում ենթակայի և ստորոգյալի արտահայտության հետ կապված: Հայտնի է, որ գրաբարում ենթական կարող էր արտահայտվել ուղղական, սեռական, տրական, երբեմն էլ՝ հայցական հոլովներով:

Վերջինս սովորական չէ հայերենի համար, այլ մասամբ հունարենի ազդեցության հետևանք է: Հայցական հոլովով ենթակայի գործածության բազմիցս կարելի է հանդիպել Օծնեցու երկերում ոչ միայն դիմավոր, այլև անդեմ բայերի (անորոշ կամ անցյալ դերբայների) հետ: Հունաբան հայերենի ազդեցությամբ հաճախ անորոշի հետ հանդես է գալիս տրական հոլովով ենթակա կամ անցյալ դերբայի հետ՝ սեռական հոլովով ենթակա: Փաստորեն Օծնեցու երկերում սովորական է ստորոգյալի գործածությունը անորոշ, անցյալ և ապառնի դերբայներով, որոնց կողքին հանդես են գալիս թեք հոլովներով արտահայտված ենթականեր:

Ձի շաղկապը նկատելիորեն իր տեղը զիջում է *որ* շաղկապին, որը բավականին մեծ հաճախականությամբ է գործածվել: Ինչպես բնորոշ է 7-րդ դարի երկերին առհասարակ, Օծնեցու երկերում ևս *այլ* բառն ակտիվ գործածություն ունի որպես շաղկապ:

Հովհաննես Օծնեցու երկերի լեզվական ատաղծի քննությունը, կարծում ենք, կարող է ամբողջացնել հետազասական հայերենի (7-8-րդ դդ.) գիտական նկարագիրը՝ բառական և քերականական մակարդակների առումներով:

ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

1) ՆՈՐԱԿԱԶՄ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ

Հովհաննես Օձնեցու երկերի ուսումնասիրությունից պարզվում է, որ հեղինակը գործածել է ոչ միայն հին գրական հայերենում գործառվող բառային միավորները, այլև ելնելով իր ժամանակի հայերենի բառակազմական օրինաչափություններից՝ կերտել է նոր բառեր (բառային հարադրություններ, բարդություններ և ածանցավոր կազմություններ):

Ապրելով և ստեղծագործելով 7-8-րդ դդ., որպես իմաստասեր և հոգևոր առաջնորդ, հիմնավոր կրթություն ստացած այր՝ Օձնեցին չէր կարող հեռու մնալ հունաբան հայերենի բառակերտման սկզբունքներից: Նա ստեղծել է մի շարք բառեր՝ օգտագործելով հունարենի բառակազմական կաղապարները (հիմնականում նախածանցման կաղապարը), թեև քիչ չեն նաև բուն հայկաբան կաղապարներով նորակազմությունները:

Օձնեցու հեղինակային նորակազմությունների մասին մեզ ընդարձակ նյութ են տալիս նրա երկերի աշխարհաբար թարգմանությանը կցված ծանոթագրությունները³², որոնցում թարգմանիչը մանրակրկիտ ձևով պարզաբանել է դրանց իմաստային նշանակությունները՝ միաժամանակ առանձնացնելով հունաբան ոճին բնորոշ կազմություններ:

Ուստի անդրադառնալով Հովհաննես Օձնեցու նորակազմություններին՝ մեր աշխատանքում խնդիր ենք ունեցել բացահայտելու դրանց բառակազմական և քերականական մի շարք առանձնահատկություններ, ցույց տալ բառակազմական այն սերող հիմքերը, որոնցից բաղադրված են դրանք: Անշուշտ, կան տարբեր կարգի նորակազմ բառեր, որոնք նշված չեն ծանոթագրություններում, մանավանդ եթե հաշվի առնենք այն, որ 2006թ. լույս տեսավ նորահայտ մի երկ՝ «Նախահաւաքումն պատմութեան այսմ բանից՝ Յովհաննու Վերծանաւղի» վերնագրով, որը դեռևս թարգմանված չէ և հարուստ է նորակազմ բառերով: Այդ կարգի բառերից են, օրինակ՝ *զուգաճանապարհի* («Խոստո-

վանութիւն անշարժ յուսոյ մարմնանալոյ Բանին Քրիստոսի, եւ ընդդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս», 193)³³, *դասագրիմ* (ՍԺ, 489), *դիւարնակ*, *դիւաշունչ* («Ընդդէմ պաւղիկեանց», 37)³⁴, *շարախառնել* (Ատ., 16), որոնք պատկանում են ՆՀԲ-ում ոչ ճիշտ ժամանակագրությամբ ներկայացված բառերի թվին, այլև *ի բարձուստ* («Ընդդէմ երևութականաց», 93-94)³⁵, *նմանակի* (ԸԵ, 73), *երագագրաւելի* (Ատ., 8), *վերերգակ* (Ատ., 4.,29), որոնք, ըստ ՆՀԲ-ի, միայն Օձնեցու գործածություններն են: Իսկ *մղեղել* (ԸՊ, 47), *նախահաւել* (Ատ., 12), *շարաղանդ* (Ատ., 4.,33), *վերջադարձիմ* (Ատ., 28) բառերի դեպքում ՆՀԲ-ն առաջինը վկայում է Օձնեցուն, ապա՝ հետագայի հեղինակների: Ավելին, նորահայտ երկում կան բազմաթիվ բառեր, որոնք վկայված չեն ՆՀԲ-ում, ինչպես՝ *հոգէպաճոյճ* (ՆՊ, 124), *նմանախաւսել* (ՆՊ, 102), *շարաճշգրտել* (ՆՊ, 114-115), *շնորհաւանդ* (ՆՊ, 106) և այլն:

Հայտնի է, որ հնդեվրոպական նախալեզուն ունեցել է բառակազմական այնպիսի համակարգ, որը պահպանվել է նաև հին հայերենում՝ գրաբարում, և այն իր հիմնական գծերով շարունակում է գործել մինչև այժմ: Ինչպես իրավագիտորեն նշում է Լ. Հովսեփյանը, «գրաբարի բառակազմության հիմնական եղանակները՝ բառաբարդումն ու ածանցումը, ընդհանրապես հատուկ են եղել հայոց լեզվին նրա զարգացման բոլոր փուլերում, սկսած հնագույն ժամանակներից մինչև օրս»³⁶:

Նախքան նորակազմությունների բուն քննությանն անցնելը նշենք, որ դրանցում առկա են հայերենի բառակազմական գրեթե բոլոր կաղապարները: Բաղադրյալ բառերում առավելապես հանդիպում են հին հայերենին հատուկ *հիմք + հիմք և հիմք + ածանց* հիմնակաղապարները: Սրանց իրենց քանակով չեն զիջում նաև *ածանց + հիմք + հիմք*, *ածանց + հիմք + հիմք + ածանց*, *հիմք + հիմք + ածանց* և այլ կաղապարներ:

³³ Յովհաննու Իմաստասիրի Հայոց կաթողիկոսի Խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնանալոյ Բանին Քրիստոսի, եւ ընդդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս, «Արարատ» (ամսագիր), 1896, էջ 192-197 (այսուհետև՝ ԸՊ):

³⁴ Մատենագրութիւնք, «Ընդդէմ պաւղիկեանց», էջ 34-47 (այսուհետև՝ ԸՊ):

³⁵ Յովհաննու Օձնեցոյ Մատենագրութիւնք, «Ընդդէմ երևութականաց», 2-րդ տպ., Վենետիկ, 1953, էջ 61-97 (այսուհետև՝ ԸԵ):

³⁶ Լ.Ս.Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987, էջ 41:

³² Տե՛ս ՀՕԵ, Ծանոթագրություններ, էջ 257-310:

Օձնեցու երկերում գործածված նորակազմ բառերի կազմության օրինակաբանությունները բացահայտելու նպատակով դրանք քննել ենք բառակազմական հիմքերի բաժանման սկզբունքով: «Քանի որ համադրական բաղադրությունները բաժանում ենք երկու միավորների կամ մասերի,– գրում է Է. Աղայանը,– անկախ այդ մասերի ձևային կազմից, ապա ինքնին ծագում է բաղադրական կամ բառակազմական հիմքերի գաղափարը: Բաղադրական հիմք է կոչվում համադրական բաղադրության երկու մասերից յուրաքանչյուրը, ինչպես՝ *գր-ա-դարան, գրադարան-ագետ* և այլն»³⁷: Բաղադրական հիմքերն իրենց կազմությամբ լինում են պարզ կամ բաղադրյալ:

Բառակազմական հիմքը, ըստ Լ. Խաչատրյանի, սահմանվում է նաև որպես «բառի յուրաքանչյուր իմաստակիր հատված, որ մնում է տվյալ բառակազմական մասնիկը կամ տարրն առանձնացնելուց հետո»³⁸: Բաղադրյալ հիմքերն իրենց հերթին լինում են սերող և բաղադրող: Սերող է այն բաղադրական հիմքը, որին ավելանում է որևէ այլ բաղադրական հիմք կամ ածանց՝ կազմելով նոր բառ: Բաղադրող հիմքը բառի այն մասն է, որն ավելանում է սերող հիմքին: Ինչպես նշում է Է. Աղայանը, որպես կանոն, ծախակողմյան բաղադրիչը սերող հիմքն է, իսկ աջակողմյանը՝ բաղադրող³⁹:

Անշուշտ, Օձնեցու գործածած նորակազմություններում առկա են բառակազմական երկու (պարզ և բաղադրյալ) հիմքերն էլ, որոնց կանդրադառնանք յուրաքանչյուր բառն առանձին քննելիս: Միաժամանակ պարզելու ենք, թե շարահյուսական ինչ հարաբերությամբ են կապակցված բարդությունների բաղադրիչները:

Նշենք նաև, որ հիշյալ նորակազմությունների բառակազմական առանձնահատկություններն առավել մանրամասն ներկայացնելու նպատակով դրանք բաժանել ենք ըստ բառերի խոսքիմասային պատկանելության: Նախ խոսելու ենք նորակազմ գոյականների մասին: Այս կարգի բառերում գերակշռում են *հիմք + հիմք + ածանց* կաղապար ունեցող բառերը: Դրանք բարդ ածանցավոր բառերն են:

Բարդ ածանցավոր գոյականներ

ա) Այս կարգի նորակազմությունների մեծ մասը (20 բառ) ՆՀԲ-ի կողմից միայն Օձնեցուն վկայված բառեր են՝ *բերանալուծութիւն, գինե-*

ձանութիւն, գիշերապաշտութիւն, խաչամարտութիւն, ծննդակերութիւն, կատուապաշտութիւն, կերակրափոխութիւն, կռուարարութիւն, մկնորսակ, մայրապականութիւն, մարմնամոլութիւն, նշանապաշտութիւն, չարապաշտութիւն, չարարարութիւն, վայասացութիւն, վնասահարութիւն, պատրողաբանութիւն, տարրատափութիւն, ուղղասացութիւն, ունզնադրութիւն:

Բերանալուծութիւն բառը «պատը լուծելը, խափանելը, կտրելը» իմաստով (ՆՀԲ, 1, 483) գործածվել է «Ատենաբանութիւն» երկում. «Եւ ոչ դարձեալ յառգերազանցագոյնն սոցա ունեք վերանալ ելանել, որպէս թէ ընդ անգործութիւն և ընդ *բերանալուծութիւն* խառնել և զքնոյն խորութիւն և զգինեձանութեան որովայնամոլութիւն» (էջ 15):

Ուղիղ ձևով բառը գործածվել է որպես միասնության խնդիր. այն կազմվել է *բերան* բաղադրող և *լուծութիւն* (ՆՀԲ, 895) սերող հիմքերից: Վերջինս դիտվում է որպես սերող հիմք, քանի որ ՆՀԲ-ն չունի *բերանալոյժ* ձևը (ՆՀԲ, 1, 483): Բաղադրիչները միացել են *ուղիղ խնդիր լրացում + լրացյալ* (բայանուն գոյականով արտահայտված) հարաբերությամբ:

Նորակազմ է *գինեձանութիւն* բառը, քանզի *գինեձան* ածականը *-ութիւն* ածանց է ստացել: Այն հանդես է եկել որպես վերացական գոյական և «գինովություն, հարբեցողություն» իմաստով (ՆՀԲ, 1, 553) գործածվել է վերը նշված օրինակում՝ որպես սեռական հոլովով որոշիչ: Բառը հոլովվել է *-ութիւն* ածանց ունեցող բառերին հատուկ՝ *ա* ներդրական հոլովմամբ: Ի դեպ, Աճառյանը *-ձան* արմատով բերում է մի շարք բառերի օրինակներ, ինչպես՝ *դաւաձան, խրախձան*, նաև *գինեձան*՝ առանց *-ութիւն* ածանցի, որի դիմաց վկայակոչում է Տիմոթեոս Կուզին (Հայերեն արմատական բառարան, III, 181)⁴⁰, և որը ՆՀԲ-ում չկա: *Գինեձան* ածականը *-ութիւն* ածանց է ստացել և հանդես է եկել որպես վերացական գոյական, որը գրաբարում «շատ հաճախ հանդիպող ոճական հնարներից մեկն է»⁴¹:

«Վասն աւուր միաշաբաթին»⁴² երկում գործածվել է *գիշերապաշտութիւն* բառը՝ «գիշերվա պաշտամունք՝ աղոթք» իմաստով (ՆՀԲ, 1, 555). «Քանզի երուսաղեմացիքն տակաւին մինչև ցայսօր զօր միաշա-

³⁷ Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 246:

³⁸ Լ.Մ. Խաչատրյան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 2008, էջ 151:

³⁹ Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 247-248:

⁴⁰ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4, 1971-1979 (այսուհետև՝ ՀԱԲ):

⁴¹ Ա.Ա. Արքախանյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 394:

⁴² Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 101-106 (այսուհետև՝ ՎԱՄ):

բաթին պայծառացուցանեն *գիշերապաշտութեամբ* իբրև Յակովբայ հրամայելով նոցա» (էջ 103): Գործիական հոլովով բառը հանդես է եկել որպես միջոցի անուղղակի խնդիր: Նորակազմությունը ձևավորվել է լրացում (պարագա) + բայափիմք լրացյալ հարաբերությամբ կապակցությունից՝ + *-ութիւն* ածանց: Ի դեպ, սույն բառաշարքում *պաշտութիւն* գոյականով կան բազմաթիվ նոր բառեր, որոնց կանդորադառնանք իրենց տեղերում, սակայն այն որպես բառակազմական հիմք ընդունել չենք կարող, քանի որ ՆՀԲ-ն առանձին այն չի վկայում: ՆՀԲ-ն չունի նաև *գիշերապաշտ*, ունի միայն *գիշերապաշտոն* (1, 555):

Խաչամարտութիւն բառը «Քրիստոսի խաչի ուսմունքի դեմ մարտնչելը» իմաստով (ՆՀԲ, 1, 923) գործածվել է որպես ուղևորման հայցական «... ըմբռնել զախմարս և զպարզամիտս ի մարդկանէ, որք չարեաց ի չարիս վերացեալ ելին. ի պատկերամարտութենէ *ի խաչամարտութիւն*, և անտուստ յանաստուածութիւն և ի դիւապաշտութիւն» (ԸՊ, 34): Այստեղ նորակազմության համար որպես հիմք չենք կարող ընդունել *խաչամարտ* ձևը (այն չկա ՆՀԲ-ում), իսկ *մարտութիւն* (ՆՀԲ, 2, 231) գոյականի դիմաց ՆՀԲ-ն վկայում է Գրիգոր Մագիստրոսին: Հետևաբար բառի բաղադրիչները միացել են հիմք + հիմք + ածանց կաղապարով, որտեղ *խաչ* հիմքը գործիական հոլովով խնդրի նշանակություն ունի:

Ծննդակերութիւն բառը բնագրում գործածվել է որպես ուղիղ խնդիր և նշանակում է «իր ծնունդը՝ որովայնի պտուղը ուտելը» (ՆՀԲ, 1, 1021). «Չանօրէնն *ծուայթելով* զօրէնս, անդր ևս քան զխոզիցն *գտանին* զանզգաց *ծննդակերութիւն*» (ԸՊ, 38): Այստեղ էլ սերող հիմքը վերացական գոյական է. այն է՝ *կերութիւն* (ՆՀԲ, 1, 1091), որին սկզբից միացել է *ծնունդ* բառը:

Կատուապաշտութիւն «կատու պաշտելը» նորակազմ գոյականը (ՆՀԲ, 1, 1063) հանդես է եկել ենթակայի պաշտոնում. «*Կատուապաշտութիւն* է մեծարգի եղեալ՝ կերակուր իւրեանց զկերակրոցն ապականիչս առնելոյ աղագաւ» (ԸՊ, 36):

Կատու արմատով կազմված բառերի մեջ Աճառյանը բերում է նաև *կատուապաշտութիւն* բառը՝ վկայելով հենց Օծնեցու «Ընդդէմ պառկեանց» ճառը (ՀԱԲ, II, 539): Բառն *ա* հոդակապով միացել է *պաշտութիւն* գոյականին:

Կերակրափոխութիւն բառը Օծնեցու երկում գործածվել է «փոխել կերակուրը դեպի լավը, կերակրի բարելավում» նշանակությամբ (ՆՀԲ, 1, 1090)՝ *-ութիւն* ածանցով բառերին հատուկ գործիական հոլ-

վածնով՝ որպես միջոցի խնդիր. «Բայց արժան է ոչ միայն քրիստոսեան պատարագաւ և *կերակրափոխութեամբ* պատուել զօրս այս» (Ատ., 16):

Նորակազմությունը ձևավորվել է *կերակուր* (ՆՀԲ, 1, 1090) կրկնավոր բարդությունից, որի բաղադրիչներն են *կեր* և *կուր*, և *փոխել* բայի՝ *-ութիւն*-ով բաղադրված գոյականից:

Կռուարարութիւն գոյականը ևս միայն Օծնեցու երկում է հանդիպում և նշանակում է «կռիվ առաջ բերելը», «կռվարար լինելը» (ՆՀԲ, 1, 1128): Այն գործածվել է որպես տեղի պարագա՝ *առ* նախդիրով և հոգնակի հայցական հոլովվածնով. «Վասն այլոց այլով իւիք քաջահաճութեանցն պատահմանց ի զարմացումն եկեալք՝ աստուածս անուանեցին. զԿռոնոս վասն յոխորտաբար *առ կռուարարութիւնս* յարծակելոյ, զԱրէս՝ վասն արին գոլոյ» (ԸՊ, 37):

Նորակազմության բառակազմական հիմքն է *կռուարար* (ՆՀԲ, 1, 1128) ածականը, որին ավելացել է *-ութիւն* ածանցը՝ որպես բաղադրող հիմք:

Մկնորսակ բառը թերևս այս խմբում միակն է, որը ձևավորվել է *-ակ* վերջածանցով. այն նշանակում է «մկներ որսացող. կատու»: ՆՀԲ-ն (2, 285) այն ներկայացնում է որպես *կատու* գոյականի մակդիր, որ կարող է հանդես գալ թե՛ որպես գոյական, թե՛ որպես ածական՝ հոլովվելով *ի-ա* վերջադրական հոլովմամբ (հոգն. սեռականում՝ *մկնորսակաց*): Ներկայացվող օրինակում բառը գործածվել է որպես գոյական՝ հանգման խնդրի պաշտոնում. «Արեգական երկիր պագանելով, նորացումն լծակցին երկրպագուաց. *մկնորսակացն* լինելով պաշտօնամատոյց, յայնոցիկ մղեալ անկանին խորխորատ՝ որք զծի և զշուն ընտրեցին իւրեանց լինել աստուածս» (ԸՊ, 37):

Այստեղ գիտակցվում է գոյական (ուղիղ խնդիր) + բայափիմք լրացյալ հարաբերությունը, որտեղ *մուկն* բառը կապակցվել է *որսալ* բայի *որս* հիմքին՝ + *-ակ* ածանց:

Մայրապականութիւն բառը «մորը պղծելը» նշանակությունն ունի (ՆՀԲ, 2, 204) և հանդես է եկել որպես անջատման խնդիր՝ բացառական հոլովով. «Ընդ խաւար զխաւարայինսն կատարելով ծանակութիւնս, ի պարսկական *մայրապականութեանցն* վայր վտանգեալ խրին խոհերս» (ԸՊ, 38):

Նորակազմությունը ձևավորվել է *ապականութիւն* (ՆՀԲ, 1, 270) հիմքից, որին սկզբից միացել է *մայր* բառը:

Մարմնամոլութիւն «որովայնամոլ լինելը» նշանակութեամբ բառը (ՆՀԲ, 2, 228) գործածվել է որպէս հատկացուցիչ հետևյալ օրինակում. «Եւ այս յորդուց անտի Հեղեայ յայտ է. որք անպարապ լինելով ի մարմնամոլութեանն յղվութենէ, հանապազաւակ գորուս խորանին Աստուծոյ ընդդէմ եկելոց անդր ուխտաւորացն պահիին» (Ատ., 10):

Այստեղ մոլութիւն գոյականին (ՆՀԲ, 1, 295) հոդակապով միացել է մարմին բառը՝ հնչյունափոխված տարբերակով, որը սեռական հոլովի նշանակություն ունի, և ձևավորվել է *հատկացուցիչ + հատկացյալ* շարահյուսական հարաբերությամբ:

Նշանապաշտութիւն «սուրբ նշանի պաշտամունք» (ՆՀԲ, 2, 436) բառը գործիական հոլովով գործածվել է որպէս պատճառի պարագա՝ *աղագաւ* նախադրության հետ՝ հետևյալ օրինակում. «Եւ ուղիղ և աստուածաւանդ կրօնիցն մերոց լուսաւորութեամբ նախատել զմեզ յանդգին պղծալիցն իւրեանց շրթամբք, կռապաշտս անուանելով *տէրունեան աղագաւ նշանապաշտութեամբ*» (ԸՊ, 35): Թարգմանված է՝ «*նշանի պաշտամունքի պատճառով*» (ՀՕԵ, 128): Բառը կազմված է *նշան* և *պաշտ* հիմքերից՝ + *-ութիւն* ածանց:

Նույն սկզբունքով է ձևավորվել հաջորդ՝ *չարապաշտութիւն* բառը, որը գործածվել է «չար մոլորություն, չարափառություն, ծառայություն՝ չարին» իմաստներով (ՆՀԲ, 2, 570)՝ թե՛ «Ընդդէմ պաւղիկեանց»-ում և թե՛ «Ընդդէմ երեւութականաց»-ում: Ահա այդ գործածություններից երկուսը. «Եւ զայդ այդպէս շաղակրատելովդ՝ Արիոսի եղեալ գտանիս *չարապաշտութեան* զուգածայն» (ԸԵ, 69), «Եւ սորա խաւար *չարապաշտութեան* զբոլոր տիեզերս ընդ իւրեւ կալեալ կուրացոյց» (ԸՊ, 36): Բառն առաջին օրինակում հանդես է եկել որպէս տրական հոլովով արտահայտված հանգման խնդիր, երկրորդում՝ որպէս սեռականով հատկացուցիչ: Ի դեպ, ՆՀԲ-ն տալիս է նաև *չարապաշտ* ձևը (ՆՀԲ, 2, 570), որի դիմաց առաջինը վկայում է Օծնեցուն՝ օրինակը բերելով «Ընդդէմ երեւութականաց»-ից: *Չար* արմատով կա ևս մեկ նորակազմություն՝ *չարարարութիւն*, որի իմաստն է «չարիք գործելը, չարագործություն» (ՆՀԲ, 2, 570): Բառի սերող հիմքն է *չարարար* ածականը (նույն տեղում): «Ընդդէմ պաւղիկեանց»-ում բառը գործածվել է գործիական հոլովով՝ իբրև ձևի պարագա. «...այլ և առ իւրեանցսն գրգռին պաշտօնեայս յարձակել *չարարարութեամբ* և *վնասահարութեամբ*» (ԸՊ, 41):

Ի դեպ, *վնասահարութիւն* բառը ևս նորակազմ է, ունի «չարիք գործելը, չարագործություն» իմաստը (ՆՀԲ, 2, 818) և հանդես է եկել նույնպիսի կիրառությամբ, ինչ նախորդը, կազմված է *վնաս* + *հարկանել*

«զարկել, խփել» բայի *հար* հիմքերից՝ + *-ութիւն* ածանց: Այս բառում բառակազմական հիմքեր չեն ո՛չ *վնասահար*, ո՛չ էլ *հարութիւն* ձևերը, քանի որ ՆՀԲ-ում առանձին վկայված չեն:

Պատրողաբանութիւն «ստահող, մոլոր, խաբեական խոսք» իմաստով (ՆՀԲ, 2, 624) բառը գործածվել է որպէս ձևի պարագա՝ հետևյալ օրինակում «...սոյնպէս և ասացեալքս այսոքիկ, տղմասէրք և ժանտագործք, առ միմեանս անպատկառացոյցք են պղծութեան, իսկ ի մէնջ վրիպանուն *պատրողաբանութեամբ* զանխլանալ կարծեն» (ԸՊ, 38): Բառը կազմված է *պատրող* բայածևից, որից բաղադրված բազմաթիվ ձևեր է ներկայացնում ՆՀԲ-ն (նույն տեղում), և *բան* գոյականից:

Վայասացութիւն բառը Օծնեցին գործածել է «ողբ, վայ անելը» (ՆՀԲ, 2, 776) իմաստով. «...և դնելով զխաւարն իբրև զլոյս, զչարն ընդ բարոյ փոխանակել, և բառնալ բերել զմարգարէականն ի գլուխս իւրեանց *վայասացութիւն*» (ԸԵ, 82):

Բառը ձևավորվել է *վայ* ծայնարկությունից և *ասացութիւն* (ՆՀԲ, 1, 813) հիմքից: Նորակազմ բառը բնագրում գործածվել է որպէս ուղիղ խնդիր:

Տարրատոչութիւն բառը՝ «տարրերի նկատմամբ տարփանք, տարրապաշտություն» իմաստով (ՆՀԲ, 2, 559), հանդես է եկել պատճառի պարագայի կիրառությամբ. «*Տարրատոչութենէ* դևն ստիպէ իւրսն հնազանդեալս» (ԸՊ, 41): Այստեղ էլ *տարր* չստուգաբանված բառը կապակցվել է *տոչութիւն* (ՆՀԲ, 2, 894) գոյականին: Ի դեպ, Աճառյանը ևս նշում է վերոնշյալ բառը՝ վկայակոչելով միայն Օծնեցուն (ՀԱԲ, IV, 388):

Ուղղասացութիւն «ողջամիտ վարդապետություն» (ՆՀԲ, 2, 547) նորակազմ բառը, որ կազմված է *վայասացութիւն* բառի պէս՝ *ուղիղ* պարզ և *ասացութիւն* ածանցավոր հիմքերից, հանդես է եկել ուղիղ խնդրի պաշտոնում. «...զիարդ էր՝ եթէ զբիւրութեանն արտահալած առնելով զաւանդիչս, զիւրեանցն ի ձեռս նոցա տային առ ի թիւրել *զուղղասացութիւն*» (ԸԵ, 81):

Նորակազմ է ունգնադրութիւն բառը՝ «հնազանդություն, ականջ անելը» իմաստով (ՆՀԲ, 2, 551)՝ *ունգն* (փոխանակ՝ *ունկո*) և *դր* («*դնել*») արմատներից: Բառը հանդես է եկել որպէս հատկացուցիչ. «... և զուշ և զմիտս *ունգնադրութեան*, կարկառեալ ի տաճար սրբութեան» (Յաղագս կարգաց եկեղեցոյ, 97)⁴³. Այստեղ հետնալեզվային խուլ բաղա-

⁴³ Յովհաննու Օծնեցոյ Մատենագրութիւնք, «Յաղագս կարգաց եկեղեցոյ», Վենետիկ, 1833, էջ 81-93 (այսուհետև՝ 34Ե):

ծայնի փոխարեն ծայնեղի գործածությունը կամ հեղինակային է, կամ պայմանավորված է գրիչների արտասանությամբ: Երկու դեպքում էլ գործ ունենք բաղաձայնական հնչարտաբերության ոչ կանոնական դրսևորման հետ: Ի դեպ, Օծնեցու երկերում այսպիսի օրինակների հաճախ կարելի է հանդիպել (օր.՝ *խորամանգութիւն* (ՆՊ, 128), երբեմն պարզ կամ շնչեղ խուլի փոխարեն հանդիպում ենք ծայնեղ բաղաձայնի, ինչպես՝ *եղաց* (Սժ, 11), *գորթորդսական* (ՆՊ, 101), *պանծայի* (ՎԱՍ, 104) և այլն): Թեև ՆՀԲ-ն տալիս է *ունկնադրութիւն* ձևը: Բառը նորակազմ է միայն *ա* հոդակապի առկայությամբ, քանի որ *ունկնդրութիւն* (նույն տեղում) բառի դիմաց կան բազմաթիվ վկայություններ: Այն, անշուշտ, *ունկն դնել* հարադրությունից է ձևավորվել:

բ) Բարդ ածանցավոր նորակազմ գոյականներից այս կետում առանձնացրել ենք այն բառերը, որոնք գործածվել են նաև Օծնեցուն հաջորդած կամ նրան ժամանակակից հեղինակների կողմից: ՆՀԲ-ն այս բառերի դեպքում նախ հիշատակում է Օծնեցուն, ապա՝ մյուսների: Սրանք, թերևս, ավելի քիչ են, քան նախորդները (ընդամենը 10 բառ): Դրանք են՝ *թափառումն*, *ծանրաբեռնութիւն*, *կիրընդունակութիւն*, *ճոռոմաբանութիւն*, *պատկերամարտութիւն*, *ուղղապաշտութիւն*, *փառագարդութիւն*, *քաջահաճութիւն*, *քրիստոսատեցութիւն*, *օրէնսագանցութիւն*:

Թափառումն գոյականը միակն է այս խմբում, որ կազմված է *-ումն* ածանցով: Սերող հիմքն է *թափառ* «թափ առնող» ածականը, որ նաև մակբայական կիրառութիւն ունի (ՆՀԲ, 1, 801): Բառի արմատներն են՝ *թափ* և *առ* (<*առնուլ*): Բառը հանդես է եկել «թափառելը, տեղից տեղ գնալը» նշանակությամբ (ՆՀԲ, 1, 802)՝ որպես բացառական հոլովով արտահայտված անջատման խնդիր. «Որք առաքելական քարոզութեամբն ժողովեցան ի մեղացն թափառմանէն...» (3ԿԵ, 100): ՆՀԲ-ն Օծնեցուց հետո վկայակոչում է Գրիգոր Մագիստրոսին: *Թափառանք* բառի դիմաց կան այլ վկայություններ:

Սնացած բոլոր բառերը բաղադրված են *-ութիւն* ածանցով՝ որպես վերացական գոյականներ: *Ծանրաբեռնութիւն* «ծանր բեռ, ծանրություն» նշանակությամբ (ՆՀԲ, 1, 1008) բառի հիմքն է *ծանրաբեռն* ածականը (ՆՀԲ, նույն տեղում), որից էլ *-ութիւն* ածանցով բաղադրվել է այն: Գործածվել է որպես հատկացուցիչ. «...ի տրտմականսն *ծանրաբեռնութեան* ի ներքոյ դնանիլ տկար բնութեանս» (Ատ., 15): Բառը գործածվել է նաև Ներսես Լամբրոնացու կողմից:

<Ունաբան ոճի կազմություն է կիրընդունակութիւն «կրքերն իր վրա վերցնելը» (ՆՀԲ, 1, 1101) գոյականը, որի հիմքերն են *կիր* և *ընդունա-*

կութիւն (ընդ նախդիր + ուն <*ունիլ* «բռնել, առնել, ունենալ» բայի բնիկ հայերեն արմատը + *-ակ* ածանց): Ահա բառի կիրառությունը. «...որովք և ոչ ամենեքումքք այսոքիք գիրկչականն պարտ և արժան է ասել *զկիրընդունակութիւնս*» (ԸԵ, 91): Բառը հանդես է եկել որպես ուղիղ խնդիր՝ ունաբան ոճին հատուկ՝ հայցական հոլով + անորոշ դերբայ կառույցում: Այն գործածվել է նաև հետագայում. ՆՀԲ-ն Օծնեցուց հետո վկայում է Ոսկիփորիկը, Խոսրովիկ Թարգմանչին (նույն տեղում): Ընդ որում Աճառյանը *կիրընդունակ* ածականը մեջբերում է Խոսրովիկ Թարգմանչից (ՀԱԲ, II, 594), *ութիւն*-ով կազմությունը ՀԱԲ-ում ընդհանրապես չի վկայվում:

Պատկերամարտութիւն գոյականը «մոլորություն, պատկերամարտ» իմաստով հանդիպում է նախ Օծնեցու երկում, ապա Մովսես Կաղանկատվացու երկերում (ՆՀԲ, 2, 613): *Պատկերամարտ* բառը թե՛ որպես ածական և թե՛ որպես գոյական բազմաթիվ գործածություններ է ունեցել նախկինում, և նորակազմությունը ձևավորվել է *-ութիւն* ածանցով միայն: Օծնեցու երկում այն գործածվել է որպես անջատման խնդիր. «Ի պատկերամարտութենէ ի խաչամարտութիւն և քրիստոսատեցութիւն, և անտուստ յանաստուածութիւն և դիւապաշտութիւն» (ԸՊ, 34):

Ճոռոմաբանութիւն «շատախոսություն» (ՆՀԲ, 2, 186) բառը գործածել են նաև Գրիգոր Մագիստրոսը և հետագա այլ հեղինակներ: Ահա բառի գործածությունը Օծնեցու երկում. «...զԿռոնոս վասն յխորտաբար առ կռուարարութիւնս յարծակելոյ զԱրէս՝ վասն քաջախօսնակ *ճոռոմաբանութեան*...» (ԸՊ, 37): Ակնհայտ է, որ բառը հանդես է եկել *վասն* նախադրության հետ՝ նպատակի պարագայի կիրառությամբ: Կազմված է *ճոռոմ* և *բան* արմատներից: Բառը նորակազմ է *-ութիւն* ածանցով, քանի որ ՆՀԲ-ն բազմաթիվ վկայություններ է բերում *ճոռոմաբան*, *ճոռոմաբանիլ* բառերի դիմաց: Իսկ ՀԱԲ-ը նշում է միայն Օծնեցու օրինակը (II, 212):

Ուղղապաշտութիւն «բարեպաշտութիւն» բառը (ՆՀԲ, 2, 547) Օծնեցուց հետո գործածել է նաև Խոսրովիկ Թարգմանչիցը: ԸԵ-ում այն գործածվել է որպես հատկացուցիչ. «Եւ այսպէս երկոքումքք այսոքիք *ուղղապաշտութեան* շաւօքք առ խորհուրդ մարմնաւորութեան Բանին վերերթալ գիտացեալ սուրբ հարքն...» (73): Բառը կազմված է *ուղիղ* և *պաշտ* հիմքերից՝ + *-ութիւն* ածանց, քանի որ բառն առանց 4 *-ութիւն*-ի ՆՀԲ-ում չկա:

Փառագարդութիւն «փառավորություն, զարդ կամ փառավոր գործ» (ՆՀԲ, 2, 93) բառը ներգոյականի իմաստ է արտահայտում և հանդես է

եկել որպես տեղի պարագա հետևյալ օրինակում. «Ի հրաշակերտ *փառազարդութանցն* աստուծոյ զամենայն զոյ բարեօք տեսանեմք...» (ՅԿԵԶ, 83): Բառի հիմքն է՝ *փառազարդ*, որից էլ ածանցվել է նորակազմությունը: Բառը նորակազմ է դարձյալ ածանցմամբ, ինչպես նաև հաջորդ՝ *քաջահաճութիւն* «բարեհաճ լինելը, հաճելիություն» իմաստով բառը, որը Օձնեցուց հետո գործածել է նաև Քևորգ Սկևռացին (ՆՀԲ, 2, 984-985): Օձնեցու հետևյալ օրինակում այն հանդես է եկել որպես որոշիչ. «Վասն այլոց այլով իւիք *քաջահաճութանցն* պատահամանց ի զարմացումն եկեալ աստուածս անուանեցին» (ԸՊ, 37): Երևույթը կապված է որոշիչ՝ ածականով արտահայտվելու փոխարեն վերացական գոյականով հանդես գալու հետ:

ՆՀԲ-ն (2,1017) Օձնեցուց հետո վկայակոչում է «Ճառընտիրը»՝ *քրիստոսատեցութիւն* բառի գործածության դեպքում: Այն «Քրիստոսին ատող լինելը» նշանակությամբ ԸՊ-ում հանդես է եկել որպես ուղևորման հայցական՝ *ի* նախդրի հետ միասին. «...ըմբռնել զախմարս և զպարզամիտս ի մարդկանէ, որք չարեաց ի չարիս վերացեալ ելին ի պատկերամարտութենէ ի խաչամարտութիւն և ի *քրիստոսատեցութիւն*» (էջ 34): Այս բառի սերող հիմքն է *քրիստոսատեաց* ածականը, որը վկայված է ՆՀԲ-ում (2, 1017)՝ Ճառընտիրից քաղված վկայություններով: Եվ հնարավոր է, որ բառն ամբողջությամբ նորակազմ է:

Այս խմբի բառերի մեջ վերջինը *օրէնսազանցութիւն* «օրինազանցություն, անօրինապահ լինելը» (ՆՀԲ, 2, 1033) նշանակությամբ բառն է, որը, թերևս, նախորդ բառախմբում պետք է ներկայացվեր, քանի որ Օձնեցուց հետո ՆՀԲ-ն հիշատակում է «Կանոնքը», որը շատ ուսումնասիրողների կարծիքով դարձյալ Օձնեցուն է պատկանում: «Ատենաբանութիւն» երկում բառը գործածվել է որպես ուղիղ խնդիր. «...զոր երուսաղեմացիքն յութօրեայս յայտնութեանդ՝ յութ եկեղեցիսն իւրեանց երթալով՝ զնոցին տեղեացն և զկանոնն կատարեն. *օրէնսազանցութիւն* կարծելով զայս...» (Ատ., 12):

Բառի հիմքերն են՝ *օրէն* և *զանց* (< *զանցանել*): *Օրէնսազանց* ածականը ՆՀԲ-ում նշված չէ, ուստի այն որպես սերող հիմք ընդունել չենք կարող:

Բարդ ածանցավոր գոյականների մեծ մասում առկա է *-ութիւն* ածանց, բացի *մկնորսակ* և *թափառումն* բառերից: Սակայն միշտ չէ, որ այն բաղադրող հիմքի արժեք է ունենում: Կան բառեր, որոնք կազմվել են ոչ թե ածանցմամբ կամ վերացական գոյականներով, այլ տարբեր

բառերի զուգորդումներով (հիմք + (հողակապ) + հիմք + ածանց), ինչպես՝ *վնաս + ա + հար + ութիւն, օրէնս + ա + զանց + ութիւն* և այլն:

Երբեմն նորակազմությունը ձևավորվել է որևէ վերացական գոյականով արտահայտված սերող հիմքով, որին սկզբից միացել է հիմնական ձևույթ (արմատ), ինչպես՝ *ծննդակերութիւն, տարրատարութիւն* և այլն: Եվ ստացվում է, որ նորակազմությունը ձևավորվում է բառակազմական երկու ձևույթներով՝ հիմնական (արմատ) և երկրորդական բառակազմական (ածանց): Սրանցում կան բառամասեր, որոնք պարբերաբար հանդիպում են նորակազմություններում, և միշտ չէ, որ բառակազմական հիմքի արժեք են ունենում, ինչպես՝ *պաշտութիւն* (5 բառում), *մարտութիւն* (2 բառում), *ասացութիւն* (2 բառում):

Ամփոփելով բարդ ածանցավոր գոյականների վերլուծությունը՝ նշենք, որ դրանք կազմված են բառակազմական հետևյալ կաղապարներով.

1. Բաղադրյալ հիմք + ութիւն (*ծանրաբեռնութիւն, կռուարարութիւն, ճոռոմաբանութիւն, չարարարութիւն, պատկերամարտութիւն, փառազարդութիւն, քաջահաճութիւն, քրիստոսատեցութիւն*):

2. Պարզ հիմք + (հողակապ) + ածանցավոր հիմք (*բերանալուծութիւն, մարմնամոլութիւն, տարրատարութիւն, վայասացութիւն*):

3. Ածանցավոր հիմք + հողակապ + ածանցավոր հիմք (*ծննդակերութիւն*):

4. Բարդ հիմք + հողակապ + ածանցավոր հիմք (*կերակրակոխութիւն*):

5. Պարզ հիմք + հողակապ + պարզ հիմք + ածանց (*գիշերապաշտութիւն, խաչամարտութիւն, կատուապաշտութիւն, նշանապաշտութիւն, չարապաշտութիւն, վնասահարութիւն*):

6. Պարզ հիմք + ածանցավոր հիմք (*կիռընդունակութիւն*):

7. Պարզ հիմք + պարզ հիմք + ածանց (*մկնորսակ*):

8. Պարզ հիմք + նախդրավոր հիմք + ածանց (*օրէնսազանցութիւն*):

9. Բաղադրյալ հիմք + հողակապ + պարզ հիմք + ածանց (*պատրուղաբանութիւն*):

10. Հողակապի հավելում (ունգնադրութիւն):

2. Բարդ կազմությամբ գոյականները, որ պատկանում են *հիմք + հիմք* կաղապարին, և բոլորն էլ իսկական բարդություններ են, զգալիորեն ավելի քիչ են, քան նախորդները (ընդամենը՝ վեցը), որոնցից հինգը (*ահեկակողմն, աղտախիւնք, բոլորագիշեր, սաղմոսողոզ*) գործածվել է միայն Օձնեցու երկերում: Մեկ գոյական, այն է՝ *ժամախար*, գոր-

ծածվել է նաև հետագայում: Պետք է նշել, որ *սաղմոսողոզ* բառի դեպքում առաջնորդվել ենք ՆՀԲ-ի տվյալներով: Լ. Հովհաննիսյանը գտնում է, որ այն գործածվել է 5-րդ դարի գրաբարում, իբրև հունական փոխառություն⁴⁴:

Ահեկակողմն «ծախ կողմ, մուրճ՝ սխալ կողմ» նշանակությամբ բառը (ՆՀԲ, 1, 10) գործածվել է որպես ուղևորման հայցական՝ *ի նախդրով + տրական* հոլով. «Որ առ պատուիրանադրեալսն ոչ ձգտի հասանել կանոն, նա *յահեկակողմանն* դանդաղէ խոտորեալ ճանապարհի» (Ատ., 15):

Բառի *ահեկ (ահեակ)* և *կողմն՝ կող* բառից՝ մն մասնիկով բաղադրիչները կապակցվել են որոշիչ + որոշյալ շարահյուսական հարաբերությամբ:

Աղտախիսնք հոգնակի գոյականը «աղտեղություն, աղտ, կեղտ, առատ» նշանակությունն ունի (ՆՀԲ, 1, 44) և հանդես է եկել ուղիղ խնդրի կիրառությամբ՝ հետևյալ օրինակում. «...և զանուանն իւրեանց *զաղտախիսնս* յանդգնեցան կախել զայնցանէ, որ զերկնից բարութեանցն բուռն հարեալ ունիցին յուտով» (ԸՊ, 39): Բառը թերևս կազմված է *աղտ* «կեղտ» բառի կրկնությամբ, ընդ որում՝ հնչյունափոխված: Աճառյանը նշում է միայն Օծնեցու օրինակը (ՀԱԲ, 1, 135):

Բոլորագիշեր «ամբողջ գիշեր, բոլոր գիշեր» նշանակությամբ գոյականը (ՆՀԲ, 1, 501), որ *բոլոր գիշեր* որոշիչ – որոշյալ կապակցությունից է ձևավորվել, ևս ուղիղ խնդրի պաշտոնում է հանդես եկել՝ հոգնակի թվում. «...որք հսկմամբ և աղօթիք *զբոլորագիշերս* զայս մեծարեալ բաղձացան» (Ատ., 16):

Նորակազմ է մկրտատուն «մկրտվելու տուն» (ՆՀԲ, 2, 285) գոյականը ևս, որի դիմաց ՆՀԲ-ն վկայություններ է բերում միայն Օծնեցու երկերից: Հետևյալ նախադասության մեջ բառը գործածվել է տեղի պարագայի կիրառությամբ. «...այլ աւագան քարեղէն հաստատել ի նմին իսկ յեկեղեցւոջն, և կամ անդէն մերձ յեկեղեցին *ի մկրտատունան*» (Ատ., 4., 26):

Հոդակապով իսկական բարդությունը ձևավորվել է բառակապակցության բաղադրիչների միացումով:

Սաղմոսողոզ բառը «սաղմոսասաց դպիր, պալատ» (ՆՀԲ, 2, 691) նշանակությամբ գործածվել է որպես անջատման խնդիր. «...ի *սաղմո-*

սողոզէն և ի հրեշտակական դասուէն սկսեալ՝ տանին յանգել յեպիսկոպոսն և ի քրովբէական դասն» (Ատ., 22): Սեռականում բառն ունենում է *սաղմոսողոզի, սաղմոսողոզաց ձևերը* (ի-ա վերջադրական հոլովում): Կազմված է *սաղմոս* (ՀԱԲ, IV, 166) և *ողոզ* «օրհնված, բարեբանված» (ՀԱԲ, III, 554-555) հունական ծագումով բառերից: Ի դեպ, Աճառյանը նշում է միայն *ողոզոմեան* «ծաղկազարդի տունը» ձևը՝ *ողոզոմէն, ողոզոմէ, ողոզոմ, ողոզոմեան* տարբերակներով: Հետագայում սրանից բաղադրված *սաղմոսողոզութիւն* «սաղմոսերգութիւն. սաղմոսասաց դպիրների փառաբանությունը» գոյականը գործածել է Ներսես Լամբրոնացին (ՆՀԲ, նույն տեղում):

Պետք է նշել, որ այս կարգի բառերից միայն մեկն էլ, Օծնեցուց բացի, գործածել են նաև հետագայի հեղինակներ: Ղա ժամահար «ժամը խփելու գործիք՝ եկեղեցի հավաքվելու համար. կոչնակ» (ՆՀԲ, 1, 827), գոյականն է, որը դարձյալ հոլովվում է *ի -ա* հոլովմամբ և ձևավորվել է լրացում (խնդիր) + բայահիմք լրացյալ շարահյուսական հարաբերությամբ. այն սեռական հոլովածուով հանդես է եկել որպես հատկացուցիչ՝ հետադաս կիրառությամբ. «Ազդարարութիւն *ժամահարին* զգաբրիւեան փողոյն ունի զօրինակ և դիմելն ի տեղի աղօթիցն՝ զհաւաքումն ահեղ ատենին» (ԱԳժ, 109)⁴⁵:

Այսպիսով՝ բարդ կազմությամբ գոյականները հիմնականում հողակապով կազմություններ են, բացի *սաղմոսողոզ* բարդությունից, որի երկու բաղադրիչներն էլ հունարեն բառեր են, որոնք փաստորեն միացել են լրացում – լրացյալի հարաբերությամբ՝ առանց հողակապի, որը տվորական է հայերենի բառակազմության համար:

3. ա) Ածանցավոր բառերի մեջ առանձնացրել ենք չորս բառ, որոնցից մեկը նախածանցավոր է (*դերաքրիստոս*), իսկ մյուսները վերջածանցավոր են (*արուեստարան, խեշերանք, փարումն*):

Ղերաքրիստոս բառը գործածվել է «Քրիստոսին հակառակ, նեռ» իմաստով (ՆՀԲ, 1, 611)՝ որպես հատկացուցիչ. «Եւ մինչ չև էր նոցա գորավիզն գտեալ զկարապետս *դերաքրիստոսին*» (ԸՊ, 39): *Ղերաքրիստոսեայք* հոգնակի ուղղականով բառածը գտնում ենք նաև Օծնեցու նորահայտ երկում՝ որպես բացահայտիչ. «...քանզի Արտեմոն եւ Մարկիոն եւ Բասելիդէս *դերաքրիստոսեայք*, տրամամիտք, անսուրբք իմաստունք, ապաքէն զինքեանս կարծելով յաւէտ քան զառաքեալս՝

⁴⁴ Տե՛ս Լ.Ը. Հովհաննիսյան, Գրաբարի բառապաշարը (5-րդ դար), Երևան, 2006, էջ 100:

⁴⁵ Տե՛ս Յովհաննու Իմաստասիրի Օծնեցույ Մատենագրութիւնը, Սակս գիշերային ժամու, էջ 109-114 (այսուհետև՝ ԱԳժ):

երկուս բնութիւնս ասացին զՔրիստոս...» (ՆՊ, 116): Բառը հետագայում գործածվել է նաև Գրիգոր Նարեկացու և ուրիշների կողմից: Պատկանում է *հ* վերջադրական հոլովման: Նորակազմությունը ձևավորվել է *դեր* նախածանցով, որը հունաբան հայերենի նորարարության արդյունք է⁴⁶:

Արուեստարան բառը նշանակում է «արիեստանոց, վարժարան, արիեստի և ուսման վայր» (ՆՀԲ, 1, 373): Այն գործածել է միայն Օծնեցին՝ սույն հատվածում. «...եթէ արդեւք վարդապետեցար ի քում *արուեստարանիդ*, այլ զոլ զանձն, և այլ զղէմս...» (ԸԵ, 79): *Ի* նախդրով և տրական հոլովածով ձևավորվել է տեղի պարագա:

Վերջածանցմամբ ձևավորված այս նորակազմությունը հոլովվում է ի-ա վերջադրական հոլովմամբ:

Խեշերանք «խշրանք, փշուր, փշրանք» իմաստով (ՆՀԲ, 1, 940) բառի դիմաց ՀԱԲ-ը (II, 359), ինչպես և ՆՀԲ-ն, վկայակոչում են միայն Օծնեցուն՝ նշելով, որ ուրիշը չկա, և բառը կապվում է *խոշոր* չստուգաբանված բառի հետ: Աճառյանը նշում է մեկ այլ մեկնաբանություն, ըստ որի՝ բառը ծագում է *xušāra* «փշրանք» բառից, որն էլ անընդունելի է համարվում: Այն հոգնակիության իմաստ ունի և հոլովվելիս սեռականոնում ստանում է *-նաց*, հետևյալ օրինակում հանդես է եկել որպես ենթակա. «Նախկին մծղնութեան պայղակենութեան *խեշերանք*, որք խրատեալք, և ոչ իմաստնացեալք, ի Ներսիսէ կաթողիկոսէ, զկնի նորուն մահուանն խոսեալք չոգան ղօղեցին յոլորտս ուրեք աշխարհիս մերոյ» (ԸՊ, 39):

Փարումն «գուրգուրանք, զգվելը, գուրգուրելը» իմաստով բառը (ՆՀԲ, 2, 937) միայն Օծնեցին գործածել է որպես ենթակա՝ հետևյալ հատվածում. «Աստանօր *փարումն* Հոգւոյն սրբոյ օրինակաւ խնկոյն ի Հօրէ բուրեալ, զամենեսեան ի վեր առնլովն ուստի անկանն...» (ՎԱՄ, 105):

Բառը կազմված է չստուգաբանված *փար* արմատից (ՀԱԲ, IV, 488): Հոլովական հարացույցում որևէ շեղում հանդես չի բերում և, ըստ ՆՀԲ-ի, -ումն ածանցով ավարտվող բոլոր բառերի նման, ենթարկվում է *ա* հոլովման:

բ) Ածանցավոր բառերի մեջ առանձնանում են չորսը, որոնցում առկա են և՛ նախածանցներ, և՛ վերջածանցներ: Դրանք հունաբան ոճի

արդյունք են, քանզի բաղադրված են կամ միայն *ներ-* կամ *պար-* նախածանցներով, կամ էլ նաև *-ութիւն* վերջածանցի հետ միասին (*ներլիներութիւն, ներխորհուրդ*), ինչպես նաև *շար-* և *-ումն* ածանցներով (*շարաբարձումն*): Սրանք, թերևս, խառը տիպի կազմություններ պետք է համարել, քանի որ, ինչպես և Հովսեփյանն է գրում, լեզվում բացի *հիմք + հիմք, հիմք + ածանց* կաղապարները (բարդ և ածանցավոր), կան նաև բառեր, «որոնք հնարավոր չէ միանշանակ կերպով հատկացնել բարդ կամ ածանցավոր (վերջիններիս դեպքում՝ նախածանցավոր կամ վերջածանցավոր) կաղապարների թվին»⁴⁷:

Ներլինելութիւն բառը «լինելություն» իմաստով գործածել է միայն Օծնեցին՝ տարբեր հատվածներում. «...քանզի *ներլինելութեանն* է ներհական, որպէս յառաջն ասացի, որ ապականէ զիրն...» (ԸԵ, 92):

Նշված նախադասության մեջ բառը հանդես է եկել որպես հանգման խնդիր, իսկ հետևյալ օրինակում՝ որպես միասնության խնդիր. «...ևս և անգիտութիւն և որ սոցին նմանէ, համանգամայն ընդ *ներլինելութեանն* բանի առեալ լինի մարդունս...» (ԸԵ, 83):

Ներ- հունաբան ոճի⁴⁸ նախածանցի առկայությունը որևէ նոր իմաստ չի հաղորդում *լինել* բառին և, փաստորեն, ձևական է: Նույն ածանցը, միանալով խորհուրդ բառին, կազմել է *ներխորհուրդ* բառը ևս, որը միայն Օծնեցին է գործածել՝ «ներքին կամ բուն խոսք, զաղտնի խորհուրդ անող» իմաստով (ՆՀԲ, 2, 418): ՆՀԲ-ն նշում է, որ բառը սեռական հոլովում ունենում է *ներխորհրդոյ* ձևը, տրականում՝ *ներխորհրդում ձևերը*.

«Տու՛ր զքեզ *ներխորհրդումն* բանի, և մի՛ զխորհուրդ բանին առ քեզ բռնադատել թիրեցես» (ԸԵ, 76) օրինակում բառը հանդես է եկել որպես հանգման խնդիր:

Շարաբարձումն բառի արմատն է *բարձ* (*բարձնալ*), որն առանձին անգործածական է: «Բացառում» իմաստով (ՆՀԲ, 2, 468, տես նաև *շարաբարձալ* «միասին բարձրացնել. վեր հանել և այլն») այն հանդես է եկել որպես ենթակա՝ հետևյալ օրինակում. «...եթէ անունն ի միջոյ բարձցի ապա և Բանն. և *շարաբարձումն* անուանն և բանի՝ բարձցէ ընդ նմին և զնա, զորմէ ասեսն ...» (ԸԵ, 70): Այս բառը ևս գործածել է միայն Օծնեցին:

⁴⁶ Տես Ա.Ն. Մուրադյան, Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, 1971, էջ 138:

⁴⁷ Տես Ա.Ս. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 288:

⁴⁸ Տես Ա. Ն. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 138:

ՆՀԲ-ն (2, 617) վկայակոչում է միայն Օծնեցուն հաջորդած հեղինակների՝ պարակցութիւն բառի դիմաց, որը նշանակում է «պարակից լինելը, դասակից, երթակից դառնալը»: Մինչդեռ այն գտնում ենք Օծնեցու երկում՝ ուղիղ խնդրի կիրառությամբ. «Եւ վասն զի հանել կարգեաց զինքն մտօք ընդ զուարթնոցն պարակցութիւնս» (Ատ., 20): Բառը կազմված է *պար-* ածանցով: Ըստ Զահուկյանի՝ անհավանական չէ ենթադրել, որ «պար(ա)- ածանցի համար հիմք ծառայած պար բառը հունաբան հեղինակների կողմից կապված լինի իրանական ծագում ունեցող *պարիսպ* տիպի կազմությունների և հուն. «շրջա-, պարա-» նշանակությամբ նախաձանցի հետ»⁴⁹. Պարակից, պարակից լինել ձևերը գործածվել են նաև նախկինում, այսինքն՝ այստեղ ևս առկա է վերացական գոյականի՝ թանձրացականի փոխարեն հանդես գալու երևույթը:

Այսպիսով՝ հունաբան դպրոցի ստեղծած *դեր-, ներ-, շար-, պար-* ածանցները գործածական են նաև Օծնեցու երկերում, որոնցով կազմվել են ոչ միայն գոյականներ, այլև այլ խոսքի մասեր ներկայացնող բառեր:

4. Նոր բառերի մեջ կա մեկ գոյական, որը պարզ կազմություն ունի: Դա *նսիր* բառն է: Այն նշանակում է «(ծանր) գործ, (գործի) ծանրություն» (ՆՀԲ, 2, 454): ՆՀԲ-ն, ինչպես նաև Աճառյանը (ՀԱԲ, III, 476-477), Օծնեցուց բացի այլ հեղինակի չեն վկայում: Այս անստույգ բառը գործածվել է եզակի թվի հայցական հոլովով՝ որպես ուղիղ խնդիր. «Յորմէ ոչ փոփոխեսցի նախահարցն հաստատեալ սահմանք. այսինքն՝ ոչ տէրունականն աւուր զապաշխարութեանն ի վերայ ածել զնսիր...» (Ատ., 15):

Այսպիսով՝ նորակազմ գոյականներում առկա նախաձանցները (*դեր-, ներ-, շար, պար-*) բացառապես հունաբան դպրոցի կազմություններ են: Դրանք միացել են պարզ (*դերաքրիստոս*) կամ բաղադրյալ (*ներխորհուրդ, շարաբարծումն, պարակցութիւն*) կազմությամբ հիմքերին և ձևավորել նոր բառեր:

Վերը քննված բառերի կազմությունը, նորակազմությունների հեղինակային պատկանելությունը, գործածված ածանցների հաճախակա- նությունը ներկայացնելու նպատակով հավելյալ բերվում են հետևյալ աղյուսակները (տես աղյուսակ 1-2):

Կիրառություն		Սինս (1)	Սինս (2)	Սինս (3)	Սինս (4)	Սինս (5)	Սինս (6)	Սինս (7)	Սինս (8)	Սինս (9)	Սինս (10)	Սինս (11)	Սինս (12)	Սինս (13)	Սինս (14)	Սինս (15)	Սինս (16)	Սինս (17)
Սինս (1)	Սինս (2)	Սինս (3)	Սինս (4)	Սինս (5)	Սինս (6)	Սինս (7)	Սինս (8)	Սինս (9)	Սինս (10)	Սինս (11)	Սինս (12)	Սինս (13)	Սինս (14)	Սինս (15)	Սինս (16)	Սինս (17)	Սինս (18)	Սինս (19)

⁴⁹ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 566 (այսուհետև՝ ԶՆԺ):

Աղյուսակ 1. Նորակազմ գոյականներ

Աղյուսակ 2. Ածանցների գործածության հաճախականությունը

նախածանցներ	վերջածանցներ
դեր- (1)	-ակ (1)
ներ- (2)	-անք (1)
շար- (1)	-արան (1)
պար- (1)	-ութիւն (30)
	-ում (1)
	-ումն (2)
	-ունդ (1)
	-ուրդ (1)

2) ՆՈՐԱԿԱԶՄ ԱԾԱԿԱՆՆԵՐ

Պետք է նշել, որ նորակազմ ածականներն ավելի մեծ թիվ են կազմում Օծնեցու երկերում, քան մյուս խոսքի մասերը ներկայացնող նորակազմ բառերը: Ընդ որում դրանց մի մասը ՆՀԲ-ում ներկայացվում է երկակի կիրառություններով՝ թե՛ որպես ածական կամ մակբայ, թե՛ որպես ածական կամ գոյական: Այս կարգի շատ ածականներ նորակազմ են միայն ածանցման արդյունքում, քանի որ դրանք նախկինում գործածվել են, բայց առանց այդ մասնիկների:

Հայտնի է, որ գրաբարում ածականները նույնպես կարող էին հոլովվել: Օծնեցու երկերում հանդիպում են հոլովված և չհոլովված ձևեր: Բացի այդ, ՆՀԲ-ն որոշ բառերի կողքին նշում է հոլովական վերջավորությունները՝ հոլովիչները, մյուսների դեպքում՝ ոչ: Ածականների մեջ հանդիպում են և բարդ, և ածանցավոր կազմություններ:

1. Բարդ ածականներ

ա) Բարդ բառերը, որոնք ավելի շատ են, քան մյուսները, իսկական բարդություններ են՝ հողակապով կամ առանց հողակապի: Նախ ներկայացնենք հողակապով այն բարդությունները, որոնք, ՆՀԲ-ի վկայությամբ, գործածվել են միայն Օծնեցու երկերում: Այդ բառերն են՝ *ախտաբոյժ*, *աղօտաճաճանչ*, *ապականահալած*, *բազմաշափղ*, *բարեքաձև*, *գետնաթափալ*, *երեկանիրհասեր*, *թարախածուծք*, *միալուծ*, *յաւէժակից*, *յիմարամիտ*, *նեխաշաղիղ*, *նորավարժ*, *ոգեհաշմ*, *պատգամատար*, *ցաւահալած*:

Ախտաբոյժ «ախտերը, բուժող, ցավերն ապաքինող» (ՆՀԲ, 1, 17) և ցաւահալած «ցավերն հալածող և փարատող» (ՆՀԲ, 2, 911) նշանակություններով ածականները հանդես են եկել միևնույն նախադասու-

թյան մեջ՝ որպես մասնական բացահայտիչներ՝ հոգնակի հայցական հոլովածնով. «Են ոմանք ի նոցանէ, որոց տեսեալ զարիւնարբուս և զթարախածուծս ի կենդանեացո՞ իբրև *զախտաբոյժ* և *զցաւահալած* մեծարեալ զնոսա աստուածս անուանեցին» (ԸՊ, 36): Երկու բառերի դեպքում էլ ՆՀԲ-ն չի նշում հոլովիչները: Նկատելի է, որ բարդությունները ձևավորվել են բայահիմք լրացյալով և ուղիղ խնդիր լրացմամբ:

Աղօտաճաճանչ «թույլ վառվող, մլմլացող» (ՆՀԲ, 1, 48) ածականը ն որոշիչ հոդով և ուղղական հոլովածնով ենթակայի պաշտոնում է հանդես եկել. «...զի որպէս ի խաւարի և *աղօտաճաճանչն* է պատուեալ լոյս, ըստ նմին օրինակի լոյս եղելոյ՝ և դուզնաքեայ խաւարն վատթարանայ» (Ատ., 6): Նորակազմությունը ձևավորվել է բառակապակցության բայի զեղչումով:

Ապականահալած բառն «ապականությունը՝ վախճանը հալածող՝ փարատող» իմաստն ունի (ՆՀԲ, 1, 276) և ձևավորվել է նախորդ երկու բառերի օրինակով: Այն հանդես է եկել որպես որոշիչ. «...եւ վասն զի գիտէ, թէ ներկայ ամանակիս զիշերային հանգիստս՝ զապականութեանս ոչ կարծ յինէն մերկանալ զբռնութիւն, եթէ ոչ վերջնուն այնմիկ *ապականահալած* և մահալուծող զիշերին երթեալ հանդիպանան» (Ատ., 22):

Բազմաշափղ «այլևայլ շավիղներով գնացող» (ՆՀԲ, 1, 413) ածականը հոգնակի ուղղականով գործածվել է որպես ստորոգելիական վերադիր. «Որք մին լեզու՝ ի ձեռն միոյ քարոզի և ի մի ելաք ճշմարտութեան ճանապարհ, և արդ բազմահետք և *բազմաշափղք* եղաք» (Ատ., 4): Թե՛ այս և թե՛ հաջորդ՝ *բարեքաձև* բառերը ձևավորվել են բառակապակցությունների բայական բաղադրիչների զեղչումով:

Բարեքաձև «բարվորք ձև ունեցող, բարեձև, բարետես» (ՆՀԲ, 2, 458) բառը հոգնակի տրականով հանդես է եկել որպես որոշիչ՝ նախադաս կիրառությամբ. «Տարրատուփութեան դէն ստիպէ զիւրսն հնազանդեալս, որոց և դիպեսցին *բարեքաձևաց* տարերց և գեղեցկակերպից՝ երկիր պազանել...» (ԸՊ, 41): ՆՀԲ-ն բառի դիմաց նշում է *հ- ա* կամ *հ* վերջադրական հոլովումները:

Գետնաթափալ «գետնին թավալված, թավալվելով» բառը (ՆՀԲ, 1, 540) ուղիղ ձևով որոշիչ պաշտոնում է հանդես եկել, թեև ՆՀԲ-ն նշում է նաև բառի մակբայական գործածության մասին. «Չկայծակնահանու դիւին զգեհենին հրոյ ցայտմունս բարեբանիչք լինելով ընդ Յանեսի և Յամրեսի յՈղոմպիոս լերին *գետնաթափալ* և փրփրերախ դիւին խոնարհեալ երկիր պազանեն» (ԸՊ, 38): Բառը ձևավորվել է *գետին* պարա-

գայական լրացումից (տրական հոլովի նշանակությամբ) և *թապ* «զլորվելը, տապալում» բայահիմքից:

Երեկանհրիասէր «նա, ով սիրում է երեկոյան կամ մինչև գիշերը քնել, նիրհել» (ՆՀԲ, 1, 675) իմաստով եռարմատ բառը որոշիչ *ն* հոդով (ուղղական հոլովածն) հանդես է եկել ենթակայի պաշտոնում. «Ջի *երեկանհրիասէրն* զմիջագիշերն հրաւիրէ լինել իւր արթնութեան ժամանակ» (Ատ., 17): ՆՀԲ-ում նշված չեն ոչ *երեկանհրի* և ոչ էլ *նիրհասէր* ձևերը, ուստի նորակազմությունը կարելի է ներկայացնել որպես հիմք + հիմք + հիմք կաղապարի դրսևորում:

Թարախածուծք «տգրուկ շարավ՝ ապականված արյուն ծծող» (ՆՀԲ, 1, 798) ածականը հոգնակի հայցականով հանդես է եկել որպես հանգման խնդիր. «...որոց տեսեալ զարիւնարբուս և զթարախածուծս ի կենդանեացո՝ իբրև զախտաբոյժս և զցաւահայածս մեծարեալ գնոսա աստուածս անուանեցին» (ԸՊ, 36: Բառի *թարախ* «շարավ, վահր» նշանակությամբ արմատը Ջահուկյանը ներկայացնում է որպես սեմա-հնդեվրոպական հեռավոր ցեղակցային կապի արդյունք (ՋՆժ, 448): Ի դեպ, Աճառյանը որպես այս արմատով կազմված բառ՝ վկայում է նաև Օձնեցու վերոնշյալ բառը (ՀԱԲ, II, 158):

Այստեղ ևս վերջին բաղադրիչը բայահիմք է: Բարդության բաղադրիչներն արտահայտում են ուղիղ խնդիր լրացում + բայահիմք լրացյալ շարահյուսական հարաբերություն:

Միալուծ ածականը «միասին լծված, միայնակ լուծ քաշած. անընդհատ» իմաստն ունի (ՆՀԲ, 2, 264) և լրացնելով բային՝ բնագրում ուղիղ ձևով հանդես է եկել որպես ձևի պարագա. «...թէ գորպիսիս և գորքանս զբոսանաց և զբաղմանց սաստկութիւն յայգուէ մինչև յերեկոյ *միալուծ* ձգեալ բերեմ» (Ատ., 21): ՆՀԲ-ն ևս բառի հոլովման մասին տեղեկություն չի տալիս: Փաստորեն բարդությունը ձևավորվել է բառակապակցության բայի զեղչումով:

Յաւէժակից «մշտնջենավորակից, միշտ միասին, մշտապես կից» (ՆՀԲ, 2, 351) ածականը դարձյալ ուղիղ ձևով է գործածված՝ ձևի պարագայի պաշտոնում. «Այս է քո պանծալի աստուածաբանութիւնդ, մանաւանդ թէ յիմարութեանդ ցոյցդ զնիւթս զայս *յաւէժակից* ասել արարչական զօրութեանն» (ԸԵ, 80-81):

Այս կառուցում ևս բաղադրիչները կապակցված են ստորադասական հարաբերությամբ՝ ածականը՝ իր խնդրով:

Յիմարամիտ «հիմար ձևով մտածող» (ՆՀԲ, 2, 358) ածականը ուղիղ ձևով և որոշյալ հոդով հանդես է եկել որպես որոշիչ, թեև ՆՀԲ-ն նշում է, որ բառը հոլովվում է *հիմարամտի*, *հիմարամտաց* սկզբունքով

(ինչպես *միտ* բառը). «Որպէս *յիմարամիտն* այն Ապողինար՝ լսելով յառաքելոյ...» (ԸԵ, 76):

Նեխաշաղիղ «մեռած մարմնի՝ դիակի նեխածությունն ունեցող» նշանակությամբ (ՆՀԲ, 2, 410) ածականն ուղիղ ձևով գործածվել է որպես որոշիչ. «Ուրանօր ի միասին ընթացեալ կուտեցան ամենայն ուստեք, որպէս անգեղք աշխարհաց ի *նեխաշաղիղ* ինչ գէշ» (ԸՊ, 39): Աճառյանը *շաղիղ* «հում միս, մարմին» բառի դիմաց (ՀԱԲ, III, 490) որպես օրինակ բերում է հենց Օձնեցու բառը:

ՆՀԲ-ի վկայությամբ (2, 448) միայն Օձնեցին է գործածել նորավարժ բարդ ածականը՝ «նոր վարժված, նորակիրթ» իմաստով: Բառը հոլովվում է *ի* վերջադրական հոլովմամբ: Թեև ՆՀԲ-ն նշում է միայն «Ատենաբանութիւնից» քաղված մի հատված, սակայն բառը գտնում ենք նաև Օձնեցու նորահայտ երկում: «Ձոր օրինակ ծի ոք *նորավարժ* ոչ կարացեալ յինքնէ՛ զվերելակն իւր ի բաց ոստուցանել...» (Ատ., 3) օրինակում բառը հանդես է եկել որպես որոշիչ, երկու արմատներն էլ բնիկ հայերեն են՝ *նոր* և *վարժ*, որոնք միմյանց հետ լրացական հարաբերության մեջ են գտնվում (բայահիմքն իր պարագա լրացման հետ):

Ոգեհաշմ «հոգով խեղված» (ՆՀԲ, 2, 502) ածականը հոգնակի հայցականով որպես սահմանափակման խնդիր է հանդես եկել. «Ձոր և տեսանեմք ի ծառայութիւն զեկեալսն աստանայի և խեղանդամս և *ոգեհաշմս*, ծիրեալս, ծնրդեալս, և կասեալս ի զօրութենէ» (ԸՊ, 41): Այստեղ ունենք լրացում (խնդիր) + բայահիմք լրացյալ կապակցությունը:

Այս խմբի վերջին բառն է **պատգամատար** «պատգամ տանող, աստծուց նշանակված հրամանատար» (ՆՀԲ, 2, 607) ածականը, որն ուղիղ ձևում ստացել է *դ* դիմորոշ հոդ՝ հանդես գալով որպես ստորոգելիական վերադիր. «Կե՛ր մանր զմատեանդ զայդ՝ *պատգամատարդ* հրաւիրեալ լինել իսրայէլեանն ազին» (Ատ, 2): Բաղադրիչները կապակցված են նույն սկզբունքով, ինչպես նախորդ բառում:

Բ Ըստ ՆՀԲ-ի տվյալների՝ միայն Օձնեցու երկերում գործածված անհոդակապ իսկական բարդություններից են **կենսառաք, ուժընդի, վրիպանուն, փրփրերախ** կազմությունները:

Կենսառաք «կյանքի առաքող» (ՆՀԲ, 1, 1088) իմաստով բառն ուղիղ ձևով հանդես է եկել որոշիչ դերում. «...զոր մարգարէն աւագափող զնա անուանէ, այս ինքն վերջին և մահալոյժ և *կենսառաք* ծայն» (Ատ., 13): Բառի հիմքերն են *կենս*-(*կեալ*) «ապրել» և *առաք* (*առ*- մասնիկով և *աք* «ոտք»):

Ուժընդի «ուժգին, շատ» (ՆՀԲ, 2, 541) բառի դեպքում ՆՀԲ-ն վկայում է միայն Օձնեցուն: Վերը նշված ձևից է կազմված նաև *ուժնդակի*

ածանցավոր մակբայը, որը դարձյալ միայն Օծնեցին է գործածում՝ «Ատենաբանութիւն» երկում: Աճառյանը ևս որպէս բառի (*ուծնդի* տարբերակով) գործածության օրինակ է բերում Օծնեցուց՝ *ուծ (ոյծ)* բառի դիմաց, որը ծագումով պահլավական է (ՀԱԲ, III, 560): Բառի երկրորդ արմատն է *դի (< դնել)*: Նորակազմ բառը հանդես է եկել որպէս ձև պարագա. «...յորում աւուր և *ուծընդի* հնչեցեալ լինի հրեշտակական բարբառքն, գոր մարգարէն աւագափող անուանէ» (ՎԱՄ, 101):

Վրիպանուն «ստահող, սուտ, պատիր» (ՆՀԲ, 2, 835) նշանակությամբ բառը չհոլովված ձևով հանդես է եկել որպէս նախադաս որոշիչ (ՆՀԲ-ն ևս հոլովման մասին չի տեղեկացնում). «...առ միմեանս անպատկառացոյցք են պղծութեան, իսկ ի մէնջ *Վրիպանուն* պատրողաբանութեամբ զանխլանալ կարծեն» (ԸՊ, 38): *Վրիպ(Վրէպ)* «սխալ, սխալանք» և *անուն* հիմքերը կապակցված են բառակապակցության *ունօղ* բայի գեղչումով:

Նույնպիսի՝ չհոլովված ձևով է հանդես եկել նաև **փրփրերախ** «երախը՝ բերանը փրփրած՝ փրփուրով պատած» (ՆՀԲ, 2, 965) ածականը՝ դարձյալ որոշիչ պաշտոնում. «Զկայծակնահանու դիւին զգեհենին հրոյ ցայտմունս բարբառնիչք լինելով ընդ Յանեսի և Յամրեսի յՂոմպիոս լերին զետնաթաւալ և *փրփրերախ* դիւին խոնարհեալ երկիր պագանեն» (ԸՊ, 38):

Նկատելի է, որ վերը նշված բառերը հիմնականում ձևավորվել են բառակապակցություններից, որոնցում որևէ բայ գեղչված է, կամ միայն բայահիմքն է առկա: Բայահիմքի լրացումը երբեմն հանդես է գալիս որևէ հոլովածևի նշանակությամբ՝ առանց հոլովական վերջավորության:

գ) Բարդ կազմություն ունեցող ածականներից շատերը, առաջին անգամ գործածվելով Օծնեցու երկերում, հետագայում տեղ են գտել նաև այլ հեղինակների երկերում: Այդ կարգի ածականներից են՝ **աղաւնաբեր**, **ամենապտուղ**, **թագընկէց**, **կապանակից**, **կեղակարծ**, **կիսաբաժ**, **կուրաշաւիղ**, **հեղեղագնաց**, **որոմնացան**, **չարաղանդ**: Այս բառերը ևս նախորդների պէս հիմնականում բայական կապակցություններից են կազմված՝ նույն սկզբունքներով, բացառությամբ *ամենապտուղ*, *կապանակից*, *կեղակարծ*, *կուրաշաւիղ* բառերի:

Նկատելի է, որ միայն *թագընկէց*, *չարաղանդ* բառերը ձևավորվել են առանց հոդակապի: Սրանցից *կապանակից* և *թագընկէց* բառերը հանդես են եկել թեքված ձևերով:

Անդրադառնանք այդ կազմություններին՝ առանձին-առանձին:

Այսպէս՝ **աղաւնաբեր** «աղավնու բերած» (ՆՀԲ, 1, 35) ածականը, որը գործածվել է նաև Զաքարիա կաթողիկոսի կողմից (IX դար), Օծնեցին գործածել է որպէս հետադաս որոշիչ. «...և ընկալաք զսաղարթն ծիթնույ *աղաւնաբեր* ընդ երեկս աւուրն Բանին կենաց» (ՅԿԵ, 100): Ի դեպ, ՆՀԲ-ն չի նշում բառի հոլովման տեսակը:

Ամենապտուղ «ամենապտղալից» (ՆՀԲ, 1,66) ածականը, ըստ ՆՀԲ-ի, Օծնեցուց բացի, գործածել են նաև հետագայի հեղինակներ: Բառը եզակի հայցական հոլովածևով հանդես է եկել որպէս որոշիչ՝ լրացնելով *դրախտ* գոյականին. «...զի եթէ ոչ այս այսպէս, աւելորդ վարկանիմ *զամենապտուղն* զայն տնկագործողին տնկեալ զդրախտն. և ի նմա դնելով զմարդն՝ հրամայեալ անդուստ վայելել նմա» (ԸԵ, 83):

Կապանակից «զուգակից, ամուլակից, կապակից» բառը (ՆՀԲ, 1, 1053) Օծնեցուց բացի գործածել է նաև Մխիթար Ապարանեցին (XVդ.): Բառը եզակի և հոգնակի սեռականներում ունենում է *կապանակիցի*, *կապանակցաց* ձևերը, ինչպէս նշում է ՆՀԲ-ն: Նույն աղբյուրից տեղեկանում ենք, որ *կապակից* ձևը գործածվել է շատ հեղինակների կողմից, ինչպէս օրինակ՝ Փիլոն Եբրայեցու երկերի թարգմանության մեջ: Բառը կազմված է *կապան (կապ)* «կապանք» չստուգաբանված (ՀԱԲ, II, 519-520) բառից և *կից* արմատից: Փաստորեն բառը նորակազմ է միայն *-ան* ածանցի առկայությամբ: *Կից* ածականի *կապան* լրացյալն ունի տրական հոլովի իմաստ:

Եզակի գործիական հոլովածևով բառն Օծնեցու երկում գործածվել է որպէս ձևի պարագա. «Եւ քանզի ի մարմնի ելով մեր՝ ոչ կարէաք նովին *կապանակցաւ* ընդ իմանալիսն խառնել» (ԸՊ, 41):

Կեղակարծ «կասկածելի, երկբայական» (ՆՀԲ, 1, 1081) ածականն ուղիղ ձևով հանդես է եկել որպէս որոշիչ՝ հետևյալ օրինակում. «Զարմանամ ընդ այսպիսի *կեղակարծ* և զայթ ի զայթ խոստովանութիւն. եթէ անմարմնապէս զմարմնականսն կամելի էր կրել Քրիստոսի» (ԸԵ, 62): Նորաբանությունը ձևավորվել է որոշիչ + որոշյալ կաղապարով:

Կիսաբաժ «կիսով չափ, կես չափով, կիսակատար» (ՆՀԲ, 1, 1097) ածականը դարձյալ ուղիղ ձևով լրացնում է բաղադրյալ ստորոգյալին՝ *բնութիւն առեալ*՝ դառնալով ձևի պարագա. «զԱպողիհնար և զՍովիորոնիոս և զՅուդիանէ որ *կիսաբաժ* և ոչ կատարեալ զմերս ասացին բնութիւն առեալ Բանին ի կուսէն» (ԸԵ, 74):

Կուրաշաւիղ «անկոխ, անլույս» բառը (ՆՀԲ, I, 1125) Օծնեցուց հետո գործածել է նաև Գրիգոր Մագիստրոսը: Օծնեցու երկում այն հանդես է եկել նախադաս որոշիչ պաշտոնում՝ լրացնելով *արահետիւք* հոգնակի գործիականով դրված գոյականին. «...զի թէպէտ և շատ ջա-

նացար *կուրաշաիդ* իմն արահետիւք ծածկել և թագուցանել գհաւաքեալ ի քեզ զդառնութեան մաղծ...» (ԸԵ, 67): *Կոյր* և *շաիդ* «նեղ ճանապարհ» բաղադրիչները միացել են որոշիչ + որոշյալ հարաբերությամբ:

Թագընկէց «թագից ընկած, թագազուրկ» (ՆՀԲ, 1, 790) անհողակապ բարդությունը գործածվել է նաև Գրիգոր Տղայի կողմից: Հոգնակի ուղղական հոլովածնով այն Օծնեցու մոտ հանդես է եկել որպես ստորոգելիական վերադիր՝ *լինելով* անորոշ դերբայի հետ. «...այնպես ըստգիտ և գաղտագողի գյաղթութեան առնուցուն ի գլուխ գպսակ, *թագընկէցք* առաւել քան թէ թագառուք լինելով» (Ատ., 11):

Թագ բառն այստեղ ունի բացառական հոլովի նշանակություն, իսկ *ընկէց* ձևը բնիկ հայերեն *ընկենուլ* բայի անցյալի հիմքն է:

Հեղեղագնաց «հեղեղի պես հորդացող» (ՆՀԲ, 2, 83) ածականը գործածվել է նաև հետագայում՝ 12-րդ դ. գրված «Ոսկիփորիկ» և այլ գրվածքներում: Օծնեցին այն գործածել է որպես որոշիչ՝ *կենցաղոյս* որոշյալով. «Յաղագս նոցուն ապա և մեր աստուածայնովն զինագարդեալ սպառազինութեամբ, հաւաքեսցուք ի *հեղեղագնաց* կենցաղոյս...» (ԸՊ, 46):

Որոմնացան «որոմ, չարի սերմ ցանող անծ» (ՆՀԲ, 2, 533-534) նշանակությամբ բառը հոլովվում է *ի* հոլովմամբ, թեև Աճառյանը (ՀԱԲ, III, 585) նշում է նաև *որոմնացանու* ձևը՝ վկայելով միայն Օծնեցուն. «...որ զայնն քարոզէ ի բաց ջնջել զբանն. և ասես՝ *Որոմնացան* մշակացն է զայդ սերմանեալ» (ԸԵ, 81): Բառը հանդես է եկել որպես որոշիչ՝ լրացնելով *մշակացն* գոյականին: Ջահուկյանը *որոմն* բառը ներկայացնում է որպես ուրարտական կամ ուրարտերենի միջոցով փոխառված (ՋՆԺ, 440), իսկ *ցան-ը* ներկայացնում է փոխառյալ կամ թափառիկ բառերի խմբում (ՋՆԺ, 612):

Չարաղանդ «չար աղանդ ունեցող» (ՆՀԲ, 2, 568) ածականը, որ հոլովվում է *ի* հոլովմամբ, Օծնեցուց հետո գործածվել է 10-11 դդ. հետո՝ Հովհաննես Կաթողիկոսի և այլ հեղինակների կողմից: Ահա Օծնեցու գործածությունը. «Ոչ է պարտ ի *չարաղանդ* մծղնէիցն տեղիս, որ կոչին Պոլիկեանք» (Ատ., 4, 33): Բառը գործածված է նաև Օծնեցու նորահայտ երկում՝ այս անգամ որպես հետադաս որոշիչ. «Սոքա յայտնեցին զպատրիարզան առաջինս *չարաղանդս*, որք յետ սուրբ առաքելոցն զահակալեցան յաթոռս հայրապետականս...» (ՆՊ, 101):

* Հավանաբար պետք է լինի Պաղիկեանք: Հենց այդպես էլ թարգմանված է (ՀՕԵ, 67):

Բառի *աղանդ* (ՀԱԲ, I, 120) և *չար* (ՀԱԲ, IV, 624) անստույգ արմատները, հավանաբար, միացած են բառակապակցության *ունօղ* բայի գեղջումով:

Նկատելի է, որ Օծնեցու կազմած բարդ ածականներում գերակշռում են բառակապակցություններից ձևավորված կառույցները, առկա են որոշիչ + որոշյալ, լրացում + բայափմք, լրացում + ածական լրացյալ շարահյուսական հարաբերությունները: Շեշտափոխական հնչյունափոխության ենթարկվող բառերը, որոնք որպես լրացում են հանդես գալիս, ներկայանում են համապատասխան փոփոխություններով, ինչպես՝ *կուրաշաիդ* – *կոյր*, *կիսաբաժ* – *կէս* և այլն:

2. Բարդ ածանցավոր ածականներ

ա) Օծնեցու նորակազմությունների մեջ մեծ թիվ են կազմում բարդ վերջածանցավոր ածականները, որոնցից միայն մեկն է, որ ըստ ՆՀԲ-ի տվյալների՝ գործածվել է նաև հետագա հեղինակների կողմից: Այն է՝ *սակաօրեայ*:

Ինչպես գրում է Լ. Հովսեփյանը, «երբեմն բառերը տրոհելիս ստացվում են ոչ թե արմատ, ածանց (բառակազմական միավորներ), այլ բառակազմական և շարահյուսական միավորներ, այսինքն՝ կարելի է ասել, որ որպես սերող հիմք հանդես են գալիս բառակապակցությունները: Օրինակ՝ հազար + ամ + եայ, խաչ + օրին (ել) + եք»⁵⁰:

Համաձայնելով Լ. Հովսեփյանի հետ՝ ասենք, որ նույն կազմությունն ունի նաև *սակաօրեայք* «քիչ՝ սակավ օրեր» (ՆՀԲ, 2, 687) ածականը, որի հոլովման մասին ՆՀԲ-ն չի նշում: Այն հանդես է եկել հոգնակի թվով՝ որպես ուղիղ խնդիր. «...զի երկայնօրեայք լինիցին յերկրին բարութեանց որպես ի դրախտին *սակաօրեայք*» (ՅԿԵՔ, 83)⁵¹: *Սակա* «քիչ» բառը *սակ* «չափ» բառի գործիականն է ներկայացնում «չափավոր, քիչ» իմաստով, թրի ծագումը ստույգ չէ (ՀԱԲ, IV, 166)՝ ի տարբերություն «հարկ, տուրք» իմաստով նույն *սակ* բառի, որը պահլավական ծագում ունի (ՀԱԲ, IV, 157):

Մնացած՝ այս կարգի նորակազմությունները, ՆՀԲ-ի վկայությամբ, միայն Օծնեցու գրչին են պատկանում, և զրեթե բոլորն էլ հողակապով բաղադրություններ են: Այդ բառերն են՝ *աղանդապետական*, *բարեվայելչական*, *գազանասնոյց*, *դեռահաւակ*, *դժոխաղատ(ս)ելի*, *դժուարադիտելի*, *երագագրաւելի*, *զուարթաթոիչ*, *զուգաքանակ*, *թագառու*, *հե-*

⁵⁰ Տե՛ս Լ.Ս. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 288:

⁵¹ Մատենագրութիւնք, Յաղագս կարգաց եկեղեցոյ Քրիստոսի, էջ 81-93 (այսուհետև՝ ՅԿԵՔ):

դեղական, հօտավատնիչ, ուժնդակի (տե՛ս ուժընդի), ողբերգագին, քաջախօսնակ, քնարահարու, օգտամատոյց:

Անդրադառնանք սրանց՝ առանձին-առանձին:

Աղանդապետական «աղանդի գլխավորողին բնորոշ» (ՆՀԲ, 1, 33) ածականը լրացրել է կարգեալ անցյալ դերբայածին՝ դառնալով կողմնակի ձևի պարագա. «...զայն յոյր ծեռս ոգեսպառ եղեալ սատակի՝ յաղանդապետական կարգեալ պատուի մեծարեն» (ԸՊ, 38): Ի դեպ, ՆՀԲ-ն տալիս է նաև *աղանդապետ* (ա վերջադրական հոլովում) գոյականը, որի դիմաց չունի որևէ վկայություն: Փաստորեն բառն ամբողջությամբ նոր է. այն ձևավորվել է հիմք + հիմք + *-ական* ածանց կաղապարով:

Բարեվայելչական «բարեվայելուչ» (ՆՀԲ, 1,456) ածականը, որ հոլովում է *ի- ա* հոլովմամբ, հոգնակի սեռականով նախադաս որոշչի պաշտոնում է հանդես եկել. «...իսկ զխանտացօրն բարեվայելչականաց մերոց իրաց խնդացուցանելով զսատանայ» (Ատ., 11): Բառն ածանցվել է բարեվայելուչ ածականից (ՆՀԲ, նույն տեղում), որն ունեցել է բազմաթիվ գործածություններ, և որի արմատներն են՝ բարի՝ կազմված բար(ք) «բնություն» բառից՝ *ի* մասնիկով և վայել «հաճույք, զվարճություն» անստույգ բառը (ՀԱԲ, IV, 299):

Գազանասնոյց «որ իրենում ունի կամ սնուցում է գազաններ» (ՆՀԲ, 1, 521) իմաստով ածականը չի հոլովվել և հանդես է եկել նախադաս որոշչային կիրառությամբ. «Եւ կամ յեգիպտացուցն ընկղմին գազանասնոյց գետ» (ԸՊ, 37): Գազան բառը միացել է սնոյց (սնուցանել) բայահիմքին: Այստեղ գործում է խնդիր + բայահիմք լրացյալ լրացական հարաբերությունը:

Դեռահաւակ «դեռահաս, սկզբնական» բառը, ՆՀԲ-ի հավաստմամբ (ՆՀԲ, 1, 610), ունի թե՛ գոյականի, թե՛ ածականի կիրառություն, հոլովվում է՝ ենթարկվելով *ի, աց* տիպի հոլովման, թեև այն ուղիղ ձևով որպես որոշիչ է հանդես եկել հետևյալ օրինակում. «Ապա ուրեմն զայն՝ նորագիւտ և դեռահաւակ ժամանակն ստիպէր առնել այնպէս. իսկ այս՝ խորհրդոյ և աստուածային տեսչութեան» (Ատ., 6): Բառը կազմված է *դեռ* և *հաւակ* հիմքերից. վերջինի արմատն է *հաւ* «սկիզբ, ծայր» նշանակությամբ բառը, որի դիմաց կան շատ վկայություններ (ՆՀԲ, 2,71): Աճառյանը *հաւ* արմատի դիմաց օրինակ է բերում *դեռահաւակ* ձևը՝ վկայելով միայն Օծնեցուն (ՀԱԲ, III, 67):

Դժոխադատելի կամ դժոխադատելի բառը «խիստ դժնի համարելի, նախադատելի, քան դժոխքը» իմաստն ունի (ՆՀԲ, 1, 615): ՆՀԲ-ն Օծնեցու օրինակը տալիս է *ս-ով*, սակայն բնագրում հանդիպում ենք *տ-*

ով ձևին, բառն այստեղ բերում ենք երկգրությամբ՝ *ս-ով*, նաև *տ-ով*: Բառը, լրացնելով ածականին, թերևս, դառնում է ածականի խնդիր. «Եւ դժոխադատելի յոյժ է պահանջիլ համարս այնմիկ՝ յորում ոչ կարեն օգնել կաշառացն ակնառութիւնք» (Ատ., 12): Թեև ՆՀԲ-ում կա *դժոխադատ* ձևը, սակայն վկայությունները հետագայի են, և կարծում ենք, որ բառն ամբողջությամբ նորակազմ է:

Դժուարադիտելի «դժվար ըմբռնելի» (ՆՀԲ, 1, 617) ածականը (ՆՀԲ-ն խոսքի մասը չի նշում) հանդես է եկել բաղադրյալ ստորոգյալի կազմում. «Փառաւորագունիս այտորիկ միաշաբաթուս աւուր՝ մեծ է և դժուարադիտելի յոյժ խորհուրդ» (Ատ., 13): Այս կազմության համար հիմք է ծառայել *դիտել* բայը, որին միացել է *դժուար* ածականը: Բաղադրիչները միացել են ածական + բայահիմք հարաբերությամբ:

Նույն եղանակով է ձևավորվել հաջորդ՝ երագագրաւելի «շտապ, փույթ ավարտելի, հարևանցի» (ՆՀԲ, 1,664), ածականը, որը գործածվել է հետևյալ նախադասության մեջ՝ ձևի պարագայի դերում. «...եթէ առհարկի ի սկզբանն յունեքէ երագագրաւելի ինչ ցուցեալ եղև գործ» (Ատ., 5): Ջրաւեմ «կատարել» (ՆՀԲ, 1, 753) բայի գրաւ «վերջ» արմատը (ՀԱԲ, II, 112) ստուգաբանված չէ: Ի դեպ, Աճառյանն այս բառի դիմաց բերում է հենց Օծնեցու գործածությունը: *Երագ* բառը *արագ-ի* տարբերակն է, որ ծագում է պահլավական *rag* ձևից (ՀԱԲ, II, 292):

Զուարթաթոյչ «թոյչի մեջ զվարթ, պայծառ, շողշողուն» (ՆՀԲ, 1,743) ածականը, որի հոլովման տեսակը ՆՀԲ-ում չի նշվում, լուսով գոյականից առաջ հանդես է եկել որոշչի պաշտոնում. «...և զուարթաթոյչ լուսով ձեպեալք ի հանդիպումն ամպովք երևեցելոյն, և հատուցանողին իւրաքանչիւր ումեք զարժանն» (ՅԿԵԲ, 92): *Զուարթ* և *թոյչ* հիմքերը հավանաբար բառակապակցության բայի զեղչումով են ստացվել: Նույն սկզբունքով է ձևավորվել նաև հաջորդ՝ զուգաքանակ «քանակով հավասար, հավասարաչափ, համապատասխան» ածականը (ՆՀԲ, 1,749), որը ուղիղ ձևով հանդես է եկել որպես հիմունքի պարագա՝ հետևյալ օրինակում. «Արդ են թանց սորա առաւօտին ասացեալ սաղմոսքն թուով վեց. զուգաքանակ առ ի մեզ տպաւորեալ զգայարանացս» (Ատ., 20):

Թագառու «թագ կրող, նա, ով թագավորում է, փեսայանում» (ՆՀԲ, 1,789) բառը հոլովվում է *ի- ա* հոլովմամբ և հոգնակի ուղղականով գործածվել է որպես ստորոգելիական վերադիր՝ լինել վերացական բայի հետ «...այնպէս ըստգիւտ և գաղտագողի գյաղթութեան առնուցուն ի գլուխ գպսակ, թագընկեցք առաւել քան թէ թագառուք լինելով» (Ատ., 11):

Բաղադրիչ հիմքերը կապակցված են գոյական + բայ հարաբերությամբ:

Հեղեղական «հեղեղիչ» (ՆՀԲ, 2,83) ածականը որպես նախադաս որոշիչ է գործածվել. «...յաշխարհամէջս և ի ժողովրդաբնակս համարձակեցան յարծակել տեղիս. ի *հեղեղական* հեղձուցիչ ջուրցն մասն հասեալ նմա, Ջրկայ անուանելով» (ԸՊ, 39): Նորակազմությունը ձևավորվել է *-ական* ածանցով:

Ի տարբերություն նախորդի՝ **հօտավատնիչ** ածականը՝ «հուռը փչացնող, հուռը գայլերին տվող» իմաստով (ՆՀԲ, 2,143) և հոգնակի հայցականով հանդես է եկել հետադաս որոշչի պաշտոնում. «Ջինչ գտոսա անուանեցից. հովիւս *հօտավատնի՞չս*, եթէ գազանս կեղեքիչս խաշանց» (Ատ., 11):

Հօտ բառը միացել է *վատնիչ* (ՆՀԲ, 2,789) հիմքին, որի *վատն* արմատը (առանձին անգործածական է) ստուգաբանված չէ, թեև ՆՀԲ-ն բառի ծագումը կապում է *վատ* բառի հետ, իսկ Ջահուկյանը հավանական է համարում բառի իրանական ծագումը (ՋՆԺ, 558):

Նույն կիրառությամբ է գործածվել ողբերգագին «ողբերգական» (ՆՀԲ, 2, 506) ածականը. «Վասն այնորիկ առաւօտին աղաղակեն *ողբերգագին* ձայնին» (3ԿԵԲ, 87): Բառի սերող հիմքն է՝ *ողբերգ*, որից մի շարք բառեր կան բաղադրված, սակայն առանձին գործածված չէ: Նորաբանությունը ձևավորվել է *-ագին* ածանցով:

Քաջախօսնակ «լավ՝ համարձակ խոսող» (ՆՀԲ, 2, 984) ածականը նույնպես նախադաս որոշչի կիրառություն ունի. «...զՀերմէս՝ վասն *քաջախօսնակ* ճոռոմբանութանն...» (ԸՊ, 37): Բառի սերող հիմքն է՝ *քաջախօս* «*քաջալեզու*» ածականը, որին միացել է *ունակ* (ՆՀԲ, 2, 549) բառը՝ *ու* ձայնավորի սղումով:

Քնարահարու «քնարահար, քնար, փանդիռ նվագող» (ՆՀԲ, 2, 1008) բառը նորակազմ է միայն *-ու* ածանցի առկայությամբ, քանի որ ՆՀԲ-ն առանց ածանցի բազմաթիվ վկայություններ է բերում, այսինքն՝ բառի սերող հիմքն է՝ *քնարահար*. **Քնարահարու** ածականը, որ ըստ ՆՀԲ-ի՝ հոլովվում է *խ-ա* հոլովմամբ, բնագրում հանդես է եկել որպես ստորոգելիական վերադիր՝ *լինել* բայի հետ. «Եւ պարտ է ուսունմասիրացն և խոհականագունիցն՝ նուագարանօք *քնարահարու* *լինել* երաժշտական հոգւոյն» (Ատ., 20):

Վերջապես, **օգտամատոյց** «խելացի, խելամիտ» (ՆՀԲ, 2,1021) բառը, որ նույնպես բնագրում ստորոգելիական վերադիր պաշտոն է կատարել. «...և ոչ նմանապէս միմեանց *օգտամատոյց* մեզ լինելով, այլ ե-

րախայութեան օժուճն գիրաւիրականն ունի դրոշմ» (Ատ., 18), ձևավորվել է *օգուտ* և *մատոյց* (մատուցանել) հիմքերից:

Այսպիսով՝ բարդ ածանցավոր ածականները, որոնք կազմվել են բնիկ կամ փոխառյալ արմատների հիման վրա, ձևավորվել են հետևյալ վերջածանցներով՝ *-ակ*, *-ական*, *-ակի*, *-(ել)ի*, *-իչ*, *-գոյն*, *-գին*, *-ոյց*, *-ու*, որոնք գրեթե հավասար կենսունակությամբ են հանդես եկել: Բառերի այս խմբում ևս բաղադրիչները գլխավորապես կապակցված են լրացում + լրացյալ շարահյուսական հարաբերությամբ, իսկ վերջածանցները միացել են հարադիրներից, կրկնավորներից, բաղիյուսական բարդություններից առաջացած հիմքերին:

բ) Բարդ ածանցավոր ածականների քանակը չի սահմանափակվում վերոնշյալ բառերով: Դրանցից առանձնացրել ենք ևս մեկ խումբ, որոնցում առկա է խառը ածանցում. այն է՝ մի դեպքում առաջին արմատն է ածանց ստացել, մեկ այլ դեպքում՝ երկրորդը, կամ երկուսն էլ գերծ չեն մնացել ածանցումից: Ընդ որում ուշագրավ է այն, որ բոլոր բառերի համար ՆՀԲ-ն վկայակոչում է միայն Օձնեցուն: Այդ կարգի բառերից են՝ **գեղեցկանուագ**, **ժողովրդաբնակ**, **կայծակնահանու**, **վաթսնականզնեան**:

Գեղեցկանուագ «քաղցր եղանակով երգված, ախորժալուր» (ՆՀԲ, 1, 538) բառը, որի հոլովման մասին ՆՀԲ-ն չի խոսում, նախորդի պես բայական իմաստ ունի և հանդես է եկել հետադաս որոշչի պաշտոնում՝ հոգնակի հայցական հոլովածևով. «Է՞ր աղագաւ և կցուրդս *գեղեցկանուագս* զմկրտութեանն բանից յօրինեցին երանելիքն մեր վարդապետք» (Ատ., 13):

Գեղեցիկ բառն ունի բազմաթիվ գործածություններ տարբեր կարգի կազմություններում, որոնց քանակը Օձնեցին ավելացրել է ևս մեկով՝ այն գործածելով *նուագ* «երգ, երգի եղանակ» որոշյալի հետ:

Ժողովրդաբնակ «մարդաբնակ» (ՆՀԲ, 1,838) ածականն *ի* նախորդով և հայցական հոլովածևով ուղևորման հայցականի իմաստ է ձեռք բերել. «...յայնժամ ի դարանամտութեան իւրեանց սողեալ յորջից՝ յաշխարհամէջս և ի *ժողովրդաբնակս* համարձակեցան յարծակել տեղիս» (ԸՊ, 39):

Բառը կազմվել է *ժողովորդ* գոյականի և *բնակ* բայափնքի միջոցով, որտեղ լրացումը գործիական հոլովի նշանակությամբ է գործածվել:

Կայծակնահանու «կրակ հանող, ցայտեցնող» (ՆՀԲ, 1,1045) ածականը, որի հոլովման մասին ՆՀԲ-ն ոչինչ չի նշում, գործածվել է նախադաս որոշչի պաշտոնում. **Չկայծակնահանու** դիւին զգեհենին հրոյ

ցայտմունս բարեբանիչք լինելով ընդ Յանեսի և Յամրեսի յՈղոմպիոս լերին գետնաթալա և փրփրերախ դիւին խոնարհեալ երկիր պագաննս (ԸՊ, 38): Բառը ձևավորվել է *կայծակն* գոյականից և *հանել* բայի *հան-* հիմքից՝ *-ու* ածանցով:

Վերջապես, վաթսնականգնեան «վաթսուն կանգունի չափով» (ՆՀԲ, 2, 769) ածականը, որը բնագրում գործածվել է չափ ու քանակի պարագայի պաշտոնում. «Ըստ այսմ օրինակի քաղղէացւոցն տեսեալ զտիտանեանն զայն վիթխարի և աշխոյժ, *վաթսնականգնեան* զոլով ըստ երկայնութեան հասակին...» (ԸՊ, 36): Այս նորաբանության համար որպէս հիմք է ծառայել *վաթսուն կանգուն* բառակապակցությունը:

Այնհայտ է, որ այս փոքրաթիվ բառախմբի մեջ առկա են հետևյալ ածանցները՝ *-ակ*, *-եան*, *-եցիկ*, *-ու*, *-ուրդ*, *-սուն*: Սրանք հիմնականում զանազան հարադրությունների բաղադրիչների միացումով են ձևավորվել, որ սովորական է հայերենի բառակազմության համար:

զ) Բարդ ածանցավոր բառերի մեջ կան նաև այնպիսի կազմություններ, որոնք ունեն կամ միայն նախածանց (*անկատարելագործ*, *անշարժահիմն*, *անպատկառացոյց*, *անտարակարծ*), կամ և՛ վերջածանց, և՛ նախածանց (*անկարածակեղի*, *անչարաբարոյական*): Բառերի այս խմբի մեջ ենք ընդգրկել նաև *առ* նախդրով կազմությունները, քանի որ հունաբան դպրոցի գործունեության ընթացքում այն արդեն ուներ նախածանցի արժեք: Այդպիսի բառերից են՝ *առաւելագանց*, *առաւելաճորի*:

Այս բառերի դիմաց ՆՀԲ-ն վկայություններ է բերում միայն Օծնեցու երկերից, ընդ որում՝ մի քանի անգամ:

Այսպես՝ *անկատարելագործ* «անկատար՝ կիսակատար ձևով եղած» (ՆՀԲ, 1, 170) բառը չի հոլովվում և հետևյալ օրինակում հանդես է եկել որպես նախադաս որոշիչ. «...եթէ գագանս կեղեքիչս խաշանց. զկուսանացն իբրև զերկորդականացն առնելով՝ տխուրս և *անկատարելագործ* հարսանիս...» (Ատ., 11):

Անկատար բառը կազմված է հունարենի օրինակով, որից բազմաթիվ բառեր են բաղադրված Օծնեցուց առաջ և հետո: Նարեկացին գործածել է *անկատարագործ* ածականը, որ նշանակությամբ նույնն է, ինչ *անկատարելագործ*-ը: Փաստորեն Օծնեցին որպէս հիմք *կատարեալ* ձևն է ընտրել, իսկ Նարեկացին՝ *կատար*-ը: Այսինքն՝ այստեղ առկա է *-եալ* դերբայական վերջավորությունը:

Անկարածակեղի «որը չի կարողանում թաքնվել, անթաքչելի» (ՆՀԲ, 1, 171) բառը, ըստ ՆՀԲ-ի, չի հոլովվում, թեև գործածվել է հոգնակի թվով՝ որպէս բաղադրյալ ստորոգյալի մաս (ստորոգելիական

վերադիր). «Ոչ գիտեն՝ թէ որպէս հոտոցն *անկարծածկելիք* են ընքեամբ առ հոտոտելիսն բերեալ բուրմունքն...» (ԸՊ, 38):

Անկար բառը ևս հունարենի օրինակով է կազմված, որ *ծածկ* բայահիմքի և *-ի* ածանցի միջոցով ձևավորել է նոր բառ:

Անշարժահիմն «անհիմնաշարժ, անշարժելի» (ՆՀԲ, 1, 213) ածականը ևս չի հոլովվել և հանդես է եկել նախադաս որոշիչ պաշտոնում. «...որպէս թէ զանյողղողդ և *զանշարժահիմն* փրկութեան մերոյ իրողութիւն...» (Ատ., 7):

Նորակազմության հիմքն է *անշարժ*, որը հունարենի օրինակով է կազմված և հոդակապով միացել է *հիմն* գոյականին: Փաստորեն առկա է որոշիչ + որոշյալ հարաբերությունը:

Անչարաբարոյական «բարեբարո, բարեսեր» (ՆՀԲ, 1, 227) ածականը, ի տարբերություն նախորդների, հոլովվում է *ի - ա* հոլովմամբ: Հետևյալ օրինակում այն ուղիղ ձևով որոշիչ դեր է կատարում. «...և ոչ դարձեալ ըստ հասարակականացն ինչ ասացեալ բան՝ զմիութիւնն յերկուս բաժանէ միութիւնս. այլ յերկուսին *անչարաբարոյական* կամօք բարեպաշտեալ մերժենայ...» (ԸԵ, 72):

Նորակազմության հիմքն է *չարաբարոյ* (ՆՀԲ, 2, 563) ածականը, և բառը ձևավորվել է *ան-* նախածանցի և *-ական* վերջածանցի միջոցով: Այսինքն՝ այստեղ առկա է համաձայնում:

Անպատկառացոյց «անամոթ, անպատկառություն ի ցույց դնող՝ ցուցաբերող» (ՆՀԲ, 1, 227) բառի հոլովման մասին ՆՀԲ-ն ոչինչ չի նշում, թեև ԸՊ-ում և ԸԵ-ում այն հանդես է եկել հոգնակի ուղղականով, առաջինում՝ որպէս որոշիչ, երկրորդում՝ ստորոգելի: Օրինակ՝ «Այսորիկ աղագաւ *անպատկառացոյցք* սուրբ հարքն երկուց բնութեանց Քրիստոսի աստուածայնոյն և մարդկայնոյն լիեալք» (ԸԵ, 71) և «Սոյնպէս և ասացեալքս այսոքիկ, տղմասէրք և ժանտագործք, առ միմեանս *անպատկառացոյցք* են պղծութեան...» (ԸՊ, 38):

Բառը ձևավորվել է *անպատկար* (ՆՀԲ, 1, 227) և *ցոյց* հիմքերի միացումով:

Անտարակարծ «հավաստի» (ՆՀԲ, 1, 243) ածականը գործածվել է միայն Օծնեցու կողմից՝ որպէս նախադաս որոշիչ. «Զի և սուրբ հարքն՝ բարեփառութեան հիմնացեալ հաւատով, աներկան և *անտարակարծ* խոհականութեամբ զէն անվթարելի զերկուսին զսոսա ընդ ինքեանս բարձեալ բերէին ըստ պիտոյիցն իրականութեան...» (ԸԵ, 70): Այս բառի սերող հիմքն է *տարակարծ* ածականը (ՆՀԲ, 2, 853), որին ավելացել է *ան-* նախածանցը:

Առաւելագանց «չափից ավելին, չափագանց» (ՆՀԲ, 1, 297) ածականը որոշյալ առումով ձևի պարագայի պաշտոնն է կատարում հետևյալ օրինակում. «...իսկ որ *յառաւելագանցն* նկրտի հրամայեցելոցն հասանել, գաջակողմանն այնպիսին տննչացաւ գտանել զխտորումնն» (Ատ., 15): Բառը նաև ԸԵ-ում է հանդես եկել (էջ 93): *Աւել* բնիկ հայերեն (ՀԱԲ, I, 375) բառից է կազմված է նաև հաջորդ՝ *առաւելաշնորհ* բառը: «Մեծիմաստ, շնորհալից» (ՆՀԲ, 1, 297) նշանակությամբ այս բառը որոշյալ առումով որպես որոշիչ է հանդես եկել. «Ջորմէ *առաւելաշնորհն* Սեւերիանոս ասէր գաբաղացոց եպիսկոպոսն ի տնօրէնութեան Փրկչին բանի» (ԸԵ, 87):

Երկու բառերի դեպքում էլ որպես հիմք հանդես է եկել *առաւել* բառը: Առաջինի դեպքում լրացյալը բայ է, իսկ երկրորդի դեպքում՝ գոյական:

Նկատելի է, որ վերը նշված բառերում առկա են միայն *ան-* նախածանցը և *առ-* նախդիրը, իսկ որպես վերջածանց հանդես են եկել *-ական*, *-ելի* ածանցները: Մեկ բառում առկա է նաև *զ* նախդիր (առաւելագանց): Բարդ ածանցավոր բառերը կազմված են բառակազմական հետևյալ կաղապարներով.

1. Պարզ հիմք + հողակապ + բաղադրյալ հիմք (գագանասնոց, դերահաւակ, դժոխադատելի, դժուարադատելի, գուարթաթիչ, գուգաբանակ, հօտավատնիչ, քաջախօսնակ, օգտամատոյց):

2. Պարզ հիմք + (հողակապ) + պարզ հիմք + ածանց (աղանդապետական, քազաւու):

3. Բաղադրյալ հիմք + ածանց (ողբեղգագին, քնարախարու):

4. Բաղադրյալ հիմք + հողակապ + բաղադրյալ հիմք (կայծակնահանու, վաթսնականգնեան, առաւելագանց):

5. Բաղադրյալ հիմք + հողակապ + պարզ հիմք (անկատարելագործ, անշարժահիմն, անպատկառագոյց, գեղեցկանուագ, ժողովրդաքնակ):

6. Բաղադրյալ հիմք + հողակապ + պարզ հիմք + ածանց (անկարածակելի, առաւելաշնորհ):

7. Ածանց + բաղադրյալ հիմք + ածանց (անչարաբարոյական):

8. Ածանց + բաղադրյալ հիմք (անտարակարծ):

9. Բառակապակցության բաղադրիչների միացումով (սակաւ + օր + եայ):

3. Ածանցավոր բառեր

Նորակազմ ածականների մի խումբ ածանցավոր է: Դրանց մի մասը նախածանցավոր է, մի մասը՝ վերջածանցավոր: Կան բառեր էլ, ո-

րոնք խառը ածանցմամբ են կազմվել՝ ունեն և՛ վերջածանց, և՛ նախածանց:

ա) **Նախածանցավոր** կազմություն է անսին բառը, որը «սնունդ չառած, անաճ» (ՆՀԲ, 1, 235) իմաստն ունի և գործածվել է միայն Օծնեցու կողմից՝ նախադաս որոշիչ պաշտոնում՝ առանց հոլովվելու. «...գորս ի դէպ է *անսին* խոստովանել նոյնս ծնունդս, և կամ վիժածս, և ոչ ծնունդս» (Ատ., 9):

Ան- նախածանցով բաղադրված այս բառի արմատն է՝ *սին* (*սուն*):

բ) **Վերջածանցավոր** բառերը նախորդներից ավելի մեծ թիվ են կազմում: Դրանք են՝ *ամբաստանական*, *աւանդիչ*, *բոցային*, *դարովական*, *ծոմական*, *հրաւիրական*:

Անդրադառնանք այդ բառերին՝ առանձին-առանձին:

Ամբաստանական «ամբաստանությանը բնորոշ» (ՆՀԲ, 1, 53) ածականը, որ Օծնեցուց հետո գործածել է նաև Գրիգոր Նարեկացին, հոլովվում է *ի - ա* հոլովմամբ: Այն իբրև նախադաս որոշիչ գործածվել է *բան* որոշյալի հետ՝ *ն* որոշիչ հոդով՝ հետևյալ օրինակում. «...զի թէ և դու կամիցիս, *ամբաստանականն* քո բան որ գնոցանէն՝ յանուանէ մեզ զասացողս բանիցդ այրոցիկ ցուցանէ» (ԸԵ, 77):

Ամբաստան բաղադրիչը (*ամբաստանեմ*), որ *-ական* վերջավորություն է ստացել, նշանակում է «դատախազ, մեկի դեմ դատ պահանջող, չարախօս» (ՆՀԲ, 1, 53):

Նույն ձևով հոլովվում է նաև *աւանդիչ* «ավանդող, ուսուցանող» (ՆՀԲ, 1, 390) ածականը, որ բացի Օծնեցուց գործածել են նաև նրան հաջորդած ուրիշ հեղինակներ: «Արդ եթէ էին ոմանք, այլև յուլովք ևս կենդանիք մնացեալդ, զիա՛րդ էր եթէ զթիրութեանն արտահալած առնելով *զաւանդիչս*, զիրեանցն ի ձեռս նոցա տային առ ի թիրել զուղղասացութիւն» (ԸԵ, 81):

Նշված օրինակում բառը հոգնակի հայցական հոլովածևով ուղիղ խնդրի պաշտոնում է հանդես եկել: Ի դեպ, այն գործածվել է նաև «Կանոնագրքում»:

Աւանդ «պահ տված բան» նշանակությամբ բառը, որ *-իչ* ածանց է ստացել, ստուգաբանված չէ (ՀԱԲ, 354):

Բոցային «հրեղեն, լուսեղեն, բոցեղեն» բառի դեպքում ՆՀԲ-ն (1, 509) նշում է միայն Օծնեցու հետևյալ գործածությունը. «Յայսմ աւուր բանսն ի նախաօրէն մերմէ աղխեալ դրունք դրախտին, *բոցայինն* ի բաց երթեալ ի նմանէ սուր...» (Ատ., 13):

Նկատելի է, որ բառը որոշիչ հոդով լրացնում է *սուր* գոյականին՝ դառնալով որպես նախադաս որոշիչ: Նորակազմությունը ձևավորվել է

-ային ածանցի հավելումով և իմաստով նույնանում է բոցեղէն շատ գործածական բառին:

Դարովական «հանդիմանական, նախատելի» (ՆՀԲ, 1, 641) բառը հանդիպում է նաև Գրիգոր Նարեկացու երկերում: Այն ևս հոլովվում է վերոնշյալ բառերի պես և հոգնակի հայցականով նախադաս որոշի դեր է կատարում հետևյալ օրինակում. «...ուր մարգարէն Եզեկիէ՛ղ գղարովականսն և զսպառնալիսն կարգաւ առ սոսա՝ զոր առ հովիւսն Իւրայէղի յաստուծոյ պատգամաւորեալ բարբառի...» (Ատ., 11):

Դարով «այլանուն, նախատինք» բառը պահլավական *dusrav* բառից է սերում և ավանդված է *dusrub* ձևով (ՀԱԲ, 690), որից ածանցված մի շարք ձևեր է նշում ՆՀԲ-ն (*դարովիչ, դարովութիւն դարովիւն* և այլն):

Ծոմական «ծոմին վերաբերող, ծոմի» բառը միայն Օծնեցու երկերում է գործածված (ՆՀԲ, 1, 1023): ՆՀԲ-ն նշում է նաև, որ ածականը հոլովվում է *ի -ա* հոլովմամբ: Հետևյալ օրինակում այն հոգնակի հայցականով հանդես է եկել որպես ենթակա. «...այսինքն՝ ոչ տէրունականն աւուր զապաշխարութեանն ի վերայ ածել զնսիր, և ոչ նմանօրէն սմա զծոմականսն դատարկացուցանել և փափկացուցանել զաւուրս» (Ատ., 15):

Ծոմ բառը ասորական ծագում ունի՝ *sōm (ՀԱԲ, II, 467): Ի դեպ, Աձառյանը ևս *ծոմական* բառի դիմաց վկայում է միայն Օծնեցուն: Այս արմատով ևս բազմաթիվ ձևեր են ներկայացված ՆՀԲ-ում:

Հրաւիրական «հրավիրման, հրավիրողական» (ՆՀԲ, 2, 139) բառի դեպքում ևս ՆՀԲ-ն Օծնեցուց հետո վկայակոչում է նաև այլ հեղինակների՝ նշելով, որ բառը ենթարկվում է *ի -ա* հոլովման: Եզակի հայցական հոլովվածնով և որոշյալ առումով այն հանդես է եկել հետևյալ օրինակում՝ որպես որոշիչ. «...և ոչ նմանապէս միմեանց օգտամատոյց մեզ լինելով. այլ երախայութեան օծումն *զհրաւիրականսն* ունի դրոշմ...» (Ատ., 8):

Հրաւեր «կոչ, կոչումն» բառը պահլավական ծագում ունի (ՀԱԲ, III, 133):

Ինչպես տեսնում ենք, նորակազմ պարզ հիմքով ածանցավոր ածականները (ածանց + հիմք, հիմք + ածանց) թվով ընդամենը յոթն էին, իսկ դրանց կազմում առկա են *ան-* նախածանցը, ինչպես նաև *-ական, -իչ, -ային* վերջածանցները:

գ) Ածանցավոր ածականները, սակայն, վերը նշվածներով չեն սահմանափակվում, քանի որ դրանցից առանձնացրել ենք այն նորակազմությունները, որոնք թեև ունեն մեկ արմատ, բայց ստացել են և՛ նա-

խածանց, և՛ վերջածանց (երբեմն մեկից ավելի): Այս կարգի բառերը թվով գերազանցում են նախորդներին:

Դրանք են՝ անմահացու, անմերկանալի, անստերիւրող, հոմատեսակ, նախապատուելի, վերերգակ, տարանջատական:

Ստորև անդրադառնում ենք դրանց՝ առանձին-առանձին:

Անմահացու «անմահ» (ՆՀԲ, 1, 200) բառը գործածվել է Օծնեցու երկերում, նաև հետագայում: Ածականը հոլովվում է *ի -ա* հոլովմամբ և որպես որոշիչ (ուղիղ ձևով) հանդես է եկել հետևյալ օրինակում. «...հզորդ, զտկարութիւնս մեր ի քեզ բարձեր. *անմահացու* բնութիւնդ, հաճեցար վասն մեր համբերել մահու խաչի. յաղագս այսպիսի բազմազուր մարդասիրութեանդ ողորմեցիս մեզ» (ՅԿԵԹ, 90):

Նորակազմության համար որպես սերող հիմք է ծառայել *անմահ* բառը:

Անմերկանալի «անձեռնմխելի, անկապտելի» (ՆՀԲ, 1, 203), թարգմանված է՝ *անկապտելի (մխիթարութիւն)* (ՀՕԵ, 38) բառը գործածել է միայն Օծնեցին՝ հայցական հոլովով՝ որպես ուղիղ խնդիր. ՆՀԲ-ն հոլովման մասին մեզ տեղեկություն չի տալիս. «Ի սմա և Հոգին սուրբ առաքեալ ի Հօրէ, *զանմերկանալին* մեզ զգեցոյց մխիթարութիւն» (Ատ., 15):

Այս բառի համար որպես հիմք է ծառայել *մերկանալ* (ՆՀԲ, 2, 254) բայը, որին զումարվել է նախ *-ի* մասնիկը, այնուհետև՝ *ան-* նախածանցը:

Անստերիւրող «անխտոր, անվրեպ, անսխալ» (ՆՀԲ, 1, 150) ածականը գործածել է միայն Օծնեցին՝ «Ատենաբանութիւն» և «Ընդդէմ երեսութեանաց» երկերում՝ ուղիղ ձևով. ՆՀԲ-ում ևս հոլովման մասին որևէ նշում չենք գտնում. «...միջին իմն արդարակ և անստերիւրող ճանապարհաւ բերիցին» (Ատ., 15): Բերված օրինակում բառը որոշի պաշտոն է կատարել:

Բառի համար որպես հիմք է ծառայել *ան(ը)ստերիւր* բառը, որի դիմաց ՆՀԲ-ն (նույն տեղում) տալիս է ինչպես հետագայի, այնպես էլ հին գործածություններ: Փաստորեն բառը նորակազմ է միայն *-ող* վերջավորությամբ: *Ան-* ածանցից հետո առկա է *ըստ* (նաև առանց *ը-ի*) նախդիրը (*անստերիւր* ածականից):

Հոմատեսակ (ՆՀԲ, 2, 119) ածականի դեպքում ՆՀԲ-ն Օծնեցուց հետո բերում է նաև այլ օրինակներ: Բառը հոլովվում է *ի -ա* հոլովմամբ. «...ոչ գիտելով թէ յայնժամ պատուեալ երևի իրն, յորժամ առ *հոմատեսակն* իւր ասասցի. զի թէ այնմիկ ոչ ասասցի՝ յորմէ առեալն եղն» (ԸԵ, 74): Այս բառը որպես ուղևորման հայցական է գործածվել: Որպես բառակազմական հիմք է ծառայել *տեսակ* գոյականը, իսկ *հոմ-* ածանցը հունաբան դպրոցի ստեղծած ածանցներից է:

Նախապատուելի «նախապատիվ, նախամեծար, ավելի պատվով» (ՆՀԲ, 2, 395) ածականը նորակազմ է միայն *-ելի* ածանցով, քանի որ *նախապատիւ* բառի դիմաց կան շատ վկայություններ: Օձնեցուց հետո բառը հանդիպում է նաև այլ հեղինակների երկերում: Հետևյալ օրինակում եզակի հայցական հոլովածևով բառը հանդես է եկել որպես ուղիղ խնդիր. «...ապա ըստ նոցա իմն կարգին ձևանալով, սկսանի այնուհետև աստիճանաւոր պատուովք *զնախապատուելին* բարեպաշտել...» (Ատ., 20):

Վերերգակ «վերածայնությամբ կամ վերելակ աստիճաններով երգելի» (ՆՀԲ, II, 812) գործածվել է միայն Օձնեցու կողմից. «...որպես թէ կամելով սկիզբն ամենայն *վերերգակ* սաղմոսիցն յաղօթելոյ առնել» (Ատ, 4., 29):

Կարծում ենք, որ որպես բառակազմական հիմք է ծառայել *երգակ* ածականը, որը նշանակում է «երգիչ, երաժիշտ» (ՆՀԲ, 1, 672), և որի դիմաց կան շատ վկայություններ: Սակայն կա նաև *վերերգել* բայը «երգաբանել, վերօրհնել» (ՆՀԲ, 2, 812) իմաստով:

Տարանջատական «գատված, բաժանված, տարանջատ» (ՆՀԲ, 2, 855) բառը միայն Օձնեցին է գործածել՝ հոգնակի ուղղականով՝ որպես բաղադրյալ ստորոգյալի մաս. «...վասն զի իւրաքանչիւրոցն նոցա չարափառութիւն յոյժ անմամնիք են միմեանց և *տարանջատականք*» (ԸՊ, 47): Այստեղ ևս նորաբանությունը ձևավորվել է նախածանցունով, քանի որ *անջատական* ածականի դիմաց կան շատ վկայություններ (ՆՀԲ, 1, 232): Ի դեպ, ՆՀԲ-ն նշում է, որ բառը հոլովվում է *ի - ա* հոլովմամբ: Անջատ «գատված» բառը ստուգաբանված չէ (ՀԱԲ, I, 210):

Պետք է նկատել, որ ածանցներից ամենակենսունակն այստեղ *ան-*ն է, որը հիմնականում սերող հիմքի կազմում է, բացի *անմերկանալի* բառից, որում այն նոր բաղադրիչ է: Նախածանցմամբ են ձևավորվել *հոմատեսակ* և *վերերգակ* բառերը, իսկ մնացած բառերում վերջածանցումն է դեր խաղացել: Ածանցավոր բառերը կազմվել են հետևյալ եղանակներով.

Նախածանց + հիմք (պարզ (անսին) և բաղադրյալ (հոմատեսակ, վերերգակ):

Պարզ հիմք + վերջածանց (անբաստանական, ալանդիչ, բոգային, դարովական, ծոմական, հրաւիրական):

Բաղադրյալ հիմք + վերջածանց (անմահացու, անստերիկորո):

Նախածանց + հիմք (պարզ կամ բաղադրյալ) + վերջածանց (անմերկանալի, տարանջատական):

Քառու (իսկանյան)		Ածանցավոր		Միայն Օձնեցու երկերում գործածված (55)			
հոդակապով (16)	կապ (4)	նախածանցավոր (1)	վերջածանցավոր (1)	նախածանց և վերջածանց (4)	Քառու ածանցավոր		
սխալաբերված տրոսաճանճանչ սպիտակմարտիկա բազմաշավոր բարեբան գետնաբուսակ երեկամրիտակեր բայրակածուրճ միայրուծ յուլ ժակից յիմարամիրտ մեխաշարիտ տրոսակարծ ոգբիաշն պատրզամաստար ցաւահալած	կենտառաք ուժնրի վիտպարուն փրկիւնուսկս	անհին	ծոմական	անմերկանալի անստերիկորո վերերգակ տարանջատական	արամուրաբուսական բարեկայելական գազանամորց դեռահաւակ դժուխարածելի// դժուխարածելի դժուխարադիւնի երազագումաւելի գրուարթաթռչ գրուգաքմանակ բագարու հերելական հոտակաւորիչ ողբերգագին ուժնրակի բաջվիստմակ քնարահարու օգտամաստարոց	վերջածանցավոր (17)	նախածանցուն և խառն ածանցուն (12)

Աղյուսակ 3. Լորդավազն ածականներ 1

Աղյուսակ 4. Նորակազմ ածականներ 2

Օծնեցու և ուրիշների երկերում գործածված (13)			
բարդ (իսկական)		ածանցավոր	
հոդակապով (7)	անհոդակապ (2)	ածանցավոր (3)	բարդ ածանցավոր (1)
աղանաբեր ամենապտուղ կապանակից կեղակարծ կիսաբաժ կուրաշալիղ հեղեղագնաց որոմնացան	թագընկեց չարաղանդ	անմահացու հոմատեսակ նախապատուելի	սակաւօրեայ

Աղյուսակ 5. Ածանցների գործածության հաճախականությունը

նախածանցներ	վերջածանցներ
ան - (11)	- (ա)զին (1)
առ - (2)	- ալի (1)
հոմ - (1)	- ակ (6)
յար - (1)	- ական (9)
նախ - (1)	- ակի (1)
վեր - (1)	- ացու (1)
տար - (2)	- եայ (1)
	- եան (1)
	- ելի (5)
	- եցիկ (1)
	- իչ (3)
	- ող (2)
	- ոյց (2)
	- սուն (1)
	- ու (3)
	- ուրդ (1)

3) ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՅԵՐ

Օծնեցու բառապաշարում քիչ չեն նաև բայական կազմությունները, որոնք պայմանականորեն կներկայացվեն ըստ սեռերի:

1. Ներգործական սեռի բայեր: ՆՀԲ-ն որպես այսպիսիք ներկայացնում է հետևյալ կազմությունները՝ բռնարկեալ (բռնարկել), գեղեցկակերտեմ, դժոխաբանել, դնանիլ, թերաբանել, ժուայթեմ, մղեղել, նախահաւել, ներկազմել, ներքատակեմ, շարակապեմ, պատուիրանադրեալ, ցանկասիրել, փրկանաւորել, քողախնդրեմ:

Նկատելի է, որ ներկայացված բառերի շարքը պատկանում է ք լծորդությանը: Բայահիմքերը թեև պարզ, բարդ կամ ածանցավոր են, այնուամենայնիվ սրանցից ոչ մեկի կազմում որևէ բայածանց չկա (բացառությամբ *դնանիլ* բայի, որն ածանցավոր է և պատկանում է ի լծորդությանը), այսինքն՝ բոլորը պարզ բայեր են: Որոշ բայեր խոնարհված են, իսկ մյուսները՝ ոչ: Դրանցից բռնարկել, ժուայթեմ, ներկազմել, ներքատակեմ, փրկանաւորել, քողախնդրեմ բայերը գործածվել են միայն Օծնեցու կողմից, մյուսները հանդիպում են նաև հետագա հեղինակների գործերում:

Բռնարկեալ «ձեռնարկած, նախատեսած» (ՆՀԲ, 1, 517) ձևը բռնարկել բայի անցյալ դերբայն է ներկայացնում: Բառը հայցական հոլովով գործածվել է որպես ենթակա. «Իսկ առաջին բռնարկեալս ի վեր է քան զմեր կարողութիւնս յաղագս տգիտութեան և խոշոր բանիս» (ՎԱՄ, էջ 104):

Ըստ երևույթին, այն ձևավորվել է բուռն հարկանել (ՆՀԲ, 1, 512) հարադրությունից, քանի որ վերջինիս իմաստն է արտահայտում:

Գեղեցկակերտեմ (եցի) «գեղեցկորեն կերտել, շինել» (ՆՀԲ, 1, 537) բայը մեկ հանդես է եկել հոգնակի ուղղականով՝ որպես որոշիչ (անցյալ դերբայ). «Ոչ ինչ պակաս և առ Սողոմոնի գեղեցկակերտեալք ի տեղիս տաճարք...» (ԸՊ, 45), մեկ էլ՝ որպես ստորոգյալ՝ սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևում՝ կրավորածև խոնարհումով. «...և յորմէ գահոյքն գեղեցկակերտեցան զնիւթն իբրև գանարգ ինչ անգոսնեալ ի բաց մղեն» (ԸԵ, 74): Ի դեպ, ՆՀԲ-ն վկայակոչում է նաև հետագայի հեղինակ խոսքովիկ Թարգմանչին: Պետք է նշել, որ գեղեցիկ բաղադրիչով կազմությունները շատ են Օծնեցու երկերում (տե՛ս գեղեցկանուագ). այս կապակցության մեջ այն լրացրել է կերտել բային:

Դնանիլ «դրվել» բայի դիմաց ՆՀԲ-ն (1, 637) նշում է, որ այն հունաբան ոճի «անսովոր խոնարհված բայ» է և Օծնեցուց բացի բառի գործածության օրինակներ է բերում նաև հետագա հեղինակներից: Բառը

համարժեք է *դնել* բնիկ հայերեն բառին և իր կազմում ունի *-ան* հիմքա- կազմիչ ածանցը՝ ներկայացնելով այս խմբի միակ ածանցավոր և *չ* խոնարհման բայը: Ի դեպ, ուշագրավ է այն, որ բառն ավարտվում է *-ի* վերջավորությամբ:

Ընց անորոշ դերբայով էլ բայը գործածվել է որպես ստորոգյալ՝ հետևյալ օրինակում. «...իսկ ի տրտմականսն՝ ծանրաբեռնութեան ի ներքոյ *դնանի* տկար բնութեանս. մարմնասպան լինելով յաւէտ քան թէ ախտասպան...» (Ատ., 15):

Դժոխաբանել «դժնդակ կամ դժոխային խոսք ասել, հայիոյել» (ՆՀԲ, 1, 615) բայը սահմանական անցյալ անկատար ժամանակում ստորոգյալի դեր է կատարում. «Չվերջինն Եւտիքես, որ ոչ համագոյա- կան կուսին *դժոխաբանէր* զմարմինն Քրիստոսի...» (ԸԵ, 73):

Բայահիմքը կազմված է *դժոխ* և *բան* «խոսք» բառերից (ՀԱԲ, 1, 403), որոնք կապակցված են լրացում (պարագա) + բայ հարաբերու- թյամբ:

Վերջինս տեղ է գտել նաև հաջորդ՝ *թերաբանել* բառում՝ «թերի խո- սել» իմաստով (ՆՀԲ, 1, 806): Բառն անորոշ դերբայաձևով և *դ* դիմո- րոշ հոդով հանդես է եկել որպես ենթակա. «Ապա թէ յերկիւղէ տարա- կուսանաց է *թերաբանելոյ* ձեր, զնմանն առնէք այնոցիկ, որք ի սրոյն զարհուրանաց փախչելով՝ գահավէժք եղեալ մեռանին» (ԸԵ, 63):

Ժուայթեմ (*եցի*) «շվայտանալ, բորբոքվել չափից ավելի ուտելուց» (ՆՀԲ, 1, 839) պարզ բայահիմքով բայը գործածվել է անորոշ դերբայի գործիական հոլովով՝ որպես ձևի պարագա. «Տղայոցն արեամբ զան- գեալ ալեր, զանօրէնն *ժուայթելով* զօրէնս, անդ ևս քան զխոզիցն գտանին զանզգայ ծննդակերութիւնս» (ԸՊ, 38):

Ի դեպ, անստույգ ծագումով բայահիմքի դիմաց Աճառյանը ևս բե- րում է միայն Օծնեցու օրինակը (ՀԱԲ, II, 233-34):

Սղեղել «յաճին և ի մոխիր դարձուցանել» (ՆՀԲ, II, 286) բայը Օծ- նեցուց հետո գործածել է նաև Ստեփանոս Սյունեցին (Ը դար): «... որ կարողն է խարշել իբրև գվուշս ագարակի զհեթանոսական բոյսն, *մղե- ղել* և արտաքս ընկենու...» (ԸՊ, 46): Բառի արմատն է *մղեղ*, որ նշա- նակում է «բարակ փոշի, մոխիր»: Նախորդ բառի պես այս նորաբա- նությունն էլ ձևավորվել է միայն բայական վերջավորությամբ:

Նախահաւել բայը նշանակում է «սկսել, սկիզբ առնել» (ՆՀԲ, 2, 390): Օծնեցին այն գործածել է «Ատենաբանութիւն» երկում՝ անցյալ դերբայով. «Այլ զոր ասեմս, այս նախնական սովորութիւն ի վաղնջուց հետո՛ *նախահաւեալ*» (12): ՆՀԲ-ն Օծնեցուց հետո վկայակոչում է «Պի- տառութիւնք» ժողովածուն: Բայի *հաւ* արմատը նշանակում է «սկիզբ»

(տե՛ս *դեռահաւակ*): Որպես բառակազմական հիմք է ծառայել *հաւիմ* նույն իմաստով կրկնասեռ բայը (ՆՀԲ, 2, 79), որին միացել է *նախ* բա- դադրիչը. վերջինս հունաբան հայերենի շրջանում արդեն որպես ա- ծանց էր գործածվում:

Ներկազմել «կազմել, հորինել» (ՆՀԲ, 2, 418) բառը դարձյալ հունա- բան ոճով է կազմված, որն իմաստով նույնն է, ինչ *կազմել-ը* (ՆՀԲ, 1, 1070), նորակազմ է *ներ-* հունաբան ածանցի առկայությամբ: Բառն անցյալ դերբայով և հոգնակի ուղղականով հանդես է եկել որպես ու- դիղ խնդիր. «Իսկ ձեռք առ հնարագիտութիւնս հպելով, արարչականք անուանին. բայց առաւելագոյն բանին ի պէտս օգնականութեան *ներ- կազմեալք* և յարառոցեալք» (Ատ., 20):

Ըստ ՆՀԲ-ի՝ ներքատակել (*եցի*) «նմանեցնել» բայը նույնն է, ինչ *քատակել*, «նմանեցնել, ձևացնել, հարմարեցնել» (ՆՀԲ, 2, 422, այլև 994). բայը ներկա ժամանակաձևում որպես ստորոգյալ է հանդես եկել հետևյալ օրինակում. «Որպէս վայել է աստուծոյ քաղցնով՝ զքաղցն իմանամ, և ոչ մարդկայնովս օրինակեալ. *ներքատակեմ* զնորայն» (ԸԵ, 82):

Քատակ բառի ծագումը հայտնի չէ, նշանակում է «նման» (ՀԱԲ, IV, 558) և, ըստ ՆՀԲ-ի, *ի-ա* հոլովմամբ է հոլովվում, թեև ըստ Աճառյանի՝ կա միայն *քատակի* (*ի հոլովում*): Ի դեպ, Աճառյանը ևս որպես օրինակ է բերում Օծնեցու երկում տեղ գտած հիշյալ գործածությունը: Ակն- հայտ է, որ այստեղ ևս հունաբան ոճն է գործում՝ նույն՝ *ներ-* ածանցի առկայությամբ:

Շարակապել «միահյուսել, շարակապել, միացնել» (ՆՀԲ, 2, 470) բայը գործածվել է նաև (ըստ ՆՀԲ-ի) խոսքովիկ Թարգմանչի կողմից: Օծնեցու երկում բայը որպես ստորոգյալ է հանդես եկել՝ անցյալ կա- տարյալի ներգործաձև խոնարհումով. «...զառ ի նոցանէ ասացեալն զաղօտաբար հնչումն առեալ մարդկան՝ *շարակապեցին* ընդ աստու- ծոյ հօօրի և անմահի» (ՅԿԵԲ, 90): Այստեղ հունաբան ոճը դրսևորվում է մեկ այլ՝ *շար-* նախածանցով:

Պատուիրանադրել (*- եցի*) «օրինասեր, օրինադիր, սահմանված» (ՆՀԲ, 2, 620) բայը գործածվել է *պատուիրանադրեալ* անցյալ դերբա- յաձևով, որը, ստանալով *ն* հոդ, *առ* նախդրով ուղևորման հայցականի դեր է կատարում հետևյալ օրինակում. «Որ առ *պատուիրանադրեալ*ն ոչ ձգտի հասանել կանոն, և նա յահեկակողմանն դանդաղէ խոտորեալ ճանապարհի» (Ատ., 15): Այստեղ նորաբանության բառակազմական հիմքը *պատուիրանադիր* «պատվիրան դնող» ածականն է (ՆՀԲ, 2, 620):

Ցանկասիրել «սիրով ուզել՝ ցանկանալ» (ՆՀԲ, 2, 909) բայի սեռը ՆՀԲ-ում չի նշվում: Այն հանդես է եկել ներկա ժամանակով՝ որպես ստորոգյալ. «Եւ վասն զի ընդ ձեռն բանից՝ յանմարմնականացն մտօք սլացեալ ելանեն ի բնակութիւնս ընդ նմին և բարեծևանալ *ցանկասիրեն*» (Ատ., 22):

Բառակազմական սերող հիմքն է *ցանկասէր* «ցանկամոլ» ածականը (ՆՀԲ, նույն տեղում): Բառը նորակազմ է *-ել* վերջավորությամբ:

Փրկանաւորել (*եցի*) «ազատել փրկանք տալով, փրկագործել» (ՆՀԲ, 2, 964) բայը դարձյալ ստորոգյալի դերում է հանդես եկել՝ անցյալ կատարյալ ժամանակաձևում. «*Փրկանաւորեաց* զմեզ արեամբ միածնին իւրոյ» (Ատ., 21):

Նորակազմության համար որպես սերող հիմք է ծառայել *փրկանաւոր* ածականը: Վերջապես, **քողախնդրել** (*-եցի*) «քրոհի տակ առնվածը բանալ, պարզել» (ՆՀԲ, 2, 1011) բայը, որը հանդես է եկել անցյալ դերբայի չթեքված տարբերակով՝ որպես ձևի պարագա. «Եւ արդ վասն զի բացայայտակի *քողախնդրեալ* զկռապաշտիցն հուանեցաք զհիմարութիւն» (ԸՊ, 37):

ՆՀԲ-ն վկայություններ է բերում «Ընդդէմ պառլիկեանց» երկից, հետագա հեղինակներից, ապա՝ «Կանոններից», որ դարձյալ Օծնեցուն է պատկանում: Ի դեպ, Օծնեցին գործածել է նաև *քողախնդրի* (*<քողախնդիր*) բառաձևը, որ ՆՀԲ-ն չի նշում. «...ցուցեալ է եւ ասացեալ զառաջնոյն Արտեմոնն, թէ աշակերտեալ է Յովհաննու աւետարանչի, ոչ բարեսէր կամաւք, այլ *քողախնդրի* (ՆՊ, էջ 102): Կարծում ենք, որ բառի իմաստն է «ծածուկ, թաքուն»:

Այս խմբի մեջ ընդգրկել ենք նաև **գեղեցկածայնեմ** բայը, որի սեռը ՆՀԲ-ն (1, 537) չի նշում, ինչպես նաև *մահալուծող* բայը, որը ՆՀԲ-ն ներկայացնում է որպես ածական: Երկու բառերի դիմաց էլ նշվում են միայն Օծնեցու օրինակները: «Որպէս թէ ի քառից աստի *գեղեցկածայնեալ* ի տեսանելեաց և ի լսելեաց, ի խօսարանաց և ի շօշափելեաց» (Ատ., 20): Նորակազմ բայն անցյալ դերբայով հանդես է եկել որպես ձևի պարագա: Նորակազմությունը ձևավորվել է բայական վերջավորությամբ միայն:

Մահալուծող, **մահալուծիչ** «մահը լուծող, եղծող» բառերի համար ՆՀԲ-ն (2, 196) օրինակներ է բերում միայն Օծնեցուց: *Մահալուծող* բայը, որ հանդես է եկել որպես որոշիչ, ենթակայական դերբայ է. «Եւ վասն զի գիտէ, թէ ներկայ ամանակիս գիշերային հանգիստս՝ զապականութեանս ոչ կարէ յինէն մերկանալ զբռնութիւն, եթէ ոչ վերջունն այնմիկ ապականահալած և *մահալուծող* գիշերին երթեալ հանդիպա-

նամ, զսոյն և ընդունել հայցէ ի նմանէ» (Ատ., 22): Բառի սերող հիմքն է *մահալոյծ* ածականը (ՆՀԲ, 2, 196):

2. Չեզոք սեռի բայեր: Չեզոք սեռի են հետևյալ նորակազմությունները. **գթասիրել**, **հարազատանալ**, **ներհականալ** (այս բայի սեռը նշված չէ ՆՀԲ-ում), **ողբածայնել** (և ոչինչ չկա), **վերերթալ**: Բացի *ախտնարիման հարազատանամ*, *ներհականալ* բաղադրության-քերականական ածանցավորներից՝ մնացած բայերը կազմությամբ պարզ են: *Ողբածայնել* և *հարազատանամ* բայերի համար ՆՀԲ-ն վկայակոչում է միայն Օծնեցուն, իսկ մյուսների դեպքում՝ հետագա հեղինակների:

Գթասիրել «սիրով գթալ, զուրով սեր տածել» (ՆՀԲ, 1, 551) բայը, որ գործածել է նաև Գրիգոր Նարեկացին, հանդես է եկել անցյալ դերբայով՝ որպես ձևի պարագա. «Եթէ ոչ այնուիկ՝ որով *գթասիրեալ* երկնային Հօրն, փրկանաւորեաց զմեզ արեամբ միածնին իւրոյ» (Ատ., 21): Բառի սերող հիմքն է *գթասէր* (ՆՀԲ, նույն տեղում), որից բաղադրված բազմաթիվ ձևեր կան ՆՀԲ-ում:

Հարազատանալ (*-ացայ*) «հարազատ, բնորոշ լինել» (ՆՀԲ, 2, 59) բայը դիմավոր ձևով է գործածվել, այն է՝ ստորադասական եղանակի երկրորդ ապառնի ժամանակաձևով պարզ ստորոգյալ. «Սակս որոյ և երկոցունց մասնաւորաբար և *հարազատասցի* սա, այս ինքն տուրնջեան և գիշերոյ, և օտարացեալ զոցի» (Ատ., 15-16): Նորակազմության հիմքն է *հարազատ* բառը, որը պահլավական հաճաճ ձևից է ծագում (ՀԱԲ, III, 55): Բառը ձևավորվել է *-ան* հիմքակազմիչ ածանցի և *-ալ* վերջավորության միջոցով:

Ներհականալ (ներհակայի) «ներհակ է, հակառակ է» հունաբան կազմությամբ բայը, ըստ ՆՀԲ-ի (2, 419), դիմագուրկ է, սակայն Օծնեցու բնագրում այն սահմանական ներկա ժամանակաձևում ստորոգյալի դեր է կատարում. «Քանզի ապականութիւն՝ ներլինելութեանն *ներհականայ*. և ներհակքն ոչ կարեն համանգամայն ի միում և ի նոյն ժամանակի բաղկանալ» (ԸԵ, 82):

Նորակազմությունը ձևավորվել է նույն սկզբունքով, ինչ նախորդը՝ այն տարբերությամբ, որ այստեղ առկա է ածանցավոր հիմք (*ներ-* նախածանցով է պայմանավորված բառի հունաբան ոճը, իսկ արմատն է՝ *հակ*): ՆՀԲ-ն (նույն տեղում) *ներհակայի* բառի դիմաց բազմաթիվ վկայություններ է տալիս:

Ողբածայնել «ողբական ծայնով նվագել» (ՆՀԲ, 2, 506) բարդ բայի հիմքով բայը անցյալ դերբայով է հանդես եկել՝ որպես ձևի պարագա. «Զերկուսն ապաշխարութեան և աղօթից, սակս *ողբածայնեալ* հոգեկան մասինն՝ որ ընդ աղախնայելոցն որ ի մեզ դաշնաւորեցաւ հեշտութեամբ ճաշակելեաց և հոտոտելաց» (Ատ., 20):

Բառի սերող հիմքն է *ողբածայն* ածականը (ՆՀԲ, 2, 506):

Վերերթալ «ի վեր երթալ, վերանալ» (ՆՀԲ, 2, 812) բայը կազմված է հարադիր բարդության բաղադրիչների միացումով, հենց անորոշ դերբայի ուղիղ ձևով էլ հանդես է եկել որպես ուղիղ խնդիր. «Եւ այսպէս երկոքումք այսոքիւք ուղղապաշտութեան շաւղօք առ խորհուրդ մարմնաւորութեան բանին *վերերթալ* գիտացեալք սուրբ հարքն» (ԸԵ, 73): Ակնհայտ է, որ բառը կազմված է *ի վեր երթալ* հարադրությունից:

Չեզոք սեռի բայերի մեջ ենք ներառել նաև գերաստիճանեալ և գինազարդեալ դերբայական ձևերը, որոնց սեռերի մասին ՆՀԲ-ն ոչինչ չի նշում, երկուսի դեպքում էլ վկայում է միայն Օծնեցու երկերը:

Գերաստիճանեալ «ամենավերին, գերագույն աստիճանին բարձրացած» (ՆՀԲ, 1, 546) բայն այստեղ գործածվել է որպես բացահայտիչ. «...և գկնի նորա հետևեալ ըստ կարգի սարկաւազն. յետոյ ապա իբրև գվեհագոյն՝ *գերաստիճանեալն* ի նոցանէ եպիսկոպոսն» (Աւ., 20): Բառի սերող հիմքն է *գերաստիճան* ածականը (ՆՀԲ, նույն տեղում):

Ջինազարդեալ «զինված» (ՆՀԲ, 1, 734) բայը դարձյալ անցյալ դերբայով է հանդես գալիս՝ այս անգամ որոշիչի պաշտոնում. «Յաղագս նոցուն ապա և մեր աստուածայնովն *զինազարդեալ* սպառազինութեամբ, հաւաքեսցուք ի հեղեղագնաց կենցաղոյս՝ զգայութեանցն» (ԸՊ, 46): Որպես սերող հիմք չենք կարող ընդունել *զինազարդ* ածականը կամ *զարդեմ* բայը, քանի որ դրանք առանձին վկայված չեն ՆՀԲ-ում: Ուստի բառն ամբողջությամբ նորակազմ է:

3. Կրկնասեռ բայեր: Հիմք ընդունելով ՆՀԲ-ի տվյալները՝ Օծնեցու նորակազմություններից որպես այդպիսիք (կրկնասեռ բայեր) առանձնացվել են հետևյալները՝ **առփործիմ, ծնրդիլ, ներհորդիմ, վերջադարծիլ, փոխաբուսանիմ:** Սրանցից վերջինը ածանցավոր է, *ծնրդիլ* բայի մեջ առկա է *դ* ածականը, իսկ մյուսները պարզ բայեր են: Բոլոր բառերի դեպքում ՆՀԲ-ն վկայակոչում է միայն Օծնեցուն, բացի *վերջադարծիլ* բառից, որ գործածվել է նաև հետագայում:

Առփործիմ (-ծեցայ) «փործել, ջանալ, ձեռնարկել» (ՆՀԲ, 1, 313) բայը հունաբան ոճի կազմություն է, որ նույնանում է *փործիմ* բայի հետ: Բառը ձևավորվել է *առ* նախդրով, որ հունաբան հայերենի շրջանում արդեն ածանց էր, և *փործիլ (փործ)* բնիկ հայերեն բառով: Բայը ներկա ժամանակով պարզ ստորոգյալի պաշտոն է կատարում. «...ընդէ՞ր զստութիւն, և ոչ գիւաւատս ի բանս և ի գործս *առփործիս* ցուցանել, կամելով լինել որդի անդրանիկ ի հօրէ սատանայէ» (ԸԵ, 75):

Ծնրդիլ «խիստ ծնրել, հալումաշ լինել» (ՆՀԲ, 1, 1019) բայն անցյալ դերբայով է հանդես եկել, *ի* նախդրով և հոգնակի հայցական հոլո-

վածնով ձևավորել է տեղի պարագա. «Ձոր և տեսանեմք ի ծառայութիւն գեկեալս սատանայի խեղանդամս և ոգեհաշմս, ծիրեալս, *ծնրդեալս*, և կասեալս ի գօրութենէ» (ԸՊ, 41):

Ծնրիլ բայի ծագումը պարզ չէ: Բառի *ծնրիլ* տարբերակի դիմաց Աճառյանը ևս նշում է Օծնեցու օրինակը (ՀԱԲ, II, 464): Փաստորեն բառը նորակազմ է միայն *դ* ածականի առկայությամբ:

Ներհորդիմ (-եցայ) «հորդել, ճանապարհ բանալ, առաջ գնալ» (ՆՀԲ, 2, 420) բայը ևս հունաբան ոճի կազմություն է, որը պայմանավորված է ներ- ածանցի առկայությամբ: Նորակազմությունը փաստորեն նույն իմաստն է արտահայտում, ինչ *հորդել* (ՆՀԲ, 2, 124) ներգործական բայը: Բառը հանդես է եկել ստորադասական եղանակի երկրորդ ապառնիով՝ պարզ ստորոգյալի պաշտոնում. «...մանաւանդ թէ և եղազ ներքսանկութեան նմա՝ յանշնորհակալուս բազմերախտութեան աստուծոյ *ներհորդեացի...*» (Աւ., 11): Աճառյանն իբրև օրինակ է բերում վերոնշյալ բառը՝ վկայակոչելով Օծնեցուն (ՀԱԲ, III, 120):

Վերջադարծիլ «հետ դառնալ, վերադառնալ» բայը (ՆՀԲ, 2, 815) գործածվել է «Կանոնք»-ում. «...իսկ ի յարութենէն առ ծնունդն *վերջադարծիլ* անկարելի...» (29): Բայահիմքը կազմված է *վերջ* անստույգ բառից (ՀԱԲ, IV, 332) և *դառնալ* բայի դարձ տարբերակից: Այստեղ ուշագրավ է այն, որ *ի* խոնարհման բայը հանդես է եկել *իլ* բայական վերջավորությամբ, ինչը սովորական չէ գրաբարի համար. նույն երևույթն է առկա նաև *ղնանիլ* բայի դեպքում:

Փոխաբուսանիմ (-սայ, -սեալ) «վերաճել» (ՆՀԲ, 2, 946) բայն անդեմ ձևով է գործածվել (անցյալ դերբայ)՝ որպես որոշիչ. «Ոչ ի մարմնոյ բնութիւն *փոխաբուսեալ* Բանին, այլ և ոչ մարմնոյ ի նորայն...» (ԸԵ, 64): *Փոխ* «փոխ առնուած բան» արմատը ասորական փոխառություն է (ՀԱԲ, IV, 511), որը հունաբան դպրոցի օրոք վերածվել էր ածանցի: Նորակազմությունը ձևավորվել է նախածանց + բայ կաղապարով:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարող ենք նշել, որ Օծնեցու կազմած բայերում առկա են բառակազմական հետևյալ կաղապարները.

1) Հիմք + հոդակապ + հիմք, որտեղ բաղադրիչներն արտահայտում են խնդիր կամ պարագա + ստորոգյալ շարահյուսական հարաբերությունը (*գեղեցկ + ա + կերտեմ, դժոխ + ա + բանել, թեր + ա + բանել, պատուիրան + ա + դրեմ, վերջ + ա + դարծիլ*):

2) Պարզ հիմք + հոդակապ + պարզ հիմք + բայական վերջավորություն: Այս կառույցում լրացումը ուղիղ ձևով գործիական հոլովի նշանակությամբ է հանդես գալիս (*զին + ա + զարդ + եալ - զին* (<զէն(ք)), գործիական հոլովի իմաստ):

3) Նախածանց + հիմք (բայ), որտեղ հիմնականում գործում են հունարան հայերենի կերտած նախածանցները, օրինակ՝ առ + փորձիմ, ներ + կազմել, ներ + հորդիմ, ներ + քատակեմ, շարա + կապեմ, փոխա + բուսանիմ և այլն:

4) Բաղադրյալ հիմք + բայական վերջավորություն, ինչպես՝ գերաստիճան + եալ, գեղեցկածայն + եմ, գթասիր (<գթասէր) + ել, մահալյոծ (<մահալյոծ) + օղ, ողբածայն + ել, փրկանաւոր + եմ, քողախնդր (<քողախնդիր) + եմ:

5) Պարզ հիմք + բայական վերջավորություն (ժուայթ + եմ, մղել + ել):

6) Հիմք + ածանց (հիմքակազմիչ) + բայական վերջավորություն (անորոշի կամ խոնարհման), օրինակ՝ դն + ան + իլ, հարազատ + ան + ալ, ներհակ + ան + այ:

7) Հարադրությունից կազմված, օրինակ՝ բռնարկեալ (<բուռն հարկանել), վերերթալ (<ի վեր երթալ):

8) Բայական վերջավորությունից առաջ ածականի հավելում, օրինակ՝ ծնրդի (<ծնրի):

Աղյուսակ 6. Նորակազմ բայեր

Միայն Օծնեցու երկերում գործածված (14)		Օծնեցու և ուրիշների երկերում գործածված (14)	
Ներգործական (6)	բռնարկեալ (բռնարկել) գեղեցկածայնեալ ժուայթեմ մահալյոծօղ ներկազմել փրկանաւորել	Ներգործական (10)	գեղեցկակերտել դժոխաբանել դնանիլ թերաբանել մղելել նախահաւել շարակապել պատուիրանադրեալ ցանկասիրել քողախնդրեմ
Չեզոք (4)	գերաստիճանեալ զինազարդեալ հարազատանալ ողբածայնել	Չեզոք (3)	գթասիրել ներհականալ վերերթալ
Կրկնասեռ (4)	առփորձիմ ծնրդիլ ներհորդիմ փոխաբուսանիմ	Կրկնասեռ (1)	վերջադարձիլ

Աղյուսակ 7. Ածանցների գործածության հաճախականությունը

Նախածանց	Վերջածանց և բայական վերջավորություն	Կերպածանց
առ - (1) գեր - (1) թեր - (1) ներ - (3) շար - (1)	- ալ (-ամ, -աց) (3) -ել (12) -եցիկ (2) -եալ (6) -իլ (-իմ) (4) -օղ (1)	- ան - (3)

4) ՆՈՐԱԿԱԶՄ ՄԱԿԱՅՆԵՐ

Նորակազմ մակբայները ևս զգալի թիվ են կազմում Օծնեցու երկերում: Դրանք բաղադրյալ կազմություն ունեն, ձևավորվել են հիմնականում *-բար, պէս, -ակի* վերջածանցներով: Այս բառերի կազմում հանդիպում են նաև այլ կարգի ածանցներ, ինչպես նաև նախդիրներ, հոլովական վերջավորություններ: ՆՀԲ-ն ևս նշում է այս բառերի խոսքիմասային պատկանելությունը:

1. Նախ կներկայացվեն ածանցավոր մակբայները. դրանք թվով 6-ն են՝ անընդհատաբար, անմարմնաբար, անմոռացաբար, անչափաբար, բացայայտակի և իրաւապես: Անընդհատաբար և բացայայտակի բառերը միայն հեղինակային գործածություն են ստացել, մյուսների դեպքում ՆՀԲ-ն նշում է նաև հետագա հեղինակների:

Անընդհատաբար «անընդհատ, մշտապես» (ՆՀԲ, 1, 148) բառը նորակազմ է միայն *-արար* ածանցի առկայությամբ, այսինքն՝ սերող հիմքն է *անընդհատ*, և ժամանակի մակբայը հանդես է եկել համանուն պարագայի կիրառությամբ. «...և *անընդհատաբար* առ աստուած յերկինս ի վեր առաքել զփառաբանութիւն յերեկորեայ, և մինչ ի ծագելն արեգական» (Ատ., 17):

Անմարմնաբար «իբրև անմարմին, առանց մարմնի, հոգեպես» (ՆՀԲ, 1, 201) ձևի մակբայը գոյականին (*ներգործութիւն*) է լրացնում՝ դառնալով որոշիչ. «Մի՛ բաղդատեր գյոյծ ի միմեանց տարբերեալսն. քանզի անդ *անմարմնաբար* և միայն ձևացութեամբ ներգործութիւն...» (ԸԵ, 75):

Նորակազմության համար որպես հիմք է ծառայել *անմարմին* (ՆՀԲ, նույն տեղում) ածականը, որ բազմաթիվ գործածություններ ունի:

Անմոռացաբար «առանց մոռանալու, անմոռաց ձևով» (ՆՀԲ, 1, 204) մակբայը հանդես է եկել ձևի պարագայի պաշտոնում. «Յաղագս

որոյ *անմոռացարար* հայցեմ ընդունելի ձէնց զյիշողութեան փոխարէնս...» (Յիշատակարան⁵², 116):

Այս նորակազմութիւնը ևս ձևավորվել է վերջածանցի միջոցով, որն ավելացել է *անմոռաց* ածականին (ՆՀԲ, նույն տեղում):

Անչափ ածականից նույն սկզբունքով ձևավորվել է հաջորդ՝ *անչափարար* «անչափ, առանց չափի» (ՆՀԲ, 1, 224) ձևի մակբայը, որը ՆՀԲ-ի կողմից հիշատակվում է երկու անգամ՝ միևնույն երկուս: Երկու դեպքում էլ բառը հանդես է եկել որպէս կողմնակի ձևի պարագա. «...*յանչափարար* և զանազան և այլաձևան առնելոյ՝ թէ զվարս և եթ զփառաբանութիւնսն որ առ աստուած» (Ատ., 4). «Եւ մեւսն *անչափարար* ընդարձակելալ, թողութեանն յուսով զբովանդակ զերկիւղին ի բաց լուծանէ զկապ» (Ատ., 15):

Բացայայտակի «բացահայտ, ակնհայտ ձևով» (ՆՀԲ, 1, 473) մակբայը գործածվել է և՛ ԸՊ-ում, և՛ ԸԵ-ում, որոնք էլ նշում է ՆՀԲ-ն: Առաջինում հանդես է եկել կողմնակի ձևի պարագայի պաշտոնում. «Եւ արդ վասնզի *բացայայտակի* քողայխնդրեալ զկրապաշտիցն հոլանեցաք զյիմարութիւնս...» (ԸՊ, 37): «Իսկ զքնոյն ունակութիւն *բացայայտակի* ի գրեցելոց անտի բանից ծանեաք...» (ԸԵ, 83):

Այստեղ էլ հիմքը *բացայայտ*-ն է, որի *բաց* նախածանցը հունարան դպրոցի նորանւծութիւններից է:

Իրաւապէս «իրավամբ, ստույգ» (ՆՀԲ, 1, 827) ձևի մակբայը հանդիպում է նաև հետագա հեղինակների երկերում, իսկ մինչ օձնեցին *իրաւարար* (ՆՀԲ, 1, 871) ձևն է հանդիպում: Բառը գործածվել է հետևյալ նախադասության մեջ. «Իսկ մահուամբն թէպէտ և պատժեաց զմեզ՝ որ *իրաւապէսն* դատիր...» (ԸԵ, 92):

Նորակազմութեան բառակազմական հիմքն է *իրաւ* (*իր* բառի գործիական հոլովածը):

Այս խմբում ընդգրկված է նաև *ի բարձուստ* մակբայը՝ «բարձրից, ի վերուստ» իմաստով (ՆՀԲ, 1, 462), որի դեպքում ՆՀԲ-ն վկայում է միայն օձնեցուն: Բառը կազմվել է *ի* նախդրի, *բարձր* արմատի և *-ուստ* ածանցի միջոցով, թեև 5-րդ դարում արդեն այդ ածանցով նոր բառեր այլևս չէին կազմվում⁵³: Բառը գործածվել է հետևյալ նախադասության մեջ՝ որպէս տեղի պարագա. «Ձոր օրինակ՝ քար ինչ՝ *ի բարձուստ* ուստեք հոլովելալ, որ մօտն կայցէ՝ ասասցէ» (ԸԵ, 93-94):

⁵² Յովհաննու Իմաստասիրի օձնեցւոյ Մատենագրութիւնք, Վեներ., 1833, «Յիշատակարան», էջ 115-116:

⁵³ Ս. Ղ. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, 3-րդ հրատ., էջ 155:

Փաստորեն ածանցավոր մակբայների կազմության սկզբունքը մեկն էր՝ ածանցավոր հիմք + մակբայակերտ *-արար*, *-ակի* կամ *-ապէս* ածանց:

2) **Բարդ ածանցավոր մակբայներ:** Այս խմբի մեջ են մտնում հետևյալները՝ *ազգակցապէս*, *երկպատկարար*, *զուգակենակցարար*, *մարմնաձևապէս*, *յետամտականարար*, *նոյնաձևարար* և *նոյնաձևապէս*:

Նկատելի է, որ երկրորդ խումբը թվով գերազանցում է նախորդին: Սրանցից միայն *ազգակցապէս*, *մարմնաձևապէս*, *նոյնաձևարար* և *նոյնաձևապէս* բառերն են, որ օձնեցուց հետո, ըստ ՆՀԲ-ի, գործածել են նաև ուրիշ հեղինակներ, մյուս նորակազմութիւնները միայն հեղինակային գործածություններ են ստացել: Նշված բոլոր մակբայներն էլ հիմնականում ձևի գաղափար են արտահայտում, այսինքն՝ ձևի մակբայներ են՝ համապատասխան կիրառությամբ: Այս խմբի բառերում, արմատներից բացի, առկա են բացառապէս մակբայակերտ ածանցներ:

Այսպէս՝ *ազգակցապէս* «համասեռ, բնութենակից» (ՆՀԲ, 1, 8) բառը ձևի պարագայի պաշտոնում է հանդես եկել. «...վկայք լինելով յարմարութեան միմեանց հանգիտարար և *ազգակցապէս*» (Ատ., 3):

Նորակազմութեան բառակազմական հիմքն է *ազգակից* (ՆՀԲ, 1, նույն տեղում): Հետագայում բառը գործածել է նաև Գրիգոր Նարեկացին (ըստ ՆՀԲ-ի):

Երկպատկարար «կրկնակի, երկու կերպ» (ՆՀԲ, 1, 699) մակբայը հետևյալ օրինակում հանդես է եկել ձևի պարագայի պաշտոնում. «Ձորօրինակ երկտեսակ բնութիւնս է մարդկային, *երկպատկարար* և նորոգող սուրբ Հոգին առ մեզ մերձենայ...» (ԸՊ, 43): Բառի հիմքն է *երկպատկի* (ՆՀԲ, նույն տեղում), որ բազմաթիվ գործածություններ ունի: ՆՀԲ-ում նշվում է նորակազմութեան միայն օձնեցու գործածությունը:

Չուգակենակցարար «զուգակցի հետ կյանք կապելով» (ՆՀԲ, 1, 746) մակբայը նույն պաշտոնում է հանդես եկել. «...այսուիկ գտրտմութիւն նշանակէ զնախաստեղծին, զայլս ի կենդանեացն *չուգակենակցարար* ըստ ազգի տեսանելով վայելչացեալս...» (ԸԵ, 83):

Այս բառում, սակայն, բառակազմական հիմքը *կենակից* (ՆՀԲ, 1, 1083) բարդությունն է, քանի որ *չուգակենակից* (ՆՀԲ, 1, 746) և *կենակցարար* (նույն տեղում, 746) ձևերը վկայված չեն ՆՀԲ-ում: Նորակազմութիւնը ձևավորվել է բառակազմական երկու ձևայնությունով՝ հիմնական (արմատ) և երկրորդական (ածանց), ընդ որում հիմնական

ձևայթը նախորդում է սերող հիմքին, իսկ երկրորդականը հաջորդում է նրան:

Մյուսը մարմնաձևապէս «մարմնի ձև կամ մարմնի ձևով» մակբայն է (ՆՀԲ, 2, 227), որը Օծնեցուց հետո գործածել է նաև Գրիգոր Տղան: Նույն՝ ձևի պարագայի կիրառությամբ բառը գործածվել է հետևյալ օրինակում. «...զի՞արդ իշխես ասել զաներևոյթ և զանմարմին անձնն Որդւոյ մարմնաձևապէս անձնանալ յարգանդի կուսին» (ԸԵ, 68):

Նորակազմության համար որպես սերող հիմք է ծառայել մարմնաձև (ՆՀԲ, նույն տեղում) ածականը:

Նոյնաձևաբար և նոյնաձևապէս (ՆՀԲ, 2, 440) «նույն ձևով» մակբայները տարբերվում են միայն ածանցներով, երկուսի դեպքում էլ հիմքը նույնն է՝ նոյնաձև (ՆՀԲ, նույն տեղում): Առաջինի դեպքում ՆՀԲ-ն վկայում է միայն Օծնեցուն, իսկ երկրորդի դեպքում՝ նաև Խոսրովիկ Թարգմանչին: ՆՀԲ-ն այս երկուսը նշում է միևնույն բառահոլովածի տակ: Նշենք տարածանց նույնանիշ բառերի գործածությունները Օծնեցու երկերում. «Իսկ որք անչափաբար զիջական ախտին հոգ տարան՝ զարական և զիզական անդամն նոյնաձևաբար ստեղծեալ պաշտեցին» (ԸՊ, 35) և «Այս է որոշեալ զշունչն ի մարմնոյն, ասպէս և ի կրելն՝ մերումն նոյնաձևապէս հաւասարեաց կրից» (ԸԵ, 89):

Եվ վերջին բառը յետամտականաբար «հետամուտ ձևով» (ՆՀԲ, 2, 356) մակբայն է, որն ստացել է հետևյալ կիրառությունը. «Արդ յայտ է եթ ըստ բնութեան և նախ քան զյանցանելն այսոքիկ, յետամտակաւնաբար ի մեղմացն ի ներքս անկեալ ի բնութիւնս. որպէս և քեզ թուեցաւ ասել» (ԸԵ, 84): Յետամուտ ձևը, ըստ ՆՀԲ-ի, գործածվել է նաև Աստվածաշնչում, բառը նորակազմ է միայն -աբար ածանցով:

Պետք է նշել, որ «Ընդդէմ երեւութականաց» երկում հանդիպում է մեկ նախադրություն՝ թանց՝ «առանց, բացի» (ՆՀԲ, 1, 797) իմաստով: ՆՀԲ-ն այս բառի դիմաց նշում է նախ Օծնեցու գործածությունը, այնուհետև օրինակներ է բերում հետագա հեղինակներից. «Ոչ եթէ անգոյ և կամ առանց մտաց և անձին, և թանց բնութեան զմերն ընկալաւ ի կնոջէ» (ԸԵ, 65): Ինչպես երևում է, բառը գործածված է տրական հոլովածի հետ միասին՝ արտահայտելով կապի խնդրի իմաստ: Բառի արմատն է անց (ՀԱԲ, 1, 213): Ի դեպ, Աճառյանը ևս այս բառի համար վկայում է միայն Օծնեցուն:

Իսկ նմանակի «նման, նմանապէս, յանգոյն» նախադրության դիմաց ՆՀԲ-ն (2, 431) վկայում է միայն Օծնեցուն՝ բառը ներկայացնելով թե՛ որպես մակբայ, թե՛ որպես նախադրություն: Բառի սերող հիմքն է նման, որին ավելացել է -ակի ածանցը: Նախադրությունը սա դերան-

վան տրական հոլովի հետ հանդես է եկել հետևյալ նախադասության մեջ. «Նմանակի սմա և այլ սուրբ հարքն զիրեանցն արծանացուցին խոստովանական բան» (ԸԵ, 72):

Նորակազմ բարդ մակբայների կազմության դեպքում ևս գործում է մեկ հիմնական սկզբունք՝ բառակազմական բարդ հիմք + մակբայակերտ ածանց: Երբեմն էլ սերող հիմքին միաժամանակ ավելացել են և՛ հիմնական (արմատ), և՛ երկրորդական բառակազմական (վերջածանց) ձևայիններ՝ (հմմտ. կենակից - զուգակենակից - զուգակենակցաբար):

Նորակազմ մակբայները, այսպիսով, կազմված են հետևյալ եղանակներով՝ բաղադրյալ (ածանցավոր) հիմք + ածանց (անընդհատաբար, անմարմնաբար, անմոռացաբար, անչափաբար, բացայայտակի, իրաւապէս), /ի նախդիր + բաղադրյալ հիմք (ի բարձուստ), բաղադրյալ (բարդ) հիմք + ածանց (ազգակցապէս, երկպատկաբար, մարմնաձևապէս, նոյնաձևաբար, նոյնաձևապէս), պարզ հիմք + հողակապ + բարդ հիմք + ածանց (զուգակենակցաբար), բաղադրյալ հիմք (բարդ ածանցավոր) + ածանց (յետամտականաբար): Օծնեցու երկերում առկա երկու նորակազմ նախադրություններ կազմված են հետևյալ կերպ՝ աճական + հիմք (թանց), հիմք + ածանց (նմանակի):

Աղյուսակ 8. Նորակազմ մակբայներ և նախադրություններ

Միայն Օծնեցու երկերում գործածված (9)			Օծնեցու և ուրիշների երկերում գործածված (8)	
ածանցավոր	աճականի հավելում	բարդ ածանցավոր	ածանցավոր	բարդ ածանցավոր
անընդհատաբար բացայայտակի ի բարձուստ նմանակի	թանց	երագոտնագոյն երկպատկաբար զուգակենակցաբար յետամտականաբար	անմարմնաբար անմոռացաբար անչափաբար իրաւապէս	ազգակցապէս մարմնաձևապէս նոյնաձևաբար նոյնաձևապէս

5) ԲԱՌԱՅԻՆ ՀԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հովհաննես Օձնեցու նորակազմությունների մեջ որոշակի թիվ են կազմում նաև բառային հարադրությունները: Դրանց մի մասը գործածվել է միայն Օձնեցու կողմից, իսկ մյուսները՝ նաև այլ հեղինակների: Այդպիսիք են, օրինակ, բռնացեալ պահէր, գայթ ի գայթ, զփրկութեան մերոյ անօթ, ի բաց դնել, վահանընկէց լինել (օրինակները նշում ենք բնագրային ձևերով):

Նկատելի է, որ սրանցից յուրաքանչյուրն ունի յուրահատուկ ձևավորում, ուստի դրանց մասին կխոսվի առանձին-առանձին:

Բռնացեալ պահէր «տիրաբար պահում էր» (ՆՀԲ, 1, 516) հարադրության երկու եզրերն էլ բայեր են՝ առաջինն անցյալ դերբայի ձևն է ներկայացնում (*բռնացեալ*), իսկ երկրորդը՝ անցյալ անկատար ժամանակաձևը՝ ՈՒղ., եզակի թվով (*պահէր*): Ի դեպ, ՆՀԲ-ում չկա հենց այս ձևը, կա միայն *բռնի* ձևը: Հարադրությունը գործածել է միայն Օձնեցին: Այն իբրև ստորոգյալ հանդես է եկել հետևյալ նախադասության մեջ. «...և վասն այնորիկ անշուշտ և անշարժ նիւթոյն անփոյթ արարեալ՝ միայն *բռնացեալ պահէր* զվեհանական շունչն» (ԸԵ, 92):

Գայթ ի գայթ հարադրությունը, որ «անհաստատ, թույլ» իմաստն ունի (ՀՕԵ, 264, 4), Օձնեցուց հետո գործածվել է նաև Ներսես Լամբրոնացու (12-րդ դ.) կողմից (ըստ ՆՀԲ-ի՝ 1, 526):

Գայթ բառի կրկնությամբ և *ի* նախդրով ձևավորված ածականը որոշչի պաշտոնում է հանդես եկել Օձնեցու երկում. «Զարմանամ ընդ այսպիսի կեղակարծ և *գայթ ի գայթ* խոստովանութիւն...» (ԸԵ, 62): Ի դեպ, բարդությունն ունի նաև մակբայի նշանակություն:

Օձնեցու կազմած հարադրություններից է **կաթնաբոյծ լինել**, որ «կաթնակեր լինել» նշանակությամբ (ՆՀԲ, 1, 1031) հանդես է եկել որպես բաղադրյալ ստորոգյալ. «Զիա՞րդ և տղայ երևեալ խանձարրապատեցաւ, և *կաթնաբոյծ եղանիւր*, և առ կատարելութիւն ի վեր ընթանայր աճմամբ հասակի...» (ԸԵ, 67): Բարդության եզրերից մեկը *կաթնաբոյծ* ածականն է, իսկ մյուսը՝ *լինել* բայի *եղանեմ* տարբերակը՝ անցյալ անկատար ժամանակաձևով, թեև հարադրությունը թարգմանված է՝ *կաթնակեր եղալ* (ՀՕԵ, 81, 45)՝ *խանձարուրով պատվեց* ձևի հետ համապատասխանության պահանջով: Ի դեպ, *-իւր* վերջավորությամբ սահմանական անկատարը (կրավորածև) ավելի մեծ կիրառություն է ստանում հետագայում՝ լատինաբան գրաբարում⁵⁴:

⁵⁴ Տե՛ս Վ.Գ. Համբարձումյան, Գրաբարի գործածությունը որպես գրական լեզու ԺԸ- ԴԹ դդ, Երևան, 1990, էջ 299-302:

Ըստ ՆՀԲ-ի (1, 842)՝ **ի բաց դնել** հարադրությունը խոսակցական ոճին բնորոշ՝ «մի կողմ դնել, հեռացնել» իմաստով հանդիպում է միայն Օձնեցու երկում. «Եւ ընդ գիշերոյ շարալծեալս այս մերկանայ ի մէջ զգալի լոյսս արեգական և լուսնի, *ի բաց դնելով* զղամպարունակ պայծառութիւն...» (Աւ., 13):

Հարադրությունը կազմված է *ի* նախդրի, *բաց* ածականի և *դնելով* անորոշ դերբայածիկ գործիական հոլովի միջոցով:

Վահանընկէց լինել «զինաթափ լինել» (ՆՀԲ, 2, 771) կապակցությունը գործածվել է հետևյալ հատվածում. «...իսկ ի պատուիրանագանցութենէն *վահանընկէց լինելով* մասն եղանին թշնամեացն» (ԸԵ, 86):

Օձնեցու գործածած հարադրություններից է **զփրկութեան մերոյ անօթ** (ՆՀԲ, 1, 256)՝ «մեր սուրբ խաչը» իմաստով (գործածվել է նաև Օձնեցուց առաջ), որի գլխավոր անդամն է *անօթ* գոյականը (հայցական հոլովով), իսկ նրան ստորադասվում են *փրկութեան մերոյ* սեռականի ձևերը՝ հայցականի *ք* նախդրով. «Եւ մի պախարակեսցեն այլապէս խորհեցողքն գերից սրբասացութեան երգ. որք և ամօթ ևս վարկանին *զփրկութեան մերոյ անօթ*» (ՍԳԺ, 113):

ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԺԱՍՆԱԿԸ

1) «ՆՈՐ ՀԱՅԿԱԶՅԱՆ ԲԱՌԱՐԱՆՈՒՄ» ԶՎԿԱՅՎԱԾ ԲԱՌԵՐ

Հովհաննես Իմաստասեր Օծնեցու երկերում կան բազմաթիվ նորակազմ բառեր, որոնք վկայված են Վենետիկի Մխիթարյան հայրերի կազմած «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» աշխատության մեջ: Այդ բառերի մի մասը գործածվել է միայն Օծնեցու, իսկ մյուս մասը՝ նաև հետագա հեղինակների երկերում: Հովհ. Օծնեցու երկերում որոշակի քանակ են կազմում նաև այն բառերը (94 բառային միավոր), որոնք ՆՀԲ-ի տպագրությունից հետո են ի հայտ եկել և լույս տեսել առանձին ժողովածուների կամ հանդեսների մեջ: Հակառակ դեպքում դրանք հազիվ թե դուրս մնային հիշյալ բառարանի հեղինակների բառարանագիտական աշխատանքի տեսադաշտից: Մանավանդ որ դրանց մի մասը ընդգրկված է «Առձեռն բառարանում»⁵⁵: Այս փաստը թույլ է տալիս ենթադրելու, որ այդ բառերը ևս Օծնեցու հեղինակած նորակազմություններից են: Ընդ որում այդ կարգի բառերը հիմնականում մեծ թիվ են կազմում հայ բանասիրության մեջ համեմատաբար քիչ ուսումնասիրված երկերում:

1. Ուշագրավ է «Յովհաննու Իմաստասիրի, Հայոց կաթողիկոսի, խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնանալոյ Բանին Քրիստոսի, եւ ընդդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս» ճառը («Արարատ», 1896, ապրիլ, էջ 192-199), որում գործածվել են գրեթե 28 նորակազմ բառեր, որոնք վկայված չեն ՆՀԲ-ում:

Դրանք են՝ անձրևահոս, ախտածետել, աշխարհավիրկիչ, աստուածասիրաբար, անտարանութիւն, գիշերամած, դէմխոխ, թանձրադիտակ, ինքնաբարբառ, ծաղկանետել, հակասակ, հրաբորբ, մահորոճ, մարմնագգեստել, յախել, յարելաբար, յոգնահոս, նեստորաբար, նոյնացել, ստորաքննել, չարահագագ, վայրագարկել, վերապայծառ, վերջատանջել, տարասութիւն, տրտմաբեր, քերթողածաղիկ, օրածին:

⁵⁵ Մ. Աւգերեան, Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Անթիլիաս, 1988 (այսուհետև՝ ԱԲ):

Ստորև առանձին-առանձին անդրադառնում ենք այդ բառերին՝ փորձելով տալ դրանց ինչպես բառակազմական, այնպես էլ քերականական բնութագիրը, բացահայտել նորակազմությունների բառակազմական օրինաչափությունները:

Անձրևահոս ածականը նշանակում է «անձրևաբեր» (տե՛ս ՀՕԵ, էջ 307, ծ. 3. ՆՀԲ, 1, 197). «... և ոչ զաստուածային շնորհացն բազմապատիկ պարզևս և զմեծ և զփրկական զխորհուրդն յինքեանս նախապատուօրէն ըստ զեղմանն *անձրևահոս* ցողոյ, որ ոռոգեցան զանպտղութիւն մարդկան ի կռապաշտիցն երաշտութենէ՝ բողբոջեալ բուրեճ ընդհանրական եկեղեցւոյ» (էջ 192):

Բարդությունը ձևավորվել է *անձրև* և *հոս* հիմքերից, որոնց միջև առկա է լրացում + բայափոխ լրացյալ շարահյուսական հարաբերություն: Նախադասության մեջ ածականը հանդես է եկել որպես որոշիչ՝ նախադաս կիրառությամբ:

Ախտածետել բայը նշանակում է «ցավազար լինել, հիվանդանալ, ախտանալ» (ՀՕԵ, 308, ծան. 29, ՆՀԲ, 1, 17): ՆՀԲ-ում նշված են *ախտածէտ* / *ախտածետ* ածականը, ինչպես նաև *ախտածէտութիւն* գոյականը, որոնց դիմաց բերվում են բազմաթիվ վկայություններ: «Եւ որք ի բանս ապիրատոս *ախտածետեն* թէ աստուածային բնութիւն, որ էր հաւասար Հօր, առանձնակի թլփատեցաւ և կամ անկատար երբէք ի կատարելութենէ եղև» (193):

Աճառյանը ևս բերում է միայն հետևյալ օրինակները՝ *ախտածէտ*՝ վկայակոչելով Ս. Գիրքը, և *ախտածէտութիւն*՝ վկայակոչելով Հովհան Մանդակունուն (V դ.), իսկ վերոհիշյալ բայածը նրա կողմից չի հիշատակվում (ՀԱԲ, II, 228): «Առձեռն բառարանում» բայը նշված է *ախտածէտիւմ* ձևով (էջ 8): Փաստորեն այս բառի համար որպես սերող հիմք է ծառայել *ախտածէտ* ածականը: Զեզոք սեռի այս բայը հանդես է եկել որպես պարզ ստորոգյալ՝ սահմանական անկատար ներկա ժամանակաձևում՝ հոգնակի III դեմքով:

Աշխարհավիրկիչ ածականը, որ նշանակում է «աշխարհը փրկող» (ՀՕԵ, 308, ծան. 26), գործածվել է հետևյալ նախադասության մեջ. «Զի նոքա նմանութեամբ իմն ասեն և ստուերական հանգամանօք և կարծեօք երևել աշխարհի *զաշխարհավիրկիչն* Քրիստոս (193): Իսկական բարդությունը ձևավորվել է *աշխարհ* և *փրկիչ* հիմքերից՝ ա հոդակապով:

Աստուածասիրաբար բառը նշանակում է «ինչպես որ Աստծուն է սիրում, աստվածասեր լինելու չափ» (ՆՀԲ, I, 329, ՀՕԵ, 310, 66). «Այսպես ես զայս սակաւօք ինչ ձեզ հարկեցայ գրել զի մի լռութեամբ

տրտմեցուցից գծեզ. աղաչեմ զի *աստուածասիրաբար* բարեկամութեամբ և իմաստակիր մտաւորութեամբ ընկալջիք զառ ի յինէն ասացեալսդ» (էջ 192):

Նորակազմ մակբայի սերող հիմքն է *աստուածասէր* (ՆՀԲ, 1, նույն տեղում)՝ բաղադրված *-աբար* ածանցով: Բառը նշված է ԱԲ-ում՝ «աստվածասիրությամբ» նշանակությամբ (էջ 126): Բնագրում այն հանդես է եկել որոշի կիրառությամբ:

Աւետարանութիւն «ավետում, ավետելը, ավետարանելը» (ՆՀԲ, 1, 394, ՀՕԵ, 310, ծան. 63) նշանակությամբ բառն ունի այսպիսի գործածություն. «Այսպէս և համարձակախօսն Եսայեաս յաթոռ բարձրութեան և վերացելոյ զՌոդի տեսանէ նստեալ և նմա սրովբէագոչ ծայնն գերեքրբեանն աղաղակեալ սրբասացութիւնս ըստ որդւոյն Որոտման 3ովհաննու *աւետարանութեանն*» (198):

Նորակազմությունն ընդգրկված է ԱԲ-ում (էջ 153): Բառի սերող հիմքն է *աւետարան* բաղադրված *-ութիւն* ածանցով: Բառը գործածվել է որպէս հետադաս հատկացուցիչ:

Գիշերամած նշանակում է «մութ, մթամած գիշերվա նման խավար» (ՆՀԲ, 1, 554, ՀՕԵ, 308, ծան. 20). «Այլ ընդդիմասցուք նոցա ուղղափառ հաւատոց մարտի և սանձհարեալ հանդիսասցուք զխստերախ խարդաւանս հերձուածողութեան և վերջատանջել զյոզնահոս և զբազմատարած *գիշերամածն* խաւար (193):

Բառը կազմված է *գիշեր* արմատից և *մած* «կպած, կից, իրար միացած» արմատից առաջացած վերջածանցից: Այսինքն՝ առկա է լրացում + բայահիմք հարաբերությունը:

Ածականը հանդես է եկել իր սովորական՝ որոշչային կիրառությամբ:

Դրէմխոյս բառը «հոտած, ժահահոտ» իմաստն ունի (ՆՀԲ, 1, 643, ՀԱԲ, 1, 693): Աճառյանն այս բառի դիմաց (*դրէմխոյս* տարբերակով) վկայակոչում է նախ Անանիա Նարեկացուն, ապա՝ Օծնեցուն, մինչդեռ ժամանակային առումով հակառակն է սպասելի (ՀԱԲ, 1, 693). «... ի բաց տարեալ տրոհեցի ի մէնջ այսպիսի *դրէմխոյս* և ապիրատ խորհրդոց առարկուածք» (193):

Այս բառը ևս ածական է՝ որոշչային կիրառությամբ: Բառի ծագման վերաբերյալ ՀԱԲ-ում ոչինչ նշված չէ:

Թանձրադիտակ «թանձրադետ, հոծ, թանձրամած» (ՆՀԲ, 1, 795, ՀՕԵ, 307, ծան. 1). «Ձաստուածաբանութիւն աստուածածնելութեան Բանին Հօր ոչ ոմանք ստոյգ հաւատոց այժմ ստորոգեն զայն, որ ի հայրական ծոցոյ և ի թափանցիկ լուսոյ և ի գերազանցեալ փառացն ի

թանձրադիտակ մարդկայինս բնութիւն ի խոնարի թափեալ և քաղաքավարեալ յայտնեցաւ՝ պտղաբերել հեթանոսաց եկեղեցւոյ...» (192):

Բառը կազմված է *թանձր* և *դիտակ* հիմքերից (ՆՀԲ, 1, 626): Նորակազմ ածականը բնագրում գործածվել է որպէս նախադաս որոշիչ:

Ինքնաբարբառ «ինքնին խոսող, իր խոսքի համաձայն» նորակազմ ածականն (ՆՀԲ, 1, 858, ՀՕԵ, 309, ծան. 37) ունի հետևյալ գործածությունը. «... որ յառաջ քան զարուսեակն ըստ *ինքնաբարբառ* Բանին, թէ ես լոյս յաշխարհ եկի» (194):

Բառը կազմված է *ինքն* արմատից և *բարբառ* կրկնավոր բարդությունից: Ածականը գործածված է որպէս նախադաս որոշիչ:

Ծաղկանետեալ «ծաղիկ տալով, ծաղկելով» (ՆՀԲ, 1, 1002, ՀՕԵ, 308, ծան. 21) չեզոք սեռի բայը՝ դրված անցյալ դերբայով, ունի ձևի պարագայի կիրառություն հետևյալ օրինակում. «... զի թերևս լրութիւն եկեղեցւոյ Քրիստոսի ըստ սրբոյ հարցն աւանդից գերապայծառ և անչիջանելի փայլէսցէ, և ճշմարիտ հաւատոցն բարեմտութիւն *ծաղկանետեալ* բողբոջեսցէ» (193):

Բառը կազմված է *ծաղիկ* գոյականից և *նետ + ել* բայից: Այսինքն՝ առկա է լրացում (ուղիղ խնդիր) + բայ կառույցը:

Հակասակ «հակասող» որակական ածականը (ՆՀԲ, 2, 8, ՀՕԵ, 310, ծան. 60) հանդես է եկել հետևյալ օրինակում՝ *կայր* բայի հետ՝ որպէս բաղադրյալ ստորոգյալ. «... խաչեցա այլ որ կայր մեզ *հակասակ* եբարծ զայն ի միջոյ և բւեռաց ընդ խաչափայտն եղև վասն մեր անէծք» (197): Որպէս սերող հիմք է ծառայել *հակաս* ձևը, քանի որ նրանից բաղադրված բազմաթիվ բառեր կան ՆՀԲ-ում (*հակասութիւն, հակասաբար, հակասացեալ* և այլն): Բաղադրող հիմքն է *-ակ* վերջածանցը:

Հրաբորբ որակական ածականը «հրաբորբոք» իմաստն է արտահայտում (ՆՀԲ, 2, 129, ՀՕԵ, 307, ծան. 15) և հանդես է եկել որպէս նախադաս որոշիչ հետևյալ օրինակում. «... կամ թէ պատճառս ինչ տրտնջման գտեալ և ևս առաւել *զհրաբորբն* բխսն չարութիւն և աճեցուցեն զդժոխքներ զգացումնն» (192):

Հոդակապով իսկական բարդությունը կազմված է *հուր* (գործածական է նաև *հուրբ* «կրակ») և *բորբ* հիմքերից:

Մահորոճ «մահ որոճացող», «մահաբեր» (ՆՀԲ, 2, 198, ՀՕԵ, 308, ծան. 24) ածականը հետևյալ նախադասության մեջ հանդես է եկել որպէս նախադաս որոշիչ. «Ձի միշտ հանդիսանան ստեղծանել յարել ի մեզ զչարահագագ մտածմանցն առարկութիւնս, որ ստորահոսեալն ի յանդունդս խաւարին տարտարոսին և *զմահորոճն* է զգեցեալ թիւնս» (193):

Անհողակապ իսկական բարդությունը կազմված է *մահ* և *որոճ* հիմքերից, որոնք կապակցված են լրացում + լրացյալ (ենթակայական դերբայի նշանակությամբ) շարահյուսական հարաբերությամբ:

Մարմնազգեստեալ չեզոք սեռի բայը, անցյալ դերբայով դրված, որ ձևի պարագայի կիրառությամբ է հանդես եկել, «մարմին առած, մարմնացած» նշանակությունն ունի (ՆՀԲ, 2, 226-227, ՀՕԵ, 308, ծան. 35): ՆՀԲ-ն ունի միայն *մարմնազգեստ* ձևը, որից էլ բաղադրված է Օծնեցու նորակազմությունը. «... և այսպես ստուգապես *մարմնազգեստեալ* և մարդ եղեալ՝ արար իւր ճանապարհ և գալստեան և յայտնութեան (194):

Յախեսալ բառը (արմատը՝ *յախ*) նշանակում է «փակված» (ՆՀԲ, 2, 313, ՀՕԵ, 309, ծան. 36): ՀԱԲ-ում նույնպես չկա անցյալ դերբայով գործածված այս ձևը, և բայարմատի ծագումը պարզ չէ: Այն հանդես է եկել որպես ձևի պարագա. «Այսպէս ի կուսական յարգանդէ և *յախեսալ* մօրէ, ծագեցաւ լոյս աշխարհ...» (194):

Յարելաբար «հարակցելով, հարելով» նշանակությամբ (ՆՀԲ, 2, 346, ՀՕԵ, 308, ծան. 25) ձևի մակբայը բնագրում հանդես է եկել որպես նույնանուն պարագա. «Ընդէ՞ր բնաւ ազատութիւնս մեր այսպէս դատիցի յայլոյ խղճի մտաց, որք անդուռն բերանով ասեն զմէնջ ասել *յարելաբար* ի ծայնակցութեանց Մանէս գոլ և Մարկոնի և Բարդեժանի և Եւտիքեա» (193):

Բառը կազմված է *յարել* բայից՝ *-աբար* ածանցի բաղադրությամբ:

Յոզնահոս «հոզնահոսան, հորդահոս, հորդառատ» (ՆՀԲ, 2, 364, ՀՕԵ, 308, ծան. 18)

18) ածականը որպես նախադաս որոշիչ է հանդես եկել հետևյալ օրինակում. «Այլ ընդդիմացուք նոցա ուղղափառ հաւատոց մարտի և սանձահարեալ հանդիսացուք զխստերախ խարդաւանս հերժուածութեան և վերջատանջել *յոզնահոս* և զբազմատարած գիշերամածն խաւար (193):

Բառը կազմված է *յոզն* «շատ, բազում» և *հոս* հիմքերից: Ի դեպ, ՆՀԲ-ում նշված է *յոզնահոսան* (2, 364) ածականը, որ գործածել է Նարեկացին:

Նեստորաբար ձևի մակբայը «Նեստորի նման, Նեստորի աղանդի հետևությամբ», նշանակությամբ (ՆՀԲ, 2, 415, ՀՕԵ, 309, ծան. 52) ձևի պարագայի կիրառությամբ հանդես է եկել հետևյալ օրինակում՝ «Եւ այնուհետև *նեստորաբար* իմանի նոցա դնել դիմակս ընդդէմ երից սրբոց ժողովոցն ողջախոհ և միատարր խոստովանութեան» (195):

Բառը նշված է ԱԲ-ում (էջ 612): Նորակազմության համար հիմք է ծառայել *Նեստոր* հատուկ անունը:

Նոյնացեալ («նոյնանամ») «նույնը լինել» (ՆՀԲ, 2, 440, ՀՕԵ, 308, ծան. 34) նշանակությամբ ա խոնարհման չեզոք սեռի բայը, անցյալ դերբայով արտահայտված, չի հիշատակվում ՆՀԲ-ում: Բնագրում այն հանդես է եկել որպես որոշիչ. «... այլ մի և զնոյն *նոյնացեալ* միով բնութեամբ և անբաժանելի Աստուածութեամբն, և միով պատուով երկրպագեալ» (194):

(Ոչ) ստորաքննելով (< *ստորաքննել*) կազմությունը «առանց խորը քննելու» իմաստն է արտահայտում (ՆՀԲ, 2, 750, ՀՕԵ, 307, ծան. 8). «... և զեղեղունմ մտաց զինչ կամութեան ի գործ արկեալ՝ վրիպունմ զլորման ճաշակեն, *ոչ ստորաքննելով* զթագուցեալն ի նմա դառնագոյն քան զլեղի մախանացն բոց, յորմէ յղացեալ ծնանի նոցա զանազան և զտրտմաբեր հերետիկոսութիւնս» (192):

Ստորաքննել ներգործական սեռի բայը հոլովված ձևով հանդես է եկել *ոչ* ժխտական բառի հետ: *Ստոր* բաղադրող հիմքը ա հողակապով միացել է *քննել* բային: Չարահազագ «չարախոս», «չարածայն» (ՆՀԲ, 2, 167, ՀՕԵ, 308, ծան. 23) ածականը որոշչային կիրառությամբ է գործածվել բնագրում. «Զի միշտ հանդիսանան ստեղծանել յարել ի մեզ *զչարահազագ* մտածմանցն առարկութիւնս...» (193):

Բարդությունը ձևավորվել է *չար* և *հազագ* բառերից՝ բառակապակցության բայի զեղչումով: ԱԲ-ում այն ներկայացված է «շունչը չար, վնասակար» իմաստով (667):

Վայրագարկեցան դիմավոր բայը (կրավորական սեռի), որ ՆՀԲ-ն չունի (2, 778), այլ ունի միայն *ի վայր գարկանեմ* ձևը, որից էլ ձևավորվել է նորակազմ բայը, գործածվել է «գետնին զարկվեցին» նշանակությամբ (ՀՕԵ, 308, ծան. 28)՝ ստորոգյալի պաշտոնում. «... նոքին իսկ են, որ ընդ ամբարշտութեանցն կռապաշտեալ *վայրագարկեցան* և ընկճեալ կործանեցան» (193):

Վերապայծառ ածականը «գերապայծառ» իմաստով (ՆՀԲ, 2, 809, ՀՕԵ, 308, ծան. 32) նախադաս որոշիչ կիրառությամբ հանդես է եկել հետևյալ օրինակում. «... վասն զի Բանն Աստուած և Որդին ճշմարիտ, որ ի ճշմարտէ Հօրէ ծնեալ յառաջ քան զամենայն յաիտեանս, և Բարձրեալ և ամենակալ և *վերապայծառ* լոյս՝ ըստ որում և ծնօղն» (194):

Բարդությունը կազմված է *վերա-* ածանցից և *պայծառ* սերող հիմքից:

Վերջատանջել «վերջին տանջանքը պատճառել, վերջնական հարված հասցնել» (ՆՀԲ, 2, 816, ՀՕԵ, 308, ծան. 17) նշանակությամբ ներգործական սեռի բայը ստորոգյալի դերում հանդես է եկել հետևյալ

հատվածում. «...գլխատերախ խարդաւանս հերժուածողութեան և վերջատանջել գյոզնահոս և զբազմատարած գիշերամածն խաւար (193):

Բառը կազմված է *վերջ* անստույգ և *տանջել* բայի *տանջ* «չարչարանք» պահլավական արմատից:

Տարասութիւնք «կեղծավորություններ» (ՆՀԲ, 2, 855, ՀՕԵ, 309, ծան. 46) գոյականը որպէս ուղիղ խնդիր հանդես է եկել հետևյալ հատվածում. «Իսկ առ որում թագուցեալ է ճշմարտութիւնն առաջին և զօրացեալ այժմ ու մոլորութիւնս, որ զգրեալսն ծածկեն և զինքնիմաց *տարասութիւնս* ասել հրամայեն, որ ոչ ունին զարժանն՝ ի դէպ առ նոսա բերի առաքելոյ բանն...» (195):

Բառը կազմված է *տար-* ածանցից և *ասութիւն* (ՆՀԲ, 1, 314) հիմքից, այսինքն՝ առկա է նախածանց + գոյական կաղապարը:

Տրտմաբեր «մտահոգիչ, տրտմեցնող» նշանակությամբ (ՆՀԲ, 2, 898, ՀՕԵ, 307, ծան. 9) ածականը բնագրում հանդես է եկել նախադաս որոշչի կիրառությամբ. «... յորմէ յղացեալ ծնանի նոցա զանազան և *զտրտմաբեր* հերետիկոսութիւնս» (192):

Բառը բաղադրված է *տրտում* և *բեր* հիմքերից: Իսկական բարդության բաղադրիչները կապակցված են խնդիր + բայահիմք լրացյալ շարահյուսական հարաբերությամբ:

Քերթողածաղիկ «երևելի գիտուն, ծաղիկ՝ քերթողների մեջ» (ՆՀԲ, 2, 1004, ՀՕԵ, 309, ծան. 49) ածականը նախադաս որոշչի պաշտոնում հանդես է եկել հետևյալ հատվածում. «Եւ նախ *քերթողածաղիկ* փիլիսոփայից այս տեսցի, որք յաղագս բաժանման և ապացուցի սոցայցն տեսութեանց համառօտ ընծեռնութիւն առնելով փորձեցան և զդէմ ի բնութեան զոլ ասացին ենթակայացեալ՝ ըստ մեծի պիտեցելոյ խուզման և ըստ բոլոր յեղանակի...» (195):

Բարդությունը կազմված է *քերթող* և *ծաղիկ* հիմքերից:

Օրածին «նոր-նոր ծնված» նշանակությամբ (ՆՀԲ, 2, 1032, ՀՕԵ, 310, ծան. 64) ածականը չիղովված ձևով հանդես է եկել որպէս նախադաս որոշիչ. «Տեսանես, ասելով, զի աստուած և հօգօր և անմահ և հայր հանդերձելոյ աշխարհին՝ զայս *օրածին* մանուկս անուանէ» (198):

Իսկական բարդությունը կազմված է *օր* և *ծին* պարզ հիմքերից, որտեղ *օր* բառը զործիական հոլովի նշանակություն ունի:

2. Այս կարգի բառային միավորներով հարուստ է նաև «Յովհաննու Իմաստասիրի Հայոց կաթողիկոսի Սակս ժողովոց որ եղեն ի Հայք» աշխատությունը («Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 473-493), որում կան շուրջ 24 բառեր, որոնք վկայված չեն ՆՀԲ-ում:

Այդ բառերն են՝ *ամրապնդեալ*, *անխոստովանաբար*, *անյիշատակաբար*, *ապականաբնակ*, *առաքելաբարբառ*, *բիւրաբաշխ*, *բիւրապատիկ*, *բնադիր*, *երախայապէս*, *ընթերցարան*, *լայնապարիսպ*, *հազարաւորեալ*, *համասփռական*, *հաստահատակ*, *հաստապատճառ*, *հրեշտակաքարոզ*, *ծեռնարկու լինիմ*, *ճառաբանեմ*, *մարգարէափակ*, *մշտալցոյց*, *յարալուցեալ*, *սատանայապատիր*, *ուղղակարգ*, *քրիստոսաւետեալ*:

Ամրապնդեալ «ամրացված, հաստատված» (ՆՀԲ, 1, 76, ՀՕԵ, 304, ծան. 25) կրավորական սեռի բայը անցյալ դերբայով հանդես է եկել ձևի պարագայի կիրառությամբ. «...եւ հնարեսցուք վկայս հաստապատճառս և բազմաբանս, բնադիր բաղդատութեամբ, եւ մարգարէափակ *ամրապնդեալ* գրեսցուք պատճէնս հաւատոյ յաւանդութիւն խոստովանութեան մերոյ...» (484):

Նորակազմությունը ձևավորվել է *ամուր* ածականով և *պնդել* բայի անցյալ դերբայով: Այսինքն՝ առկա է պարագա + բայ լրացյալ շարահյուսական հարաբերությունը:

Անխոստովանաբար «չխոստովանող՝ անզղջում ձևով» (ՆՀԲ, 1, 162, ՀՕԵ, 305, ծան. 38) մակբայը ձևի պարագայի կիրառությամբ հանդես է եկել հետևյալ հատվածում. «Քանզի նոցա անխտրապէս եւ *անխոստովանաբար* ոչ լեալ մաքուր, մերձեանս յահաւոր խորհուրդն, իբրեւ ոչինչ համարելով...» (487):

Այս բառում էլ առկա է *անխոստովան* (ՆՀԲ, 1, 612) հիմքը, որից ձևավորված մի քանի բառեր ՆՀԲ-ն նշում է (*անխոստովանող*, *անխոստովանութիւն* և այլն): Փաստորեն նորակազմությունը ձևավորվել է *-աբար* ածանցի միջոցով: Ի դեպ, բառն ունի և՛ ածականի, և՛ մակբայի նշանակություն:

Անյիշատակաբար «առանց հիշատակի՝ հիշատակման, անհիշատակ» (ՆՀԲ, 2, 363, ՀՕԵ, 304, ծան. 29) մակբայը հանդես է եկել ձևի պարագայի կիրառությամբ. «... առ ի խառնումն մոռանալ զխառնումն ապականութեան, *անյիշատակաբար* որոշեալ, եւ սեպիականեսցի կոսնս Հայոց, եւ կործանեսցի չար աղանդն նոցա» (485):

Բառը կազմված է նույն սկզբունքով, ինչ նախորդը: ՆՀԲ-ն նշում է *անյիշատակ* ածականը, որից մի շարք բառեր են բաղադրված (նույն տեղում):

Ապականաբնակ ածականը, որ նշանակում է «ապականության՝ պղծության մեջ բնակվող՝ գտնվող» (ՆՀԲ, 1, 269, ՀՕԵ, 306, ծան. 61), բնագրում հանդես է եկել որպէս նախադաս որոշիչ. «Արդ ծեռնարկու լե՛ր, սիրելիդ Աստուծոյ, քաջդ յիմաստակս, եւ նախընտիրդ ի վարդա-

պետս Հայոց, կարգիչը Յունաց եւ դադարեցուցիչը աղանդոյն Քաղկեդոնի, եւ կորուսի *ապականաբնակ* հերձուածոյն Նեստորի անիծելոյ, բռնահարեա՛ զկամացն Աստուծոյ իբրեւ հանդիսի նահատակ...» (492): Բարդոթիւնը կազմված է *ապական* և *բնակ* հիմքերից: Այս կառուցում առկա է պարագա + բայահիմք հարաբերութիւնը, որտեղ լրացումը ներգոյական հոլովի իմաստ է արտահայտում: Ի դեպ, բառը նշված է ԱԲ-ում (103):

Առաքելաբարբառ «առաքյալների կողմից ասվող՝ քարոզվող» ածականը ևս նախադաս որոշչային կիրառությամբ է հանդես եկել. «Արդ այս աւուր յարութեան ճաշակի գառն գենեալ, որ է նոր գատիկ ւեւտեաց յարութեան համասփռական, տիեզերատարած և լուսասփիռ, հրեշտակաքարոզ եւ *առաքելաբարբառ* պատմի ւեւտաբեր երրարեայ յարութիւնն» (488):

Նորակազմութեան *առաքեալ* և *բարբառ* բաղադրիչների միջև առկա է խնդիր լրացում + բայահիմք լրացյալ հարաբերութիւնը, որտեղ լրացումը բացառական հոլովի իմաստ է արտահայտում:

Քիւրաբաշխ «շատ մեծ չափով բաշխող (ՆՀԲ, 1, 490, ՀՕԵ, 306, ծան. 63) ածականը որպէս հետադաս որոշիչ է հանդես եկել հետևյալ հատվածում. «...եւ ընդ միոյ սակաւուդ վարծս, ընկալցիս յԱստուծոյ մերմէ, *քիւրապատիկ հազարաւորեալ*, *քիւրաբաշխ* և մշտալցոյց...» (493):

Վերոհիշյալ օրինակում գործածված է նաև *քիւրապատիկ հազարաւորեալ* «բյուր անգամ հազարապատկված, շատ, առավել չափով» հարադրութիւնը՝ հետադաս որոշիչ կիրառությամբ (ՀՕԵ, 304, ծան. 64): ՆՀԲ-ն (2, 3) չունի *հազարաւորել* բայը, որը կազմված է *հազարաւոր* ածականի ածանցմամբ (ՆՀԲ, նույն տեղում): Վերջին երկու բառերի դեպքում էլ առկա է պարագա + բայահիմք լրացյալ շարահյուսական հարաբերութիւնը:

Անադիր «բնական և դյուրին, ի բնէ դյուրին» (ՆՀԲ, 1, 494, ՀՕԵ, 304, ծան. 23) ածականը որպէս նախադաս որոշիչ է հանդես եկել հետևյալ հատվածում. «Եւ արդ անապական հացիւն հրամայեմք կատարել զփրկագործ մեղսաքաւիչ խորհուրդն, եւ հիմնարկեալ ճառս յօրինեսցուք, եւ հնարեսցուք վկայս հաստապատճառս և բազմաբանս, *բնադիր* բաղդատութեամբ, եւ մարգարէափակ ամրապնդեալ գրեսցուք պատճէնս հաւատոյ յաւանդութիւն խոստովանութեան մերոյ...» (484):

Բառը կազմված է *բուն* և *դիր* «հարթ տեղ» (*դիրին* «հեշտ») հիմքերից: Նորակազմութեան բաղադրիչների միջև առկա է համադասական հարաբերութիւն:

Երախայապէս «երեխայի նման, չմկրտված» (ՆՀԲ, 1, 667, ՀՕԵ, 305, ծան. 35) ձևի մակբայը հանդես է եկել նույնանուն պարագայի դերում. «... եւ մի՛ անմաքրապէս հպեալք մերձեսցին ի մարմինն Տեառն, ոչ խոստովանեալք գյանցանս անծանց իւրեանց, *երախայապէս* առեալ զմարմին որդոյն Աստուծոյ հաղորդիցին անմաքուր, սատանայապատիր և որովայնամոլ ըստ քաղկեդոնական հաւատոյ...» (485-486):

Նորակազմութիւնը կազմված է *երախայ* սերող հիմքից և *-պէս* ածանցից, որը գործածվել է որպէս բաղադրող հիմք: Ի դեպ, ՀԱԲ-ում կա *երախայապէս* բառը, որի համար Աճառյանը վկայակոչում է Կանոնագիրը (ՀԱԲ, II, 35):

Ընթերցարան բառը, որ բնագրում գործածվել է «ընթերցելիք, սովորելու համար նախատեսված շարադրանք» (ՆՀԲ, 1, 777, ՀՕԵ, ծան. 63), ունի հետադաս հատկացուցչի կիրառութիւն. «...որպէսզի թարգմանեսցես զամենայն կարգ *ընթերցարանիս* մերոյ, մանաւանդ զխորհրդածութեան ընթերցուածսն չորից յարմատանցն...» (493):

Այս բառի արմատն է *ընթերց*՝ հայակազմ *ընթերնուլ* բայից, որից ձևավորվել է նորակազմութիւնը՝ *-արան* ածանցի բաղադրությամբ: Այն նշված է ԱԲ-ում (311):

Լայնապարիսպ «լայն պարիսպով պատված» (ՆՀԲ, 1, 878, ՀՕԵ, 305, ծան. 33) ածականը լրացնում է բային՝ դառնալով ձևի պարագա. «Ե օրեայ աւուրքք ընդ պահս Սուրբ Պատեքին, անբաժանելի եւ անորիշ յօրինելով, ցանկ հաստատելով, եւ խորահիմն, հաստայատակ, *լայնապարիսպ* ամրափակեալ քառասնօրեայ պահօք, եւ օրեայ առաջաւորաքն» (485):

Բառի *լայն* և *պարիսպ* բաղադրիչները կապակցված են որոշիչ + որոշյալ հարաբերությամբ: Ըստ երևույթին, բառը ձևավորվել է բառակապակցութեան բայի գեղչումով:

Համասփռական «ամենուրեք սփռված, համատարած» (ՆՀԲ, 2, 21, ՀՕԵ, 305, ծան. 42) որակական ածականը գործածվել է նախադաս որոշիչ կիրառությամբ. «Արդ՝ այս աւուր յարութեան ճաշակի գառն գենեալ, որ է նոր գատիկ ւեւտեաց յարութեան *համասփռական*, տիեզերատարած և լուսասփիռ, հրեշտակաքարոզ եւ *առաքելաբարբառ* պատմի ւեւտաբեր երրարեայ յարութիւնն» (488):

ՆՀԲ-ում կա միայն *համասփիւռ* (2, 21) ձևը, որն էլ հենց որպէս սերող հիմք է ծառայել՝ *-ական* ածանցով նոր բառ ձևավորելու համար: Համ(ա)- և *-ական* ածանցներով բաղադրված այս բառի արմատն է հայերեն *սփիւռ* բառը, որն ըստ Աճառյանի՝ կազմվել է *ս* սաստկակա-

նով և օտար ծագում ունեցող *փռել* (արմատը՝ *փհռ*) բառով (ՀԱԲ, IV, 17-19):

Հաստապատճառ «հաստատուն պատճառ ունեցող» (ՆՀԲ, 2, 55, ՀՕԵ, 304, ծան. 21) երկու արմատներով ձևավորված որակական ածականը հետադաս որոշի կիրառություն ունի. «Եւ արդ անապական հացիւն հրամայենք կատարել գփրկագործ մեղսաքաւիչ խորհուրդն, եւ հիմն արկեալ ճառս յօրինեսցուք, եւ հնարեսցուք վկայս *հաստապատճառս* և բազմաբանս...» (484):

Այս բառը ևս բառակապակցության բայի գեղչումով է ձևավորվել, իսկ բաղադրիչների միջև առկա է որոշիչ + որոշյալ հարաբերությունը:

Հաստայատակ «հատակը հաստատուն՝ ամուր» (ՆՀԲ, 2, 55, ՀՕԵ, 304, ծան. 32) ածականը նախադաս որոշի կիրառություն ունի. «... եւ խորահիմն, *հաստայատակ*, լայնապարիսպ ամրափակեալ քառասնօրեայ պահօք, Ե արեայ առաջաւորաւքն» (485):

Այն կազմված է *հաստ* և *յատակ* հիմքերից: Բաղադրիչները դարձյալ արտահայտում են որոշիչ + որոշյալ հարաբերություն:

Հրեշտակաքարոզ «հրեշտակների կողմից՝ բերանով քարոզվող» (ՆՀԲ, 2, 141, ՀՕԵ, 305, ծան. 43) ածականը նախադաս որոշի պաշտոնում է հանդես եկել. «... որ է նոր գատիկ աւետեաց յարութեան համասփռական, տիեզերատարած և լուսասփիռ, *հրեշտակաքարոզ* եւ առաքելաբարբառ պատմի աւետաբեր երրաւրեայ յարութիւնն» (488): Այն կազմված է *հրեշտակ* բառից և *քարոզել* բայի ենթակայական դերբայածի վերջավորության գեղչումով: Լրացումը բացառական հոլովի իմաստ է արտահայտում, իսկ բաղադրիչների միջև առկա է խնդիր + բայահիմք լրացյալ կապը:

Չեռնարկու լինիմ հարադրությունը Օծնեցին գործածել է «ծեռնամուխ լինել, ձեռնարկել» իմաստով՝ որպես բաղադրյալ ստորոգյալ, հրամայական եղանակի բուն հրամայական ժամանակաձևով արտահայտված: ՆՀԲ-ն չունի *ձեռնարկու* բառը (ՆՀԲ, 2, 152). «Արդ՝ *ձեռնարկու լե՛ր*, սիրելիդ Աստուծոյ, քաջդ յիմաստակս, եւ նախընտիրդ ի վարդապետս Հայոց, կարգիչդ Յունաց» (492): Ըստ երևույթին, նորակազմության համար որպես սերող հիմք է ծառայել *ձեռնարկեմ* բայը (ՆՀԲ, 2, 153):

Ճառաբանել «ձառել, հանդիսավոր կերպով դիմել» նշանակությամբ բառը (ՆՀԲ, 2, 172, ՀՕԵ, 304, ծան. 28), որ բնագրում գործածվել է որպես ձևի պարագա, չեզոք սեռի է և հանդես է եկել անցյալ դերբայով. «... եւ ծածկեալ ի բաց կարասցուք զբնութիւն խառնուածոյն ա-

պականութեանց եւ *ճառաբանեալ* անապականաբար խօսեսցուք ընդդէմ այնոցիկ, առ ի մոռանալ զխառնումն ապականութեան» (485):

Ճառաբան հիմքով ՆՀԲ-ում նշված է միայն *ճառաբանութիւն* բառը (ՆՀԲ, 2, 72), որի դիմաց բերված է հետագայի մեկ վկայություն: Կարծում ենք, որ նշված բառն ամբողջությամբ նորակազմ է:

Մարգարէափակ «մարգարեներից փակված, սահմանված» ձևի մակբայը նույնանուն պարագայի կիրառությամբ հանդես է եկել հետևյալ նախադասության մեջ. «...եւ հիմնարկեալ ճառս յօրինեսցուք, եւ հնարեսցուք վկայս հաստապատճառս և բազմաբանս, բնադիր բաղադատութեամբ, եւ *մարգարէափակ* ամրապնդեալ գրեսցուք պատճէնս հաւատոյ յաւանդութիւն խոստովանութեան մերոյ...» (484):

Բառը կազմված է *մարգարէ* (բացառական հոլովի նշանակությամբ) և *փակ* (*փակել*) հիմքերից, այսինքն՝ բաղադրիչներն արտահայտում են խնդիր + բայահիմք լրացյալ շարահյուսական հարաբերություն:

Մշտալցոյց «մշտապես լցնող՝ ավելացնող» նորակազմ ածականը (ՆՀԲ, 2, 288, ՀՕԵ, 306, ծան. 66) հետադաս որոշի կիրառությամբ հանդես է եկել հետևյալ նախադասության մեջ. «... եւ ընդ միոյ սակաւուդ վարծս, ընկալցիս յԱստուծոյ մերմէ, բիւրապատիկ հազարաւորեալ, բիւրաբաշխ և *մշտալցոյց*...» (493):

Բարդությունը կազմված է *միշտ* և *լցոյց* բաղադրիչներից, որոնք կապակցված են պարագա + բայահիմք լրացյալ հարաբերությամբ:

Յարալուցեալ «մշտավառ» նշանակությամբ (ՆՀԲ, 2, 341, ՀՕԵ, 305, ծան. 47) բայածը (անցյալ դերբայ) բնագրում հանդես է եկել որպես հետադաս որոշիչ. «... եւ տունկք աստուածածաղիկք, եւ ճրագունք յարալուցեալք, յորս Հոգին սուրբ հանապազ բուրէ ի նոսա» (489):

ՆՀԲ-ում նշված չէ *յարալոյց* ձևը, ուստի կարող ենք ասել, որ բառը կազմված է *յար-* ածանցից և *լուցանեմ* բայի *լոյց* հիմքից (ՆՀԲ, 1, 904)՝ *եալ* դերբայական վերջավորությամբ: Այսինքն՝ բառը հունաբան դպրոցի հետևողությամբ է կազմված:

Սատանայապատիր «սատանայից գերված» (ՆՀԲ, 2, 698, ՀՕԵ, 305, ծան. 36) հոդակապով իսկական բարդությունը հանդես է եկել ձևի մակբայի կիրառությամբ. «... հաղորդիցին անմաքուր, *սատանայապատիր* և որովայնամոլ ըստ քաղկեդոնական հաւատոյ...» (ՍԺ, 485-486):

Բառը կազմված է *սատանայ* և *պատիր* «խաբեական» բառերից: Փաստորեն բաղադրիչների միջև առկա է խնդիր + ածական հարաբերությունը, որտեղ խնդիրը բացառական հոլովի նշանակություն ունի:

Ուղղակարգ «ուղղափառ, ուղղափառ հավատքով կարգված» (ՆՀԲ, 2, 546, ՀՕԵ, 306, ծան. 55) ածականը նախադաս որոշչի կիրառությամբ հանդես է եկել հետևյալ հատվածում. «... աղաղակելն է այս հաստատութեամբ սուրբ հաւատոյ, յընդունելութիւն ուղղափառաց, ի պայծառութիւն ուղղակարգ եկեղեցւոյ, յընդունելութիւն հաւատացելոց եւ ի գովութիւն բարեբանութեան համագոյ Երրորդութեանն՝ ամէն» (492):

Ուղիղ և կարգ հիմքերն այստեղ արտահայտում են պարագա + լրացյալ հարաբերություն:

Քրիստոսաւետեալք «Քրիստոսին ավետողներ» (ՆՀԲ, 1, 1017, ՀՕԵ, 305, ծան. 48) գոյականը՝ առաջացած անցյալ դերբայից, որպես ենթակա է հանդես եկել բնագրում. «...զի այսուհետև ոչ եւս երախայացեալք, այլ քրիստոսաւետեալք, և աստուածաբարբառ կրթեալք յաւետաբեր քարոզութիւնն՝ արհնել զեկեալ փեսայն, ու առագաստի երգել երգս, եւ, յերգելն, աղաղակելն է այս...» (489):

Բարդությունը ձևավորվել է *Քրիստոս* բառից, որ տրականաձև հայցականի իմաստով ուղիղ խնդիր է, և *աւետ(ել)* բայի հիմքից:

3. ՆՀԲ-ից բացակայող մեկ նորակազմություն կա «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» երկու: Դա *օձնման* բառն է (չարություն), որն ըստ Վ. Համբարձումյանի՝ պետք է լինի օձանման (ՀՕԵ, 296, 4), որն ի դեպ նշված է ՆՀԲ-ում և բերված է մեկ օրինակ՝ հետագայի՝ 12-րդ դարի հեղինակից (ՆՀԲ, 2, 1026): Երկու դեպքում էլ բարդության բաղադրիչները կապակցված են տրական հոլովով լրացում (խնդիր) + ածական կաղապարով: «... զոր հարիւր երեսուն և իններորդ սաղմոսն ուսուցանէ զչարչարանս փրկչին լինել, և յօձնման չարութիւն կատարեալ ժողովրդեանն...» (95) նախադասության մեջ այն նախադաս որոշչի պաշտոնում է հանդես եկել:

4. «Յիշատակարանից» կարող ենք նշել միայն աստուածախօսունակ նորակազմությունը՝ «ընդունակ՝ ի վիճակի լինել խոսելու Աստծու մասին» նշանակությամբ (ՆՀԲ, 1, 322, ՀՕԵ, 302, ծան. 22): Հետևյալ հատվածում ածականը որպես նախադաս որոշիչ է հանդես եկել. «... և թէ պարտ է սպասաւորաց բանին աստուածախօսունակ հարցն բանիւք կնքել բանիս» (116):

Բառը կազմված է *աստուածախօս* հիմքից, որին միացել է *ունակ* բառը՝ *ուն (ունի)* «բռնել, առնել, ունենալ» արմատից (ՀԱԲ, III, 601)՝ բաղադրված *-ակ* վերջածանցով: Ըստ երևույթին, գեղչված է բառակապակցության բայը:

5. «Ընդդէմ պաւղիկեանց» երկու կա այս կարգի երկու բառ՝ *ի ձերբաձգութենէ* և *անընդդիմամարտ*:

Ի ձերբաձգութենէ (< *ձերբաձգութիւն*) բառածը՝ բացառական հոլովով, «ձեռքից ձեռք գցելուց» իմաստն ունի (ՆՀԲ, 2, 154, ՀՕԵ, 291, ծան. 37): Այն հանդես է եկել պատճառի պարագայի կիրառությամբ. «Դոյնալէս և զասացեալ զառաջնածին կնոջ զնմանուկն *ի ձերբաձգութենէ* առ իրեարս չարամահ առնելով, զայն՝ յոյժ ձեռս ոգեսպառ եղեալ սատակի՝ յաղանդապետական կարգեալ պատուի մեծարեն» (38): *Ձերբաձգութիւն* բառը նշված է ԱԲ-ում (518):

Նորակազմությունը ձևավորվել է *ձեռն* գոյականի գործիական հոլովածուկ և *ձիգ* անստույգ արմատով (ՀԱԲ, III, 152)՝ բաղադրված *-ութիւն* ածանցով:

Անընդդիմամարտ «անընդդիմանալի, կռվի դուրս գալու անընդունակ» (ՀՕԵ, 290, ծան. 25) նշանակությամբ ածականը հանդես է եկել որպես նախադաս որոշիչ. «... զԶևս՝ վասն *անընդդիմամարտ* ներհակացն զուգախառնութեան զայս վասն այլ իրիք քաջաբաստիկ զբնականսն ունելոյ որակութիւնս...» (37):

Բառի սերող հիմքն է *ընդդիմամարտ*, որի դիմաց բազմաթիվ վկայություններ կան (ՆՀԲ, 1, 769): Փաստորեն նորակազմությունը ձևավորվել է *ան-* նախածանցով:

6. «Ատենաբանութիւն» երկու ևս կան այս կարգի նորակազմություններ՝ *ղամպարունակ*, *ոտանաւորութիւն*, *բաբեղոնական* և *ներքսանկութիւն*:

Ղամպարունակ «լամպը, ջահը պահող, ջահընկալ» (ՆՀԲ, 2, 162-163, ՀՕԵ, 260, ծան. 45) ածականը գործածվել է իբրև նախադաս որոշիչ. «Եւ ընդ զիշերոյ շարալծեալս այս մերկանայ ի մէնջ զգալի յոյսս արեգական և լուսնի, ի բաց դնելով *ղղամպարունակ* պայծառութիւն» (13):

Բառը կազմված է *ղամպար* (ղամբար, լամպար) «ջահ, ճրագ, լույս» (հունական ծագման) և *ունակ* (ՆՀԲ, 2, 549) բառերից:

Ոտանաւորութիւն գոյականը «ուղքի վրա (կանգնած լինելը)» (ՆՀԲ, 2, 524) նշանակությամբ գործածվել է որպես ձևի պարագա. «Այլ և հանդերձ *յոտանաւորութեամբ* առանց ծունր կրկնելոյ կատարել զասացեալսս, ըստ նորին իսկ տեսոն հրամանի...» (17):

Բառակազմական հիմքն է *ոտանաւոր* (ՆՀԲ, նույն տեղում), որ գործածական է թե՛ որպես գոյական, թե՛ որպես ածական կամ մակբայ: Նորակազմությունը ձևավորվել է *-ութիւն* ածանցի միջոցով:

Բաբեղոնական «բաբելական» (ՆՀԲ, 1, 399, ՀՕԵ, 262, ծան. 69) հարաբերական ածականը նախադաս որոշիչ պաշտոնում է հանդես եկել. «...գերելով և ի հնոց արկանելով չարաչար, և կիզանող ախտիցն մատնեալ բաբեղոնական աներևոյթ գորոզին» (18):

Բառի հիմքն է *Բաբեղոն*, որի ածանցմամբ էլ ձևավորվել է նորակազմությունը: ՆՀԲ-ում նշված է միայն *բաբելական* (նույն տեղում) ձևը, որի դիմաց բերված է մեկ վկայություն Գրիգոր Նարեկացուց:

Ներքսանկութիւն «ներս ընկնելը՝ խցկվելը» (ՆՀԲ, 2, 424, ՀՕԵ, 259, ծան. 29) գոյականը որպես նախադաս որոշիչ է հանդես եկել. «...իսկ զխանտացոյն բարեվայելչականաց մերոց իրաց խնդացուցանելով զսատանայ, մանաւանդ թէ և եղազ *ներքսանկութեան* նմա՝ յանշնորհակալուս բազմերախտութեան Աստուծոյ ներհորդեսցի» (11):

Բառը ձևավորվել է *ի ներքս անկանիլ* բառակապակցությունից: 7. «Ոնդդէմ երեսութականաց» երկում գործածվել է այս կարգի երկու նորակազմություն՝ *ղոջակատել*, *յահեկականացն*:

Ղոջակատել «խուսափել, պառակտել» (ՆՀԲ, 2, 164, ՀՕԵ, 269, ծան. 51) չեզոք սեռի բայը որպես ձևի պարագա հանդես է եկել հետևյալ հատվածում. «Եւ զայդ այդպէս *ղաւջակատելովդ*՝ Արիոսի եղեալ գտանիս չարապաշտութեանն զուգածայն» (69):

Բառը կազմված է *ղոջակ* «լողակ, լուղակ» և *ատել* «բաժանել, տրոհել, կիսել» բառերից (թշնամուց փախչող, լողացող) (ՀՕԵ, 269, 51): Աճառյանը բերում է հենց այս օրինակը և ավելացնում նաև բառի «ցնդաբանել, հայիոյել» իմաստները (ՀԱԲ, III, 172): ԱԲ-ում բառը տրված է «հայիոյել» իմաստով (523):

Յահեկականացն (*ահեկականք*) «ծախ կողմում եղած, ծախսկողմյան» (ՀՕԵ, 278, ծ. 193) նշանակությամբ ածականը որպես ուղիղ խնդիր է հանդես եկել՝ «Եւ համայն հիացեալ եմ մեծապէս՝ զնորանշանդ ի քեզ տեսանելով ձևացութիւն զի այլք *յահեկականացն* զմի ինչ ի սատանայական ուսմանցն բարձեալ տարան շահս...» (79):

Բառը կազմված է *ահեկ (ահեակ)* իրանական ծագումով բառից (ՋՆԺ, 268)՝ բաղադրված *-ական* ածանցով:

Վերը նշված երկում կա ևս մեկ բայ՝ *վարարկեալ (կել)*, որ ՆՀԲ-ում չկա: Աճառյանն այդ բառը ներկայացնում է որպես նորագյուտ բառ՝ «պատել, շրջապատել» իմաստով և բերում է վկայություն նոր ժամանակներից (ՀԱԲ, IV, 316): Մինչդեռ բառը անցյալ դերբայով գործածվել է Օծնեցու երկում. «...և որ զկնի սաղմոսն պատմէ զանազան փորձութեամբն *վարարկեալ* որպէս վարմի» (ՅՎԵԲ, 83):

Հնարավոր է, որ այն *վարմարկել* «ուռկանել» բառն է՝ *վարմ* «թակարդ հիմքով (ՆՀԲ, 2, 797), և ընդամենը գրիչների արտագրության հետ է կապված: Այնուամենայնիվ, ՆՀԲ-ում *վարմարկեալ* բառի դիմաց կա մեկ վկայություն: Բառը թարգմանված է «գործի դրվելով» տարբերակով (ՀՕԵ, 151):

8. ՆՀԲ-ից բացակայող բազմաթիվ բառեր կան Օծնեցու նորահայտ տոնացուցային երկում՝ «Նախահաւաքումն պատմութեան այսմ բանից՝ Յովհաննու Վերծանաւղի» վերնագրով, որոնք էլ համապատասխան բառաձևերով ներկայացվում են ստորև:

Դրանք են՝ աղանդախումբ, աներկաւորելի, առաքելասահման, առողղեկանաբար, արտեմոնադիր, աւետազուարձ, աւետահրաշ, գրատրական, դժնախորամանգութիւն, երկնածնացն (<երկնածինք>), ըստերիւրութեանն (<ըստերիւրութիւն>), խաչակերպեալ (<խաչակերպեմ>), հեռահիւսակ, հնագիտագիրք, հոգէախաւսութեանցն (<հոգէախաւսութիւնք>), հոգէպաճոյձ, ընծիւռնաբանութիւնսն (<ընծիւռնաբանութիւնք>), մոլեղաւան, յաւէտահրաշչութիւնն, ներկական, ներհունապէս, նմանախաւսել, նորադարք, շարագնդէ (<շարագնդել>), շարակալութիւն, շարակող, շարաճշգրտէ (<շարաճշգրտել>), շնորհաւանդ, ոյքնապէս, սահմանակի, վաշմտութեանն (<վաշմտութիւն>), վերակացիկ, տարեարք // անտարեարք, տրամագաղափարութիւն, ցորենակերպ, ուղումբրամած, քողախնդիր (39): Սրանցից մի քանիսը հետագայում տեղ են գտել «Առձեռն բառարանում», ինչպես՝ *առաքելասահման, աւետազուարձ, յետսդարձութեանն* և այլն:

Աներկաւորելի ածականը (ՆՀԲ, 1, 140) գործածվել է հետևյալ նախադասության մեջ՝ որպես ստորոգելի. «Արդ վասն առաւելութեան փառացն Հաւր եւ վասն իւրացուցանելովն ինքեան զկուսածին ծնունդն՝ ամենեւին *աներկաւորելի* է եղելութիւնն եւ միականութիւնն ծննդեանն եւ սկիզբն արարութեանն (ՆՊ, 114):

Բառի սերող հիմքն է *երկաւոր* ածականը, որը նաև գոյականական գործածություն ունի (ՆՀԲ, 1, 690), որից *ան-* նախածանցի և *-ելի* վերջածանցի միջոցով ձևավորվել է նորակազմությունը:

Առաքելասահման ածականն ունի «առաքյալների կողմից սահմանված» իմաստը: Այն որոշչային կիրառություն է ստացել հետևյալ նախադասության մեջ. «...ապաքէն զինքեանս կարծելով յաւէտ քան զառաքեալս՝ երկուս բնութիւնս ասացին զՔրիստոսն եւ յերիս տաւնս բաժանեցին զմի տաւնն եւ եղծումն արարին կարգաց *առաքելասահման* եկեղեցւոյ» (116):

Բառի հիմքերն են՝ *առաքեալ* և *սահման*: Հոդակապով իսկական բարդության բաղադրիչները կապակցված են խնդիր + բայահիմք լրացյալ հարաբերությամբ, որտեղ լրացումը բացառական հոլովի նշանակություն ունի:

Առուղղեկանաբար մակբայը (ՆՀԲ, 1, 132), որ հավանաբար սխալմամբ է երկու դ-ով տպագրված, *ուղի* արմատից է կազմված: ՆՀԲ-ն տալիս է *առուղեկան* «անցավոր, առժամանակյա» ածականը, որի դիմաց վկայակոչում է միայն Գրիգոր Նարեկացուն (ՆՀԲ, նույն տեղում): Եթե նկատի ունենանք ժամանակային գործոնը, ապա այն պետք է որ Օծնեցու կազմությունը լինի: Օծնեցու երկում բառի կողքին հանդես է եկել նաև հոմանիշը. «Ոչ *առուղեկանաբար*, անցաւորաբար, այլ յարակայ արէնն էր յիշատակին, զի աւարտեցան բանք նոցա նախանկար գաղափարաւ ըստ արինակի, զոր աւետարանեցին սակս անապական ծննդեանն» (118):

Նետաքրքրական է արտեմոնադիր «Արտեմոնի կողմից դրված, սահմանված» (ՆՀԲ, 1, 382) նշանակությամբ ածականի կազմությունը: Պետք է նկատել, որ անձնանուններից նոր բառեր կերտելը խորթ չէ Օծնեցու բառակազմական համակարգին (հմտ.՝ *դերաքրիստոս, նետորաբար, քրիստոսաւետեալ* և այլն): Այս ածականի դեպքում ևս բաղադրիչները կապակցված են խնդիր լրացում + բայահիմք լրացյալ հարաբերությամբ: «Ապաքէն, եթէ *արտեմոնադիր* տաւնախմբութեանց կարգ հաստատեալ էր ի Նիկիայ, նոյն հաստատեալ լինէր եւ յերկրիս Հայոց» (105) նախադասության մեջ բառը հանդես է եկել որպէս նախադաս որոշիչ:

Երկնածին ածականը (ՆՀԲ, 1, 695) հոգնակի թվով որոշչային կիրառություն է ստացել. «...որում կենսագործին ազգք *երկնածնացս* եւ *նորադարք*, որ զիր զանգրաւ զաստուածութիւնն՝ ի նոյն կատարեալ դարու ուրբաթուն» (122):

ՆՀԲ-ն չունի նաև *նորադար* (2, 445) ածականը: Երկու բառերն էլ «նոր ի հայտ եկած, նոր ժամանակներում ծնունդ առած» նշանակությունն ունեն: *Երկնածին* բառում առկա են պարագա (բացառականի նշանակությամբ) + բայահիմք լրացյալ, իսկ *նորադար* բառում՝ որոշիչ + որոշյալ շարահյուսական հարաբերությունները:

Աւետազուարձ (ՆՀԲ, 1, 394) «աւետներով զուարճացող» ածականը նշված է ԱԲ-ում (152): Այն որպէս նախադաս որոշիչ է գործածվել հետևյալ նախադասության մեջ. «Բայց սուրբ առաքեալքն ո՛չ յարմարեցին ըստ *վաշմտութեանն* այնմիկ, այլեւ զԱւետարանացն *յաւէտահրաշուքիւնն* եւ զառաքելոց եւ զմարգարէիցն գերազանցութիւն եւ զեկեղե-

ցեացն *զաւետազուարձ* բարձրութիւնն եւ զիրեանց փառաւորութիւն...» (117-118):

Նորակազմության բաղադրիչները կապակցված են լրացում (խնդիր) + բայահիմք լրացյալ հարաբերությամբ, այն է՝ *աւետ* + *զուարձ* արմատով բայահիմք:

ՆՀԲ-ից բացակայում են նաև *վաշմտութիւն* (2, 784) և *յաւէտահրաշուքիւն* (2, 394) գոյական-բառածները: Ա. Հակոբյանը կարծում է, որ գուցե սրանցից առաջինը պետք է լիներ *վատմտութեանն*⁵⁶, որը հավանական է, սակայն այդ ձևով ևս ՆՀԲ-ն չի նշում այն (2, 788):

ԱԲ-ում նշված է *յաւէտահրաշ* «միշտ հրաշալի, հիանալի» ածականը միայն (591), որում առկա է որոշիչ + որոշյալ հարաբերությունը, և որի արմատներն են՝ *յաւէտ* պահլավական և *հրաշ* ասորական բառերը:

Գրատրական ածականի (ՆՀԲ, 1, 584) *ր*-ն հավանաբար ավելորդ է, և բառի արմատն է *գրատ* «զգեստ, վերարկու, կտորի վրա գրված» (նույն տեղում), որին ավելացել է *-ական* վերջածանց: Բառը հետևյալ նախադասության մեջ գործածվել է որպէս նախադաս որոշիչ. «Եւ վասն այս *ըստերիւրութեանս* հարկ եղել ինձ՝ ըստ ազդեցութեան շնորհին յառեալ ի ժամանակականս եւ վերծանեալ ենթատրաբար *զգրատրական* տառս նոցա՝ եւ հետագաւտել ներհունապէս զՅովսէպոս, զՓիլովն, զԵրիանոս ..., *ոյքնապէս* զԵպիփան՝ Պարունակականն, զՌոգինէս՝ բաղդատող զգիրս Աստուածաշունչս» (100):

Նշված օրինակում գործածված են ևս երեք նմանատիպ բառեր՝ *ըստերիւրութեանս*, որի հիմքն է *ըստերիւրեն* բայի հիմքը, *ներհունապէս* և *ոյքնապէս*. *Ներհունապէս* մակբայը նշված չէ ՆՀԲ-ում, սակայն կա *ներհուն* ածականը՝ «հմուտ, իրագեկ» իմաստով (ՆՀԲ, 2, 420), որից բաղադրված են նաև *ներհունանամ* և *ներհունութիւն* բառերը: Ընդ որում բոլոր բառերի դեպքում բերվում են 10-րդ դարից հետո երևան եկած վկայություններ: Փաստորեն բառակազմական հիմքն է *ներհուն*:

Նետաքրքրական է *ոյքնապէս* բառի կազմությունը՝ «որոնց պէս» նշանակությամբ, որ գործածվել է ստորադասական շաղկապի կիրառությամբ: Ինչպէս և նկատելի է, բառը ձևավորվել է *ո* (*ով*) դերանվան հոգնակի ուղղականով՝ *-պէս* ածանցի միջոցով:

Դժնախորամանգութիւն գոյականը հայցական հոլովով հանդես է եկել հետևյալ նախադասության մեջ՝ որպէս ուղիղ խնդիր. «Այլ դու՛, ո՛վ ուղղափառդ, ի միտ առ եւ ծանիր *զդժնախորամանգութիւնս* նոցա որպէս յամենայն կողմանց խաբել» (128):

⁵⁶ Տե՛ս Ա. Յակոբեան, նշվ. աշխ., էջ 117:

Բառը ձևավորվել է *խորամանկ(գ)ութիւն* գոյականից (ՆՀԲ, 1, 972)՝ *դժնեայ* ածականի հավելումով, որը որպես որոշիչ է հանդես եկել: *Պուժն* արմատը պահպակական ծագում ունի (ՀԱԲ, I, 663): *խորամանկ* բառի *խոր* արմատն անստույգ է (ՀԱԲ, II, 405), իսկ *մանկ* «նենգություն» բառը դարձյալ պահպակական ծագում ունի (ՀԱԲ, III, 254):

Ընծիւռնաբանութիւն գոյականը (ՆՀԲ, 2, 782) գործածվել է հետևյալ նախադասության մեջ. «...սուք յայտնեցին զառաջնոցն զուղղափառացն զորթորդական խոստովանութիւնն եւ զշարափառացն եւ *զմոլեղաւան աղանդախումբ* հերձուածոյն *զընծիւռնաբանութիւնսն*» (101): Ենթադրվում է, որ պետք է լիներ *ընծեռնաբանութիւնսն*՝ «սուչութիւն, աւանդութիւն» իմաստով⁵⁷: Այնուամենայնիվ, երկու ձևերն էլ չկան ՆՀԲ-ում: ՆՀԲ-ից բացակայում է նաև *մոլեղաւան* ածականը (ՆՀԲ, 2, 293), որ նշանակում է «մոլի կերպով դավանող»: Բառի բաղադրիչներն արտահայտում են պարագա + բայահիմք լրացյալ հարաբերություն: Նորակազմությունը գործածվել է որպես նախադաս որոշիչ: Հատկացուցիչ + հատկացյալ հարաբերությամբ է ձևավորված *աղանդախումբ* գոյականը (ՆՀԲ, 1, 33), որ նշանակում է «աղանդներով լի» և կազմված է *աղանդ* (ՀԱԲ, I, 120), *խումբ* (ՀԱԲ, II, 419) անստույգ արմատներից:

Խաչակերպել բայի հիմքն է *խաչակերպ* «խաչանման» (ՆՀԲ, 1, 923)՝ մակբայի կամ ածականի նշանակությամբ: Այն անցյալ դերբայով գործածվել է որպես ձևի պարագա. «Վասն երկրորդ շաբաթուն առաւրթ կանոնին այս է պատճառ. ի շինել զքաղաքն քառանկիւն՝ *խաչակերպելալ* զհիմնադրեալսն...» (126):

Շեռահիւսակ ածականը (ՆՀԲ, 2, 88) որպես նախադաս որոշիչ է հանդես եկել հետևյալ նախադասության մեջ. «Եւ յերկրորդում աւուր ստորիջի՝ ըստ *հեռահիւսակ*

Բառակազմական հիմքն է *հիւսակ* (ՆՀԲ, 2, 103) գոյականը, որին որպես նախադաս որոշիչ լրացրել է *հեռ* հիմքը:

Հնագիր գոյականը նշված է ՆՀԲ-ում (2, 105)՝ «հին մատենագիր, մատյան» իմաստներով, իսկ ահա **հնագիտագիր** բառը նշված չէ. այն «հին ավանդագրույցների մասին պատմող» իմաստով գործածվել է Օձնեցու երկում. «...գի ամենեքեան նոքա *ժամանակապատումբ* եղեալ են, յարացոյցք, ժամանակաց եւ *հնագիտագիրք* եւ շարագիրք (101):

* Այստեղ կ-ի փոխարեն գ-ով գրությունը խորք չէ հայերենին առիասարակ (իմնու. *բացազանչութիւն, ցանգ* և այլն) դիմաց...» (119):

⁵⁷ Ա. Յակոբեան, նշվ. աշխ., էջ 130:

Հնագետ հիմքին կցվել է *գիր* գոյականը՝ ձևավորելով հատկացուցիչ + հատկացյալ կաղապարը: Ի դեպ, *ժամանակապատում* գոյականը ևս նշված չէ ՆՀԲ-ում (1, 829), որը որպես ստորոգելիական վերագիր է հանդես եկել և նշանակում է «ժամանակին պատմված»: Փաստորեն *ժամանակ* և *պատում* բաղադրիչները կապակցված են պարագա լրացում + բայահիմք լրացյալ հարաբերությամբ:

Հոգէախաւսութիւն գոյականը (ՆՀԲ, 2, 112) ևս նշված չէ, կա միայն *հոգիախոս* ածականը՝ «սուրբ, հոգով խոսված, ասված» իմաստով, որի դիմաց բերված է մեկ վկայություն Գրիգոր Տղայից: Գոյականը ձևավորվել է *հոգի* բառով, որը գործիական հոլովի նշանակությամբ որպես խնդիր լրացրել է *խաւս* բայահիմքին և ստացել *-ութիւն* ածանց: Օձնեցու երկում այն հոգնակի տրականով գործածվել է որպես հիմունքի պարագա. «...քանզի հարքն, որ ի Նիկիայ, ի Կոստանդնուպալիս, ըստ մարգարէական *հոգէախաւսութեանցն*, ըստ առաքելոցն *պահմանակի* մին եւ զմի Տէր խոստովանեցին միով բնութեամբ, եւ ո՛չ երկու» (128):

Ի դեպ, *սահմանակի* ածականը, որ նույն կիրառությունն է ստացել, ինչ նախորդը, ևս նշված չէ ՆՀԲ-ում (2, 688) և, հավանաբար, «սահմանված» նշանակությամբ պետք է թարգմանել, որ նույնական է *առաքելասահման* բառին, միայն թե այստեղ *-ակի* ածանցը ավելացել է «սահման» հիմքին: ԱԲ -ում կա միայն *սահմանակից* ածականը, որ «դրացի» իմաստն ունի (712) և կապ չունի նախորդի հետ:

Հոգէպաճոյճ ածականը (ՆՀԲ, 2, 112) «հոգին զարդարող» իմաստով գործածվել է որպես որոշիչ. «Ընթեռնու Կաթողիկէ, եւ աւրինադրի *հոգէպաճոյճ* զարդ չքնադութեան ի հեգասահ հրամանս փեսային...» (124): Բաղադրիչների միջև առկա է ուղիղ խնդիր + բայահիմք լրացյալ կապը:

Ներկական բառը ՆՀԲ-ում կա և նշանակում է «ներկի գորություն ունեցող» (2, 418), սակայն Օձնեցու երկում այն *ներկայ* բառից է կազմված և նշանակում է «ներկային, ներկա ժամանակին բնորոշ», որի մասին ՆՀԲ-ն չի նշում. «Ո՛չ լոկ *զներկական* ժամանակին զմարդիկ այլեւ զանցելոցն եւ զսպառնեացն միանգամայն վերածնէր՝ լնլով զմարգարէականն, եթէ ...» (104): Այս իմաստով ՆՀԲ-ն տալիս է *ներկայական* ձևը, որի դիմաց օրինակ է բերում Շնորհալույց (նույն տեղում): Բնական է, որ բառի առաջին գործածողը եղել է Օձնեցին: Այսպիսով՝ նորակազմությունը ձևավորվել է *ներկայ* + *-ական* վերջածանց կաղապարով:

Նմանախառնել բայի հիմքն է *նմանախոս* ածականը՝ «որ խոսում է ուրիշների նման» իմաստով (ՆՀԲ, 2, 431): Ահա նորակազմ բայի գործածությունը՝ անորոշ դերբայի գործիական հոլովով՝ որպես ձևի պարագա. «Եւ եղեն ամենեքին տքա հմուտք արտաքին արուեստից եւ զբարուք գրեալսն չարաչար մեկնեցին եւ զբազումս ի ձեռն արուեստաւոր բանիցն կործանեցին *նմանախառնելով* եւ աննմանիս խորհելով (102):

Շարագնդել բայը (ՆՀԲ, 2, 468) գործածվել է որպես ստորոգյալ. «Ո՛չ զշաբաթ, այլ զկիրակէ քան շաբաթուն ակն մահ է, թէ արտածգոք՝ յանցեալսն արտածգի, ո՛չ յապառնիսն, եւ եթէ *շարագնդէ* ոք՝ ըստ ամփոփմանն եւ ըստ քթելականն» (102):

Բառը *շար-* նախածանցով հունարան ոճի կազմութիւն է և «կծկել, բոլորել» իմաստն է արտահայտում, ինչպես *զնդել* (ՆՀԲ, 1, 565) բայը:

Նույն սկզբունքով են կազմված *շարակայութիւն* գոյականը, *շարակող* ածականը, ինչպես նաև *շարաճշգրտել* բայը. *շար-* նախածանցը իմաստային որևէ փոփոխություն չի առաջացնում և, փաստորեն, ձևական է:

Շարակայութիւն գոյականը ուղիղ ձևով հանդես է եկել որպես ուղևորման հայցական. «Ահա Հոգին Սուրբ ի *շարակայութիւն* կենսաբեր Աւետարանին նախահագեցոյց զՀովհաննես ի կատարման Աւետարանին» (117):

Բառը «կայուն լինելը» իմաստն է արտահայտում, ինչպես և *կայունութիւն* բառը (ՆՀԲ, 1, 1046), որից ածանցվել է նորակազմությունը: ՆՀԲ-ում նշված է *շարակայումն* ձևը միայն՝ «գողում, կապակցում» իմաստով (2, 470):

Իսկ *շարակող* ածականը (նույն տեղում) որպես հետադաս որոշիչ է հանդես եկել. «Եւ յետ նորա զՄատթէոս նախակարգեաց՝ նախահաւաքելով զնա ի սկզբան ստուգեաց զԾնունդն ի Կուսէն, զՂուկաս, որով զաւետիսն պատմեաց, եւ զՄարկոս՝ զմկրտութիւնն *շարակող*, ընդ Հովհաննէս եւ ընդ Մատթէոս ի մէջ փակեաց» (117):

Շարաճշգրտել «ճշգրտել» բայը (ՆՀԲ, 2, 471) ստորոգյալի պաշտոնով է հանդես եկել. «Հանգոյն սմին եւ սուրբն Գրիգոր *շարաճշգրտէ* զՀարէ ի կատարման աւետեացն...» (114-115): *Ճշգրիտ* բառն անստույգ է (ՀԱԲ, III, 208):

Շնորհաւանդ բառը (ՆՀԲ, 2, 484) «շնորհներ ավանդող» իմաստն ունի և գործածվել է որպես նախադաս որոշիչ. «Յովհաննէս աւետարանիչ, որ զլուխն էր ամենայն *շնորհաւանդ* պարգեաց...» (106): Նորակազմ բարդության բաղադրիչները կապակցված են խնդիր լրացում + բայահիմք լրացյալ հարաբերությամբ:

Վերակացիկ բառը «վեր կացած» իմաստն է արտահայտում (ՆՀԲ, 2, 806): ՆՀԲ-ն նշում է *վերակացեալ* ձևը, որի դիմաց վկայում է միայն «Ճառընտիրը»: Ածականը գործածված է որպես կոչական. «Արդ, տես բարեփառոյ, զորոգայթ զանխլացեալ եւ քաջ *վերակացիկ*, հայեցիկ լեր...» (127): ՆՀԲ-ում բերված են նույն հիմքով *վերակացու (-ութիւն)*, *վերակացեալ*, *վերակացումն* ձևերը: Այսինքն՝ նորակազմութիւնը ձևավորվել է *-իկ* ածանցով միայն:

Տարեարք և *անտարեարք* հականիշային գույզը (2, 857) գործածված է հետևյալ նախադասության մեջ. «Ապաքէն, զոր աւետեացն Գաբրիէլ (*տարեարք* եւ *անտարեարք*, գոյք եւ անգոյք) առհասարակ ցնծան՝ ոչ կանոնեցին եւ ոչ կարգեցին գիրս ընթերցուածոց...» (104): Հավանաբար բառերը պետք է թարգմանել «տարիքով մեծ» և «տարիքով փոքր»:

Տրամագաղափարութիւն գոյականը գործածված է հետևյալ նախադասության մեջ՝ որպես ստորոգելի. «Ըստ այս խորհրդաբանութեան նախատպելով զպատիւ յերիս աւուրսն Կաթողիկէ ո՛չ ընթեռնուն, զի *տրամագաղափարութիւն* է ըստ յարակայեցումն հարսանեաց ի վերնում առագաստին» (124):

Բառակազմական հիմքն է *գաղափարութիւն* «տպավորութիւն, կերպ, նման» (ՆՀԲ, 1, 524): Բառը հունարան ոճի կազմություն է՝ կապված *տրամա-* նախածանցի գործածության հետ: *Գաղափար* բառը մեկնաբանվում է որպես *կաղապար* բառի տարբերակ, որը հունական ծագում ունի (ՀԱԲ, II, 494):

Ցորենակերպ ածականը «ցորենանման» իմաստով գործածվել է որպես հետադաս որոշիչ. «Եւ յաճախեաց անարէնութիւն, ցամաքեցաւ հաւատ, եւ սկսաւ տարածել որոմն *ցորենակերպ* սուտ վարդապետութեան» (100):

Ըստ երևույթին, բառը կազմված է բառակապակցության բայի զեղչումով:

Ներկայացվող վերջին բառը ուղումբրամած անցյալ դերբայածն է, որի կազմությունը պարզ չէ: Այն որոշչային կիրառություն է ստացել հետևյալ նախադասության մեջ. «...եւ եղ դերաքրիստոսն *զուղումբրամած* թագն ի զլուխն իւր եւ գահակալեցաւ» (100):

Քողախնդրիւ բառի մասին խոսվել է (տես *քողախնդրեմ*):

Պետք է նշել, որ վերոհիշյալ բառերից մի քանիսը հետագայում տեղ են գտել Ռ. Ղազարյանի բառարանում⁵⁸: *Դրանք են՝ ախտաժխտել (19), աղանդախումբ (28), անձրևահոս (117), մահորոճ (814), յաւէտահրաշ (909)*: Ընդ որում *մահորոճ* բառի դիմաց վկայակոչվում է Օծնեցին, իսկ *անձրևահոս* բառի դիմաց՝ Ղազար Փարպեցին: Մյուսները բերվում են առանց վկայությունների:

Այսպիսով՝ ՆՀԲ-ից բացակայող նորակազմությունները բավականին մեծ թիվ են կազմում (94), որոնցում գերակշռում են ածականները (52): Վերջինների մեծ մասը բարդ կազմություն ունի, մի մասն ածանցավոր է, մնացածը՝ բարդ ածանցավոր: Գործածվել է այս կարգի մոտավորապես 18 բայ՝ դիմավոր և անդեմ, 15 գոյական, 8 մակբայ և 1 շաղկապ:

Նորակազմ բարդ ածականների բաղադրիչներն արտահայտում են շարահյուսական տարաբնույթ հարաբերություններ, ինչպես՝

ա) Խնդիր + բայահիմք լրացյալ, օրինակ՝ *անձրևահոս, մահորոճ, տրտմաբեր, օրածին, առաքելաբարբառ* և այլն: Ընդ որում լրացումը կարող է արտահայտել տարբեր հոլովածների նշանակություններ: Այսինքն՝ այս բառերը կազմված են *հիմք + (հողակապ) + հիմք բառակազմական կաղապարով*:

բ) Պարագա + բայահիմք (ենթակայական դերբայի նշանակությամբ) լրացյալ, օրինակ՝ *ապականաբնակ, բիրաբաշխ, մշտալցոյց* և այլն: Այստեղ ևս նախորդ կաղապարն է առկա:

գ) Բառակապակցության բայի զեղչում, օրինակ՝ *ցորենակերպ, լայնապարիսպ* և այլն (*հիմք + հողակապ + հիմք*):

դ) Որոշիչ + որոշյալ, օրինակ՝ *հաստապատճառ, հաստայատակ* և այլն:

ե) Հատկացուցիչ + հատկացյալ, օրինակ՝ *օձման, հնագիտագիր* և այլն:

Ածանցավոր ածականներն ունեն բառակազմական հետևյալ կաղապարները՝

ա) *Նախածանց + հիմք* (պարզ կամ բաղադրյալ), օրինակ՝ *անընդ-դիմամարտ, շարակող, վերապայծառ* և այլն:

բ) *Հիմք (պարզ կամ բաղադրյալ) + վերջածանց*, օրինակ՝ *գիշերա-մած, բաբեղունական, գրատրական, ներկայական, սահմանակի, հա-մասփռական* և այլն:

⁵⁸ Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան, Անթիլիաս-Լիբանան, 2004:

գ) *Նախածանց + հիմք + վերջածանց*, օրինակ՝ *աներկարելի* և այլն: Բայական համակարգում առկա են հետևյալ կաղապարները.

ա) *Հիմք + վերջավորություն* (անորոշի կամ անցյալի), օրինակ՝ *ախտաժխտել, ճառաբանել, մարմնազգեստել, յախել* և այլն:

բ) *Նախածանց (հունաբան ոճի) + հիմք*, օրինակ՝ *շարագնդել, շարաճզարտել, յարալուցել* և այլն:

Մի շարք բայերում բաղադրիչներն արտահայտում են շարահյուսական հետևյալ հարաբերությունները՝

ա) Լրացում + բայ լրացյալ (*հիմք + (հողակապ) + հիմք*), օրինակ՝ *ամրապնդել, ծաղկանետել, դողակատել, քրիստոսաւետել* և այլն:

բ) *Հարադրության պարզեցում*, օրինակ՝ վայրագարկեցան (ի վայր գարկանեմ) և այլն:

Նորակազմ գոյականներում առկա են հետևյալ կաղապարները.

ա) *Հիմք + վերջածանց*, օրինակ՝ *աւետարանութիւն, ընթերցարան, ոտանաւորություն, վերակացիկ* և այլն:

բ) *Նախածանց + հիմք*, օրինակ՝ *շարակայութիւն, տրամազաղա-փարութիւն* և այլն:

Բարդ կազմություններում բաղադրիչներն արտահայտում են հետևյալ հարաբերությունները՝

ա) Հատկացուցիչ + հատկացյալ, օրինակ՝ *աղանդախումբ (հիմք + (հողակապ) + հիմք)*:

բ) *Հարադրությունից ձևավորված*, օրինակ՝ *ներքանկութիւն* (ի ներքս անկանիլ):

Մակբայները, որ ձևավորվել են *-բար, -պէս* ածանցներով, ունեն բառակազմական երկու կաղապար՝ բաղադրյալ *հիմք + ածանց*, օրինակ՝ *աստուածասիրաբար, յարելաբար, ներհունապէս* և այլն, և պարզ *հիմք + ածանց*, օրինակ՝ *երախալապէս*:

գրուակամներ	ածակամներ	բայեր	մակբայերի և շարկակա
	<p>հաստատակատեճար հեռահիսակ հոգեպաճոյճ իրաբոյթ իրեշտակաբարոզ ղամպարունակ մահորոճ մարգարեակիակ մշտացոյց յաւելտախրաշ յոզմախոս ներկական նորաղաղթ շարակոյ շնորհաւանդ չարահագագ սահմանակի սատանակապատիրո վերապայծառ տարեաղբ / անտարեաղբ տրտմաբեր ցոլենակերպ ուրդակակոզ ուրդունբրամաճ քեղթուածաղիկ թղթախնդիր օճման օրածին</p>		

Աղյուսակ 9. ՆՃԸ-ում չվկայված նորակազմ բառերն
ուտարածին խոսքի մասերի (95)

գրուակամներ (15)	ածակամներ (52)	բայեր (18)	մակբայերի (8) և շարկակա (1)
<p>արկանդակաուրբ աւերտարանութիւն ընթերցարան ընծիւնմաբանութիւն Սատերիւրութիւն հնագիտագիր հոգեպատարութիւն ձեղբածգութիւն ներքամկութիւն (ի ներքս անկանի) շարակալութիւն ոտանմաւորութիւն վաշնտութիւն վերակացիկ տարաաացութիւն տրկաւազաւաղալութիւն</p>	<p>աներկաւորելի անընդդիմամարտ արեկականք անճիւնահոս աշխարհաբիրկիչ սպակամբանակ առաքելաբարոբար առաքելասահման աստուածակնօտունակ արտեմոնաղիո աւերտագրարճ բարերունական բիրոբարշխ բնաղիւր գիշերամնած գրատրական դրեմիոս երկմածին թամճրաղիտակ ինքնաբարոբար լայնապարիսպ հակասակ համապիշական հաստալատակ</p>	<p>ախտաճեղել ամրապնդեալ խաչակերպեալ ժողկամեւտեալ ձեռնարկու լիկին (ձեռնարկեմ) դօրակատել ճարաբանեմ մարմնագգեւտեալ յախեալ յարուրճեալ նմանախաւսել նոյնացեալ շարագրել շարոսճշգրտել ստղոպքնել վայրազարկել (ի վայր գարկանեմ) վարարկեալ թիստատամետեալ</p>	<p>անլիշատակաբար արտորդեկանաբար աստուածապիտաբար երակալակալիս յարեկաբար նեստորաբար ներհունապիւս ոյքնապիւս (շարկակա)</p>

2) ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՐԵՆ ՈՉ ՃԻՇՏ ԿԿԱՅՎԱԾ ԲԱՌԵՐ ՆՀՐ-ՈՒՄ

Հայտնի է, որ ՆՀՐ-ում միշտ չէ, որ բառահողվածների դիմաց բերված բնագրային օրինակները նշվում են հեղինակների ապրած ժամանակաշրջանների ճիշտ հերթականությամբ: Երբեմն վկայակոչվող առաջին հեղինակն ավելի ուշ ժամանակներում է ապրել և ստեղծագործել, քան մյուս հեղինակները: Կամ վկայակոչվում է միայն հետագայի հեղինակը, մինչդեռ բառը կարելի է գտնել ավելի վաղ ժամանակներում ապրած հեղինակի գործերում: Օձնեցու գործածած բառերի դեպքում ևս հանդիպում ենք նման փաստերի:

Այսպես՝ «Ատենաբանութիւն» երկում կա այդ կարգի 7 բառ:

Աղախնայեմ չեզոք սեռի բայի դիմաց ՆՀՐ-ն (1,32) բերում է ընդամենը մեկ վկայություն «Ճառընտիրից»՝ «աղախնու պես ծառայել, աղախնու ծառայություն անել» իմաստով: Օձնեցին ունի այդ բառը՝ գործածված որպես միասնության խնդիր. «Ձերկուսն ապաշխարութեան և աղօթից, սակս ողբածայնեալ հոգեկան մարմինն՝ որ ընդ *աղախնայելոցն*, որի մեջ դաշնաւորեցաւ հեշտութեամբ ճաշակելեաց և հուտոտելեաց» (Ատ., 20):

Կարծում ենք, որ նշված բայը ձևավորվել է *աղախին* բառի հոգնակի ուղղականի (*աղախնեայք*) հիմքից: Այն նույն իմաստն ունի, ինչ որ *աղախնեմ* բայը, որի համար ևս վկայվում է «Ճառընտիրը» (ՆՀՐ, 1, 32):

Եռանձնական «երեք անձ ընդունող» ածականի համար ՆՀՐ-ն օրինակ է բերում նախ Գրիգոր Նարեկացուց, ապա Օձնեցուց. «անխրամատելի երեքկին շրջապատել *եռանձնական* զնոսա պարսպաւ հաւատոյն խոստովանութեամբ» (Ատ., 4): Բառը հանդես է եկել նախադաս որոշչի պաշտոնում:

Բարդ ածանցավոր ածականը կազմված է *եռ* (երեք) և *անձնական* «հոգևոր, հոգեկան» (ՆՀՐ, 1, 193) հիմքերից:

Հանգստական «հանգիստ, խաղաղ, անգործ» (ՆՀՐ, 2,38, ՀՕԵ, 262, 68) բառի դիմաց ևս ՆՀՐ-ն նախ վկայում է Նարեկացուն, ապա նոր՝ Օձնեցուն. «Եւ սակայն եւթնապատիկ սպառնաց ջեռուցանել, թերևս զի կիզուլ կարասցէ զեւթնեական՝ որ ի մեզ հոգեկան շնորհքն, և խախանել *զհանգստական* Հոգւոյն խորհուրդ...» (Ատ., 18):

Նախադաս որոշչի պաշտոնում հանդես եկած ածականը ձևավորվել է *հանգիստ* հիմքից (ՀԱԲ, III, 382) (*յանզը ի (յ)*) նախդրով և *անկ* արմատով է ձևավորվել) և *-ական* ածանցից:

Երեքսրբեան «երիցս սուրբ, ամենասուրբ», նաև՝ «Երրորդութիւն» (ՆՀՐ, 1, 681) բարդ ածանցավոր ածականի (ՆՀՐ-ն այն ներկայացնում է և՛ ածականի, և՛ գոյականի նշանակություններով) բոլոր իմաստների դեպքում բերվում են հետագայի վկայություններ՝ նշելով

նաև Օձնեցուն: Բառն ըստ ՆՀՐ-ի՝ հոլովվում է հետևյալ կերպ՝ սեռական հոլով՝ *երեքսրբենի*, եզակի գործիական՝ *երեքսրբենիս*, հոգնակի սեռական՝ *երեքսրբենից*):

Այն գործածված է հետևյալ նախադասության մեջ. «Յաղագս որոյ և *զերեքսրբեան* խառն ընդ նոսա միաբանական ծայնի սկսանի նուագել» (Ատ., 20):

ՆՀՐ-ում նշված է նաև *երեքսրբենասացութիւն* (1, 681) գոյականը, որի դիմաց բերված է հետագայի մեկ վկայություն: Ուստի կարելի է ենթադրել, որ բառակազմական հիմքը *սրբեան* ձևն է, թեև ՆՀՐ-ում նշված չէ, որին որպես բաղադրող հիմք լրացրել է *երեք* թվականը՝ ձևավորելով որոշիչ + որոշյալ կապակցություն:

Շարախառնել «խառնել, շաղել» (ՆՀՐ, 2, 470) բայի դեպքում ՆՀՐ-ն նախ օրինակ է բերում Դիոնիսիոս Արիսպագացու աշխատությունից՝ Ստեփանոս Սյունեցու թարգմանությամբ, ապա նոր՝ Օձնեցուց: Իսկ *շարախառն* բառի դիմաց բերվում են բազմաթիվ օրինակներ: Նորակազմությունը ձևավորվել է բայական վերջավորության ավելացումով. «Եւ մի՛ զարթնութիւն ընդ կենցաղականաց իրիք թուիցի *շարախառնել* ասացեալ զբօսանաց...» (Ատ., 16):

Տաժանաւոր «տառապալի, տաժանելի» (ՆՀՐ, 837) բառի դեպքում ՆՀՐ-ն ընդհանրապես չի հիշատակում Օձնեցուն՝ բերելով միայն Նարեկացու օրինակը: Մինչդեռ բառը գործածված է նաև Օձնեցու երկում. «...զի ազատ յամենեցունց յայցցանէ տրտմագին և *տաժանաւոր* իրաց՝ զուրախացուցանօղն զմեզ հաւատամք գոլ երկիր» (Ատ., 14):

Նորակազմությունը ձևավորվել է ածանցմամբ. *-աւոր* ածանցն ավելացել է *տաժան* հիմքին:

«Յաղագս կարգաց եկեղեցւոյ Քրիստոսի» երկում ևս կա այսպիսի մեկ բառ՝ *խորհրդաբերել* (ՀՕԵ, 294,1), որի դիմաց ՆՀՐ-ն (1, 976) նախ վկայակոչում է նախ Նարեկացուն, այնուհետև Սիսիանոս Սեբաստացի հայոց վարդապետին (11-12-րդ դդ.), հետո նոր՝ Օձնեցուն: Բառը գործածվել է «խորհրդածել, մտածել, միտք բերել, խորհել» իմաստով՝ գործածվել է «խորհրդածել, մտածել, միտք բերել, խորհել» իմաստով հետևյալ օրինակում. «...որչա՞փ ևս առաւել որ ուղղափառ հաւատով *խորհրդաբերին*, ներէ նոցա և առաջնորդէ առ բարեացն գիւտն...» (ՅԿԵԲ, 82):

Բայը կազմված է *խորհուրդ* և *բերել* հիմքերից, որոնք կապակցված են խնդիր լրացում + բայ լրացյալ հարաբերությամբ:

«Սակս գիշերային ժամու» ձառում գործածված է *կանոնզուխ* բառը, որ նշանակում է «առանձնացված նվագելի սաղմոսներ՝ ըստ օրվա պատշաճի և ծայնի» (ՀՕԵ, 300, 6):

Բառի դիմաց ՆՀԲ-ն (1, 1051) առաջինը նշում է խոսքով Անձնացու գործածությունը, ապա՝ Տոնացույցինը: Օձնեցու օրինակն ընդհանրապես չի նշվում: Ահա այն. «...ըստ այսմ օրինակի և մենք վեցիւք գուրդայիւք շրջապատեմք զմեքենայիւքն սատանայի, ըստ հրամանի մերոյն զօրավարի Յիսուսի, և եօթն գոչեմք գուրդայս բարձրահնչին բարբառով զկանոնգլուխսն ի բեկումն զօրութեան բանսարկուն» (110):

Ուղիղ խնդրի պաշտոնում հանդես եկած գոյականը ձևավորվել է կանոն և գլուխ բառերից: Բաղադրիչների միջև հատկացուցիչ + հատկացյալ հարաբերությունն է գիտակցվում:

«Սակս ժողովոց որ եղեն ի Հայք» ճառում ևս կան այս կարգի բառեր, ինչպես՝ *աթոռընկալ* բառը՝ «հաջորդ, աթոռակալ» իմաստով (ՀՕԵ, 303, 7): ՆՀԲ-ն (1, 12) այս բառի դիմաց նշում է միայն Մխիթար Ապարանեցու օրինակը (13-14-րդ դդ.): Մինչդեռ բառը գործածվել է ավելի վաղ՝ Օձնեցու ճառում՝ որպես նախադաս որոշիչ. «...ե վասն *աթոռընկալ* տէրութեան իւրոյ ի հրապուրեաց զբազումս զկնի իւր» (477):

Բարդ ածականի *աթոռ* և *ընկալ* բաղադրիչներն արտահայտում են խնդիր լրացում + բայահիմք լրացյալ հարաբերություն:

Ամենաջողակ «ամենահաջողակ, ամենահաս» (ՀՕԵ, 303, 8) բառի դիմաց ՆՀԲ-ն (1, 66) նշում է թովմա Արծրունու գործածությունը (10-րդ դ.): Ահա Օձնեցու օրինակը. «Արդ՝ շնորհիւ կամաց բարձրելոյն եւ ամենաջողակ սիրոյ Հոգւոյն սրբոյ շնորհեցաւ ինձ Յովհաննէսի կաթողիկոսի առնել է-րորդ ժողով ի Մանագկերտ գեաւոյ...» (478): Ածականը ձևավորվել է *ամեն* և (*հ*)*աջողակ*, հիմքերից, սյսինքն՝ այստեղ առկա է լրացում + ածական լրացյալ կառույցը: Նշված օրինակում, նախորդի նման, բառը հանդես է եկել նախադաս որոշիչ կիրառությամբ:

Աստուածաբոյլք և աստուածածաղիկք ածականների դեպքում ՆՀԲ-ն վկայակոչում է միայն Ոսկիփորիկը (12-րդ դարից հետո), սրանցից առաջինը նշանակում է «աստվածագումար» (ՆՀԲ, 1, 322), իսկ երկրորդը՝ «Աստվածով ծաղկած» (ՆՀԲ, 1, 324): Մինչդեռ բառերը գործածվել են Օձնեցու երկում՝ որպես ստորոգելիական վերադիր. «...ոչ եւս կոչին երախայք, այլ հոյլք *աստուածաբոյլք*, եւ ճրագունք յարալուցեալք...» (ՍԺ, 489): Եվ ՆՀԲ-ն հենց Օձնեցու վերը նշված օրինակն է բերում:

Ղասագրիմ (-եցայ) «գրիլ ի դաս ինչ» կրկնասեռ բայի դիմաց ՆՀԲ-ն (1, 597) վկայակոչում է միայն «Ճառնտիրը» և Ասողիկին (11-րդ դ.): Մինչդեռ այն անցյալ դերբայով գործածվել է Օձնեցու երկում՝ հոգնակի ուղղականով որպես ենթակա. «...եւ անգրաւական կենացն հանդի-

պեալք մնացին, *ղասագրեալք* ընդ անմարմնոցն երամս» (ՍԺ, 489): Բառը կազմվել է լրացում (խնդիր) + ստորոգյալ հարաբերությամբ (*ղաս* և *գրիմ*):

Խորահիմն «խոր հիմնավորված, հիմք գոյացրած» (ՀՕԵ, 304, 31) բառի դիմաց ՆՀԲ-ն (1, 972) նշում է միայն Անանիա Նարեկացու օրինակը: Մինչդեռ այն գործածել է նաև Օձնեցին. «...Ե օրեայ աւուրքք ընդ պահս Սուրբ Պատեքին, անբաժանելի և անորիշ յօրինելով, ցանկ հաստատելով, եւ *խորահիմն*, հաստայատակ, լայնապարիսպ ամրահաստատելով, եւ *խորահիմն*, հաստայատակ, լայնապարիսպ ամրափակեալ քառասունօրեայ պահօք...» (485): Թեև ՆՀԲ-ն նշում է որպես ածական, բառն այստեղ մակբայական կիրառություն է ստացել՝ դառնալով ձևի պարագա:

Բարդությունը կազմված է *խոր* և *հիմն* հիմքերից, որոնք լրացում (պարագա) + բայահիմք (անցյալ դերբայ) հարաբերությամբ են կապակցված:

Մեղսամակարդութիւն «մեղսամակարդ լինելը, մեղքի մեջ թաղված լինելը» իմաստով գոյականը գործածվել է հետևյալ հատվածում՝ որպես հիմունքի պարագա. «...ըստ դուզնաքեայ *մեղսամակարդութեանս*, ի յաստեաց ախտից երիկեան *վայրահայեաց* բնութեանս» (ՍԺ, 476): ՆՀԲ-ն (2, 249) վկայակոչում է Ոսկիփորիկը՝ բերելով Օձնեցու օրինակը, սակայն Օձնեցու անունը չի նշում:

Բառն ածանցվել է *մեղսամակարդ* ածականից (նույն տեղում)՝ *-ութիւն* ածանցով: Այն կազմված է *մեղս* և *մակարդ* «մածունի մերան» բառերից:

Օձնեցու անունը չի հիշատակվում նաև *բանաստեղծել* բառի դեպքում, այլ վկայակոչվում է միայն Գրիգոր Մագիստրոսը (ՆՀԲ, 1, 435): Բառը «ստեղծաբանել, ճարտարորեն ասել» իմաստով (ՀՕԵ, 306, 62) գործածվել է հետևյալ օրինակում. «...որպէս զի Հոգւովն սրբով, որ է ուղեկից սկզբնեալ ընթերցուածոց մեկնումն արարեալ *բանաստեղծեցես...*» (493): Բառի սերող հիմքը, բնականաբար, *բանաստեղծ* գոյականն է (ՆՀԲ, 1, 435):

Բռնագբօսաբար «բռնի, բռնագբօսիկ ձևով» (ՀՕԵ, 310, 53) բառի դիմաց ՆՀԲ-ն (1, 515) օրինակ է բերում միայն Հովհաննէս կաթողիկոսից (10-11-րդ դդ.), մինչդեռ այն գործածվել է «խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնանալոյ Բանին Քրիստոսի» ճառում. «Դարձեալ թէև զերկու բնութիւնսն *բռնագբօսաբար* ի միում դիմի ախորժեմ յարակալել՝ ոչինչ այնպէս թերևս կարիցեն ցուցանեն կատարելութիւն ի նմա» (195): Թեև *բռնագբօս* բառը ՆՀԲ-ում տրված չէ, այնուամենայնիվ նրանից բաղադրված շատ ձևեր կան՝ բազմաթիվ վկայություններով, և

կարելի է ենթադրել, որ բառը ձևավորվել է հենց այդ հիմքից՝ ընդունելով *-աբար* մակբայակերտ ածանց:

Նույն երկում Օծնեցին գործածել է բարձրայոն «մեծամտաբար» (ՀՕԵ, 307,4) բառը, որի դեպքում ՆՀԲ-ն (1, 464) վկայակոչում է միայն հետագա հեղինակների՝ Գրիգոր Նարեկացուն և Հովհաննես Սարկավագին (12-րդ դ.): Օծնեցու երկում այն պարագայական կիրառություն է ստացել. «...որ յաղաբողոնս պերճացեալ պաճուճին, և բարձրայոն պարծին ըստ սակի ամբարտաւանից...» (192):

Ածականը կազմված է բարձր (բարնալ) և յոն բաղադրիչներից, որոնք միացել են որոշիչ + որոշյալ հարաբերությամբ:

Ջուզաճանապարհ «ճանապարհին կից, ուղեկից» ածականի դեպքում ՆՀԲ-ն (1, 748) վկայակոչում է միայն Գրիգոր Նարեկացուն, թեև այն գործածվել է նաև Օծնեցու նշված երկում՝ որպես ստորոգելիական վերադիր. «Այսպես մեք ըստ Սիւնհողոս ժողովոյն, որ անուանի *զուզաճանապարհ*, խոստովանիմք զՈրդին Աստծոյ...» (ԶԲՄ, 194):

Բառի *զոյգ* և *ճանապարհ* հիմքերը հատկացուցիչ + հատկացյալ կառույցի նշանակությամբ են կապակցված, որտեղ հատկացուցիչը հետադաս կիրառություն ունի:

Սրովբէագոչ «սերովբեների գոչման պես» (ՀՕԵ, 310, 62) բառի դիմաց ՆՀԲ-ն (2, 762) վկայում է Նարեկացուն, Շնորհալուն, մինչդեռ այն հանդիպում է Օծնեցու վերը նշված երկում՝ որպես որոշիչ. «Այսպես և համարձակախոսն Եսայեալ յաթոռ բարձրութեան և վերացելոյ զՈրդի տեսանէ նստեալ և նմա *սրովբէագոչ* ծայնն գերեքսրբեանն աղաղակեալ սրբասացութիւնս...» (198):

Սրովբէ ասորական արմատից («առաջին կամ երկրորդ կարգի հրեշտակ») (ՀԱԲ, IV, 284) և *գոչ* բնածայնական բառից (արմատական *գ* ծայնից՝ չ աճականով է ձևավորվել այս ածականը (ՀԱԲ, I, 580): Այս բառում ևս առկա է հատկացուցիչ + հատկացյալ հարաբերություն:

Օտարացեղութիւն «օտար լինելը, տեսակով խորթ լինելը» (ՀՕԵ, 307, 10) բառի դիմաց ՆՀԲ-ն (2, 1030) դարձյալ նշում է հետագա հեղինակների՝ Չազիկ Արծրունի, Խոսրովիկ Թարգմանիչ (Ը դար)՝ չնշելով Օծնեցու օրինակը, որտեղ այն ուղիղ խնդրի կիրառություն է ստացել. «Այսպէս *օտարացեղութիւն* սոցա ի մէջ առեալ և յաւէտ բացընկեցիկ յուղղափառ ասանդիցն լեալ և զհիւսակս Գ. կղիս...» (192): Այստեղ *-ութիւն* ածանցով բաղադրված գոյականի հիմքն է՝ *օտարացեղ* (ՆՀԲ, 2, 1030):

Դժոխըմբեր «անտանելի, դժխալի» (ՀՕԵ, 307, 16) բառի դիմաց ՆՀԲ-ն (1, 616) վկայում է Հովհաննես կաթողիկոսին (11-րդ դ.)՝ չնշե-

լով Օծնեցու օրինակը. «...և ես առաւել զիրաբորքն բոխեն չարութիւն և աճեցուցեն *զդժոխըմբեր* զգացումնն» (192): Այստեղ ևս նորակազմությունը որոշչային կիրառություն է ստացել:

Ածականը կազմված է *դժոխ* իրանական արմատից (ՀԱԲ, 664) և *ըմբեր* բառից, որը չենք գտնում ՀԱԲ-ում ո՛չ առանձին, ո՛չ էլ *դժոխըմբեր* բառից, որը չենք գտնում ՀԱԲ-ում (1, 664): Ջահուկյանը *ըմբեր* բառը (*ըմբերանել*) բացատրում է որպես *ընդ-ի* տարբերակ *ըմ-ի* և *բեր* արմատի կապակցություն, ինչպես *ըմբռնել* բայում (ՋՆՏ, 244):

«Ընդդէմ երևութականաց» երկում գործածված են այսպիսի երկու բառեր՝ *ձևացութիւն* և *խելայեղ*:

Ձևացութիւն «ձև առնելը, ձևացում» (ՀՕԵ, 278, 192) բառի դեպքում վկայակոչվում է Անանիա Շիրակացին: Մինչդեռ այն գործածել է նաև Օծնեցին՝ որպես ուղիղ խնդիր. «Եւ համայն հիացեալ եմ մեծապէս զնորանշանդ ի քեզ տեսանելով *ձևացութիւն*» (79): Գոյականը կազմվել է *ձևանալ* (ՆՀԲ, նույն տեղում) բայի անցյալի հիմքից՝ *-ութիւն* ածանցի միջոցով:

Մյուսը *խելայեղ* (ՆՀԲ, 1, 938) ածականն է, որի դեպքում ՆՀԲ-ն նախ վկայում է Նարեկացուն, ապա Գրիգոր Սկևռացուն, Ճառընտիրը, հետո նոր՝ Օծնեցուն: Բառը հոլովվում է *ի* վերջադրական հոլովմամբ: Օծնեցին այն գործածել է ուղիղ ձևով՝ որպես որոշիչ. «...ոչ այդպէս *խելայեղ* և ջաղջախ մտածութեամբ, որպէս թէ միոյն ի միւսմէն բաց բարձեալ...» (ԸԵ, 63):

Բառի երկու՝ *խել* և *յեղ* «փոխել, մեկ վիճակից մի ուրիշը դարձնել» հիմքերը կապակցված են լրացում (խնդիր) + բայափոխ լրացյալ հարաբերությամբ՝ ձևավորելով հոդակապով իսկական բարդություն:

«Ընդդէմ պաւղիկեանց» երկում գործածված են այս կարգի երկու բառեր՝ *դիւաշունչ* և *դիւաբնակ*, որպես ստորոգելիական վերադիրներ.

«Վասն որոյ *դիւաբնակք* և *դիւաշունչք* լինէին սպասաւորք...» (37):

Դիւաբնակ ածականն ունի «ղիվական շունչ ունեցող» (ՆՀԲ, 1, 628) նշանակություն, որի դիմաց ՆՀԲ-ն առաջինը նշում է Մովսէս Կաղանկատվացուց մի օրինակ, ապա՝ Օծնեցու գործածությունը: *Դիւաբնակ* ածականն ունի «ուր դևն է բնակվում» իմաստը (ՆՀԲ, 1, 627), որի դիմաց բերվում են մի շարք վկայություններ, որոնցից նախավերջինն է Օծնեցին: Երկու դեպքում էլ, կարծում ենք, նորակազմությունները ձևավորվել են բառակապակցությունների բայերի գեղչումով:

ՆՀԲ-ում ներկայացված են նաև բառեր, որոնց դիմաց վկայված են հետագայի գործածություններ, բայց դրանք առկա են նաև «Նախահաւաքումն պատմութեան այսմ բանից՝ Յովհաննու Վերծանաւղի» եր-

կում: Այդ բառերից են՝ աղանդակից, արտածգել, եռահրաշ, ըստարտուղիմ, յետսդարձութիւն, յոգնահեղք:

Աղանդակից գոյականը, որ նշանակում է «միևնույն աղանդից» (ՆՀԲ, 1, 33), հոլովվում է *ի* - *ա* խառը հոլովմամբ՝ եզակի և հոգնակի սեռական հոլովներում ունենալով *աղանդակցի*, *աղանդակցաց* ձևերը: ՆՀԲ-ն այս բառի գործածության օրինակներ է բերում 13-րդ դ. հեղինակից, «Ճառքնտիրից», բայց ոչ Օծնեցուց: Թեև վերը նշված երկում բառը հոգնակի հայցականով գործածվել է որպես միասնության խնդիր. «...այր ճշմարիտ եւ լի հաւատովք Հոգւոյն, ազդ առնէր շրջաբերական թղթովք ամենայն աշխարհիս Հայոց՝ մի՛ ումեք ճանապարհորդէի ի քաղաքն Երուսաղեմ, եւ մի՛ պղծել հաղորդութեամբ ընդ Յոբնաղի ձեռնադրեալս եւ *աղանդակիցս*» (ՆՊ, 109): Իսկական բարդության երկու բաղադրիչները կապակցված են լրացում + ածական հարաբերությամբ:

Արտածգել «դուրս ձգել» (1, 378) չեզոք բայի դիմաց ՆՀԲ-ն վկայություններ է բերում միայն Թովմա Արծրունուց և Գրիգոր Նարեկացուց: Սակայն այն գործածվել է նաև Օծնեցու երկում. «Ո՛չ զշաբաթ, այլ զկիրակէ քան շաբաթուն ակն մահ է, թէ *արտածգէ* ոք՝ յանցեալսն արտածգի, ո՛չ յապառնինս...» (122):

Բայը ձևավորվել է *արտ*- նախածանցով՝ *ձգել* բայից: Նույն տեղում կա նաև *արտածգութիւն* գոյականը՝ հետագայի վկայությամբ:

Ընդամենը մեկ վկայություն է բերված *եռահրաշ* «երիցս հրաշալի» (ՆՀԲ, 1, 661) ածականի դիմաց՝ 12-րդ դ. հեղինակից, մինչդեռ այն գործածել է նաև Օծնեցին. «Աստանաւր բացայայտեցից նախ եւ առաջին *գեռահրաշ* եկեղեցեացն գերկաքանչիւրոցն...» (ՆՊ, 121):

Բարդության *հրաշ* ասորական արմատին (ՀԱԲ, III, 131) միացել է *եռ* բառը: Ի դեպ, Աճառյանը ևս նշում է *եռահրաշ* բառը՝ վկայակոչելով հետագա հեղինակների:

Ըստարտուղիմ բնիկ հայերեն *ուղի* (ՀԱԲ, III, 595) արմատով ձևավորված բայը «ճամփից դուրս ելնել» իմաստն ունի (ՆՀԲ, 1, 787), ինչպես և *զարտուղիմ* բայը: ՆՀԲ-ում միայն մեկ գործածություն է նշվում՝ հետագայի հեղինակից: Կրավորածև խոնարհումով այն հանդես է եկել նաև Օծնեցու երկում. «...որպէս եւ յայնժամ արինաւորքն՝ հաստատեալքն՝ ի Քրիստոս, *ըստարտուղեցան* նախանձախնդիրք արինացն Մովսիսի» (110):

Բառի հիմքն է *արտուղի* «զարտուղի» ածականը, որին ավելացել է *ըստ* նախդիրը և բայի խոնարհման վերջավորությունը:

Իսկ *յոգնահեղ* «բազմագեղ, հորդառատ» (ՆՀԲ, 2, 364) ածականի դիմաց նշված է միայն Ստեփանոս Սյունեցու թարգմանությունը: «Զի թեպէտ եւ բնութեամբ աստեղք յերկինս եւ *յոգնահեղք* են, սակայն ի ծագել արեգականն՝ առ չհամեմատել բազմաց նոյն ծածկին» (112) նախադասության մեջ բառը գործածվել է որպես ստորոգելի: Այն կազմված է *յոգն* «շատ, բազում» և *հեղ* հիմքերից, որոնց միջև առկա է լրացում (պարագա) + բայախիմք հարաբերություն:

Միայն «Ճառքնտիրից» վկայություններ են բերված *յետսդարձութիւն* «հետսություն, ապստամբություն» բառի դիմաց (ՆՀԲ, 2, 357): Այս բառը *վասն* նախադրության հետ պատճառի պարագայի կիրառությամբ գործածված է նաև Օծնեցու երկում. «...սակայն վասն առհասարակ *յետսդարձութեանն* ամենեցուն ուղիղ հաւատոյն եւ զարտուղելոյս յարքունական ճանապարհէն՝ հիացեալ դողամք» (100): *Յետ* բառը կապակցվել է *դարձութիւն* «դառնալը» (ՆՀԲ, 1, 605) գոյականին:

Այսպիսով՝ բառերի վերոհիշյալ խմբի մեջ ևս գերակշռում են ածականները (16), որոնցից ինը բարդ կազմություն ունի, մնացածը՝ ածանցավոր: Բարդ ածականների բաղադրիչներն արտահայտում են խնդիր լրացում + բայախիմք (աթոռընկալ, ամենաջողակ և այլն), պարագա լրացում + բայախիմք (*յոգնահեղ*, *խորահիմն* և այլն), որոշիչ + որոշյալ (երբեմն՝ բառակապակցության բայի զեղչումով, ինչպես՝ *բարձրայօժ*), հատկացուցիչ + հատկացյալ (*գուգաճանապարհ*), ածական + լրացում (*եռահրաշ*) շարահյուսական հարաբերություններ: Նշված նորակազմություններում առկա են բառակազմական հետևյալ կաղապարները. ա) պարզ հիմք + (հողակապ) + բաղադրյալ հիմք (*ամեն + աջողակ, աստուած + ա + ծաղիկ, դժոխ + ըմբեր, եռ + անձնական, երեք + սրբեան*), բ) հիմք (պարզ կամ բաղադրյալ) + վերջածանց (*հանգստ + սրբեան*), գ) պարզ հիմք + (հողակապ) + պարզ հիմք (*աթոռ + ընկալ, աղանդ + ա + կից, աստուած + ա + բոյլ, բարձր + ա + յօժ, դիւ + ա + բնակ, դիւ + ա + շունչ, եռ + ա + հրաշ, խել + ա + յեղ, խոր + ա + հիմն, յոգն + ա + հեղ, սրովբէ + ա + գոչ*):

Նորակազմ բայերը յոթն են, որոնցից երկուսը նախածանցմամբ են ձևավորվել (*արտա + ձգել, շարա + խառնել*), ընդ որում՝ հունաբան հայերենի կերտած ածանցներով, մեկը նախդրավոր կազմություն ունի (*ըստ + արտուղիմ*), մեկը՝ հիմք + բայական վերջավորություն կաղապարով (*աղախնայ (<աղախնեայք) + են, բանաստեղծ + ել*), երեքն էլ՝ խնդիր լրացում + բայ հարաբերությամբ, այսինքն՝ հիմք + հիմք կաղապարով, հողակապով կամ առանց հողակապի (*դաս + ա + գրիմ, խորհրդ (<խորհուրդ) + ա + բերեմ*):

Գոյականները ինն են, որոնք կազմվել են հիմք (բաղադրյալ) + -ու-
 քին անցանց (ծնաց + ութին, մեղսամակարդ + ութին, օտարացեղ +
 ութին), հիմք + (հողակապ) + հիմք (աղանդ + ա + կից, կանոն + գլուխ,
 գուգ + ա + ճանապարհ, յետս + դարձութին) կաղապարներով:

Ընդամենը մեկ մակբայ կա, որը ձևավորվել է հիմք + -աբար ան-
 ցանց կաղապարով (բռնագբոս + աբար):

Այս դեպքում ևս գործ ունենք բառակազմական նույն կաղապարնե-
 ի հետ:

Աղյուսակ 10. ՆՀԲ-ում ժամանակագրորեն ոչ ճիշտ վկայված նորակազմ
 բառերն ըստ առանձին խոսքի մասերի (32)

գոյական (8)	անական (16)	բայ (7)	մակբայ (1)
աղանդակից աստուածաբոյլ գուգաճանա- պարհ կանոնգլուխ ծնացութին մեղսամակարդու- թին յետսդարձութին օտարացեղութին	աթոռընկալ ամենաջողակ աստուածածա- ղիկ բարձրայօն դժոխըմբեր դիւաբնակ դիւաշունչ եռահրաշ եռանձնական երեքսրբեան խելայեղ խորահիմն հանգստական յոզնահեղ սրովթէագոչ տաժանաւոր	աղախնայել արտածգել բանաստեղծել դասագրիմ ըստարտողիմ խորհրդաբերել շարախառնել	բռնագբոսա- բար

ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՒ ՆՈՐ ԻՄԱՍՏՈՎ ԿԻՐԱՌՎԱԾ ԲԱՌԵՐ

1) ԿՐՈՆԱԵԿԵՏԵՑԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ
 7-8-րդ դդ. հայ առաքելական եկեղեցին ծանր կացության մեջ էր
 գտնվում. մի կողմից քաղկեդոնականությունը, իսկ մյուս կողմից սկիզբ
 առած զանազան աղանդները ջլատում, պառակտում էին թե՛ հայ ժո-
 ղովորի և թե՛ նրա եկեղեցու միասնականությունը: Ահա այս պայմաննե-
 րում է իր գործունեությունը ծավալել հայ առաքելական եկեղեցու ար-
 ժանահիշատակ հովվապետներից մեկը՝ Հովհաննես Իմաստասեր
 Օձնեցին: Նա կաթողիկոսական իր ողջ առաքելությունը նվիրել է հենց
 այդ պառակտիչ տարրերի դեմ մղվող պայքարին: Բացի իր ծավալած
 հոգևոր գործունեությունից (ժողովներ, քարոզներ), նա միաժամանակ
 ստեղծել է գրական այնպիսի երկեր, որոնցով մարտահրավեր է նետել
 գործող աղանդներին՝ մեկ առ մեկ քննելով ու հերքելով նրանց դրույթ-
 ները: Այս առումով ուշագրավ են «Ընդդէմ երեւութականաց» և «Ընդ-
 դէմ Պաղիկեանց» ձառերը:

Օձնեցին միաժամանակ զբաղվել է եկեղեցու բարեփոխումներով և
 եկեղեցական կանոնների համակարգման աշխատանքներով՝ գրելով
 «Ատենաբանութին», «Յաղագս կարգաց եկեղեցւոյ», «Յաղագս կար-
 գաց եկեղեցւոյ Քրիստոսի», «Վասն մեծի աւուր միաշարաթին», «Սակս
 գիշերային ժամու», «Նախահաւաքումն պատմութեան այսմ բանից՝
 Յովհաննու Վերծանաւղի» աշխատությունները՝ լի իմաստասիրական
 մոտեցումներով ու ընդհանրացումներով:

Ակնհայտ է, որ Օձնեցին իր ամբողջ գրական գործունեությունը
 նվիրել է հայ եկեղեցուն և նրա հիմքերի ամրապնդմանը: Եվ բնական
 է, որ իր աշխատություններում նա պիտի գործածեր հենց կրոնատեկե-
 ղեցական տերմիններ և անվանումներ: Օձնեցու գործածած տերմին-
 ների մի մասն իր ստեղծածներն են, իսկ մի մասն էլ նախկինում արդեն
 եղած, բազմիցս գործածված բառեր են:

Չնայած տերմինների ուսումնասիրության և համակարգման աշխա-
 տանքները բավականին ուշ են սկսվել հայ իրականության մեջ, այ-
 նուամենայնիվ դրանք գործառել են լեզվի վաղ գրավոր փուլերում,
 քանզի չի կարող խոսք լինել որևէ գիտության, մշակույթի ճյուղի մա-

սին, եթե այն իր տերմինաբանությունը չունի: Իսկ մինչև Հովհաննես Օձնեցու հանդես գալն արդեն հայ մշակույթն ու գիտությունը որոշակի հիմնավոր ուղի էին անցել՝ շուրջ չորսդարյա պետականորեն ամրագրված քրիստոնեական հավատքով և երեքդարյա գիր ու գրականությամբ: Գրերի գյուտից հետո թարգմանվել էին Աստվածաշունչը, Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ» աշխատությունը և այլ արժեքավոր գործեր:

Հիմնադրվել և խորապես արմատավորվել էր հայ պատմագրությունը: Թարգմանական գրականության հետ պահանջ էր առաջացել ստեղծելու նոր բառեր, նոր տերմիններ, և արդեն 5-րդ դարում հայ իրականության մեջ սկզբնավորվել էր հունարան հայերենը: Եվ այս բոլորն իրենց ներդրումն էին ունեցել հայերենի տերմինաբանության ձևավորման գործում: Բացի այդ, քրիստոնեության պետականացումը և նրա հետ կապված շարականների, եկեղեցական ճառերի ստեղծումը և որոշակի դեր են խաղացել հայերեն տերմինների, մասնավորապես կրոնակեղեցական տերմինների ստեղծման գործում: Այսպիսով՝ մինչև Հովհաննես Օձնեցու հանդես գալը հայերենն արդեն ունեցել է գիտական տերմինների որոշակի պաշար: Սակայն նա չի բավարարվել եղածով և իր երկերում գործածել է ոչ միայն իր նախորդների կողմից ավանդված տերմիններ, այլև ինքն է դրանք ստեղծել՝ տերմինային արժեք տալով հայերենում գործառույթ մի շարք բառերի:

Օձնեցու գործածած տերմինները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ կրոնակեղեցական և իմաստասիրական (փիլիսոփայական): Բաժանումը պայմանական է, քանի որ Օձնեցու երկերը, ճիշտ է, գրված են աստվածաբանական, կրոնական թեմաներով, սակայն լի են իմաստասիրական տարրերով: Դա պայմանավորված է ոչ միայն Օձնեցու անհատական լեզվամտածողությամբ, յուրօրինակ ոճով, այլև նրանով, որ իր ապրած ժամանակներում աստվածաբանությունն ու դավանաբանությունը փոխադարձաբար շաղկապված էին փիլիսոփայությանը: Այդ է պատճառը, որ երբեմն դժվար է որոշել Օձնեցու գործածած տերմինների դասակարգման սահմանը:

Այնուամենայնիվ, փորձելով հաղթահարել ընտրության այդ բարդությունը, ստորև ներկայացնում ենք տերմինների այն շարքը, որ խմբավորել ենք կրոնակեղեցական բնույթի տերմիններ անվան տակ: Այդ տերմիններն են՝ *անձն, գորբաղայ (գուրղայ), դէմ, երևութական, կաթողիկէ, հերձուածող, շունչ, որդեհայրութիւն* և այլն: Վերոհիշյալ տերմինները և մի քանի այլ տերմիններ ևս (դրանց մասին կխոսվի ավելի ուշ) Օձնեցին գործածել է հիմնականում «Ընդդէմ երևութականաց»

ճառում, որտեղ նա անխնա ձևով հերքում է այն բոլոր դրույթները, որոնք հայ իրականություն էին թափանցել Հուլիանոս Հալիկառնացու հետևորդների կողմից: Երևութականները ծայրահեղության էին հասցնում քրիստոնեության մեջ միաբնականության գաղափարը⁵⁹: Օձնեցին իր ճառում հերքում է այդ ուսմունքը՝ օգտագործելով բազմաթիվ կրոնակեղեցական բնույթի բառեր ու տերմիններ:

Անձն բառը, որ իր սովորական իմաստով նշանակում է «ինքնություն, իմացական և բանաւոր էակի՝ դիմաւ որոշելոյ» (ՆՀԲ, 1, էջ 192), Օձնեցու տերմինային համակարգում թարգմանվում է որպես «հոգի» (ՀՕԵ, 266, ժան. 21): ՆՀԲ-ն բերում է բառի այս կարգի գործածության բազմաթիվ վկայություններ, որոնց թվում՝ նաև Օձնեցուց: Տերմինը բազմիցս գործածվում է «Ընդդէմ երևութականաց» ճառում: Սևա այդ գործածություններից մեկը. «... զի՞ արդ իշխես ասել զաներևոյթ և զանմարմին *անձնն* Որդւոյ մարմնածնապէս անձնանալ յարգանդի կուսին, եթէ ոչ զկատարեալ մեր բնութիւն» (ԸԵ, էջ 68):

Գորբաղայ (գուրղայ) բառը որպես սովորական բառ նշանակում է «խմբաքանակ, սահման, խումբ» (ՆՀԲ, 1, 565, ՀՕԵ, 294, ժան. 5): Բառն ըստ Աճառյանի (ՀԱԲ, I, 568)՝ ասորական փոխառություն է: Իսկ ՆՀԲ-ի հեղինակները գտնում են, որ այն եբրայերեն «սահման» նշանակությամբ բառից է ծագում: Որպես եկեղեցական տերմին՝ *գորբաղայ* նշանակում է «երեքական սաղմոսների ամբողջություն»: ՆՀԲ-ն այս տերմինի համար վկայություններ է բերում Դազար Փարպեցուց, Խոսրովիկ Թարգմանչից, Օձնեցուց և ուրիշներից: Օձնեցին բառը գործածել է «Յաղագս կարգաց եկեղեցւոյ Քրիստոսի» ճառում՝ *գորբաղայ*, իսկ «Սակս զիշերային ժամո» ճառում՝ *գուրղայ* ձևերով. «Եւ եթէ ընդէ՞ր եօթն *գորբաղայիւք* կանոնեալ է սաղմոսն Դաւթի» (ՅԿԵՔ, 83) և «Արդ եօթն *գուրղայիւք* կարգեալ ըստ եօթն դարու կենցաղոյս, և եօթն անգամ յաւուրն օրինի աստուած» (ԱԳԺ, 110):

Դէմ բառը որպես սովորական բառ նշանակում է «դեմք, առաջ գլխոյ, երեսք» (ՆՀԲ, 1, 612): Օձնեցին այն գործածել է տերմինային նշանակությամբ, այն է՝ «անձ» (ՀՕԵ, էջ 266, ժան. 20): ՆՀԲ-ն տերմինի գործածության համար վկայակոչում է նախ Դավիթ Անհաղթի կողմից Դիոնիսիոսի թարգմանությունը, հետո այլ հեղինակների, այդ թվում՝ Օձնեցուն և ուրիշների: Սևա բառի տերմինային գործածություններից մեկը «Ընդդէմ երևութականաց» ճառում. «... և զնոյն միաւո-

⁵⁹ Մ. Պապյան, նշվ. աշխ., էջ 101:

րեալ ընդ իւրումն դիմի և բնութեան, մի *դէմ* և մի բնութիւն ասի և հանդերձ մարմնովն» (ԸԾ, 65):

Տերմինը հանդիպում է նաև «խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնանալոյ Բանին Քրիստոսի, եւ ընդդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս» ճառում. «...ըստ որում և միտք մարդոյ ոչ բաժանի յիւրմէ մարմնոյն, այլ մի *դէմ*, մի բնութիւն բովանդակ մարդն» (էջ 196):

Երեսութեան բառը կազմված է *երես* (*երեսիմ*) առանձին անգործածական արմատից, *-ոյթ* և *-ական* ածանցներից: Որպես սովորական բառ՝ նշանակում է՝ «առերևույթ, երևելի, տեսանելի» (ՆՀԲ, 1, 679): Բառը որպես տերմին գործածել է միայն Օծնեցին՝ մեկ անգամ աշխատության վերնագրում, երկու անգամ բնագրում: Ավգետյանը որպես այդ տերմինի հոմանիշ բերում է *առաջօրեանք*, *ապականադաւանք*, *անկրականք* ձևերը (տես ՎՕԵ, 264, ծան. 1): Օծնեցին նկատի ունի նրանց, ովքեր ճշմարիտ մարդեղությունը առերևույթ էին ընդունում: Ահա տերմինի գործածություններից մեկը՝ «...որպէս Պանդորոսն ասէ, եթէ իւրումն մնալով՝ *զերեսութեան* միայն զձեռն զինքեամբ արկաւ, առ աչօք և ձեռք եւեթ ցուցեալ զմերն ի կուսէ...» (ԸԾ, 67):

Կաթողիկէ բառը ևս գործածված է որպես տերմին: Այն հունական փոխառություն է (ՎԱԲ, II, 482) և նշանակում է «ընդհանուր, տիեզերական, բոլորին վերաբերող» (ՆՀԲ, I, 1032): ՆՀԲ-ն բերում է տերմինի գործածության հին և նոր վկայություններ. «Ապա թէ ի չարաչար արմատոց անտի ոչ ես չարագոյն ընծիւղեալ շառաւիղ, խոստովանեցիս ընդ մեզ, մանաւանդ թէ ընդ հանրական *կաթողիկէ* եկեղեցւոյ զմի և զնոյն Քրիստոս աստուած միանգամայն և մարդ» (ԸԾ, 74):

Շունչ բնածայնական բառը, որ նշանակում է «ներքին օդ» (ՆՀԲ, 2, 490, ՎՕԵ, 285, ծան. 319), ունի նաև տերմինային արժեք՝ «հոգի» իմաստով: ՆՀԲ-ն տերմինի գործածության համար վկայակոչում է Օծնեցուն և նախորդած, և հաջորդած հեղինակների: Օրինակ՝ «Նոյնպէս և ըստ *շնչոյն* երկեսու տատամսեցաւ, տրտմեցաւ», «Տրտում է ասէ *շունչ* իմ մինչև ի մահ» (ԸԾ, 88):

Որպես կրոնատեղեցական տերմին Օծնեցին գործածել է *որդեհայրութիւն* բառը (ՎՕԵ, 276, ծան. 152). «Որ ետես զիս՝ ետես իմ». եթէ զտեսանելիս զայս՝ առ բնութեանն տեսութիւն զոր ունի Որդի զՀօր, ոչ առաջնորդեցես մտացն աչաց, ոչ միայն թէ *որդեհայրութիւն* ի ներքսածեալ մութանես, այր և մարմին ևս Հօր շնորհեսցես՝ որպէս և Որդւոյ» (ԸԾ, 77): Բառը կազմված է *որդի* և *հայր* բառերից՝ բաղադրված *-ութիւն* ածանցով: Տերմինն արտահայտում է սաբեյան խառնակ և մոլորյալ տեսությունը՝ որդին հոր հետ մի անձ համարելը (ՆՀԲ,

II, 529): ՆՀԲ-ն բերում է նաև բառի այս կարգի գործածության ավելի վաղ շրջանի օրինակներ (4-րդ դ. հայրապետ Աթանասի ճառերը, Կյուրեղ Երուսաղեմացուն):

Տերմինների մյուս խումբն անվանել ենք *իմաստասիրական* կամ *փիլիսոփայական* տերմիններ: Ինչպես արդեն նշվել է, Օծնեցու երկերը զրկած են ոչ միայն հայոց եկեղեցու նկատմամբ ունեցած խոր նվիրվածությամբ և հավատքով, այլև իմաստասիրական յուրահատուկ մոտեցմամբ: Հայտնի է, որ Հովհաննես Օծնեցին նշանակալից դեր է կատարել հայ փիլիսոփայական մտքի զարգացման գործում: Հայոց իմաստասեր կաթողիկոսը, որ իր փիլիսոփայական հայացքներով հակված է եղել Արիստոտելի աշխարհընկալմանը, գոյի մեկնաբանման հարցում առաջնությունը տվել է գաղափարից դեպի իրն ընթացող ճանապարհին (տես ՎՕԵ, 12):

Օծնեցու երկերի լեզվառձական մի շարք առանձնահատկություններ գլխավորապես պայմանավորված են նրա յուրօրինակ աշխարհընկալումով և իմաստասիրական հայացքներով, ինչպես նաև նրա՝ հունաբան հայերենով ստեղծագործելու փաստով: Եվ, ինչպես նշվում է Օծնեցու երկերի աշխարհաբար թարգմանության Առաջաբանում⁶⁰, ոճական այդ բազմազանությամբ է պայմանավորված այն, որ Օծնեցու երկերն ըստ արժանվույն չեն գնահատվել և հայ ընթերցողին հասու չեն եղել մինչև հիմա: Քանզի Օծնեցի կարդալու և ճիշտ հասկանալու համար գիտելիքների զգալի պաշար և խոր աշխարհընկալում է պահանջվում ընթերցողից: Եվ այս առումով ընթերցողը խորապես պարտական է Օծնեցու երկերի թարգմանչին՝ Վ. Համբարձումյանին, որ ամենայն ճշգրտությամբ ու գիտական բարեխղճությամբ է թարգմանել մեծ մտածողի երկերը՝ հավատարիմ մնալով հեղինակի աշխարհայացքին և ստեղծագործական նպատակադրվածությանը: Թարգմանությանը կցված ծանոթագրությունները հնարավորություն են տալիս ճիշտ ընկալելու և հասկանալու Օծնեցու երկերում գործածված հատկապես իմաստասիրական բնույթի տերմինների նշանակությունները: Այս տերմիններն էլ հենց լրացնում, ամբողջացնում են Օծնեցու երկերի տերմինաբանական համակարգը: Դրանք են՝ *անայլայլութիւն*, *անպարիմանալի*, *բաղկանալ*, *բնութիւն*, *երկախումբ*, *հերձուածօղ*, *միաւորութիւն*, *տնօրէնութիւն*, *ի մէնջից* և այլն:

Անայլայլութիւն բառը, որ կազմված է *այլ* ձևի կրկնությամբ, *ան-* և *-ութիւն* ածանցների միջոցով, սովորական իմաստով նշանակում է

⁶⁰ Տես Հովհաննես Օծնեցի, Երկեր, էջ 12:

«անփոփոխություն», իսկ որպես իմաստասիրական տերմին՝ նշանակում է «անփոխարինելիություն» (ՀՕԵ, 266, 25): Այս իմաստով բառը գործածվել է նաև Կյուրեղ Ալեքսանդրացու «Գիրք պարապմանց» երկում (ՆՀԲ, 1, 106): Վկայություն կա նաև 11-րդ դ. պատմիչ Ասողիկից: Ահա տերմինի գործածություններից մեկը «Ընդդեմ երեւութականաց» երկում. «Ոչ մի է միութենէն գերկաքանչիւրոցն ուրանամ զկատարելութեան զմին հրաժարեմ ասել կատարելութիւն միութիւն *յանայլայլութեան, և անայլայլութիւն* ի միութեան...» (էջ 65):

Անպարհմանալի բառի սովորական իմաստն է «անբովանդակելի», իսկ որպես տերմին նշանակում է «անիմանալի, ամբողջովին անիմանալի» (ՆՀԲ, 1, 229, ՀՕԵ, 266, ծան. 27): Օծնեցուց առաջ տերմինն օգտագործել է նրա ուսուցիչը՝ Թեոդորոս Քրթենավորը, իսկ հետագայում՝ ուրիշներ: Բառը կազմված է *ան-*, *պար-* նախածանցներից և *իմանալ* բայից: «Ահաւասիկ ըստ անձառելի և *անպարհմանալի* խառնմանն և միաւորութեան համարձակիմք ասել մի բնութիւն (ԸԵ, 65):

Բաղկանալ բառն իր սովորական իմաստով նշանակում է «զօղիչ, բաղադրիչ» (ՆՀԲ, 1, 428): Բառը կազմված է *բաղ-* հունաբան ծագումով ածանցից, որի նախնական իմաստն էր «կից, հար» և *կայ* անստույգ արմատով բաղադրված *կայանալ* բայից (ՀԱԲ, 1, 395): Որպես տերմին՝ *բաղկանալ* նշանակում է «հաստատվել, կայանալ» (ՀՕԵ, 281, ծան. 247): Օծնեցին տերմինն օգտագործում է «գոյանալ, առաջ գալ» իմաստով: Այս իմաստով տերմինն օգտագործել են նաև Դավիթ Անհաղթը, Անանիա Եկեղեցականը: «Քանզի ապականութիւն ներլինելութեանն ներհականայ. և ներհակքն որ կարեն համանգամայն ի միում և նոյն ժամանակի *բաղկանալ*, իսկ քաղց և ծարաւ և աշխատութիւն և տրտմութիւն և հոգք և երկիւղք և ցասումն՝ ևս և անզիտութիւն և որ սոցին նմանք համանգամայն ընդ ներլինելութեանն բանի առեալ լինի մարդուս» (ԸԵ, 82-83):

Բնութիւն (natura) բառը, որ կազմված է *բուն* պահլավական «հիմ, արմատ, ծագում, բուն» իմաստն ունեցող արմատից (ՀԱԲ, 1, 413), որպես սովորական բառ նշանակում է «էություն, իսկություն, գոյացություն», իսկ որպես տերմին՝ «անձ, ենթակայություն» (ՆՀԲ, 1, 499, ՀՕԵ, 266, ծան. 22): ՆՀԲ-ն այս տերմինի կիրառության համար վկայակոչում է նախ Օծնեցուն հաջորդած հեղինակների, այնուհետև Օծնեցուն, Ներսես Շնորհալուն և ուրիշների: «Իսկ ի գերազանց և ի սքանչելի միաւորութենէն ոչ ինչ է արգել միութեան՝ զամենայնսն խոստովանել ի Քրիստոս մի դէմ, մի անձն, և մի նորա *բնութիւն* (ԸԵ, 64): Տերմինը

բազմիցս գործածվում է Օծնեցու գործերում, մասնավորապես «Ընդդեմ երեւութականաց» ճառում:

Երկախումբ բառը կազմված է *երկու* և *խումբ* բաղադրիչ բառերից: Օծնեցին այն գործածել է որպես տերմին՝ «երկուսը միասին» իմաստով, թեև այդ իմաստով բառն առաջինը գործածել է Թեոդորոս Քրթենավորը՝ «Ճառ ի սուրբ խաչն» ճառում (ՆՀԲ, 1, 678, ՀՕԵ, 267, ծան. 29): «Ձսոյն և երանելին Յուդիոս ասէ Հռովմայ հայրապետ. «Որ ասէ զմարմինն առ անեղն աստուած միաւորութեամբ աստուածային և երկրպագեալ, ևս *զերկախումբն* իբրև մի անառնելի աստուած, երանեալ եղիցի» (ԸԵ, 65):

Էրթուածոյ բառը սովորական իմաստով նշանակում է «ձեղքուած, ձեղք, ծերպ» (ՆՀԲ, 2, 94): Որպես տերմին՝ ՆՀԲ-ն բերում է բազմաթիվ վկայություններ տարբեր հեղինակներից, բայց ոչ Օծնեցուց: «Այս են երջանիկ հարանցն աստուածաբանական դաւանությունքն. որովք բանիւք դու *հերթուածոյ* առասես զնոսա, և ոչ զանզիտես և զարհուրիս՝ զթունալից որպէս զօձի զլեզուդ քո շարժել ընդդէմ նոցա, որք արտանեակք և սպասաւորք եղեն Բանին աստուծոյ» (ԸԵ, 78):

Միանձնականութիւն բառը որպես սովորական բառ նշանակում է «ունօղ զմի զանձն կամ զանձնաւորութիւն՝ հակադրեալ երեքանձնական մի տերութեան» (ՆՀԲ, 2, 270): Բառը տերմինային նշանակությամբ գործածել է միայն Օծնեցին՝ «միասնական հոգի, միահոգիություն» իմաստով (ՆՀԲ, նույն տեղում, ՀՕԵ, 266, ծան. 26):

«Ապա ուրեմն մի բնութիւն և մի դէմ Քրիստոսի, եթէ պարտք համառօտագոյնս ասել, ոչ է ըստ նոյնութեան բնութեան կամ ըստ *միանձնականութեան*. զի այս զերկոսին ի միասին գրեթէ զրկեսցէ, զաստուած ի մարդն լինելոյ, և զմարդն յաստուածանալոյ...» (ԸԵ, 65):

Միաւորութիւն բառը, որ դարձյալ *մի* արմատից է կազմված, նշանակում է «միություն, միասնություն» (ՆՀԲ, 2, 273, ՀՕԵ, 267, ծան. 30): Օծնեցին, հետևելով իր մի քանի նախորդներին (Կյուրեղ Ալեքսանդրացի և ուրիշներ)՝ բառը գործածել է որպես տերմին՝ «միանալը, միավորելը, անշփոք խառնում» իմաստով. «Առ երկոսին հաւասարապէս ունի երանութեան բան, երկախումբ խոստովանեալ ըստ բնութեանց, և մի ըստ *միաւորութեան*» (ԸԵ, 65):

Տնօրէնութիւն բառը, որ սովորական իմաստով նշանակում է «տնտեսություն, հոգաբարձություն», որպես տերմին՝ նշանակում է «խորհուրդ մարդեղության, Աստծո որդու իջնելը և մարդանալը» (ՆՀԲ, 2, 886, ՀՕԵ, 269, ծան. 55): Վկայություններ կան Օծնեցուն նախորդած

թեան ճանապարհ, և արդ *բազմահետք* և բազմաշաւիղք եղաք» (ԱՅԳ, 4): Բնագրին համապատասխանում է նաև աշխարհաբար տարբերակը (ՀՕԵ, 25, 13):

Բազմերախտ բառը հոլովվում է *ի* հոլովմամբ և ունի հետևյալ իմաստները՝ «խիստ երախտավոր, երախտիքը շատ» և «բազում՝ շատ երախտիքով եղած՝ առաջ եկած»: Վերջինիս դեպքում ՆՀԲ-ն (1, 418) վկայակոչում է միայն Օծնեցու հետևյալ հատվածը. «...գոր մանաւանդ թէ և յառաջագոյն իսկ արժան էր յիշել իբրև զմեծագործ և *զբազմերախտ* ի Քրիստոսէ պարզեալ մեզ աւանդ» (Ատ., 7):

Բազմերախտութիւն գոյականի համար ևս ՆՀԲ-ն վկայում է միայն Օծնեցուն՝ նույն իմաստով. «...մանաւանդ թէ եղազ ներքսանկութեան նմա՝ յանշնորհակալուս *բազմերախտութեան* աստուծոյ ներհորդեսցի» (Ատ., 11):

Նահապետական բառի համար ՆՀԲ-ն (2, 402) տալիս է երկու իմաստներ՝ «նահապետին բնորոշ՝ հատուկ» և «հայրապետական»: Առաջինի դեպքում վկայակոչում է Գրիգոր Նարեկացուն, իսկ երկրորդի դեպքում բերում է Օծնեցու հետևյալ օրինակը. «*Նահապետական* նախագահութեամբ ձեռնարկեն զնախապատուելին պատուել...» (Ատ., 22): Բառն իր լրացյալի հետ թարգմանվել է *հայրապետական գահերեցությամբ ձեռնարկում են... ձևով* (ՀՕԵ, 51, 90):

Շրջաբերական բառի դեպքում նշված են երեք իմաստներ՝ «պարբերական, շրջանավոր», «թուղթ, հրովարտակ», «թափառական» (ՆՀԲ, 2, 495): Առաջին իմաստի դեպքում նշված են շատ գործածություններ, երկրորդ իմաստի դեպքում՝ Օծնեցու «Կանոնները» և հետագա հեղինակներ, իսկ երրորդի դեպքում բերվում են միայն հետագա գործածություններ: «Հրովարտակ» իմաստով բառը գործածվել է նաև «Նախահաւաքումն պատմութեան այսմ բանից Յովհաննու Վերծանաւղի» երկում. «...ազդ առնէր *շրջաբերական* թղթովք ամենայն աշխարհիս Հայոց՝ մի ունեք ճանապարհորդել ի քաղաքն Երուսաղէմ...» (ՆՊ, 109):

2) Նոր իմաստային կիրառություններից առանձնացվել են հետևյալ գոյականները՝ **ապաբանութիւն**, **ծանօթութիւնք**, **հոգևորութիւն** և **յոբելեան**: Ինչպես և նկատելի է, բացի վերջինից, մյուսները ածանցավոր կազմություններ են:

Ապաբանութիւն ածականի հիմնական իմաստն է «պատասխանատվություն, ջատագովություն» (ՆՀԲ, 1, 268): Սակայն Օծնեցին այն գործածել է «անպատասխան մնալը, պապանծումը» իմաստով, որը թարգմանվում է հենց այդպես՝ *անպատասխան մնալը* (ՀՕԵ, 941,

142): Ահա բնագրային գործածությունը. «Վկայեա՛ այնոցիկ բանից, որոնց աստուածն Բան վկայեաց ընտրել, և մի՛ զքոյդ արդարացուցանէր՝ ի բազմաց կրեալ ստգտանս և *ապաբանութիւնք*» (ԸԵ, 76):

Ծանօթութիւնք շատ գործածական բառի դիմաց ՆՀԲ-ն (1, 1010) տալիս է հետևյալ իմաստները՝ «ընտանություն, բարեկամություն», «ճանաչում, հմտություն խելամտություն», «նշան ծանոթական և որոշիչ, նշանակ, ցուցակ»: Նշված բազմաթիվ իմաստներից գատ՝ Օծնեցին բառին տվել է նոր իմաստ, և միայն ինքը գործածել է այդ իմաստով՝ «հատկություն կամ առանձնավորություն ամեն մի անձի՝ Աստծուց». «Ոչ *ծանօթութիւնքն* յիրաքանչիւր ունեքէ բարձեալ լինի, և ոչ առանձնաւորական նմանութիւնքն յայլում ունեք երևալ» (ԸԵ, 78): Բառը թարգմանված է՝ (*ոչ*) *հատկություններն են ամեն մեկից վերացած լինում* (ՀՕԵ, 97, 163):

Հոգևորութիւն բառի առաջին իմաստը հետևյալն է՝ «հոգևորն գոլ ունելն զհոգևոր առաքինութիւն, կամ շնորհս հոգւոյն սրբոյ» (ՆՀԲ, 2, 113): Իսկ ահա «բանական հոգի առնելը, հոգիանալը» իմաստով այն գործածել է միայն Օծնեցին. «Աստուածային էր հոգիացեալ *հոգևորութեամբ*» (ԸԵ, 75), որ և թարգմանվում է այսպես. «Աստվածային էր հոգիացած՝ բանական հոգի առնելով» (ՀՕԵ, 95, 150):

Նորիմաստային կիրառությամբ է հանդես եկել նաև **յոբելեան** բառը, որի հիմնական իմաստն է՝ «յիսնամեա ժամանակ, որ և եօթնիցս եօթնեակ ամ կամ յիսներորդ ամ» (ՆՀԲ, 2, 363): Բառը Օծնեցու երկում գործածվել է նաև «հիսնօրյա ժամանակ՝ զատկից մինչև պենտեկոստե» իմաստով. «Եւ ապա յետ այսր յոբելինի, տեսանեմք յերրորդ ժամու զշնորհս. Հոգւոյն սրբոյ հեղեալ յառաքեալսն...» (ՅԿԵ, 97): Բառը թարգմանվում է *հիսնօրյակ ձևով* (ՀՕԵ, 173, 13): Այս հատվածից գատ՝ ՆՀԲ-ն վկայում է նաև մեկ հատված «Կանոններից»:

3) Այս խմբի մեջ որոշակի թիվ են կազմում նաև բայերը. դրանք են՝ **արտորոշեալ** (արտորոշեմ), **իրաւացոյց** (իրաւացուցանեմ), **յեղանալեմ**:

Արտորոշեմ բայի դիմաց ՆՀԲ-ն նշում է «ի բաց որոշել» իմաստը և բերում շատ վկայություններ (ՆՀԲ, 1, 382), իսկ բառի «զանազանել, որոշել» իմաստի տակ նշում է նախ Անանիա Նարեկացուն, ապա՝ Օծնեցուն: Հաշվի առնելով ժամանակային գործոնը՝ պետք է նկատել, որ այս իմաստով առաջին գործածությունը Օծնեցուն է պատկանում: Ահա այդ օրինակը՝ Օծնեցու երկից. «Եւ *արտորոշեալ* ճանաչի ի նոսա դէմն այսուիկ. Հօր ծնօղ գոլ. Որդւոյ ծնունդ. իսկ Հոգւոյ ելումն» (ԸԵ,

79), որ թարգմանված է այսպես. «Եւ նրանցում զանազանվելով իմացվում է այս անձը...» (ՀՕԵ, 99, 184):

Իրաւացուցանեմ բառը ևս Օծնեցու երկում նոր իմաստային կիրառութեամբ է հանդես եկել: ՆՀԲ-ն (1,872) բառի «ստուգել, հավաստի դարձնել» իմաստի տակ միայն Օծնեցուն է հիշատակում. «Արդ որպէս ընկալաւ զբաղցնուլն տէր՝ հաստատուն կերակուրն շնչեցեալ ի նմանէ, և զծարաւելն *իրաւացոյց* խոնաւութեանն ծախեցելոց որ ի մարմին» (ԸԵ, 89): Բառը թարգմանված է «*ճշմարտեց*» ձևով (ՀՕԵ, 113, 332): Ի դեպ, որպէս բառի հիմնական իմաստներ՝ նշվում են՝ «իրավունք տալով կամ առնելով արդարացնել», «ուղիղ դատել և ընտրել», որոնց դիմաց բերվում են շատ վկայություններ:

Յեղանակեմ (եցի) ներգործական բայը ևս Օծնեցու մոտ նոր իմաստային կիրառութեամբ է հանդես եկել. այն է՝ «դարձնել, այլտեսակ դնել», թեև այս իմաստի տակ ՆՀԲ-ն (2, 353) բերում է 10-12-րդ դդ. վկայություններ՝ չնշելով Օծնեցու օրինակը. «...և դնել զայլոյ ուրուք անուն, յորմէ հեռի են ասացուածքն. և կամ թէ *յեղանակել* զբանն՝ ոչ որպէս ինքն խնդրի» (ԸԵ, 76):

Այնուամենայնիվ, բառը թարգմանված է՝ *նենգափոխել* (ՀՕԵ, 94, 137): Այս իմաստներից զատ՝ բառն ունի նաև «յեղուլ, յեղափոխել», ինչպէս նաև «ստէպ կրկնել, երկրորդել» իմաստները, որոնց դիմաց ՆՀԲ-ն շատ հեղինակների է վկայում:

4) Նորիմաստային կիրառութեամբ է գործածվել նաև *անբաղայապէս* մակբայը, որի իմաստներից ՆՀԲ-ն նշում է հետևյալները՝ «անպարսաւ» (այս իմաստի տակ կա նաև *անբաղապէս* տարբերակը) և «աներկբա, անշուշտ, անկասկած» (ՆՀԲ, 1, 118): Երկրորդ իմաստի դեպքում էլ ՆՀԲ-ն բերում է միայն Օծնեցու հետևյալ կիրառությունը. «Եւ որ ի ժողովի բազմամարդութեամբ զուրախականսն ոչ փափաքէ գտանել, տրտմականացն՝ ծածկաբար ընդ էսն անցանելով՝ *անբաղայապէս* հանդիպեսցի» (Աւ., 11): Բառն աշխարհաբարով թարգմանված է՝ *անշուշտ* (ՀՕԵ, 35, 31):

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լինելով հիմնավոր կրթություն ստացած անձ, իմաստասեր հայրապետ՝ Հովհաննես Օծնեցին չէր կարող հեռու լինել դասական գրաբարի ավանդույթներից, ինչպէս նաև չմասնակցել դեռևս 5-րդ դարի երկրորդ կեսից սկզբնավորված հունաբան հայերենի լեզվաշինական աշխատանքներին: Հունաբան ոճի հետևութեամբ նա կերտել է բազմաթիվ բառեր: Ու թեև հունաբան դպրոցի ազդեցությունը Օծնեցու երկերում դրսևորվում է հատկապէս բառակազմության ոլորտում, սակայն ինչ-որ չափով այն զգալի է նաև քերականության մեջ:

Պետք է նշել, որ Օծնեցու լեզուն իր հիմնական դրսևորումներով հարազատ է դասական գրաբարին և առանձնապէս աչքի չի ընկնում շեղումներով ու հունաբան ոճի՝ ծայրահեղության հասնող և հայերենում չարմատավորված իրողություններով, որոնց մասին բազմիցս խոսվել է տարբեր բնույթի քերականական աշխատություններում:

Հովհաննես Օծնեցու երկերում քերականական բնույթի շեղումներն ավելի քիչ տեղ են զբաղեցնում, և դա միանգամայն բնական է, որովհետև ժամանակի գրավոր լեզվին հիմնավորապէս տիրապետող հետև ժամանակի գրավոր լեզվին հիմնավորապէս տիրապետող մտածողն ու իմաստասերը, հայոց հոգևոր առաջնորդը հազիվ թէ իր հեղինակային լեզվում թույլ տար հին գրական հայերենի նորմայից նման կարգի խիստ շեղումներ, որքան էլ լեզուն հետզհետե դառնում էր ոչ այնքան կենդանի ու ըստ ամենայնի գործառու, քան որ նախկինում էր: Այդուհանդերձ նրա լեզվի ձևաբանական և շարահյուսական համակարգերում նկատելի են ինչ-ինչ շեղումներ, որ կարելի է պայմանականորեն անվանել լեզվական առանձնահատկություններ:

Թերևս կարելի է առանձնացնել քերականական բնույթի մի քանի օրինաչափություններ, որոնք հատուկ են Օծնեցու երկերին: Դրանք սահմանափակվում են հոլովման և խոնարհման համակարգերում որոշակի իրողությունների առանձնահատուկ դրսևորումներով: Շարահյուսական մակարդակում այդ շեղումները կապված են այլ, որ շարկապների ակտիվ գործածության, նախդիրների որոշ զուգորդումների հետ, անորոշ դերբայ + տրական հոլով, անորոշ դերբայ + հայցական հոլով,

անցյալ դերբայ + սեռական հոլով կառույցների հետ, որոնց գործածությունը հունարան դպրոցի ազդեցության հետևանք է:

1. Խոսելով հոլովական համակարգի մասին՝ հարկ ենք համարում նշելու հետևյալը. քերականական աշխատություններում հիշատակվում է, որ գրաբարում սահմանափակ կիրառություն ունեցող, սեռական և տրական հոլովների *-ոյր, -ոջ, -ու՛մ* վերջավորությունները «հունարան հեղինակների մոտ, գլխավորապես Պորփյուրի «Ներածության» թարգմանության մեջ ընդհանուր կիրառություն են ունեցել»⁶²: Օծնեցու երկերում ևս դրանց գործածությունն ակնհայտ է, և կարելի է բերել բազմաթիվ օրինակներ՝ *-ոջ* և *-ու՛մ* վերջավորություններով, ինչպես. «...որ ոչ զառ յինքենն ևեթ բաւականանայր շտեմարանել յիմունս *ոգւոջ* զբարին» (Ատ., 2), «... և փոխանակ նոցա զբարեվայելուչսն և զօգտակարագոյնսն *ի տեղւոջն* արծանացուցանել» (Ատ., 23), «...այլ աւագան քարեղն *յեկեղեցւոջն*, և կամ անդն մերծ յեկեղեցին ի մկրտատունսն» (Ատ., 4, 26), «...զի *ի միում տեղւոջ* վայել է լինել պսակին, որ ընդունի գպսակն» (Ատ., 4, 27), «...յայլում *տեղւոջ* մակծայնէ Աստուած չարչարեալ» (ԸԵ, 73), «Ըստ *գրեցելումն*, եթէ «Ետուր երկիւղածաց քոց նշան» (ԸՊ, 44), «...զայս ամենայն ի *հինգշաբաթոջն* ոչ գտանեմք այսպէս եղեալ» (ՍԺ, 487), «...եւ որք յուրբաթու եւ ի *չորեքշաբաթոջ* յիշատակ առնեն մարտիրոսաց՝ մեղք են» (ՍԺ, 491) և այլն: Սակայն *-ոյր* վերջավորությամբ այս կարգի բառեր Օծնեցու երկերում չեն հանդիպում:

Ի դեպ, Օծնեցու երկերում երբեմն հանդիպում են բառեր, որոնց ներգոյական հոլովի իմաստը ձևավորվել է *-ու՛մ* վերջավորությամբ՝ տրականի և *ի* նախդրի հետ կամ առանց դրա: Օրինակ՝ «...հաւաքեսցուք ի հեղեղագնաց կենցաղոյս՝ զգայութեանցն որ ի մեզ գկարծութիւն, *ի հոգեկանումն* պահպանելով խորհրդարանի» (ԸՊ, 46), «... եթէ ոչ *վերջումն* այնմիկ ապականահալած և մահալուծող գիշերին...» (Ատ., 22), «Արդ յառաջասացեալ օրինութիւնքն *զներկայումս* և զարդիս ունի զդիտաւորութիւն (34ԵԲ, 87), «... որ այսպիսի սքանչելեօք բարձրացոյց զայգս մարդկան, անխռով պահպանեալ *ի ներկայումս*» (34ԵԲ, 89), «... և առաքելական խաղաղական քարոզութեամբն վարիլ *ի կենցաղումս*» (34ԵԲ, 89):

Այս երևույթը ևս, անշուշտ, հունարան հայերենի առանձնահատկություններից է, թեև պետք է նշել, որ Օծնեցին այս դեպքում նախապատ-

⁶² Ս.Ղ. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 2006, էջ 182:

վությունը տվել է դասական գրաբարի կանոններին, և նոր ձևն այդքան էլ գործուն չէ:

Օծնեցու երկերում հաճախ հանդես են գալիս հոլովական գուգածություններ: Այսպես՝ *գիշեր* բառի համար սովորական է *ո* պարզ հոլովումը (*գիշերոյ*), և միայն ներգոյական հոլովի իմաստը ձևավորվում է *ի* նախդրի և *գիշերի* ձևի միջոցով (*ո* հոլովման պատկանող բառերի ներգոյականի իմաստը եզակի և հոգնակի թվերում ձևավորվում է հայցական հոլովով)⁶³: Օծնեցու երկերում *ի* հոլովիչը հաճախ հանդես է գալիս նաև բառի սեռական, տրական հոլովածներում՝ «...եթէ ոչ վերջումն այնմիկ ապականահալած և մահալուծող *գիշերին* երթեալ հանդիպանամ» (Ատ., 22), «Տեր աստուած փրկութեան իմոյ, ի տուէ կարդացի և *գիշերիս* առաջի քո (34ԵԲ, 89), «Ի հրաշակերտ փառազարդութեանց աստուծոյ զամենայն զոլ բարեօք տեսանեմք. ևս առաւել զգերագանց զպայծառ և զանեղ լոյսն սահմանող տուրնջեան և *գիշերի ...*» (34ԵԲ, 83): Կամ՝ «... զի ոչ գիտէք յորում ժամու տէրն ձեր գայցէ. յերեկորե՞այ, թէ ի մէջ *գիշերի*, թէ ի հաւախօսի, և թէ յառաւօտին» (Ատ., 16):

Ի դեպ, *առաւօտ* բառի դեպքում ևս նկատելի է անցում *ի* հոլովման, մինչդեռ բառի համար սովորական է *ու* հոլովումը: Եթե *գիշեր* բառի դեպքում *ի*-ով ձևը սակավ է հանդիպում (ոչ ներգոյականի իմաստով, իհարկե), այս դեպքում կենսունակ է հենց *ի* հոլովմամբ գործածությունը՝ թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվերում: Օրինակ՝ «Երկշաբաթին *ըստ առաւօտին* պաշտմանն խորհրդեանն կարգեալ են» (34ԵԲ, 87), «...և ընդունիցիս զոգիս մեր անխարդախ կանխել առ քեզ *ի մէջ գիշերոյ և առաւօտի* զկամաւորն մատուցանել քեզ պատարագ բանաւոր» (ՍԳԺ, 114), «...յերեկօրեայ, թէ ի մէջ գիշերի, թէ ի հաւախօսի, թէ *յառաւօտին*» (Ատ., 16), «Եւ յաղագս այսորիկ օր ըստ օրէ յամենայն աւուր *յառաւօտինսն*, հրեշտակային իմն զոգցես թէ...» (Ատ., 18), «Արդ են թանց սորա *առաւօտին* ասացեալ սաղմոսքն թուով վեց» (Ատ., 20), «Արժան է յերեկորինս և *զառաւօտինսն* զկնի ամենայն պաշտամանն՝ նուագել զՍուրբ աստուածն» (Ատ., 4, 28), «Իսկ կիրակէին աւուր *առաւօտինքն*՝ այսգունի խորհրդով յօրինեալ բերէ զկարգն իւր» (Ատ., 4, 29) և այլն:

⁶³ Ա.Ա. Արրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 38:

Շեղում է նկատվում *տարի* բառի հոլովման դեպքում. այն թեև հոլոված է *n* հոլովմամբ, սակայն առկա է *z* վերջնահնչյունի անկում, այսինքն՝ բառը հանդես է գալիս *տարոյ* ձևով՝ «Զի գոր օրինակ քառասնօրեայ պահօքն *զտարոյ* գմեղսն քաւեաց» (ՎԱՍ, 102): Նույն եղանակով է հոլովված նաև *զինի* բառը, այն է՝ *զինոյ* (ՍԳԺ, 114): *Տր* բառի բացառականում երբեմն հանդիպում է *ի տեռնէ* ձևը՝ փոխանակ *ի տեառնէ* սովորական ձևի: Այսինքն՝ այստեղ առկա է *եա* երկբարբառի պարզեցում: Օրինակ՝ «Քանզի պարտ է՝ նախ ի բաց կալ ի ծառայեցուցանօղ *տեռնէ*» (Ատ., 9):

Հոլովվող մյուս խոսքի մասերին պատկանող բառերի դեպքում ակնհայտ զուգաձևություններ և շեղումներ չկան: Թերևս միայն դերանունների դեպքում կարելի է առանձնացնել որոշ շեղումներ: Այսպես՝ բացառական հոլովի *-ից* վերջավորության առկայությունը *ի մէնջից* ձևում անսովոր է 7-8-րդ դդ. համար: Օրինակ՝ «Եւ կամ գորս *ի մէնջից* աստի Հոգին սուրբ գարթոյց՝ լինել զկնի առաջնոյն լուսաւորիչք...» (ԸԵ, 81): Հայտնի է, որ այն կենսունակություն է դրսևորել ավելի ուշ ժամանակներում: Թեև պետք է նշել, որ *-ից* վերջավորությամբ այլ ձևեր չեն հանդիպում:

Նույն *մեք* դերանվան բացառական հոլովում հանդիպում է նաև *ի մեզէ* դարձյալ անսովոր ձևը, օրինակ՝ «...այնպիսին *ի մեզէ* նզովս ընկալցի, եւ կրեսցէ պատուհաս սաստիկ եւ անհնարին» (ՍԺ, 484), թեև ավելի հաճախ հանդես են գալիս դասական գրաբարի *ի մէնջ, ի ձէնջ* ձևերը:

Օձնեցին գործածել է *մերոյինս* ձևը, այսինքն՝ ստացական *մեր* դերանվան *մերոյ* սեռականին ավելացել են *ի* հոլովիչ, *ն* և *ս* հոդեր. «... և ոչ բնութիւնն *մերոյինս* մարմնոյ զգեցեալ էր Տեառնն...» (ԲԲՄ, 194): Նույն սկզբունքով է ձևավորվել *քոյինը* ձևը. «Սուտ համարեսցի լինել *զքոյինը* ջաղջախ և սխալականդ խորհրոց իմաստ, և մի գաստուածայինն անսուտ գիր» (ԸԵ, 75):

2. Խոնարհման համակարգը ևս իր հիմնական գծերով արտացոլում է դասական գրաբարի օրինաչափությունները և առանձնապես աչքի չի ընկնում շեղումներով: Այստեղ Օձնեցին գերծ է մնացել հունաբան հայերենի որոշ արհեստական նորամուծություններից: Այնուամենայնիվ, նկատելի են որոշ շեղումներ:

Ուշագրավ է հատկապես սահմանական եղանակի կրավորածն անկատարի եզակի 3-րդ դեմքում *-իւր* վերջավորության հանդես գալը. այն, սկզբնավորվելով հունաբան հայերենի շրջանում, մեծ տարածում

է ստացել հետագա դարերում և արմատավորվել հատկապես լատինաբան հայերենի շրջանում⁶⁴: Այս ձևն ակտիվ գործածություն է ստացել նաև 10-րդ դարի հայ պատմագրության մեջ⁶⁵: Օձնեցու երկերում բավականին մեծ կենսունակությամբ է հանդես եկել *-իւր* վերջավորությունը, ինչպես՝ «Զի՞արդ և տղայ երևեալ. խանձարրապատեցաւ և *կաթնաբոյծ եղանիւր*» (ԸԵ, 67), «... ոչ իմանալով՝ թէ՛ յաղագս առ երկնայինն միաւորութեան որ երկրէն էր՝ *ասիւր* այս այսպէս» (ԸԵ, 76), «...յայնժամ ընդ լծով մահու և ապականութեան մտեալ *հնազանդիւր*» (ԸԵ, 85), «...և խելագարեալ, զինքն արարած *խոստովանիւր* լինել» (ԸՊ, 36), «...մարմնավոր տեսլեամբ ի սկզբանն ի վերայ ազգակցին իւրոյ իջեալ *հանգչիւր*» (ԸՊ, 43), «Քանզի յաստուածային խաղաղութիւն ժամանեալ մարդկային բնութիւն, *խորհիւր* ազատել ի չարին վրոգվմանց սուրբ եկեղեցի...» (ՅԿԵՔ, 82), «...վասն զի յայնմ ժամանակի առ կատարելահասակս ոմանս *կատարիւր* երախայութեան կարգ...» (Ատ., 9) և այլն:

Բայական համակարգում նկատելի է ևս մեկ ուշագրավ երևույթ. դա *-ուած* վերջավորության հանդես գալն է: Գրաբարյան *-եալ* դերբայական վերջավորության կողքին երբեմն հանդիպում են նաև *-ած*-ով բաղադրված ձևեր, որը, ինչպես նշում է Ս. Ղազարյանը, «խորացել է հետագա դարերում՝ միջին հայերենի շրջանում»⁶⁶: Ըստ Գ. Ջահուկյանի՝ այս վերջավորությունը, բայական *ու* հիմքակազմիչ տարրի հետ գործածվելով, վերածվել է *-ուած-ի*, որն էլ հետագայում տարածվել է նաև *ու*-ով հիմք չունեցող ձևերի վրա (հմմտ. *գործուած-գործեմ*)⁶⁷:

Այսպես՝ «...և ըստ իւրաքանչիւր հաւատոցն բանից *ընթերցուածս* յաստուածային գրոց հանգոյն միմեանց զուգեալ և եղեալ է» (Ատ., 9), «...գորս ի դէպ է անսին խոստովանել զնորինս ծնունդս, և կամ *վիժածս*» (Ատ., 9), «...ընկալ բարերար և մարդասէր տէր զամենեցուն *ժածս*» (Ատ., 4, 31), «Մինչև գթացեալ ստեղծմեր աղաչանս, *զխնդրուածս* ...» (Ատ., 4, 31), «Մինչև գթացեալ ստեղծմեր պատկերին եղև պատկեր *ստեղծուածոյն* ...» (ԸՊ, 42), «Ետուր ծօղի պատկերին եղև պատկեր *ստեղծուածոյն* ...» (ԸՊ, 42), «Քանզի ոչ եկն յեղծանել ստեղծոյն *երկիւղածաց քոց նշան*» (ԸՊ, 44), «Քանզի ոչ եկն յեղծանել ստեղծոյն

⁶⁴ Տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, Գրաբարի գործածությունը որպէս գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., Երևան, 1990, էջ 299:

⁶⁵ Տե՛ս Շ. Ռ. Ղուկասյան, 10-րդ հայ պատմագրության լեզուն, աստենախոսության սեղմագիր, Երևան, 2004, էջ 16:

⁶⁶ Ս. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 194:

⁶⁷ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Հին հայերենի վերջածանցների ծագումը, «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», պրակ 2, Երևան, 1998, էջ 32:

զստեղծեալն յինքենէ ստեղծուած» (ԸԵ, 64), «Իսկ նախ քան զկատարածն յարութիւն տալ մարդկային բնութեանս...» (Ատ., 6), «Եւ ամենին զամենայնն ընդ իս բերէի զհարսնական յօրինուածոյն զգեստ...» (Ատ., 1), «...և ոչ միով իւր կամին ճառս ի մէջ բերել, կապելով ամենին զինքեանս ընդ ընթերցուածոյն» (Ատ., 12), «Զի կամս երկիրաճաց իւրոց առնէ տէր, և խնդրուածաց նոցա լսէ» (ՅԿԵՔ, 82) և նման ձևերի շատ կարելի է հանդիպել Օծնեցու երկերում, թեև գրաբարյան ավանդական կազմութիւնն անհամեմատ ավելի շատ է հանդես գալիս: Նշված ձևով բաղադրված բառերը հանդես են գալիս տարբեր շարահյուսական պաշտոններով՝ հոլովված կամ չհոլովված տարբերակներով:

Բայական համակարգում նկատելի է ևս մեկ ուշագրավ երևոյթ: Դասական մատենագրության մեջ, ինչպէս նշում է Ա. Աբրահամյանը, «ի խոնարհիչը անորոշ դերբայում սովորաբար փոխարինվում է ե խոնարհիչով, և ստացվում է այնպէս, որ այդ դերբայում ե և ի խոնարհման բայերը ունենում են նույն ձևը»⁶⁸: Օծնեցու երկերում հանդիպում են նորակազմ երկու բայեր, որոնք գործածված են անորոշի -ի վերջավորությամբ: Դրանք են՝ *դնանիլ* և *վերջադարձիլ*:

3. Նախդիրների գործածության հետ կապված՝ կարելի է նշել հետևյալը: Հայտնի է, որ նախդիրները հին հայերենում 6-ն էին՝ *առ, ի, ըստ, ընդ, զ, ց*, որոնք, զուգորդվելով տարբեր հոլովածների հետ, ձևավորում էին որոշակի իմաստային կառույցներ: Այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր նախդիր գործածվում է կոնկրետ այս կամ այն հոլովով դրված բառի հետ և ձևավորում համապատասխան կառույցը: «Յուրաքանչյուր բառ, -գրում է Ա. Աբրահամյանը,- միաժամանակ մեկից ավելի նախդիր չի կարող ունենալ: Երբ նախդիր ունեցող բառը նոր նախդիր է ստանում, նախորդը դուրս է ընկնում, նոր նախդիրը գրավում է նրա տեղը»⁶⁹: Իսկ այն, որ նախդիրներից երկուսը կամ երեքը կարող են գործածվել միևնույն կառույցում միաժամանակ, բացակայում է քերականական աշխատություններում: Նշվում է միայն *առ* և *ի* նախդիրների գործածությունը բացառական հոլովի հետ, որտեղ ունենում ենք *առ + ի* (*առ ի յայտնելոյ*)⁷⁰: Մնացած նախդիրների հետ կապակցվելիս բացառականի *ի*-ն զեղվում է, օրինակ՝ *զնմանէ, ընդ աջմէ, օր ըստ օ*

⁶⁸ Ա.Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, էջ 97:

⁶⁹ Նշվ. աշխ., էջ 228:

⁷⁰ Տե՛ս նշվ. աշխ., նույն տեղում:

րէ և այլն: Մինչդեռ Օծնեցու երկերում հանդիպում են նախդիրների զանազան զուգորդումներ՝ տարբեր նշանակություններով: Այսպէս՝ *ի* նախդիրը երբեմն կրկնվում է ձայնավորով սկսվող բառերում, և ունենում ենք *ի + յ*, ինչպէս. «...աղաղակեմք *ի յընդհանուր* ամենայն արարածոցս տեսակս...» (Ատ, 19): Նման գործածությունները բազմաթիվ են Օծնեցու երկերում, օրինակ՝ «Այս է որոշեալ զշունչն *ի յիւրմէ* մարմնոյն» (ԸԵ, 89), «զի աղօթք մեր ժամանեցցեն *ի յականջս* տեսառն զօրութեանց» (ՅԿԵՔ, 91), «...յորում աւուր փայլեն արդարքն որպէս զարեզակն *ի յարքայութեան երկնից*» (ՅԿԵՔ, 93), «...որ ստորահոսեալն *ի յանդունդս* խաւարին տարտարոսին...» (ՔԲՄ, 193) և այլն: Անշուշտ, *ի* նախդիրի կրկնակի գործածությունը հանդիպում է նաև Օծնեցուն ժամանակակից մյուս հեղինակների գործերում, մասնավորապէս Սեբեոսի «Պատմության» մեջ կան այդպիսի գործածություններ⁷¹:

Հաճախ միասնաբար հանդես են գալիս *զ, առ, ի* նախդիրները, ինչպէս՝ «...ուստի համարձակահայեաց լինելով մեք ի նոսա, և *զառ ի նոցանէ* ասացեալսն զաղօտաբար զինչունն առեալ ճշմարտապէս նուագեսցուք ասելով» (կառույցը թարգմանված է «նրանց համար» (ՅԿԵՔ, 90, ՀՕԵ, 162), «...և համախմբելով ընդ փայտին անշնչապէս *զառ ի փայտէն* բառնայր զպատուհասն մեղացն Արամայ» («փայտից», ՅԿԵՔ, 98, ՀՕԵ, 174), «...այլ ի ձեռն անապական մահուն *իւրոյ զառ ի մեզ* մահն խափանէ» («մեզ համար», ՔԲՄ, 196, ՀՕԵ, 245), «...և ի նմանութիւն ինքեան բերէ *զառ ի Մովսեսէ* եղեալսն» («Մովսեսի հետ», ՔԲՄ, 196, ՀՕԵ, 245), «զառ *ի նմանէ* ի վայր մնացեալսն ի մերումս լլլով մարմնի զվշտամբերութիւն» («նրանից», Ատ., 4, ՀՕԵ, 24), «Դարծեալ Առաքեալքն զհոլով ժամանակս ի տաճարին *զառ ի Քրիստոսէ* նոցուն կատարէին աւանդեալ խորհուրդս» («Քրիստոսից», Ատ., 6, ՀՕԵ, 27), «...և իմաստակիր մտաւորութեամբ ընկալջիք *զառ ի յինէն* ասացեալսդ» («ին կողմից», ՔԲՄ, 199, ՀՕԵ, 253) և այլն: Կամ հանդիպում են *առ + ի + յ*, *զ + առ + ի/յ* զուգորդումներ, ինչպէս՝ *առ ի յօգուտ* («օգուտի նպատակով», ՅԿԵՔ, 81, ՀՕԵ, 149), «...որ ոչ *զառ յինքենէն* և եթ բաւականանայր շտեմարանել յիմումս ոգւոջ զբարին», բառացի թարգմանված չէ՝ «իրենից» (Ատ., 2, ՀՕԵ, 22), *զ + յ*՝ «...մինչ զի կարել ասել ինձ *զյայն ժամու* պատահիցն» («այն ժամանակվա», Ատ., 2, ՀՕԵ, 22):

⁷¹ Տե՛ս Գ.Բաղդիշյան, Սեբեոսի «Պատմության» լեզուն և ոճը, Հայոց լեզվի պատմության հարցեր, 1-ին արակ, Երևան, 1981, էջ 62:

ինչպես երևում է, նախդիրների այս կարգի զուգորդումներն արտահայտում են զանազան իմաստային նրբերանգներ և տարբեր կերպ էլ թարգմանվել են աշխարհաբարով:

2) ԵԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրաբարի շարահյուսությունն իր հիմնական դրսևորումներով գրեթե չի տարբերվում ժամանակակից հայերենի շարահյուսությունից: Գրաբարի դասագրքերում շատ քիչ տեղ է հատկացվում այս բաժնին, նշվում են շարահյուսական մի քանի դրսևորումներ միայն, որոնցով գրաբարը տարբերվում է ժամանակակից հայերենից: Ուսումնասիրելով 7-10-րդ դարերի, այնուհետև 10-13-րդ դարերի հեղինակների լեզվական մի շարք առանձնահատկություններ՝ կարելի է ասել, որ դրանցում շարահյուսական ընդգծված տարբերություններ գրեթե չկան, եթե չհաշվենք հունաբան դպրոցի ազդեցությամբ գրված մի շարք թարգմանական երկեր, որոնք, ինչպես իրավացիորեն նշում է Գ. Մուրադյանը, «աչքի են ընկնում խրթին ու հունարենից խիստ ազդված շարահյուսությամբ»⁷²:

Ինչպես ծևաբանական, այնպես էլ շարահյուսական իրողություններով Օծնեցու երկերը շատ խիստ աղերսներով կապված են դասական գրաբարին՝ մասամբ կրելով նաև հունաբան դպրոցի ազդեցությունը: Ստորև կներկայացվեն Օծնեցու երկերի շարահյուսական մի քանի առանձնահատուկ դրսևորումներ:

1. VII դարից սկսած՝ տարածում է ստանում *որ* անորոշ դերանունը՝ իբրև շաղկապ, որը գալիս է փոխարինելու նախկինում գործածական *զի*-ին: Օծնեցու երկերում բավականին մեծ հաճախականությամբ գործածվել է *որ* շաղկապը՝ *զի*-ին զուգահեռ, թեև *զի*-ն ավելի շատ է հանդիպում: Օրինակ՝ «Եթե ոչ տեսանիցե՞ զՀայրն *զի* առնե, *զի* զոր նայն առնե» (Սժ, 481), «...ոչ հրամայեմք հաղորդել ժողովորդեան մարմնոյն եւ արեան Տեառն, *զի* մի քաղկեդոնական ախտիւն շաղախեալ կործանեսցեն յուղիղ հաւատոց անտի» (Սժ, 485) և այլն:

Բազմաթիվ օրինակներ կարելի է բերել *որ* շաղկապով, ինչպես՝ «Եւ նախ սկսայց ուստի սկսանելն լաւագոյն է և ասացից *որ* զմէնջ ամբաստանութիւնն ստոցն հերէսիոտաց» (ԲԲՄ, 193), «Իսկ առ որում թագուցեալ է ճշմարտութիւնն առաջին և զօրացեալ այժմ ու մոլորութիւնս, *որ* զգրեալսն ծածկեն» (ԲԲՄ, 195), «...սուրբ ժողովոցն խզել

⁷² Գ.Ա. Մուրադյան, Հունաբան դպրոցը և դասական հայերենը, ատենախոսության սեղմագիր, Երևան, 2005, էջ 38:

հանդիսացեալ, *որ* ի Նիկիայ Բիւթանացոց սակս Արիոսի և *որ* ի Կոստանդնուպոլիս վասն հոգեմարտին Մակեդոնի» (ԲԲՄ, 192), «Հարս՝ ըստ հաւատոյն *որ* առ աստուած զվախճանեալսն անուանելով» (Ատ., 18), «Զկարիս մարմնոյ և ոգւոյ՝ *որ* արտաքոյ քան զմեղսն իցեն» (ԸԵ, 81):

Մինչև 7-րդ դ. *այլ* բառը, ինչպես նշում է Ս. Ղազարյանը, «գործածական է եղել որպէս մակբայ, իսկ VII դ. սկսած՝ այդ բառը գործածվել է նաև որպէս շաղկապ»⁷³: Շաղկապի կիրառությամբ այն բազմիցս գործածվել է Օծնեցու երկերում, ինչպես. «... ոչ որդեգրութիւն իբրև զմեզ, *այլ* բնութեամբ միացուցեալ իւր զմարմինն՝ եղև մի Տէր...», «... ոչ հրաման տալով, *այլ* առ որ ինչ երթալոցն էր զկնի մահուսն» (ԸԵ, 93), «... և ոչ տայ թոյլ մնալ նմա յայլայլութեանն յայնմիկ, *այլ* ի վայր քարշեալ անցնիւրցն մատուցանէ (ԸԵ, նույն տեղում), «*Այլ* ընդդիմացուք նոցա ուղղափառ հաւատոց մարտիւ և սանձահարեալ հանդիսացուք զխստերախ խարդաւանս հերձուածողութեան» (ԲԲՄ, 192), կամ՝ «Մահ ասացին նման գիրք, *այլ* ոչ խախտումն և ապականութիւն...» (ԲԲՄ, 196):

2. ա) Օծնեցու երկերում նախադասությունները հիմնականում կազմությամբ բարդ են: Հավասարապես գործածական են թե՛ համադասական, թե՛ ստորադասական նախադասությունները: Ուշագրավ է, որ Օծնեցու երկերում նախադասությունները հիմնականում սկսվում են շաղկապներով, որոնք հաճախ կրկնվում են ամբողջ նախադասության մեջ, ինչպես. «*Ձի* տեսանեմք առ այսոքիւք և զայս ևս, *զի* ոմանք զառ ի մկրտութիւն զալ հանդերձելոցն» (Ատ., 8), «*Այլ* այս այնքան առաջի անկեալ ձգտեցաւ բանս...» (ԸՊ, 42), «*Եւ* արդ զի ցուցաւ, թէ ի հնումն և ի նորումն կամք եղէն աստուծոյ անշունչ նիւթս լինել» (ԸՊ, 45):

Նախադասությունները Թրբեմն սկսվում են զանազան դերանուններով և մակբայներով, ինչպես՝ «*Որք* և զնոցին դիակունս առ երդովքն ուրեմն ի տանիս...» (ԸՊ, 38), «*Այսպէս* ազգի ազգի խաբկանաց բանիւ ուրեմն ի տանիս...» (ԸՊ, 38), «*Արդ* չորք են ընդ ամենայն երեկոյին ազանձինս ծածկեն» (ԸՊ, 38), «*Արդ* չորք են ընդ ամենայն երեկոյին ազանձինս ծածկեն» (Ատ., 22): Բազմիցս հանդիպում են շաղկապների տարբեր զուգորդումներ, ինչպես. «*Եւ զի* սահմանաւ դուն ինչ ի վերայ ասացից...» (Ատ., 22): Որոշ նախադասություններ սկսվում են նաև նախադասություններով, ինչպես. «*Զկնի* որոյ ապա զճրագացն նուագեն զկցուրդ» (Ատ., նույն տեղում):

⁷³ Ս.Ղ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 196:

բ) Նախադասություններն իրենց կառուցվածքով հիմնականում դիմավոր են, իսկ դիմավոր բայերն արտահայտում են զանազան եղանակաժամանակային հարաբերություններ: Օրինակ՝ «Ո՞վ *արնէր* զիս ըստ աւուրցն առաջնոյ» (Ատ., 1, սահմ. եղ. անց. անկատ.): «*Չարմա՛նամ* ընդ այսպիսի կեղակարծ և գայթ ի գայթ խոստովանութիւն» (ԸԵ, 62, սահմ. ներկա), «Զի եթէ ոչ խորհրդոյ ակամբ հայել *գիտասցիք* յաւետարանական ծայնն (ԸԵ, 63, ստոր. եղ. երկրորդ ապառ.), «Մի զմին ասելով՝ զբնութեանցն խցանել *կամակորեցուք* զաղբերս...» (ԸԵ, 65, ստոր. երկրորդ ապառնի), «Յաղագս այսպիսի մարդասիրութեան թերևս և զինս *ոչ յիշեաց* Քրիստոս աստուած զբազմութիւն յանցանացս...» (ՅԿԵԶ, 81, սահմ. անց. կատ.) և այլն:

Դիմավոր բայով արտահայտված նախադասություններում շատ գործածական են նաև բաղադրյալ ժամանակածեղերը՝ հատկապես ապառնի դերբայով ձևավորված, ինչպես՝ «Իսկ աստանօր *մեզ* վերստին *դառնալի է* ի կարգն առաջին...» (ՅԿԵԶ, 96): Կամ՝ «Յոյժ տենչալի էր ինձ և փափաքելի ոչ այլոց զիս և *ոչ զայլս* ինձ լինել ի թշնամութեան (ԸԵ, 61): Կամ՝ «Երկուք են որ յափշտակելոց են զմեզ տեղիք, և զուգապէս միմեանց ընդդիմադրեալք...» (Ատ., 14), «Վասն որոյ լինելոց է և համաշխարհականն ի նմին գիշերի յարութիւն» (Ատ., 16):

գ) Դերբայական նախադասությունները ևս քիչ չեն Օծնեցու երկերում: Որպես կանոն՝ գրաբարի դերբայական նախադասություններում ստորոգյալի դերում հանդես է գալիս անցյալ դերբայը: Օրինակ՝ «Բնակեցուցանէ զամուլն ի տան ուրախամիտ, որպէս մայր որդուովք *բերկրեալ...*» (ՅԿԵԶ, 91): «*Թողացուցեալ* մարմնոյն *կրել զհրսն...*» (ԸԵ, 86): Թարգմանված է՝ «Թողեց, որ մարմինն ընդունի իրենը» (ՀՕԵ, 109): Նշված նախադասություններում *բերկրեալ* և *թողացուցեալ* անցյալ դերբայածեղերը գործածվել են որպես ստորոգյալ: Օծնեցու երկերում ավելի շատ հանդիպում են անորոշ դերբայով ձևավորված դերբայական նախադասություններ, որը, անշուշտ, հատուկ է հունաբան հայերենին: Օրինակ՝ «...և զտէր փառաց առանց ամօթոյ *տեսանել* ի նոր յաւիտենին» (ՅԿԵ, 92), որ թարգմանվում է՝ «...և տեսնենք փառքի տիրոջ առանց ամոթի նոր հավիտենության մեջ» (ՀՕԵ, 165): Կամ՝ «Զկնի որոյ ապա ճշմարիտ և քաջ հովուապետին *հնարել* հանգիտատիպ առ նմանութիւն» (Ատ., 4), որ թարգմանվում է՝ «Եվ որից հետո, ինչպես ճշմարիտ և հմուտ հովվապետն է առաջ քաշում, գաղափարին հար և միշտ նման լինել» (ՀՕԵ, 24):

Անորոշ դերբայի՝ որպես ստորոգյալ հանդես գալու հետ կապված առաջ են գալիս հունաբան հայերենի ևս մի քանի յուրահատուկ դրսևորումներ, որոնց մասին կխոսվի ստորև:

3. Ենթակայի և ստորոգյալի արտահայտությունը հիմնականում արտացոլում է գրաբարի իրողությունները: Գրաբարում ենթական արտահայտվում էր ոչ միայն ուղղական, այլև սեռական, տրական, երբեմն էլ՝ հայցական հոլովներով, որը հայ բանասիրության մեջ մասամբ դիտվել է օտար ազդեցության հետևանք, մասամբ՝ հայերենի համար բնական: Կարծիք կա, «որ այդ երևույթը հայերենում գալիս է հնդեվրոպական ընդհանրությունից, իսկ հետագայում երկրորդաբար կրել է հունարենի նմանօրինակ ազդեցությունը»⁷⁴: Օծնեցու երկերում ենթակայի արտահայտության հիմնական հոլովը ուղղականն է: Օրինակ՝ «Արդ զիա՞րդ անձաւորեցաւ ի կուսին *անծնն* Որդւոյ» (ԸԵ, 67):

Սակայն հաճախ ստորոգյալի կողքին հանդես է գալիս հայցական հոլովով ենթակա: Ընդ որում այն կարող է դրվել ոչ միայն դիմավոր, այլև անդեմ բայով արտահայտված ստորոգյալի կողքին: Օրինակ՝ «...այլ զիրեական *անհաւատութիւն* առակէ, ըստ Եսայեայ պանծալի մարգարէութեան...» (ՎԱՄ, 104) նախադասության մեջ դիմավոր բայով արտահայտված ստորոգյալի կողքին հանդես է եկել հայցական հոլովով ենթակա:

Բազմաթիվ են անորոշ դերբայ + հայցական հոլով կառուցները. «...զնոյն և բնութիւն մարդկային ոչ արդէւք խղճէիք *ստել...*» (ԸԵ, 66): Նախադասությունն աշխարհաբարով թարգմանված է հետևյալ կերպ. «...և նույն մարդկային բնությունն արդյոք չէիք վարանում ասելու...» (ՀՕԵ, 79, ծան. 35): Տվյալ դեպքում հայցական հոլովով արտահայտված է իրեն հատուկ ուղիղ խնդիրը: Սակայն ավելի հաճախ անորոշ դերբայի կողքին հանդես է գալիս հայցական հոլովով ենթական: Օրինակ՝ «Ոչ հեռի ի սոցանէ և զքոյդ կարծեմ *ստել*, մի բնութիւն» (ԸԵ, 74): Թարգմանված է՝ «Սրանից կարծեմ հեռու չէ և քոնը, որ ասում ես...» (ՀՕԵ, 91): Օծնեցու երկերում հաճախ հանդիպում է հունաբան հայերենի ևս մեկ իրողություն, այն է՝ անորոշ դերբայով ստորոգյալի կողքին տրական հոլովով ենթակայի հանդես գալը: Այսպես՝ «Եւ այս է՝ որպէս ինձ թուի *ստելն Որդւոյ*, առ Հայր» (ԸԵ, 95) նախադասության ենթական է՝ *Որդւոյ*, որ դրված է տրական հոլովով, իսկ ստորոգյալն է՝ ասելն, որ թարգմանվում է. «...ասում է Որդին Հորը» (ՀՕԵ, 121, 378): Կամ՝

⁷⁴ Տես Հովհաննես Օծնեցի, Երկեր, էջ 16-17:

«...մինչ զի կարելի ասել ինձ զայն ժամու պատահիցն, իբրև զայլմէ պատմելով» (Ատ, 2), «Այլ և ոչ ընդ դրունս երկնից կարողութենէ է ումեք անցանել աստստին կենօք ի մարդկանէ...» (Ատ., 6), «Հրամայեցաւ կանգնել մեզ սեղան» (Ատ., 7) և այլն:

Պետք է նկատել, որ բերված օրինակներից մեծ մասում անորոշ դերբայն է *ասել*, որի լրացումը կախում ունի նշված բայի բայիմաստից և խնդրառությունից: Նման բազմաթիվ օրինակներ գործածել է նաև Խորենացին (հմմտ. «Ի հայեցուածոցն դժնութենէ *ասեն պայթել* ործաքար վիմացն», որ թարգմանվում է երկրորդական նախադասությամբ՝ «Ասում են, որ ործաքար վեմերը պայթելիս են եղել՝ հայացքի չարությունից»)⁷⁵:

Հունաբան ոճի մեկ այլ դրսևորում է անցյալ դերբայի կողքին սեռականով ենթակայի հաղես գալը, որի օրինակները ևս քիչ չեն: Օրինակ՝ «Յաղագս որոյ ապա *հաւանեալ իմ* այսոքիք՝ իբրու թէ ձայնիս կոչողին զիս աստուծոյ...» (Ատ., 2) նախադասության ենթական է իմ՝ հաւանեալ ստորոգյալով: Թարգմանված է՝ «Եվ որի համար ես հոժար եղա նրանով, (որ) իբրև ինձ ձայն տվող Աստծուն, հանձն առնողի խոսքով դիմեցի» (ՀՕԵ, 23):

Անցյալ դերբայի կողքին ևս երբեմն հանդես է գալիս հայցական հոլովով ենթակա, ինչպես. «Իսկ այժմ կէտ եղեալ ի բաց խլեսցուք զխորհուրդ երկաբնակացն, որք ապականեալ զոլ ասեն *զանապական* մարմինն տէրունական» (ՍԺ, 484): Թարգմանված է՝ «Իսկ այժմ մեր նպատակակետը պիտի լինի այն երկաբնակների խորհուրդը մերժելը, որոնք ասում են, թե Տիրոջ մարմինը ապականված է» (ՍԺ, 218): Շատ են նաև միադիմի բայերը, որոնց կողքին սովորականի պես ենթական դրվում է տրական հոլովով, և հանդես է գալիս անորոշ դերբայը: Օրինակ՝ «*Պարտ է ուսումնասիրացն և խոհականագունիցն*՝ նուագարանօք քնարահարու լինել երածշտական հոգւոյն...» (Ատ., 20), «Եթէ *պարտ է* համառօտագոյնս ասել ոչ է ըստ նոյնութան բնութեան կամ ըստ միանձնականութեան» (ԸԵ, 65), «Եւ *պարտ է այնմիկ*՝ որ զխոստացեալսն իբրև զըմբռնեալսս յուսովն ողջունել զիտէ» (Ատ., 3):

Այսպիսով՝ Օծնեցու երկերում սովորական է ստորոգյալի գործածությունը անորոշ, անցյալ դերբայներով, որոնց կողքին հանդես են գալիս թեք հոլովներով արտահայտված ենթականեր:

4. Նախադասության անդամները հիմնականում ունեն ազատ շարադասություն: Ենթական ստորոգյալից և՛ առաջ է դրվում, և՛ հետո:

⁷⁵ Տե՛ս Ա.Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., ծան. 194, էջ 425:

Օրինակ՝ «Նույնպէս և վասն այլ Առաքելոցն՝ ցուցանէ, ասեն, պատմութիւն եթէ այլաձևապէս միմեանց» (Ատ., 5), «... զի տէրն ուրանօր զհինն աւարտեալ կնքեաց...» (Ատ., 6) և այլն:

Որոշիչը որոշյալից և՛ առաջ է դրվում, և՛ հետո, ինչպես՝ «...զոր իբրև *մաքուր հայելեալ* առ իս զփրկչականն ձգելով դիմի զնմանութիւնս» (Ատ., 2), «Քանզի և *վարժապետ վեհագոյն* ունէի յաստուծոյ պարգևեալ ինձ, հայր միանգամայն և հրահանգօղ *հոգեկան վարժութեանց...*» (Ատ., 21), «...զհինն աւարտեալ կնքեաց, անդանօր և իւրունն հիմն ձգեաց *նորոյ ուխտի*» (Ատ., 6), «Իսկ այժմ *կանոնական սահմանաւ* զմեզ պարապեալ զգուշացուցին» (Ատ., 6), «...*նորագիւտ և դեռահաւակ* ժամանակն ստիպէր առնել այնպէս...» (Ատ., 6) և այլն: Ավելի շատ են որոշիչի նախադաս կիրառության դեպքերը: Նկատելի է, որ որոշիչ-որոշյալի համաձայնությունը երբեմն պահպանվում է, երբեմն՝ ոչ: Պետք է նշել, որ հաճախ որոշիչ դերում հանդես է գալիս վերացական գոյականը՝ փոխարինելով ածականին, ինչպես՝ «Սա է *անմահութեան պտղոյ* պտղաբերիչ ...» (Ատ., 14), «...ոչ է ըստ *նոյնութեան բնութեան* կամ ըստ միանձնականութեան» (ԸԵ, 65): Այս երևույթը ևս հունաբան հայերենի առանձնահատկություններից է: Այն գրաբարում փաստորեն հատկացուցիչ-հատկացյալի դեր ունի, մինչդեռ աշխարհաբարում թարգմանվում է որպես որոշիչ-որոշյալ:

Հատկացուցիչ-հատկացյալի շարադասության դեպքում գրաբարում տարածված էր հատկացուցչի ետադաս կիրառությունը, թեև հանդիպում էր նաև հակառակ երևույթը: Օծնեցու երկերում ևս գործում են երկու եզրերն էլ: Օրինակ՝ «...ուստի ելաքն *մախանօք չարին ...*» (ՅԿԵԶ, 83), «...յոր և կոչէ ի հարսանիս երկնաւոր *Որդւոյն իւրոյ զտիեզերս*» (ՅԿԵԶ, 86), «...զնախամօրն ազատութիւն սրբոյ *աստուածածնին ծննդեամբն*» (ՅԿԵԶ, 86), «...և շնորհացն պսակաւ փառաւորեալ *զխոյ իմոյ ...*» (Ատ., 1), «...ի վերնատանն կատարել *զխորհուրդ մարմնոյ և արեան իւրոյ*» (Ատ., 5), «Զի զարթուցեալք ի *թրութենէ քնոյ*՝ օրինակ է զարդարսն առաջինս յաստուածային ազդմանէ» (ՍԳԺ, 109), «Նա և *զազդումն փողոցն* ի Սինայ, և զազդումն Հոգւոյն ի մարգահնչեալ լինին *փողոցն ձայն*» (Ատ., 13): Եվ, ինչպես գրաբարում առհասարակ, Օծնեցու երկերում ևս տարածված է հատկացուցչի ետադաս կիրառությունը:

5. Կարևոր է նշել գրաբարի ոճական մի քանի առանձնահատկություններ ևս: Ինչպես հատուկ է գրաբարյան երկերին առհասարակ, Օծնեցու երկերում ևս գործածական են ոճական այնպիսի միջոցներ,

հնարանքներ, ինչպիսիք են ավելադրությունը, պեսպիսությունը, վերա-
ցականը թանձրականի իմաստով գործածելը:

1. Նույնանիշ և հոմանիշ բառերի ավելադրությունները, ինչպես
նշում է Ա.Աբրահամյանը, «գործածվում են գրվածքի ուժին զարդա-
րանք տալու, իսկ առանձին դեպքերում էլ իմաստային որոշ նրբու-
թյուններ տալու համար»⁷⁶: Դրանք լինում են երկու տեսակ՝ գոյական
անունների (ավելադրություն, որ սովորաբար արտահայտվում է սեռա-
կան հոլովով) և բայական (ավելադրություն, որն իր հերթին կարող է
արտահայտվել դիմավոր կամ դերբայական ձևերով): Դեռևս 5-6-րդ
դդ. պատմիչների երկերից կարելի է նշել ավելադրությունների բազ-
մաթիվ օրինակներ: Այս հնարանքն իր տարբեր դրսևորումներով որո-
շակի տեղ է գտել նաև Հովհաննես Օծնեցու երկերում: Սրանցում գե-
րակշռում են բայական ավելադրությունները՝ դիմավոր կամ անդեմ
բայերով արտահայտված:

ա) Դերբայական ավելադրություններ են գործածված հետևյալ նա-
խադասություններում, ինչպես՝ «Հնչեաց զփողն և ուժգին *աղաղակել*
ըստ հրամանին» (ՍԳԺ, 110), որտեղ *հնչեաց* դիմավոր բայի հետ գոր-
ծածվել է նրան հոմանիշ *աղաղակել* անորոշ դերբայածևը: «...սպունգ
ինչ թացեալ, այնպէս *լցեալ* ուռճանայր» (Ատ. 2), «...այլ համարձակա-
բար երկոքումբքս այտքիք բարեփառութեամբ դամպարօք *փայլեալք*
պայծառանային» (ԸԵ, 71), «...սահման կապելով, թէ իւ *պատրեալ*
խաբեսցեն զձեզ բանք դոցա» (ՍԺ, 473), «...եւ անորոշաբար կանոնա-
վասն երկուց բնութեանցն *միաւորելով զմիութիւն ունելով* սրբեցին
դարձեալ զխաչեցարն» (ՍԺ, 475), «Ի ձեռն *սփռեալ* տարածեցաւ»
(ՍԺ, 413), «Ըստ նմին օրինակի և առ փրկչական մարմինն *վերաթևեալ*
համբարձցիս» (ԸԵ, 71), «...զի *կարկեալ* փակեցցի աղանդ երկաբնա-
կացն» (ՍԺ, 490) և այլն: Նշված նախնադասություններում որպէս դեր-
բայական ավելադրություններ հանդես են եկել *լցեալ, փայլեալք,*
պատրեալ, զմիութիւն ունելով, սփռեալ, վերաթևեալ և կարկեալ բա-
յածևերը: Ինչպէս հին և միջնադարյան մատենագրության մեջ ընդհան-
րապես, այնպէս էլ նշված երկերում գերակշռում են անցյալ դերբայով
բայական ավելադրությունները, թեև քիչ չեն նաև անորոշով գործա-
ծությունները:

բ) Կան նաև օրինակներ, որոնցում ավելադրությունները դիմավոր
ձևերով են արտահայտված, ինչպէս՝ «...և *գայր հասանէր* մեզ ի թի-
կունս հանդերձ Հարբ և Հոզուով սրբով» (ՍԺ, 477) և այլն:

⁷⁶ Ա.Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 394:

գ) Երբեմն հանդիպում են նաև գոյականի սեռականով ավելադրու-
թյուններ, ինչպէս՝ «...զի մի սարդեալ մուծցի ի ներքս չար աղանդն
հերձուածոյն Քաղկեդոնի» (ՍԺ, 490):

Ռճական հետաքրքրական հնարանք է պեսպիսությունը, որի դեպ-
քում միևնույն իմաստը կրկնվում է տարբեր՝ հոմանիշ կամ նույնանիշ
բառերով⁷⁷: Այս հնարանքը ևս իր որոշակի դրսևորումն է ստացել Օծ-
նեցու երկերում:

Որպէս կանոն՝ գործածված երկրորդ հոմանիշ բառը իմաստային
աստկությամբ տարբերվում է նախորդից: Այսպէս՝ «Ատենաբանու-
թիւն» երկում գործածված է հետևյալ նախադասությունը. «*Ննջեցեք*
այսուհետև, ասէ, և *հանգերուք»* (էջ 17), որտեղ *ննջեցեք* և *հանգերուք*
հրամայական եղանակի բայերը ձևավորել են ոճական նշված հնա-
րանքը: Կան՝ «Եւ *փոփոխեցին* եւ *այլայլեցին* զաստուածաբանու-
թիւնսն Քրիստոսի» (ՆՊ, 107) նախադասության մեջ, անշուշտ, *փոփո-
խեցին* և *այլայլեցին* բայերը տարբեր իմաստային նրբերանգներով յու-
րահատուկ երանգավորում են հաղորդում խոսքին: Այլ օրինակներ՝
«Ընդէ՞ր *գարիուրիս* և *գայրանաս*, և *այլանդակ* և *հայիրոյիչ* շարադրու-
թեամբ զբարեպաշտաց պղտորես զլսելիս» (ԸԵ, 67), «Որով իւիք աւա-
սիկ ես այժմիկ *հարկանեմ* զանձն իմ և *նուաստանամ»* (Ատ., 3): Այս-
տեղ ունենք նաև հոմանիշ մակբայների գործածութիւն (*աւասիկ* և *այժ-
միկ*): Նույնպիսի կիրառությամբ են հանդես եկել *հաւանութիւն* և
հաւատ գոյականները հետևյալ օրինակում. «...հարկ է *հաւանութեամբ*
և *հաւատովք* հետևել զկնի բոլոր քրիստոսականացս» (Ատ., 6):

3. Ռճական նշված հնարանքներից, թերևս, ամենաբնորոշը և գոր-
ծածականը վերացականը թանձրացականի իմաստով գործածելն է, ո-
րը մասամբ հունաբան հայերենի ազդեցության հետևանք է: Այս հնարը
սովորաբար դրսևորվում է ածականը *-ութիւն* ածանցով գոյականի վե-
րածելով, որը, սակայն, թարգմանելիս դուրս է հանվում: Փաստորեն
գրաբար և աշխարհաբար նույն ենթատեքստում այս կառույցը մեկ որ-
պէս հատկացուցիչ - հատկացյալի շարահյուսական դեր ունի, մեկ էլ՝
որոշիչ-որոշյալի:

Օծնեցու երկերում բազմիցս հանդիպում են նաև այս կարգի կա-
ռույցներ, ինչպէս՝ «Քանզի արդարև զարդարի *պատկերս առաքինու-
թեան* երանգովք՝ ըստ նախատպին կերպարանեալ» (Ատ., 2), «Սա է
անմահութեան պտղոյն պտղաբերիչ» (Ատ., 14), «Զի մի՞ *արմատ դառ-
նութեան* ի վեր երևեալ նեղիցէ» (Ատ., 4., 33) և այլն: Ռճական այս

⁷⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 94:

երևույթին բազմիցս անդրադարձել ենք աշխատանքի նախորդ բաժնի-
ներում և:

Այսպիսով՝ Հովհաննես Օձնեցու երկերի լեզուն ընդհանուր առմամբ
աչքի չի ընկնում քերականական բնույթի շեղումներով: Պրանք սահ-
մանափակվում են հոլովական, խոնարհման, նախդիրների որոշ գու-
գորդումների, այլ, որ շաղկապների ակտիվ գործածության հետ կապ-
ված իրողություններով: Այս ամենը, անշուշտ, մասամբ հունաբան
դպրոցի ազդեցության հետևանք է, որն ավելի զգալի է, թերևս, շարա-
հյուսական մակարդակում՝ կապված անորոշ դերբայ + հայցական հո-
լով, անորոշ դերբայ + տրական հոլով, անցյալ դերբայ + սեռական հո-
լով կառույցների հետ: Օձնեցու երկերում սովորական է ստորոգյալի
գործածությունը անորոշ, անցյալ դերբայներով, որոնց կողքին հանդես
են գալիս թեք հոլովներով արտահայտված ենթականեր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Օձնեցու աշխատությունների լեզուն ամենից առաջ աչքի է ընկ-
նում բառապաշարի հարստությամբ և ինքնատիպությամբ, իմաստա-
յին բազմազանությամբ և խորությամբ: Այդ բառերի մեջ զգալի տեղ են
գտել նորակազմությունները, բառերի նոր իմաստային կիրառություն-
ները, տերմինները և այլն: Եվ ընդհանրությունն այն է, որ դրանց գոր-
ծածությունը բխում է երկերի կրոնաեկեղեցական բովանդակությու-
նից՝ շաղախված իմաստասիրական տարրերով:

2) Նորակազմ բառերը գոյական են, ածական, բայ կամ մակբայ:
Կան նաև մի քանի նախադրություններ: Բառակազմական առանձնա-
հատկությունները հիմնականում հարազատ են դասական հայերենի
օրենքներին, թեև ինչ-որ չափով նկատելի է հունաբան հայերենի ազ-
դեցությունը:

3) Նոր բառերում առկա են հայերենի բառակազմությանը բնորոշ
գրեթե բոլոր կաղապարները: Օձնեցու կազմած և գործածած բառերի
մեծ մասը, ըստ ՆՀԲ-ի տվյալների, հետագայում գործածվել է նաև այլ
հեղինակների կողմից: ՆՀԲ-ն երբեմն չի պահպանում ժամանակագ-
րական հաջորդականությունը, և որոշ բառերի դեպքում նշվում է նախ
հետագայի հեղինակի, ապա նոր՝ Օձնեցու անունը:

Մեծ թվով բառեր էլ բացակայում են ՆՀԲ-ից:

4) Նորակազմ բարդ ածանցավոր գոյականները ձևավորվել են բա-
ռակազմական հետևյալ կաղապարներով՝ ա) բառակազմական հիմք
(պարզ կամ բաղադրյալ) + վերջածանց, բ) պարզ հիմք + հողակապ +
ածանցավոր հիմք, գ) ածանցավոր հիմք + հողակապ + ածանցավոր
հիմք, դ) բարդ հիմք + հողակապ + ածանցավոր հիմք, ե) պարզ հիմք +
հողակապ + պարզ հիմք + ածանց, զ) պարզ հիմք + ածանցավոր
հիմք, է) պարզ հիմք + պարզ հիմք + ածանց, ը) պարզ հիմք + նախդ-
րավոր հիմք + ածանց, թ) բաղադրյալ հիմք + հողակապ + պարզ հիմք
+ ածանց, ժ) հողակապի հավելում:

5) Բառակազմության ոլորտում հունաբան հայերենի ազդեցությու-
նը դրսևորվում է հատկապես նախածանցների գործածության մեջ:
Օձնեցու կերտած բառերում հաճախ են հանդիպում առ-, բաց-, գեր,
դեր-, թեր-, հակ-, յար-, ներ-, շար-, տար-, փոխ- նախածանցները:

6) Մեկ գոյական (նսիր) ունի պարզ կազմություն, մնացածները
բարդ են կամ ածանցավոր: Բարդ բառերը կազմված են հիմք + (հո-
ղակապ) + հիմք կաղապարով:

7) Նորակազմ ածականների մեջ ևս գերակշռում են բարդ ածանցավորները. 70 ածականներից 26-ը բարդ է, 32-ը՝ բարդ ածանցավոր, իսկ 12-ը՝ ածանցավոր: Բարդ ածականներում գերակշռում են բառակապակցություններից ձևավորված կառույցները: Դրանցում բաղադրիչներն արտահայտում են որոշիչ + որոշյալ, պարագա կամ խնդիր + բայահիմք, լրացում + ածական շարահյուսական հարաբերությունները:

8) Բարդ ածանցավոր ածականները կազմված են հետևյալ կաղապարներով՝

ա) պարզ հիմք + հողակապ + բաղադրյալ հիմք, բ) պարզ հիմք + հողակապ + պարզ հիմք + ածանց, գ) բաղադրյալ հիմք + ածանց, դ) բաղադրյալ հիմք + հողակապ + բաղադրյալ հիմք, ե) բաղադրյալ հիմք + հողակապ + պարզ հիմք, զ) բաղադրյալ հիմք + հողակապ + պարզ հիմք + ածանց, է) ածանց + բաղադրյալ հիմք + ածանց, ը) ածանց + բաղադրյալ հիմք, թ) բառակապակցության բաղադրիչների միացում:

9) Ածանցավոր ածականները ձևավորվել են՝ ա) նախածանց + հիմք (պարզ կամ բաղադրյալ), բ) պարզ հիմք + վերջածանց, գ) նախածանց + բաղադրյալ հիմք + վերջածանց, դ) բաղադրյալ հիմք + վերջածանց կաղապարներով:

10) Բայերը կազմված են հետևյալ կաղապարներով՝

ա) հիմք + հողակապ + հիմք, բ) պարզ հիմք + հողակապ + պարզ հիմք + բայական վերջավորություն, գ) նախածանց + հիմք (բայ), դ) բաղադրյալ հիմք + բայական վերջավորություն, ե) բաղադրյալ հիմք + բայական վերջավորություն, զ) պարզ հիմք + բայական վերջավորություն, է) հիմք + ածանց (հիմքակազմիչ) + բայական վերջավորություն, ը) աձականի հավելում բայական վերջավորությունից առաջ:

11) Բոլոր մակբայներն ածանցավոր են՝ պարզ կամ բարդ: Դրանցում առկա են բաղադրյալ հիմք + ածանց, նախդիր + բաղադրյալ հիմք, պարզ հիմք + հողակապ + բաղադրյալ հիմք + ածանց, բաղադրյալ հիմք + ածանց կաղապարները:

12) Օձնեցու երկերում գործածված տերմինները հիմնականում երկու խմբի են՝ իմաստասիրական և կրոնանկեղեցական: Օձնեցին իմաստասեր գործիչ էր, և բնական է, որ նա իր խոսքում պետք է գործածեր համապատասխան տերմիններ: Այս երևույթն ընդհանուր է ոչ միայն սովորական բառերի և տերմինների, այլև նոր իմաստային կիրառությամբ բառերի համար:

13) Շատ բառեր Օձնեցու երկերում գործածվել են բոլորովին նոր իմաստներով: Դրանցից շատերը տեղ են գտել նաև հետագա հեղինակների երկերում: Դրանցում ևս ընդգծված է կրոնական-աստվածաբանական մտածողությունը:

14) Քերականական առանձնահատկություններից նշելի են հետևյալները. ա) Հուլովական համակարգում *-ոջ* և *-ում* վերջավորությունների գործուն կիրառություն սեռական և տրական հոլովներում, բ) բազմաթիվ բառերի ներգոյական հոլովի իմաստի ձևավորում *-ում* վերջավորությամբ՝ *ի* նախդրով կամ առանց դրա, գ) որոշ բառերի դեպքում հոլովական զուգաձևություններ, որոնցում նկատելի է անցում՝ *ի* խոհուլման, դ) հոլովական շեղումներ դերանունների դեպքում, ե) խոնարհման համակարգում *-իր* վերջավորության գործածություն սահմանական եղանակի կրավորածն անկատարի 3-րդ դեմքի կազմում, ինչպես նաև անցյալ դերբայի *-եալ* վերջավորության փոխարեն *-ուած* վերջավորության գործածություն, զ) նախդիրների որոշ զուգորդումներ (*ի + յ, գ + առ + ի, առ + ի + ի(ի), է) այլ, որ* շաղկապների ակտիվ գործածություն:

15) Քերականական բնույթի նշված առանձնահատկությունների մեծ մասը, անշուշտ, հունաբան դպրոցի ազդեցության հետևանք է, որն ավելի զգալի է, թերևս, շարահյուսական մակարդակում՝ կապված անորոշ դերբայ + հայցական հոլով, անորոշ դերբայ + տրական հոլով, անցյալ դերբայ + սեռական հոլով, ապառնի դերբայ + տրական հոլով կառույցների հետ: Օձնեցու երկերում սովորական է ստորոգյալի գործածությունը անորոշ, անցյալ և ապառնի դերբայներով, որոնց կողքին հանդես են գալիս թեք հոլովներով արտահայտված ենթականեր:

16) Հունաբան հայերենի մեկ այլ իրողություն է վերացականը թանձրացականի փոխարեն ոճական հնարքի հանդես գալը, որը շատ գործածական է Օձնեցու երկերում: Ակտիվ գործածություն ունեն նաև պեսպիսություն և ավելադրություն ոճական հնարները:

Այսպիսով՝ Հովհ. Օձնեցու երկերը գրված են իմաստասիրական և կրոնանկեղեցական ուղղվածությամբ, որով էլ պայմանավորված են օգտագործված բառապաշարի իմաստային և կառուցվածքային առանձնահատկությունները: Ընդհանուր հաշվով Օձնեցու երկերում գործածված է մոտ 285 նորակազմ բառ (ներառյալ ՆՀԲ-ում չվկայված և ժամանակագրորեն ոչ ճիշտ ներկայացված բառերը), 30-ից ավել նոր իմաստային բառեր և տերմիններ: Օձնեցու ներդրումը մեծ է հատկապես բառակերտման ասպարեզում, մասամբ նաև քերականական երևույթների առումով՝ կապված հունաբան դպրոցի ինչ-ինչ ավանդույթների հետ:

* Նշված քանակը չի ներառում այն բառերը, որոնք ներկայացված են «Հավելվածում»:

ՀԱՍՆՈՒՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐ

- ԱԲ – Առձեռն բառարան հայկազնեան լեզուի
 Ատ. – Ատենաբանություն
 ԸԵ – Ընդդեմ երեսութականաց
 ԸՊ – Ընդդեմ պառիկեանց
 ՀԱԲ – Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան
 Հնխ. – հնդեվրոպական նախալեզու
 ՀՕԵ – Հովհաննես Օձնեցի, Երկեր
 ՅԿԵ – Յաղագս կարգաց եկեղեցւոյ
 ՅԿԵՔ – Յաղագս կարգաց եկեղեցւոյ Քրիստոսի
 ՄՀ – Մատենագիրք Հայոց
 ՆՊ – Նախահաւաքումն պատմութեան այսմ բանից Յովհաննու
 Կերծանալի
 ՆՀԲ – Նոր բառգիրք հայկազեան լեզուի
 ՋՆԺ – Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային
 ժամանակաշրջան
 ՍԺ – Սակս ժողովոց որ եղեն ի Հայք
 ՍԳԺ – Սակս գիշերային ժամու
 ՎԱՍ – Վասն մեծի աւուր միաշաբաթին
 ՔԲՄ – Խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնալոյ Բանին Քրիստոսի, եւ ընդդեմ դաւանողաց զմի Քրիստոս

ՀԱԿԵԿԱԾ*

Բառեր, որոնք վկայված չեն ՆՀԲ-ում կամ վկայված են միայն հետագա գործածություններով (ըստ առանձին խոսքի մասերի)

1. Գոյականներ (13)

1. *Ապակույան (ք)* «ապակե ուլունքներ» (ՆՀԲ, 1,270): «...յորմէ տեսակք ապակույանցն ներգործեալ սեռային զանձինս իւրեանց յարմարեալ մարգարիտ...» (ՄՀ, 137):
2. *Գեղազարդութիւն* «չքնադություն, վայելչություն», կա միայն հետագա վկայությամբ (ՆՀԲ, 1, 535): «...եւ յարայարմամբ մարգարտատեսիլ յեռմամբ շարամանել բանիւ պսակածեւ գեղազարդութեամբ» (ՄՀ, 134):
3. *Գրապարտք* «գրավի պարտք ունեցող» (ՆՀԲ, 1, 584): «...ոչ երկնչի անդ ծառայ ի տեառնէ եւ ոչ աղախին՝ տիկնոջէ, կամ հարկապարտք՝ ի հարկահանէ, եւ գրապարտք ի գրաւականէ» (ՄՀ, 118):
4. *Զգաստասիրութիւն* «զգաստության և առաքինության սեր», հետ. վկայ. (ՆՀԲ, 1, 726): Տե՛ս *հոգեհնչող*:
5. *Թանձրամտութիւն* «տխմարութիւն», միայն հետ. (ՆՀԲ, 1, 798): «...գուցէ թանձրամտութեամբ ոչ մտանել ընդ անձուկ ճանապարհն...» (ՄՀ, 153):
6. *Ծառայատեսակ* «ծառայի նման» (ՆՀԲ, 1,1611): «...խոստովանելով նմա զծառայատեսակ ստորայնոյս գեղեցկութիւնս վայելել» (ՄՀ, 135):
7. *Հարկապարտք* «հարկի պարտք» (ՆՀԲ, 2, 64): Տե՛ս *գրապարտք*.
8. *Հովուապետութիւն* «առաջնորդություն», միայն հետ. (ՆՀԲ, 2, 122): «...այլ եւ որ ընդ հովուապետութեամբն նորա հովուեալք արժանապէս ի փարախի աստ հաւատոյ...» (ՄՀ, 141):
9. *Յարայարում* «միավորում» (ՆՀԲ, 2, 342): Տե՛ս *գեղազարդութիւն*:

* Հավելվածում ներկայացված բառացանկը (65 բառ) աշխատանքի բուն շարադրանքում ուսումնասիրված չէ: Նորակազմությունները քաղված են 2007թ. հրատարակված «Մատենագիրք Հայոց» ժողովածուից, որտեղ ներկայացված որոշ երկեր նախորդ ժողովածուներում տեղ չեն գտել: Բառացանկում չենք ընդգրկել այն նորակազմությունները, որոնք նշված են ժողովածուն կազմող հեղինակների կողմից:

Յուրաքանչյուր բառահոդվածի հաջորդում է նորակազմության նշանակությունը, գործածության օրինակը:

10. **Պաստառագործ(ք)** «պաստառագործ» (ՆՀԲ, 2, 601): «...մատուցք միութեամբ եւ պաստառագործք, ուտք երկնաչուք եւ գեղեցիկք...» (ՄՀ, 135):

11. **Սերմնահող** «սերմ ընդունող հող» (ՆՀԲ, 2, 709): «...եւ քաջահասկ բեղմնաւոր գհարիրաւոր ընծեռեցեր սերմնահողին...» (ՄՀ, 147):

12. **Ցորեկապահ (ք)** «ցերեկվա պահք», միայն հետ. վկայ. (ՆՀԲ, 2, 913)», «Այսպէս եւ մեք պահեսցուք ցորեկապահս եւ գտցուք զողորմութիւն ի Տեառնէ» (ՄՀ, 154):

13. **Օծակարիճ** «օծերի, կարիճների նման» (ՆՀԲ, 2, 1026): «...եւ դիւացն բազմութիւնք յածիւն, եւ օծակարիճ կամակոր վիշապին խածաւնէր» (ՄՀ, 137):

2. Ածականներ (44) և մակբայ (1)

1. **Ականապատ** «ակնագարդ» (ՆՀԲ, 1, 22), «...քան եթէ զոսկիակուր եւ զակնապատ թագ թագաւորութեան ընդունել ի գլուխ...» (ՄՀ, 139):

2. **Առածայն** «նախածայն»: Կա միայն *առծայնել*, *առծայնութիւն* (ՆՀԲ, 1, 307): «Այսաւր մարգարէիցն յառածայն աւետիքն առ եկեղեցի լցեալ կատարեցան...» (ՄՀ, 114):

3. **Աստեղափայլ** «աստղի պէս փայլող» միայն հետ. (ՆՀԲ, 1, 518): «Յորժամ խաւար արուսեկին արտագրոհեն, եւ աստեղք անկանեն, կաճառք արդարոցն աստեղափայլ ճառագայթեն...» (ՄՀ, 144):

4. **Արփիազան** «արփիանման» (ՆՀԲ, 1, 384): «...եւ յերկնուստ արփիազան արանց ողջագուրեալ...» (ՄՀ, 144):

5. **Ալէփրփուր** «փրփրող ալիքներով» (ՆՀԲ, 1, 14): «Այլ եւ ի խորոց ծովամած եւ, ալէփրփուր յաշխարհէս արտաբերեալ զծեզ...» (ՄՀ, 136):

6. **Անըմբշամարտիկ** «առանց մարտի» (ՆՀԲ, 1, 147): «Ո՛վ մեծաքանջ զաւրութեանս, եւ անըմբշամարտիկ յաղթութեանս, ո՛վ քաջամարտ նահատակիս, եւ աստուածարեալ զաւրականին...» (ՄՀ, 139):

7. **Առաքինագարդ** «առաքինութեամբ զարդարված», հետ. վկ. (ՆՀԲ, 1, 300): «...եւ առաքինագարդ մանկամբք դաստիարակեալ» (ՄՀ, 134):

8. **Բարերաշխ** «բարիք բաշխող», հետ. վկայ. (ՆՀԲ, 1, 444): «...եւ հոյակապ հռչակաւոր քաղաքացի, բարերաշխ, եւ արգաւէտ զաւառ անուանի» (ՄՀ, 134):

9. **Բքապտոյտ** «բքապտույտ» (ՆՀԲ, 1, 519): «...որ ի բքապտոյտ, եւ ի կարկամածու հողմոց ամբարշտացն կոճոպեալ ջարդեցայք...» (ՄՀ, 138):

10. **Գեղուղէ** «գեղեցիկ ճյուղեր ունեցող», կա միայն **գեղեցկուղէ** (ՆՀԲ, 1, 538): ԱԲ-ում բացատրությունը տրված է **գեղեցկաստեղն** բառի դիմաց (ԱԲ, Ս. Ղազար, 1865, 85): «...գեղուղէ եւ սաղարթապատ վարսաւորեցեր...» (ՄՀ, 147):

11. **Դալարաբողբոջն** «դալար բողբոջներ ունեցող» (ՆՀԲ, 1, 591): «...գիոգետոր զարունն յուշ առնելով, զծաղկաւետն, զդալարաբողբոջն, զծառագարդն, զհարուցիչն մեռելութեան...» (ՄՀ, 144):

12. **Դիալլուկ** «դիւց լկված, դիվաբախ», հետ. վկայ. (ՆՀԲ, 1, 628): Տես խոզաբարու:

13. **Դրախտատեսիլ** «դրախտային տեսքով» (ՆՀԲ, 1, 642): «Եւ ծաղկաւետ վայելչութեամբ դրախտատեսիլ պայծառացեալ հրճուագործեցին բուրաստան» (ՄՀ, 140):

14. **Եաւթնաթիւ** «յոթ թիվ ունեցող», միայն հետ. (ՆՀԲ, 1, 707): «...եւ անջատեսցէ յեաւթնաթիւ աւանդապահացն» (ՄՀ, 146):

15. **Եռանդագործս** «եռացնելով պատրաստված» (ՆՀԲ, 1, 662): «...գեղեցկապէս առնելով եւ յարմարական ուլունս ապակիս հրափործս եւ եռանդագործս...» (ՄՀ, 137):

16. **Երկնաչուք** «երկինք չվող», հետ. վկայ. (ՆՀԲ, 1, 697): Տես պաստառագործ:

17. **Երկրեակ** «երկրային» (ՆՀԲ, 1, 702): «...զի նա ինքն ի կանոնս գերկրեակ երիցունս ի կարգէն արտաքս առնէ...» (ՄՀ, 151):

18. **Զագրատեսակ** «տոգեղ, դժոխատեսիլ», միայն հետ. (ՆՀԲ, 1, 710): «Թէպէտեւ եռայս լցանելոց էր նմա զզագրատեսակ գորտոցն բազմութիւնք» (ՄՀ, 145):

19. **Լուսագեղ** «լուսի պէս գեղեցիկ», միայն հետ. (ՆՀԲ, 1, 897): «...լուսագեղ պայծառութեամբ առաջի Հաւրն բոլորեցունց, որում սպասեալ ակն ունիմք» (ՄՀ, 118):

20. **Խոզաբարու** «խոզաբարո» (ՆՀԲ, 1, 956): «...աստանաւոր հրամայէ ի խոզաբարու եւ ի դիալլուկ մարդիկն մտանել, զի յայտ արասցէ թէ, զորպիսի թշնամիս պաշտէին...» (ՄՀ, 141):

21. **Ծաղկահաւաք** «ծաղիկներ հավաքող»: ՆՀԲ-ն (1, 1002) վկայում է Խոսրովիկին (Ը դար): «...ո՛վ սիրելի եւ ծաղկահաւաք, ցանկացող լինել հոգեկանացոյ ճառից...» (ՄՀ, 133):

22. **Ծառագարդ** «ծառերով զարդարված» (ՆՀԲ, 1, 1010): «...գիոգետոր յուշ առնելով, զծաղկաւետն, զդալարաբողբոջն, զծառագարդն, զհարուցիչն մեռելութեան...» (ՄՀ, 144):

23. **Կռամոլ** «կռապաշտ», հետ. վկայ. (ՆՀԲ, 1, 1126): «...կամ ընդէ՞ր ի կռամոլացն խորշել» (ՄՀ, 151):

24. **Հիապատում** «անպատմելի, սքանչելի», հետ. վկայ. (ՆՀԲ, 2, 10): «...եւ աստուածարեալ զաւրականին, ո՛վ հիապատում հանդիսիս...» (ՄՀ, 139):

25. **Հոգեհնչող** «հնչող կամ պատմող հոգով», միայն հետ. վկայ. (ՆՀԲ, 2, 111): «Զայս ամենայն յուշ առնելով հոգեհնչող ծայնիւ, եւ զհոգիախառն սննդեանն յուշ առնէր զգաստասիրութիւնն...» (ՄՀ, 143):

26. *Հոգիախառն* «հոգեխառն» (ՆՀԲ, 2, 114): Տե՛ս հոգեհնչող:
27. *Հրաթեակառու* «հրաթև կառքերով» (ՆՀԲ, 2, 129): «...գիտեմ եւ զհրաթեակառու Մարգարէն Եղիաս ի Թեբայիս սնեալ ի տուրս գահիցն...» (ՄՀ, 144):
28. *Հրաշապէս* «հրաշալի օրինակով» (մակբ.), միայն հետ., (ՆՀԲ, 2, 135): «...եւ մեծաւ բաղձանաւք սրբազան պատարագ հրաշապէս ներգործեալ վտանգաւոր տենջանաւք սրախաւխող կատարեալ» (ՄՀ, 140):
29. *Յոզնահոսան* «հորդահոս, հորդառատ», միայն հետ. (ՆՀԲ, 2, 364): «...անդանաւր ընծայեցուցանէր մեծութիւն եւ յոզնահոսան գետոյն Նեղոսի» (ՄՀ, 145):
30. *Յոզնատանջ* «բազմատանջ» (ՆՀԲ, 2, 365): «...գրաւեցին յոզնատանջ չարչարանաւք եւ դառն եւ դժնդակ մահուամբ...» (ՄՀ, 146):
31. *Նախադրական* «նախադիր, նախադասական», հետ. վկայ. (ՆՀԲ, 2, 387): «Քոյ ամենավայելուչ անունդ տառիւ նախադրական դասի զխաւորել տունս շարադրականս...» (ՄՀ, 140):
32. *Նարդոսական* «նարդոսի անուշահոտութիւն ունեցող», հետ. վկայ. (ՆՀԲ, 2, 405): «...զնարդոսական ծաղիկն դաշտաց» (ՄՀ, 135):
33. *Նարդոսահոտ* «նարդոսի հոտ ունեցող» (ՆՀԲ, 2, 405): «...եւ իւղս նարդոսահոտս...» (ՄՀ, 139):
34. *Չարակնադէտ* «չար աչքով» (ՆՀԲ, 2, 567): «...սպիտակաւիայլ երամն աղանեաց, ի չարակնադէտ, եւ ի հնակեր աւղական եւ նսեմացեալ ի թռիչն հալածեալ» (ՄՀ, 137):
35. *Պատճառաբան* «որ պատճառներով արդարացնում է դատը կամ անծին», միայն հետ. վկ. (ՆՀԲ, 2, 614): «Այլ այսպիսի պատճառաբանաւք բազումք աւծտեալ պառակտեցան եւ գտան լուսաւոր կարգ» (ՄՀ, 150):
36. *Պատրողաբան (ք)* «խաբեբա» (կա միայն պատրողաբանութիւն՝ Օծնեցու վկայութեամբ (ՆՀԲ, 2, 624)): «Ոչ հեշտացան ընդունել լսելիքդ զխորագէտ աւծին պատրողաբանսն» (ՄՀ, 140):
37. *Պնդասիրտ* «քաջ, արի» (ՆՀԲ, 2, 657): «...եւ ընդ պնդասիրտն ի մարտիրոսական մահուանն» (ՄՀ, 145):
38. *Սառնակոյտ* «կուտակված սառնութեամբ», միայն հետ. (ՆՀԲ, 2, 65): «Եւ հալածեցին զսառնակոյտ դիւապաշտութեան արծանս...» (ՄՀ, 141):
39. *Տղմաշաղախ* «տիղմով շաղախված» (ՆՀԲ, 2, 882): «...եւ ի կարկամածու հողմոց ամբարշտացն կոճոպեալ ջարդեցայք, ոչ ի տղմաշաղախ հնծանի...» (ՄՀ, 137):
40. Փառագարդ «վիառքով զարդարված», հետ. վկայ. (ՆՀԲ, 2, 933): «Փառագարդ հարսն, եւ դարծեալ փեսային...» (ՄՀ, 140):

41. *Քրիստոսազան* «Քրիստոսի նման» (ՆՀԲ, 2, 1016): «Բայց արդ, եւ գրբուհի մայրս Գայիանէ, զքրիստոսազան դստերացն դաստիարակս» (ՄՀ, 143):

42. *Քաղցրալոյս* «քաղցր լոյս ունեցող» (ՆՀԲ, 2, 974): «Ոչ քաղցրացաւ քեզ ճաշակ քաղցրալոյս, որ առ ժամայն քաղցրացուցանէ զկոկորդ արիւրդացն» (ՄՀ, 139):

43. *Քառաշնորհ* «չորս շնորհով» (ՆՀԲ, 2, 992): «...եւ քառաշնորհ յուսով սնուցանէր անդանդաղելի սակս իւրոյ սիրոյն...» (ՄՀ, 145):

44. *Քաղցրապատում* «քաղցր կերպով պատմվող» (ՆՀԲ, 2, 975): «...որ ի քաղցրապատում եւ յղծաբազում բանից եւ քաղցրապատում վար...» (ՄՀ, 151):

45. *Օծալեզու* «օծի լեզու ունեցող» (ՆՀԲ, 2, 1026): «Եւ օծալեզու պատանեաւք պատրել զանհրապուրելի կոյսն» (ՄՀ, 143):

3. Բայեր (7)

1. *Արեզակնակէզ լինել* «արեզակից կիզվել», կա միայն արեզակնակէզ (ՆՀԲ, 1, 351): Տե՛ս քրտնահարել:

2. *Արտագորհեն* «գրոհել» (ՆՀԲ, 1, 376): Տե՛ս աստեղաւիայլ:

3. *Իրակերպիմ* «իրագործել» (ՆՀԲ, 1, 871): «...այլ անծնահանձար իմաստիւք իրակերպին ընդդէմ ճշմարտութեանն» (ՄՀ, 120):

4. *Յայտ առնուլ* «հայտնել» (ՆՀԲ, 2, 321): «...եւ ձգումն երկնից գանաշխատ հրամանն Արարչին յայտ առնէ» (ՄՀ, 106):

5. *Պոռոգիլ* «օծտել», կա միայն պոռոգ «օծիտ» (ՆՀԲ, 2, 661): «...որ ի թագաւորական սենեակնս պոռոգեալ գահսն...» (ՄՀ, 139):

6. *Քաջալերս տալ* «քաջալերել» (ՆՀԲ, 2, 933): «...եւ այսպիսի քաջալերս տալով նորահասակ մանկանն...» (ՄՀ, 146):

7. *Քրտնահարել* «քրտնեցնել» կա *քրտնահար* «քրտնած» ածական՝ միայն հետագայի վկայութեամբ (ՆՀԲ, 2, 1018): «...ոչ սակաւ տարծանեալ ի տապախառն խորշակի, քրտնահարեալ արեզակնակէզ լինելով» (ՄՀ, 140):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Աբեղյան Մ.*, Գրաբարի քերականություն, Երևան, Պետհրատ., 1936, 210 էջ:
2. *Աբեղյան Մ.*, Երկեր, հ. Գ, Երևան, ԳԱ հրատ., 1968, 693 էջ:
3. *Աբեղյան Մ.*, Հայոց լեզվի տեսություն, Երևան, «Միտք», 1965, 700 էջ:
4. *Աբրահամյան Ա.Ա.*, Գրաբարի ձեռնարկ, Երևան, «Լույս», 1976, 557 էջ:
5. *Աբրահամյան Ս.Գ.*, Հայոց լեզու, Շարահյուսություն, Երևան, «Լույս», 2004, 287 էջ:
6. *Աղայան Է.Բ.*, Լեզվաբանության հիմունքներ, Երևան, Երևանի համալս. հրատ., 1987, 733 էջ:
7. *Աղայան Է.Բ.*, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, Երևանի համալս. հրատ., 1984, 371 էջ:
8. *Աղայան Է.Բ.*, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, ԳԱ հրատ., 1967, 402 էջ:
9. *Աղայան Է.Բ.*, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, Երևանի համալս. հրատ., 1958, 408 էջ:
10. *Աճառյան Հ.*, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. I, Երևան, Երևանի համալս. հրատ., 1952, 487 էջ, հ. VI, Երևան, Երևանի համալս. հրատ., 1971, 844 էջ:
11. *Աճառյան Հ.*, Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, Երևան, ԳԱ հրատ., 2005, 349 էջ:
12. *Աճառյան Հ.*, Հայերեն արմատական բառարան, հ. I, Երևան, Երևանի համալս. հրատ., 1971, 698 էջ, հ. II, Երևան, Երևանի համալս. հրատ., 1973, 687 էջ, հ. III, Երևան, Երևանի համալս. հրատ., 1977, 635, հ. IV, Երևան, Երևանի համալս. հրատ., 1979, 609 էջ:
13. *Աճառյան Հ.*, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, Երևան, «Հայպետհրատ», 1940, 355 էջ, հ. 2, Երևան, 1951, 608 էջ:
14. *Առաքելյան Վ.*, Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Երևան, ԳԱ հրատ., 1975, 273 էջ:
15. *Ասատրյան Մ.*, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, Երևանի համալս. հրատ., 2002, 430 էջ:
16. *Ավետիսյան Հ.Մ.*, Ղազարյան Ռ. Ս., Գրաբարի ձեռնարկ, Երևան, Երևանի համալս. հրատ., 1992, 319 էջ:
17. *Ալզերեան Մ.*, Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Անթիլիաս-Լիբանան, տպ. Կաթողիկոսութեան հայոց Մեծի տանն Կիլիկիոյ, 1988, 849 էջ:

18. *Ալետիքեան Գ., Սիրմէլեան Խ., Ալզերեան Մ.*, Նոր բառգիրք հայկազնեան լեզուի, հ.1, Վենետիկ, 1836, 1140 էջ, հ.2, Վենետիկ, 1837, 1067 էջ. (վերահրատարակություն, Երևան, Երևանի համալս. հրատ., 1979 -1981):
19. *Բաղդիշյան Գ.*, Սեբեոսի «Պատմության» լեզուն և ոճը.- Հայոց լեզվի պատմության հարցեր, պրակ 1, Երևան, ԳԱ հրատ., 1981, 110 էջ:
20. *Բարսեղյան Հ.*, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Երևան, Երևանի համալս. հրատ., 1980, 515 էջ:
21. *Գալստյան Ս.Ա.*, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, Երևանի համալս. հրատ., 1978, 325 էջ:
22. *Գարեգինյան Գ.*, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, Երևանի համալս. հրատ., 1984, 420 էջ:
23. Գիրք որ կոչի Այսմաուրք, Կ. Պոլիս, տպ. Գր. Մարզուանեցի, 1730, ՌՃԹ, էջ 712-935:
24. *Եզեկյան Լ.Կ.*, Ռճագիտություն, Երևան, Երևանի համալս. հրատ., 2003, 375 էջ:
25. *Լեո*, Հայոց պատմություն. Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, «Հայաստան», 1967, էջ 384- 465:
26. *Խաչատրյան Լ.Լ.*, Ղևոնդ Վարդապետի «Պատմութիւն» երկի լեզուն, ատենախոսության սեղմագիր, Երևան, 1999, 19 էջ:
27. *Խաչատրյան Լ.Ս.*, Գրաբարի բացատրական բառարան, Երևան, «Զանգակ-97», 2002, 384 էջ:
28. *Խաչատրյան Լ.Ս., Թոսունյան Գ. Բ.*, Գրաբարի դասագիրք, Երևան, «Զանգակ-97», 2004, 383 էջ:
29. *Խաչատրյան Լ.Ս.*, Լեզվաբանության ներածություն, Երևան, «Զանգակ-97», 2008, 303 էջ:
30. *Կոռյուն*, Վարք Մաշտոցի, աշխատասիրությամբ Մ. Աբեղյանի, Երևան, Երևանի համալս. հրատ., 1980, 360 էջ:
31. *Կիրակոս Գանձակեցի*, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Սեփթ-Օհանջանյանի, Երևան, ԳԱ հրատ., 1961, 426 էջ:
32. *Համբարձումյան Վ.Գ.*, Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ժԸ-ժԹ դդ., Երևան, ԳԱ հրատ., 1998, 410 էջ:
33. *Համբարձումյան Վ.Գ.*, Գրաբարի ձեռնարկ, Երևան, «Զանգակ-97», 2004, 175 էջ:
34. *Համբարձումյան Վ.Գ.*, Հովհաննես Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը.- Հայոց լեզվի պատմության հարցեր, պրակ 1, Երևան, ԳԱ հրատ., 1981, էջ 111-211:
35. Հայ մշակույթի նշանավոր գործիչները (5-18-րդ դարեր), Երևան, Երևանի համալս. հրատ., 1976, 576 էջ:

36. Հայրապետյան Ա. Պ., Հայոց հին և միջնադարեան գրականութան պատմություն, Անթիլիաս-Լիբանան, տպ. Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, 1988, 756 էջ:
37. Հայրապետյան Ա., Գրաբարի շարադասությունը (5-րդ դար), Երևան, ԳԱ «Գիտություն» հրատ., 2005, 256 էջ:
38. Հովհաննես Օձնեցի, Երկեր, գրաբարից փոխադրուճը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Համբարձումյանի, Երևան, «Անահիտ», 1999, 310 էջ:
39. Հովհաննիսյան Լ.Շ., Գրաբարի բառապաշարը (5-րդ դար), Երևան, ԳԱ «Գիտություն», 2006, 310 էջ:
40. Հովսեփյան Լ.Ս., Գրաբարի բառակազմությունը, Երևան, ԳԱ հրատ., 1987, 375 էջ:
41. Ղազարեան Ռ.Ս., Գրաբարի բառարան, Երևան, Երևանի համալս. հրատ., 2004, 1330 էջ:
42. Ղազարեան Ռ.Ս., Գրաբարի հոմանիշների բառարան, Երևան, Երևանի համալս. հրատ., 2006, 701 էջ:
43. Ղազարեան Ռ.Ս. և ուրիշներ, Մատենագիրք Հայոց, հ. է, Ը դար, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 105-155:
44. Ղազարյան Ա.Ղ., Հայոց լեզվի համառոտ պատմություն, 3-րդ հրատ., Երևան, Երևանի համալս. հրատ., 2006, 424 էջ:
45. Ղափանցյան Գ., Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Երևան, ԳԱ հրատ., 1961, 362 էջ:
46. Ղուկասյան Շ.Ռ., 10-րդ դարի հայ պատմագրության լեզուն, ատենախոսության սեղմագիր, Երևան, 2004, 29 էջ:
47. Ղեւոնդեայ վարդապետի Պատմութիւն Հայոց (2-րդ տպագր.), Ա.-Պ., Թիֆլիսի ընկ. հայ գրք., 1887, 201 էջ:
48. Ղևոնդ, Պատմություն, աշխարհաբար թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա.Տեր-Ղևոնդյանի, Երևան, «Սովետական գրող», 1982, 180 էջ:
49. Մայխասեանց Ստ., Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները, Թիֆլիս, Մարտիրոսյանների տպ., 1891, 52 էջ:
50. Մանանդեան Յ., Յունաբան դպրոցը, Վիեննա, Մխիթարեանների տպ., 1928, 299 էջ:
51. Մատենագիրք Հայոց, հ. Զ, Ը դար, Յաւելուած, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 105-121, 132-155:
52. Մելիք-Բախշյան Ա., Հայաստանը 7-9-րդ դարերում, Երևան, «Միտք», 1968, էջ 68-97:

53. Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, աշխատասիրությամբ Վ. Առաքելյանի, Երևան, «Հայաստան», 1983, 383 էջ:
54. Մուրադյան Ա. Ն., Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, ԳԱ հրատ., 1971, 361 էջ:
55. Մուրադյան Գ. Ս., Հունաբան դպրոցը և դասական հայերենը, ատենախոսության սեղմագիր, Երևան, 2005, 48 էջ:
56. Մուրադյան Հ.Ղ., Բառագիտություն, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 2, Երևան, ԳԱ հրատ., 1975, 382 էջ:
57. Յակոբեան Ալեքսան, Յովհան Օձնեցու տօնացոյցային երկը՝ «Նախահաւաքուն պատմութեան այսմ բանից Յովհաննու Վերծանաւոյի», «Հանդէս ամսօրեայ», թիվ 1-12, Վիեննա - Երևան, Մխիթարեան հրատարակատուն, 2006, էջ 92-130:
58. Յովհաննէս Ղրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, տպ. Ն. Ա. դանեանի, 1912, 427 էջ:
59. Յովհաննու Իմաստասիրի Հայոց կաթողիկոսի Սակս ժողովոց որ եղեն ի Հայք, «Գիրք թղթոց», Թիֆլիս, տպ. Ռոտինեանց, 1901, էջ 473-493:
60. Յովհաննու Իմաստասիրի Հայոց կաթողիկոսի Խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնանալոյ Բանին Քրիստոսի, եւ ընդդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս, «Արարատ» (ամսագիր), Վաղարշապատի տպ., 1896, ապրիլ, էջ 192-197:
61. Յովհաննու Իմաստասիրի Օձնեցոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, տպ. ս. Ղազարու, 1833, 116 էջ:
62. Յովհան Օձնեցի, Մատենագրութիւնք, II տպ., Վենետիկ, տպ. ս. Ղազարու, 1953 («Ընդդէմ երեւութականաց»), էջ 61-97:
63. Չամչեանց Ս., Հայոց պատմութիւն, հ. 2, Վենետիկ, տպ. Պիետրո Վալվազիանիի, 1785 (վերահրատ., Երևան, Երևանի համալս. հրատ., 1984), 1060 էջ:
64. Պասյան Ս., Հովհան Իմաստասեր Օձնեցի, Երևան, «Ամրոց», 1998, 135 էջ:
65. Պատմութիւն Սեբէոսի, աշխ. Գ.Վ. Աբգարյանի, Երևան, 1979, ԳԱ հրատ., 447 էջ:
66. Զահուկյան Գ.Բ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, ԳԱ հրատ., 1987, 747 էջ:
67. Զահուկյան Գ.Բ., Լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, Երևանի համալս. հրատ., 1660, 632 էջ, հ. 2, 1962, 601 էջ:
68. Զահուկյան Գ.Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, Երևանի համալս. հրատ., 1974, 584 էջ:

69. *Ջահուկյան Գ.Բ.*, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, ԳԱ հրատ., 1964, 70 էջ:
70. *Ջահուկյան Գ.Բ.*, Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը, Երևան, Երևանի համալս. հրատ., 1959, 409 էջ:
71. *Ջահուկյան Գ.Բ.*, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, V-XV դդ., Երևան, Երևանի համալս. հրատ., 1954, 396 էջ:
72. *Ջահուկյան Գ.Բ.*, Հին հայերենի վերջածանցների ծագումը.- Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, Երևան, ԳԱ հրատ., 1998, էջ 5-48:
73. *Սահակյան Ե.*, Հովհան օծնեցի (ծննդյան 1300-ամյակի առթիվ), Ավստրիա, 1993, 56 էջ:
74. Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն Հայոց, Ա.-Պր., 1885, 437 էջ:
75. *Ստեփանոս Օրբելեան*, Պատմութիւն տանն Սիսական, Մոսկուա, Խ. Յովակիմեան Լազարեւ, 1861, էջ 1-245:
76. *Ստեփանոս Օրբելեան*, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա.Ա. Աբրահամյանի, Երևան, «Սովետական գրող», 1986, 616 էջ:
77. *Սուքիասյան Ա.*, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, Երևանի համալս. հրատ., 1989, 399 էջ:
78. *Քոստան Կ.*, Գրաբարի բառակապակցությունները, Երևան, ԳԱ հրատ., 1980, 279 էջ:
79. *Օրմանեան Ս.*, Ազգապատում, հ. Ա, Պէյրուբ, տպ. Սեւան, 1959, 1080 էջ:
80. *Аннинский А.*, История армянской церкви, Кишинев, Тип. М. Я. Спивака, 1900, 306 стр.
81. *Джаукян Г.Б.*, Общее и армянское языкознание, Ереван, Изд-во АН Арм. ССР 1978, 334 с..
82. *Hambardzumyan V.G.*, Hovhannes Odznetsy and his Philosophical – Theological Works ` Translation into New Armenian, "Armenian Mind"/«Հայ միտք»/, Vol. IV, N 2/ հ. IV, N 2, Yerevan/ Երևան, 2000, p. / էջ 232-243.

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք	3
Ներածություն	5
Գլուխ 1. Նորակազմ բառերի գործածությունը	
1) Նորակազմ գոյականներ	16
2) Նորակազմ ածականներ	34
3) Նորակազմ բայեր	55
4) Նորակազմ մակբայներ	63
5) Բառային հարադրություններ	68
Գլուխ 2. Նորակազմ բառերի գործածության ժամանակը	
1) «Նոր հայկազյան բառարանում» չվկայված բառեր	70
2) Ժամանակագրորեն ոչ ճիշտ վկայված բառեր	96
Գլուխ 3. Տերմիններ և նոր իմաստով կիրառված բառեր	
1) Կրոնաեկեղեցական և իմաստասիրական տերմիններ	105
2) Նոր իմաստային կիրառությամբ բառեր	112
Գլուխ 4. Քերականական մի քանի առանձնահատկություններ	
1) Ձևաբանական առանձնահատկություններ	117
2) Շարահյուսական առանձնահատկություններ	124
Եզրակացություններ	133
Համառոտագրություններ	136
Հավելված	137
Օգտագործված գրականություն	142

ՎԱՐՄԻԿ ԱՐՄԵՆԻ ՆԵՐՄԻՍՅԱՆ
ՀՈԿԿԱՆՆԵՍ ՕԶՆԵՑՈՒ ԵՐԿԵՐԻ ԼԵԶՈՒՆ

Պատկեր՝ 34: Տպաքանակ՝ 100:
Գինը՝ պայմանագրային:

«Նաիրի» հրատարակչության տպագրատուն
Երևան-9, Իսահակյան 28